

Ա. Բ. ՄԱՍԻՍԻԱՆ  
Ե. Ս. ՄԱՍԻՍԻԱՆ  
Պ. Ս. ՄԱՍԻՍԻԱՆ

ՄԱՍԻՍԻԱՆ ԷԿՆՈՍՏՐՈՖԻԿԱՆ  
ԷՊՈՒՄՆԱՆԵՐ



ԵՐԵՎԱՆ 2008

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան

ՂՈՒՇՉԱՆ Հ. Բ.  
ՏԻԳՐԱՆՅԱՆ Ի. Տ.  
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ա. Գ.

## ԱԶԳԱՅԻՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՀԻՄՈՒՆԶՆԵՐ

(ուսումնական ձեռնարկ)

Տնտեսագիտության քեկնաժու, պրոֆեսոր Ի.Տ. Տիգրանյանի  
ընդհանուր խմբագրությամբ

ԵՐԵՎԱՆ  
ՏՆՏԵՍԱԳԵՏ  
2009

ՀՏԴ 330 (07)  
ԳՄԴ 65 y7  
Դ 977

**Հրատարակվում է ՀՊՏՀ գիտական խորհրդի  
որոշմամբ**

**ՀՊՏՀ Գրադարան**



000000052

**Գրախոսներ՝**

տ.գ.դ., պրոֆ. **Գ. Վ. Բաղդասարյան**  
տ.գ.թ., դոց. **Զ. Զ. Վարդանյան**


**Ղուշյան Հ. Բ. և ուրիշներ**

Ղ 977

Ազգային էկոնոմիկայի հիմունքներ: Ուսումնական ձեռնարկ  
/Հ.Բ.Ղուշյան, Ի.Տ. Տիգրանյան, Ա.Գ. Հարությունյան.- Եր.:  
Տնտեսագետ, 2009. - 154 էջ:

Ուսումնական ձեռնարկում դիտարկվում են ազգային էկոնոմիկայի  
խնդիրները տարբեր տեսանկյուններից, ազգային տնտեսության կա-  
ռուցվածքը, ձևավորումը, ճյուղային տարբերակումը, տնտեսական  
գործունեության բնույթը, տնտեսական անվտանգության և համաշ-  
խարհային տնտեսությանն ինտեգրվելու ժամանակակից հարցեր:  
Առավել համակողմանի և ընդգրկուն ներկայացվում են ազգային էկո-  
նոմիկայի տնտեսական գործունեության տեսակների դասակար-  
գումը, տնտեսակարգերի տարբերակումը, շուկաների մրցակցային  
առավելությունները և այլն:

Ձեռնարկը նախատեսված է մակրոտնտեսագիտություն և հատկա-  
պես ազգային էկոնոմիկայի հիմունքներ ուսումնասիրողների համար:



ԳՄԴ 65 y7

մ.վ. 2

ISBN 978-9939-61-003-0

© «Տնտեսագետ» հրատ., 2009

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

|                   |   |
|-------------------|---|
| Ներածություն..... | 7 |
|-------------------|---|

## ԹԵՄԱ 1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

|                                                                                            |    |
|--------------------------------------------------------------------------------------------|----|
| 1.1. Տնտեսական գործունեության էությունը .....                                              | 8  |
| 1.2. «Ազգային տնտեսություն» հասկացությունը .....                                           | 9  |
| 1.3. Ազգային տնտեսության գործունակությունն ապահովող գործոնները .....                       | 13 |
| 1.4. Ազգային տնտեսական գործունեություն՝ որպես տնտեսական մեխանիզմների փոխազդեցություն ..... | 14 |
| Թեմայի ամփոփում .....                                                                      | 17 |
| Հիմնական հասկացություններ .....                                                            | 18 |
| Հարցեր և առաջադրանքներ .....                                                               | 18 |

## ԹԵՄԱ 2. ԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՆՉՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

|                                                                      |    |
|----------------------------------------------------------------------|----|
| 2.1. «Ազգային տնտեսական գործունեության գործակալ» հասկացությունը..... | 19 |
| 2.2. Խմբային կարգով ձևավորվող գործակալները .....                     | 20 |
| 2.3. Պետությունը տնտեսության կենտրոնական գործակալն է.....            | 21 |
| 2.4. Տնտեսավարող սուբյեկտների դասակարգումը .....                     | 22 |
| 2.5. Տնտեսավարող սուբյեկտների ծրագրերը և խնդիրները .....             | 22 |
| Թեմայի ամփոփում .....                                                | 24 |
| Հիմնական հասկացություններ .....                                      | 24 |
| Հարցեր և առաջադրանքներ .....                                         | 25 |

## ԹԵՄԱ 3. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՆՉՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

|                                                                                                  |    |
|--------------------------------------------------------------------------------------------------|----|
| 3.1 Տնտեսական գործունեության կազմակերպման ձևերը.....                                             | 26 |
| 3.2. Տնտեսության վարման հիմնական ձևերը.....                                                      | 27 |
| 3.3. Ազգային տնտեսության մրցակցային առավելությունները և դրանց բացահայտման անհրաժեշտությունը..... | 32 |
| 3.4. Երկրի մրցակցային առավելության մախադրյալները .....                                           | 37 |
| 3.5. Ազգային տնտեսության զարգացման մակարդակի գնահատման մակրոտնտեսական ցուցանիշները .....         | 40 |
| Թեմայի ամփոփում .....                                                                            | 45 |
| Հիմնական հասկացություններ .....                                                                  | 46 |
| Հարցեր քննարկման համար.....                                                                      | 47 |

#### **ԹԵՄԱ 4. ԵՐԿՐԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԲԱԺԱՆՄԱՆԸ**

|                                                                                                     |    |
|-----------------------------------------------------------------------------------------------------|----|
| 4.1. Աշխատանքի հասարակական բաժանման ձևերը .....                                                     | 48 |
| 4.2. Աշխատանքի հասարակական բաժանման գործընթացը, ար-<br>տադրության մասնագիտացման ձևերը .....         | 50 |
| 4.3. Տնտեսական գործունեության ճյուղային տարբերակման մա-<br>կարդակի վերլուծության սկզբունքները ..... | 54 |
| 4.4. Տնտեսական գործունեության տեսակների ՀՀ ազգային դասա-<br>կարգիչը .....                           | 56 |
| Թեմայի ամփոփում .....                                                                               | 59 |
| Հիմնական հասկացություններ .....                                                                     | 60 |
| Հարցեր և առաջադրանքներ .....                                                                        | 60 |

#### **ԹԵՄԱ 5. ԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՏՆՏԵ- ՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄԸ**

|                                                                                        |    |
|----------------------------------------------------------------------------------------|----|
| 5.1. Ազգային տնտեսության ճյուղերի և ենթաճյուղերի առաջա-<br>ցումը .....                 | 61 |
| 5.2. Տնտեսության ճյուղերի ձևավորման գործընթացի փուլերը .....                           | 62 |
| 5.3. Տնտեսական գործունեության մասնագիտացման վերլուծության<br>սկզբունքները .....        | 64 |
| 5.4. Տնտեսական գործունեության արդյունավետության չափանիշ-<br>ները և ճկունությունը ..... | 66 |
| Թեմայի ամփոփում .....                                                                  | 69 |
| Հիմնական հասկացություններ .....                                                        | 70 |
| Հարցեր և առաջադրանքներ .....                                                           | 70 |

#### **ԹԵՄԱ 6. ԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԸ**

|                                                                                     |    |
|-------------------------------------------------------------------------------------|----|
| 6.1. «Տնտեսական միավորների կառուցվածք» հասկացությունը .....                         | 71 |
| 6.2. Տնտեսական միավորների տեսակները .....                                           | 73 |
| 6.3. Պարզ տնտեսական միավորների կառուցվածքային վերլուծության<br>սկզբունքները .....   | 77 |
| 6.4. Բարդ տնտեսական միավորների կառուցվածքային վերլուծու-<br>թյան սկզբունքները ..... | 78 |
| Թեմայի ամփոփում .....                                                               | 81 |
| Հիմնական հասկացություններ .....                                                     | 82 |
| Հարցեր և առաջադրանքներ .....                                                        | 82 |

#### **ԹԵՄԱ 7. ԵՐԿՐԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ**

|                                                                       |    |
|-----------------------------------------------------------------------|----|
| 7.1. Տնտեսական գործունեության կենտրոնացման էությունը<br>և ձևերը ..... | 83 |
| 7.2. Արտադրական միավորի առանձնահատկությունները և<br>տեսակները .....   | 85 |

|                                                                                  |    |
|----------------------------------------------------------------------------------|----|
| 7.2.1. ՀՀ արտադրական միավորների կազմակերպարական կեսակները.....                   | 86 |
| 7.2.2. Բաժնետիրական ընկերությունները, դրանց գործունեության մեխանիզմը ՀՀ-ում..... | 88 |
| 7.3. Տնտեսական գործունեության կենտրոնացման մակարդակի ցուցանիշները .....          | 90 |
| Թեմայի ամփոփում .....                                                            | 92 |
| Հիմնական հասկացություններ.....                                                   | 93 |
| Հարցեր և առաջադրանքներ.....                                                      | 93 |

## **ԹԵՄԱ 8. ԵՐԿՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ**

|                                                                           |     |
|---------------------------------------------------------------------------|-----|
| 8.1. Մրցակցային տնտեսակարգի ձևավորման և գործունեության սկզբունքները ..... | 94  |
| 8.2. Մրցակցային կարգի կազմավորման սկզբունքները .....                      | 95  |
| 8.3. Մրցակցային կարգի կարգավորման սկզբունքները .....                      | 98  |
| 8.4. Մրցակցային կարգի իրականացման քաղաքականությունը .....                 | 100 |
| Թեմայի ամփոփում .....                                                     | 104 |
| Հիմնական հասկացություններ.....                                            | 105 |
| Հարցեր և առաջադրանքներ.....                                               | 105 |

## **ԹԵՄԱ 9. ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ, ՄԱՅՈՒՄԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՆՆԵՐՈՒՄ**

|                                                                                         |     |
|-----------------------------------------------------------------------------------------|-----|
| 9.1. «Անցումային գործընթացը» հասկացությունը տնտեսակարգերի փոփոխման դեպքում .....        | 106 |
| 9.2. Հայաստանի անցումային շրջանի հիմնական տնտեսական բնութագրիչների վերլուծությունը..... | 107 |
| Թեմայի ամփոփում .....                                                                   | 116 |
| Հիմնական հասկացություններ.....                                                          | 117 |
| Հարցեր և առաջադրանքներ.....                                                             | 117 |

## **ԹԵՄԱ 10. ԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԻՆՏԵԳՐՈՒՄԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆԸ**

|                                                                                                 |     |
|-------------------------------------------------------------------------------------------------|-----|
| 10.1. Տնտեսական ինտեգրման էությունը և ձևերը.....                                                | 118 |
| 10.2. ՀՀ տնտեսության ինտեգրման նախադրյալները և գործոնները ..                                    | 122 |
| 10.3. Հայաստանի տնտեսությունը տարածաշրջանային և համաշխարհային տնտեսական համակարգերում .....     | 125 |
| 10.4. Օտարերկրյա ներդրումների աճի նախադրյալները և դերը տնտեսության ինտեգրման գործընթացում ..... | 127 |
| Թեմայի ամփոփում .....                                                                           | 133 |
| Հիմնական հասկացություններ.....                                                                  | 134 |
| Հարցեր և առաջադրանքներ.....                                                                     | 135 |

|                                                          |            |
|----------------------------------------------------------|------------|
| <b>ԹԵՄԱ 11. ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ</b>  |            |
| 11.1. «Տնտեսական անվտանգություն» հասկացությունը .....    | 136        |
| 11.2. Տնտեսական անվտանգության բաղադրիչները .....         | 137        |
| 11.3. Ազգային անվտանգության գնահատման ցուցանիշները ..... | 143        |
| 11.4. Տնտեսական անվտանգության ապահովման գործոնները ..... | 147        |
| Թեմայի ամփոփում .....                                    | 149        |
| Հիմնական հասկացություններ .....                          | 149        |
| Հարցեր և առաջադրանքներ .....                             | 150        |
| <b>Գրականության ցանկ .....</b>                           | <b>151</b> |

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Յանկացած երկրում տնտեսական գործունեության յուրահատկությունը պայմանավորված է բազմաթիվ գործոններով՝ բնական պաշարների և որոշակի կլիմայական պայմանների առկայությամբ, կապիտալի կուտակման մեծությամբ և հասարակության ժողովրդագրական կառուցվածքով, ազգային մտակեցվածքի և կրոնական հավատի, վերջապես՝ երկրի քաղաքական, պետական և հասարակական կառուցվածքի առանձնահատկություններով:

Միևնույն ժամանակ, յուրաքանչյուր երկրի ազգային տնտեսությանը ներհատուկ են համաշխարհային տնտեսական համակարգին բնորոշ գծեր, և այն հիմնականում զարգանում է ազգային կառավարող վերնախավի քաղաքական կամքից անկախ գործող տնտեսական օրենքներով և օրինաչափություններով:

Ձեռնարկի նպատակն է ներկայացնել ու մեկնաբանել տնտեսական գործունեության ընթացքում ծագող էական հարաբերություններն արտացոլող տնտեսական կատեգորիաները: Այստեղ դիտարկվում են ազգային տնտեսության գործունակության պատմական և մեթոդաբանական հայեցակետերը, մեկ երկրի շրջանակում ազգային տնտեսության ձևավորման հիմքում ընկած սկզբունքները, տարբեր տնտեսակարգերի պայմաններում ազգային տնտեսության կառավարման ձևերն ու մեթոդները և այլն:

Ազգային տնտեսության ձևավորման և գործունակության հայեցակարգը ներկայացնելիս դիտարկվել են այնպիսի հիմնարար գիտակարգեր, ինչպիսիք են՝ միկրոէկոնոմիկան, մակրոէկոնոմիկան, համակարգերի տեսությունն ու համակարգային վերլուծությունը և այլն:

Ազգային էկոնոմիկայի հիմունքներ անվանումը կապված է այն ընկալման հետ, որ տնտեսագիտությունը ընդգրկում է տնտեսական վերլուծությունների և կանխատեսումների բնագավառը, որն անվանում ենք էկոնոմիկա, ինչպես նաև այլ բնագավառների՝ վիճակագրությանը, ֆինանսներին, հաշվապահությանը, կառավարմանը վերաբերող օրենքների և օրինաչափությունների ուսումնասիրությունը, որոնց ամբողջությունն անվանում ենք տնտեսագիտություն:

Ազգային տնտեսության կազմակերպման, զարգացման օրինաչափությունները վերաբերում են մակրոէկոնոմիկային, յուրաքանչյուր երկրի մակրոտնտեսական վերլուծությունը պարունակում է առանձնահատուկ գծեր, որոնք մի դեպքում բնորոշ են միայն այդ երկրին, մյուս դեպքում կրկնօրինակում են այլ երկրների զարգացման օրինաչափությունները, իսկ հաճախ ձեռք են բերում համաշխարհային տնտեսական զարգացման ընդհանուր կողմեր: Այդ է պատճառը, որ մախքան մակրոէկոնոմիկա, տնտեսության պետական կարգավորում և տվյալ երկրի տնտեսությանը վերաբերող գիտակարգերն ուսումնասիրելը «ազգային տնտեսագիտություն» մասնագիտությամբ ուսանողներին դասավանդվում է «Ազգային էկոնոմիկայի հիմունքներ» առարկան:

# ԹԵՄԱ 1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

## 1.1. Տնտեսական գործունեության էությունը

Տնտեսական գործունեության էությունը տնտեսական բարիքների ստեղծումն ու սպառումն է: Բարիքը մարդու պահանջմունքների բավարարման միջոց է, որին ուղղված է տնտեսավարող սուբյեկտների տնտեսական գործունեությունը: Քանի որ բարիքներն անսպառ չեն, ուստի մշտապես որոշվում է այս կամ այն պահանջմունքի բավարարման առաջնահերթության խնդիրը՝ հաշվի առնելով ազգային տնտեսության տնօրինած ռեսուրսների սահմանափակությունը: Անհրաժեշտ է նկատի ունենալ նաև տնտեսական գործունեության նպատակի հրատապությունը և այն զինը, այլընտրանքային նպատակների համեմատությամբ, որն անհրաժեշտ է վճարել այդ նպատակին հասնելու համար: Այս սկզբունքային գաղափարներն օգնում են պատկերացնելու տնտեսական գործունեության էությունը:

Տնտեսական բարիքների սակավության դեմ պայքարի խնդրի լուծման բարդությունը պայմանավորված է.

ա/ այդ բարիքների նկատմամբ պահանջարկը ապագայում տեսնելու անհրաժեշտությամբ,

բ/ մարդկային պահանջմունքների զարգացման ունակությամբ:

Ավստրիական դպրոցի ներկայացուցիչ Կ. Մենգերը դա անվանում է ապագայի համար անհրաժեշտ քանակի բարիքների ապահովման «նախնական հոգածություն»: Անհրաժեշտ է տարբերել տնտեսական և ոչ տնտեսական բարիք հասկացությունները: Ոչ տնտեսական բարիքը գոյություն ունի անսահմանափակ քանակով: Այսինքն՝ սուբյեկտը չի բախվում դրա՝ անհրաժեշտ չափով հասանելի լինելու կամ չլինելու խնդրին: Այսպես, աղբյուրի մոտ ապրող մարդկանց համար խմելու ջուրը տնտեսական բարիք չէ, այն այդպիսին կարող է դառնալ սակավաջուր վայրում ապրողների համար, օրինակ՝ անապատում ջրի նկատմամբ մարդու պահանջմունքը ավելի մեծ է, քան այդ պահանջմունքի բավարարման համար նախատեսված ջրի քանակը:

Հարկ է խմանալ, քե որքան բարիք է անհրաժեշտ ապագա պահանջմունքների բավարարման համար, և այդ նպատակով որքան բարիք ենք տնօրինում: Առավել դժվար է կանխատեսել մարդկային պահանջմունքների բավարարման ուղղությունները, քանի որ խիստ բարձր է շահադրդման անորոշությունը, որով ղեկավարվում է մարդն այս կամ այն պահանջմունքը ձևավորելիս: 1854թ. գերմանացի տնտեսագետ Հենրիխ Հերման Հոսենը ձևակերպել է «պահանջմունքների օրենքները».

- Տևողականության օրենք, երբ որևէ պահանջմունք բավարարվում է անընդհատ, ապա նրա բավարարման ինտենսիվությունը սկզբում բարձր է, աստիճանաբար նվազում է և ի վերջո դառնում զրոյական:

- Կրկնողության օրենք, երբ այս կամ այն պահանջմունքի բավարարումից առաջացող որևէ հաճելի զգացողություն կրկնվում է, ապա բավարարվածության ինտենսիվության աստիճանը և նրա տևողությունը նվազում են այնքան արագ, որքան արագ կրկնվում է այն:

Որպես ներկայացված երկրորդ օրենքի հետևություն՝ Հոսենը ձևակերպել է նվազող օգտակարության սկզբունքը. «Անձն առավելագույնի է հասցնում օգտակարությունը, երբ իր տնօրինության տակ գտնվող դրամը տարբեր բարիքների միջև բաշխում է այնպես, որ ձեռք է բերում հավասար բավարարվածություն ապրանքներից յուրաքանչյուրի վրա ծախսված դրամի վերջին միավորից»: Այս սկզբունքն առավել հասկանալի ներկայացրել է Կ. Մենգերը՝ հինգ պարկ ցորենի օրինակի միջոցով: Այդ պարկերի ցորենի օգտակարությունը տնօրինվում է նվազման կարգով: Անտառում ապրող ծերուկը առաջին պարկ ցորենն օգտագործում է սնվելու նպատակով, առաջնային պահանջմունքի բավարարման համար /հաց/, երկրորդը՝ սննդի կատարելագործման /խմորեղեն/, երրորդը՝ տնային թռչունների կերակրման, չորրորդը՝ զարեջրի պատրաստման և հիմնգերորդը՝ զբաղմունքի, ասենք՝ թութակներին կերակրելու նպատակով:

Հոսենի օրենքներից կարելի է ստակ ենթադրել, որ պահանջմունքների զարգացման մեջ որոշ սահմանափակումներ գոյություն ունեն, սակայն դրանք կանխորոշելը բավականին բարդ է:

Միակ անվիճելի եզրահանգումն այն է, որ գոյություն ունի բարիքների երկու տեսակ, որոնց սակավության դեմ «պայքարում» է տնտեսական գործունեությունը. առաջին կարգի բարիքներ՝ սպառման ապրանքներ, և բարձր կարգի բարիքներ՝ ռեսուրսներ կամ արտադրության միջոցներ: Երկրորդները նախատեսված են առաջին կարգի բարիքների ստեղծման համար: Քանի որ բարիքների նշված տեսակները փոխադարձ պայմանավորում են միմյանց, ուստի տնտեսական գործունեությունը «պայքար» է առաջին և բարձր կարգի բարիքների սակավության դեմ:

## 1.2. «Ազգային տնտեսություն» հասկացությունը

Տնտեսական գործունեության՝ պատմական առումներով դիտարկումը հնարավորություն է տալիս առանձին երկրի շրջանակներում վերլուծելու տնտեսության ձևափոխումները: Բանն այն է, որ յուրաքանչյուր երկիր ժառանգում է տնտեսական զարգացման պատմական ավանդույթներ: Դրանցում արտացոլվում են երկրի և՛ ազգային, և՛ քաղաքական, և՛ կրոնական առանձնահատկությունները:

Տնտեսական գործունեությունն ամենից առաջ առանձին անհատների, խմբերի, սոցիալական շերտերի, այս կամ այն երկրի ժողովրդի, ամբողջ մարդկության գործունեությունն է: Դա տեղի է ունենում ժամանակի և տարածության մեջ: Այդ պատճառով այդ գործունեության ուսումնասիրությունը գիտության որևէ ճյուղի շրջանակներում չի կարող ամբողջական և առարկայական պատկերացում տալ ինչպես այն շարժառիթների մասին, որոնցով մարդիկ ղեկավարվում են՝ ընդունելով այս կամ այն տնտեսական որոշումը, այնպես էլ երկրի, ամբողջ աշխարհի, առանձին տարածաշրջանի և տարբեր պատմական ժամանակաշրջանի տնտեսական գործունեության առանձնահատկությունների մասին: Վերջապես, տնտեսական գործընթացների էությունը հնարավոր չէ հասկանալ առանց դրանք կապելու այն գործընթացների հետ, որոնք տեղի են ունենում տեխնիկական ոլորտում, որն անմիջականորեն կապված է տեխնիկական միջոցների մշակման, արտադրության և օգտագործման հետ՝ հնարավորություն տալով բավարարելու մարդկային պահանջմունքները:

Տնտեսական գործունեությունն ուսումնասիրելիս անհրաժեշտ է օգտագործել սոցիոլոգիայի, պատմության, աշխարհագրության և տեխնիկայի բնագավառների գիտական հետազոտությունների արդյունքները:

Սոցիոլոգիան անհրաժեշտ տեղեկություններ է տալիս այն մասին, թե տնտեսական գործունեությունը որ շրջապատում է իրականացվում: Այլ կերպ ասած, տնտեսական գործունեության մասին այս կամ այն որոշումն ընդունելիս անհրաժեշտ է պարզել, թե առանձին սոցիալական շերտերը ինչպես են իրենց պահում, և ինչ հետևանքների է հանգեցնում նրանց վարքը:

Պատմական ուսումնասիրությունները հնարավորություն են տալիս հասկանալու, թե տնտեսական գործունեության վրա ինչպիսի իրավական, սոցիալական, տնտեսական, հոգեբանական և կրոնական գործոններ են ազդում, որոնք հեշտացնում են տնտեսական գործընթացների պարզաբանումը:

Աշխարհագրությունը տնտեսագետներին հնարավորություն է տալիս գիտակցելու, թե տնտեսական գործունեությունը ինչպիսի ֆիզիկական և բնական պայմաններում է տեղի ունենում: Այն պատկերացում է տալիս էներգիայի, հումքի, բնակչության տարածաշրջանային կենտրոնացման մասին: Աշխարհագրությունը ներգործում է երկրում արտադրողական ուժերի տեղաբաշխման վրա:

Տեխնիկայի հետ փոխադարձ կապի արտահայտությունը այն է, որ ինժեներների տեխնիկական նախագծերը տնտեսագետը ընդգրկում է հասարակության տնտեսական գործունեության միասնական ցանկում: Նա ձգտում է ըմտրել ոչ թե լավագույն մեքենան կամ հումքի ամենա-

արդյունավետ տեսակը, այլ այն պահը, երբ որոշակի հումքը կամ մեքենան կարող են օգտագործվել առավելագույն արդյունավետությամբ և որտեղից կարելի է դրանք ավելի արագ և էժան ձեռք բերել:

Ազգային տնտեսության էությունը հասկանալու համար անհրաժեշտ է նաև ծանոթանալ «ազգային» հասկացությանը: Ազգային բառն ունի լատինական ծագում՝ natio (ազգ): Ընդ որում, գոյություն ունի ազգ հասկացության երկու մեկնաբանություն՝

1. պատմականորեն ձևավորված հանրույթ,
2. երկիր, պետություն:

Տնտեսական մտքի զարգացումը փաստում է, որ տնտեսագետների մոտեցումն «ազգ» հասկացության բովանդակությանը տարիների ընթացքում աստիճանաբար փոխվել է: Եթե Դ. Ռիկարդոն ազգը բնորոշում է որպես աշխարհագրական տարածություն, որն ապահովված է բնական գործոններով, որոնք բնորոշում են տնտեսական գործունեության բնույթը, ապա Ստյուարտ Միլլը ազգը ներկայացնում է որպես տարածաշրջան, որի ներսում արտադրության գործոնները շարժունակ են, սակայն այդ շարժունակությունը սահմանափակվում է պետական սահմանով: Ֆ. Պերուի բնորոշմամբ՝ ազգը անհատների և խմբերի ամբողջություն է, որը ենթարկվում է պետությանը, որն էլ ունի մենաշնորհային իրավունք՝ պետական հարկադրանք կիրառելու համար:

Ռոբերտ Բարրը տալիս է ազգ հասկացության ավելի բարդ սահմանում, որը կարելի է մեկնաբանել որպես ազգի տնտեսագիտական հայեցակարգ.

ա/ նախ, այն տնտեսական գործունեության կենտրոն է, որը տարբերվում է իր բնույթով (գյուղատնտեսություն, արդյունաբերություն և այլն), իր ծագմամբ (անհատական, պետական և այլն), իր բնութագրով (կապիտալիստական), գործունեության պայմաններով (մրցակցային, մենաշնորհային),

բ/ ազգը ուժի կենտրոնն է, որի նշանակությունն ու ազդեցությունը դուրս են գալիս աշխարհագրական և քաղաքական տարածության սահմաններից,

գ/ ազգը անհատների միասնություն է՝ ըստ տնտեսական, քաղաքական և հոգևոր ընդհանրության:

Այսպիսով, ազգին բնորոշ են տնտեսական, աշխարհաքաղաքական և հոգևոր բնույթի առանձնահատկություններ, որով նա տարբերվում է մյուս ազգերից:

Անհրաժեշտ է նաև հստակ տարբերել, թե տվյալ դեպքում ինչպես է ընկալվում տնտեսություն հասկացությունը:

Էկոնոմիկա (տնտեսություն) բառը ծագել է հունարեն *oikonomike* բառից, որը նշանակում է տնային տնտեսությունների կառավարման հմտություն: Գոյություն ունեն այս հասկացության մի շարք մեկնաբանություններ, որոնցից կարևորում ենք հետևյալները.

ա/ արտադրական հարաբերությունների ամբողջություն,  
բ/ տարածաշրջանի, երկրի, երկրների խմբի կամ ողջ աշխարհի  
տնտեսություն,

գ/ գիտության ճյուղ, որն ուսումնասիրում է տնտեսական հարաբե-  
րությունների գործառության ին և ճյուղային տեսանկյունները:

Այսպիսով, ազգային տնտեսությունը երկրի տնտեսությունն է, նրա  
կազմը, կառուցվածքը և առանձին տարրերի փոխկախվածությունները:  
Ազգային տնտեսությունը մի համալիր է, որի բաղադրիչները կազմում  
են առանձնահատուկ ընդհանրություն: Վերջինիս գործունեության  
տարբեր հատվածների միջև գոյություն ունեն փոխլրացնող տարրեր:

Ուսումնասիրվող տնտեսագիտական տեսանկյունից՝ երկիրը հան-  
դես է գալիս որպես կազմակերպող սկիզբ: Պետությունում առանձին  
անհատների, ընտանիքների, խմբերի տնտեսական գործունեությունը  
բնութագրվում է որոշակի ինտեգրվածությամբ և փոխկախվածությամբ:  
Այդ պատճառով չի կարելի ազգային տնտեսությունը ներկայացնել որ-  
պես գործողությունների և փաստերի հատուկ հավաքածու: Տնտեսագե-  
տի խնդիրն է ցույց տալ տարբեր տնտեսական սուբյեկտների գործու-  
նեությունն ընդհանրացնող սերտ կապերը:

Երկիրը՝ որպես ազգային համագործակցություն, ունի բարձրագույն  
իշխանություն, որին ենթակա են տնտեսական գործունեության բոլոր  
սուբյեկտները: Երկիրը որոշակի առումով «հոգևոր սկզբունք» է. նրա  
բնակիչների միջև գոյություն ունի վարքագծային զուգահեռների և ար-  
ձագանքների համեմատական համասեռություն, որը միասնություն է  
հաղորդում ազգային տնտեսական հանրությին: Ազգային դրամական  
միավորը ամրացնում է այդ միասնությունը:

Տնտեսության ուսումնասիրման հատկապես ազգային շրջանակի  
ընտրությունը պայմանավորված է համազգային քանակական ցուցա-  
նիշների /ազգային վիճակագրություն/ վերլուծությամբ և տնտեսական  
քաղաքականությամբ:

Յուրաքանչյուր երկիր պայմաններ է ստեղծում ինչպես ողջ տնտե-  
սության, այնպես էլ նրա առանձին հատվածների արդյունավետ զար-  
գացման համար: Այս հանգամանքը սկզբունքային նշանակություն ունի  
համաշխարհային տնտեսության մեջ տվյալ երկրի կողմից որոշակի  
դիրք գրավելու առումով:

Երկիրը հաջողություններ է արձանագրում այն դեպքում, երբ պայ-  
մանները նպաստավոր են ազգային տնտեսության որևէ հատվածի  
զարգացման ռազմավարության իրականացման համար: Յուրաքան-  
չյուր երկրին բնորոշ ազգային առանձնահատկությունները դյուրաց-  
նում կամ առանձին դեպքերում խոչընդոտում են ազգային տնտեսու-  
թյան արդյունավետ զարգացումը: Այդօրինակ առանձնահատկություն-  
ների սպեկտրը լայն ու բազմազան է՝ ընդգրկելով մարդկանց վարքա-

զծի նորմերից մինչև հասարակության ինտեգրման և տնտեսական հարաբերությունների կարգավորման ոլորտում էական և վճռորոշ դերակատարում ունեցող երկրի քաղաքական համակարգը:

### 1.3. Ազգային տնտեսության գործունակությունն ապահովող գործոնները

Տնտեսական գործունեությունը սահմանափակելով առանձին վերցրած մեկ երկրի սահմաններով, ամենևին չենք առանձնացնում մնացյալ աշխարհից: Ազգային տնտեսությունն ուսումնասիրվում է որպես համաշխարհային տնտեսական համակարգի բաղկացուցիչ մաս: Այս իրողությունը բխում է նաև տնտեսական համակարգերի հաղորդակցության օրինաչափություններից: Այլ խոսքով՝ ազգային տնտեսության առանձնահատկությունները որոշվում են ոչ միայն նրա ներքին, այլ նաև արտաքին կարգի գործոններով: Ուստի, ազգային տնտեսության գործունակությունն ապահովող բոլոր գործոնները բաժանվում են սերտորեն փոխկապակցված երկու խմբերի՝ ներքին և արտաքին:

Արտաքին գործոններն ըստ ազդեցության բնույթի կարելի է դասակարգել հետևյալ խմբերում.

1. Տնտեսական,
2. Քաղաքական,
3. Ժողովրդագրական,
4. Մշակութային:

*Համաշխարհային հանրության տնտեսական գործոնների* շարքն են դասվում, նախ և առաջ, աշխատանքի միջազգային բաժանումը, որի շնորհիվ ձևավորում է այս կամ այն երկրի ազգային տնտեսության որոշակի ուրվագիծը: Հաջորդ տնտեսական գործոնը տվյալ երկրի տիրապետող դիրքն է համաշխարհային շուկայում, ինչը կարող է առաջ բերել մյուս երկրների հակազդեցությունը (այդպիսի հակազդեցության օրինակ կարող է լինել «հականերմուծման» կամ «ներմուծման փոխարինիչ» ապրանքների և ծառայությունների արտադրությունը): Այսպիսի քաղաքականությունը միշտ չէ, որ կարող է ապահովել հակազդեցության անհրաժեշտ արդյունավետ մակարդակ, բայց ազգային տնտեսության որևէ հատվածի կենսունակությունը պահպանելու անհրաժեշտությունը մղում է նման գործողությունների: Երրորդ տնտեսական գործոն կարող է լինել տարբեր աշխարհագրական տարածքներում «առևտրային պատերազմների» ձևավորումը, որի արդյունքում ազգային տնտեսություններում կարող են առաջանալ կառուցվածքային փոփոխություններ:

**Քաղաքական գործունեները** դրսևորվում են ամենաբազմազան, երբեմն՝ անզամ անկանխատեսելի ձևերով: Այդպիսիք կարող են լինել այս կամ այն ապրանքների և ծառայությունների առաքման արգելքը /մեքարգոն/, առավելագույն բարենպաստ ռեժիմի տրամադրումը, երկրի ընդգրկվելը որևէ առևտրաքաղաքական միության մեջ, դիվանագիտական հարաբերությունների ստեղծումը կամ դադարեցումը, որևէ ռազմաքաղաքական կազմակերպությանն անդամակցելը, պատերազմի մեջ մտնելը և այլն:

**Միջազգային հանրությունում ժողովրդագրական գործունեներն** առավելապես արտահայտվում են աշխատուժի տեղաշարժերի միջոցով, որը ստեղծում է գործազրկության աճի կամ դրա հաղթահարման պահեր և նպաստում երկրի վճարային հաշվեկշռի կառուցվածքի բարելավմանը՝ ի հաշիվ արտագնա աշխատուժի կողմից իրենց ընտանիքներին փոխանցվող դրամական միջոցների /«գուտ փոխանցումներ» հոդվածի դրական մեծության/:

**Մշակութային գործունեները** կարող են ազդել ազգային տնտեսության վրա մի շարք դեպքերում, երբ տեղի է ունենում մշակութային զանգվածային էքսպանսիա: Այն մի կողմից ազդում է երկրում համապատասխան բնագավառների տնտեսական դրության, մյուս կողմից՝ երկրից արտարժույթի ռեսուրսների արտահոսքի վրա՝ կապված աուդիո-, տեսա- և այլ արտադրանքի ներմուծման հետ:

Ներքին գործունեները ներառում են.

1. Ազգային տնտեսական գործունեության գործակալներին,
2. Ձևերի և մեթոդների ամբողջությունը,
3. Տվյալ երկրում կիրառվող տնտեսական գործունեության վերլուծության մեթոդաբանությունը:


Ազգային տնտեսության ներքին գործունեներն առավել մանրամասն կբնութագրվեն երկրորդ հատվածում:

## **1.4. Ազգային տնտեսական գործունեությունը՝ որպես տնտեսական մեխանիզմների փոխազդեցություն**

Ազգային տնտեսական գործունեությունը միաժամանակ իրականացվում է բազմազան, երբեմն նույնիսկ հակադիր նպատակներ հետապնդող մարդկանց խմբերի կողմից: Նրանց գործունեության շահադրդումը պայմանավորված է մի կողմից շահերի և պահանջմունքների, մյուս կողմից՝ դրանք իրականություն դարձնելու միջոցների և մեթոդների, ինչպես նաև դրանց մատչելիության հնարավորությունների բազմազանությամբ: Մարդկանց խմբերի նպատակների, շահերի, պահանջմունքների, նրանց գործունեության միջոցների ու մեթոդների բազմա-

զանությունն առաջին հայացքից կարող են այնպիսի տպավորություն ստեղծել, թե ազգային տնտեսությունը քառսային է, ամորոշ, իսկ տնտեսական երևույթները որևէ կերպ կապված չեն միմյանց հետ: Այնուհանդերձ, պատմական փորձը վկայում է, որ տնտեսական երևույթների միջև հաջորդաբար ծագում և փոխգործակցում են բազմաթիվ «շղթաներ», որոնք ստացել են «տնտեսական մեխանիզմներ» անվանումը: Ազգային տնտեսական գործունեությունն իրականացվում է այդպիսի բազմաթիվ շղթայական և փոխկապակցված երևույթների միջոցով: Նման մեխանիզմները չենք կարող դիտարկել որպես տնտեսական գործունեության՝ այս կամ այն կերպ միմյանցից անկախ դրսևորումներ: Գործելով միաժամանակ և փոխլրացնելով միմյանց՝ տնտեսական մեխանիզմների ամբողջությունը իրենից ներկայացնում է մի մեծ համակարգ, իրեն հատուկ օրինաչափություններով և բնութագրերով:

Ազգային տնտեսության մեջ գործող մեխանիզմների ամբողջական պատկերը կարելի է ներկայացնել հետևյալ գծապատկերի միջոցով, որտեղ մեխանիզմները համակարգված են ըստ դասերի:



**Գծապատկեր 1.** Ազգային տնտեսությունում գործող մեխանիզմների բաղադրիչները

Իրական կյանքում յուրաքանչյուր դասին վերաբերող որոշակի տնտեսական մեխանիզմների միահյուսումը բարդ երևույթ է, իսկ դրանց արդյունքում առաջացող փոխկախվածությունները՝ առավել ևս: Գծա-

պատկերի կենտրոնում տեղադրված է արտադրության և սպառման միջև հավասարակշռության մեխանիզմների դասը: Հատկապես այս դասի մեխանիզմներն են կոչված ապահովելու ցանկացած երկրի ազգային տնտեսության համընդգրկուն ռազմավարական նպատակների իրականացումը՝ ստեղծել և ապահովել ազգի բարձր կենսամակարդակ, պետական, ազգային և տնտեսական անվտանգություն:

Մնացած դասի մեխանիզմները, որոնք գծապատկերում շրջապատում են արտադրության և սպառման միջև հավասարակշռության մեխանիզմների դասը, լուծում են առավելապես տեղական /ոկլա/ ռազմավարական նպատակներ: Օրինակ, արտաքին աշխարհի և ազգային տնտեսական հավասարակշռության մեխանիզմներն «աշխատում» են իրականացնել համաշխարհային տնտեսությանը երկրի արդյունավետ ինտեգրման ռազմավարական նպատակները, երկրորդ խումբ մեխանիզմները՝ կապիտալը եկամտի և եկամուտը կապիտալի փոխակերպող մեխանիզմները, ապահովում են պարզ և ընդլայնված վերարտադրության համար անհրաժեշտ ռեսուրսները:

Բազմարկչային մեխանիզմներն ապահովում են տնտեսական արդյունավետության անընդհատ աճը, իսկ տնտեսական պարբերաշրջանի մեխանիզմները՝ ազգային տնտեսության զարգացման կայունության պահպանման ռազմավարական նպատակները և այլն:

Տնտեսական մեխանիզմների յուրաքանչյուր դաս կապված է մյուսների հետ երկկողմ կապերով, որոնք արտացոլում են ոչ միայն ուղղակի, այլև հակադարձ փոխկախվածությունները տարբեր մեխանիզմների միջև: Այս փոխկախվածությունների համալիր վերլուծությունը պետք է հիմք հանդիսանա ազգային տնտեսական գործունեության պետական կարգավորման համակարգի մշակման համար՝ հաշվի առնելով տվյալ երկրի կողմից ընդունված տնտեսակարգի առանձնահատկությունները: Այսպես, շուկայական տնտեսակարգում սահմանելով ամորտիզացիայի մասհանումների նորմը կապիտալի տարբեր տարրերի համար, անհրաժեշտ է վերլուծել միաժամանակ գործող բոլոր դասերի տնտեսական մեխանիզմների ազդեցությունը: Այդ նորմերը կարող են լինել բարձր կամ ցածր, կայուն կամ դինամիկ, ինչը կախված է հետևյալ գործոններից.

ա/ տնտեսական պարբերաշրջանի փուլերից, որում գտնվում է ազգային տնտեսությունը,

բ/ կուտակման ինտենսիվությունից՝ պայմանավորված բազմարկիչ մեխանիզմների գործունեությամբ,

գ/ արտաքին տնտեսական գործունեության արդյունավետությունից և արտաբժույթի շուկայում ձևավորվող իրավիճակից՝ պայմանավորված ազգային տնտեսության հավասարակշռության մեխանիզմի գործունեությամբ,

դ/ ներքին շուկայում ներդրումային ապրանքների նկատմամբ գործող առաջարկի և պահանջարկի հարաբերակցությունից՝ պայմանավորված երկրի ներսում արտադրության և սպառման հավասարակշռության մեխանիզմով և դրա բնույթով:

Բացի այդ, կառավարության կողմից սահմանված ամորտիզացիայի նորմը էական ազդեցություն է ունենում ապրանքների և ծառայությունների գների վրա ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շուկայում: Այն իր արտացոլումն է գտնում ինչպես առաջարկի և պահանջարկի հարաբերակցության, այնպես էլ բնակչության սպառման և խնայողության հակվածության մեջ, որն, իր հերթին, արտահայտվում է բազմարկչի մեծությամբ և արտադրության աճի (անկման) տեմպով:

Հետևաբար, տնտեսական գործունեությունը դիտարկելով տնտեսական մեխանիզմների համակարգի գործունեության տեսանկյունից, կարելի է եզրակացնել, որ այդ գործունեության բնագավառում ցանկացած մարտավարական և ռազմավարական որոշման կայացմանը պետք է նախորդի յուրաքանչյուր տնտեսական մեխանիզմի գործունեության ձեռնարկների համալիր և բազմակողմանի վերլուծությունը: Պետք է կազմվեն այդ մեխանիզմներում դրսևորվող միջանկյալ տնտեսական երևույթների «շղթաներ» և որոշվեն ավարտվող տնտեսական երևույթների բնութագրերը, ինչպես նաև ուսումնասիրվի այդ երևույթների հնարավոր ազդեցությունը միմյանց վրա:

### *Թեմայի ամփոփում*

Տնտեսական գործունեության էությունը տնտեսական բարիքների ստեղծումն և սպառումն է: Բարիքը մարդու պահանջմունքների բավարարման միջոց է, որին ուղղված է տնտեսավարող սուբյեկտների տնտեսական գործունեությունը:

Գոյություն ունի բարիքների երկու տեսակ, որոնց սակավության դեմ «պայքարում» է տնտեսական գործունեությունը. առաջին կարգի բարիքներ՝ սպառման ապրանքներ, և բարձր կարգի բարիքներ՝ ռեսուրսներ կամ արտադրության միջոցներ: Երկրորդները նախատեսված են առաջին կարգի բարիքների ստեղծման համար: Քանի որ բարիքների նշված տեսակները փոխադարձ պայմանավորում են միմյանց, ուստի տնտեսական գործունեությունը «պայքար» է առաջին և բարձր կարգի բարիքների սակավության դեմ:

Ազգին բնորոշ են տնտեսական, աշխարհաքաղաքական և հոգևոր բնույթի առանձնահատկություններ, որով նա տարբերվում է մյուս ազգերից:

Տնտեսական երևույթների միջև հաջորդաբար ծագում և փոխգործակցում են բազմաթիվ «շղթաներ», որոնք ստացել են «տնտեսական

13922/43/

ՀՊՏՀ Հանրապետության  
Библиотека АГФУ

մեխանիզմներ» անվանումը: Ազգային տնտեսական գործունեությունն արդյունքում իրականացվում է այդպիսի բազմաթիվ շղթայական և փոխկապակցված երևույթների միջոցով:

Տնտեսական մեխանիզմների յուրաքանչյուր դաս կապված է մյուսների հետ երկկողմ կապերով, որոնք արտահայտում են մեխանիզմների միջև առկա ոչ միայն ուղղակի, այլև հակադարձ փոխկախվածությունները: Այս փոխկախվածությունների համալիր վերլուծությունը պետք է հիմք հանդիսանա ազգային տնտեսական գործունեության պետական կառավարման համակարգի մշակման համար՝ հաշվի առնելով տվյալ երկրի տնտեսակարգի առանձնահատկությունները:

Հետևաբար, տնտեսական գործունեությունը դիտարկելով տնտեսական մեխանիզմների համակարգի գործունեության տեսանկյունից, կարելի է եզրակացնել, որ տնտեսական գործունեության բնագավառում ցանկացած մարտավարական և ռազմավարական որոշման կայացմանը պետք է նախորդի յուրաքանչյուր տնտեսական մեխանիզմի գործունեության հետևանքների համալիր և բազմակողմանի վերլուծությունը:

### ***Հիմնական հասկացություններ***

Ազգային տնտեսություն

Միջազգային համագործակցության տնտեսական գործոններ

Տնտեսական հավասարակշռության մեխանիզմներ

Բարիքների սակավություն

Առաջին կարգի տնտեսական բարիքներ

Բարձր կարգի տնտեսական բարիքներ

### ***Հարցեր և առաջադրանքներ***

1. Սահմանեք այն պայմանները, որոնց առկայությունը հնարավորություն է տալիս համարել որևէ առարկա բարիք /ըստ Կ. Մենգերի/:
2. Ներկայացրեք Հոսենի տևողականության և կրկնողության օրենքների հիմնական բովանդակությունը:
3. Ի՞նչ են առաջին և բարձր կարգի բարիքները:
4. Ներկայացրեք «ազգային տնտեսություն» հասկացության բնորոշումը, շարադրեք Ռ. Բարրի՝ ազգ հասկացության բնորոշումը:
5. Թվարկեք ազգային տնտեսության բնույթի վրա ազդող համաշխարհային տնտեսական հանրության երեք գործոնները:
6. Ինչպե՞ս են ազդում ազգային տնտեսության բնույթի վրա քաղաքական, ժողովրդագրական և մշակութային գործոնները:
7. Ի՞նչ է իրենից ներկայացնում տնտեսական մեխանիզմների փոխմիաշխուսումը:

## **ԹԵՄԱ 2. ԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

### **2.1. «Ազգային տնտեսական գործունեության գործակալ» հասկացությունը**

Տնտեսական գործընթացն իրականացվում է որոշակի գործակալների՝ տնտեսական (տնտեսավարող) սուբյեկտների կողմից, որոնք ունեն բարիքներ ստեղծելու և տնօրինելու իրավունք:

Տնտեսական սուբյեկտը ոչ միշտ է հանդիսանում ֆիզիկական անձ. գոյություն ունեն ֆիզիկական անձինք, օրինակ՝ փոքր երեխաները, որոնք իրավունք չունեն բարիքներ տնօրինելու, իսկ մյուս կողմից՝ գոյություն ունեն իրավաբանական անձինք, որոնք տնօրինում են այդպիսի իրավունքների և դրանք իրականացնում են իրենց «մարմինները»/օրինակ՝ կառավարիչները/ հանդիսացող ֆիզիկական անձանց միջոցով: Տնտեսական սուբյեկտը ոչ միշտ է հանդիսանում իրավաբանական անձ:

Տնտեսական սուբյեկտները ակտիվ են, նրանք գործում են կանխամտածված, ընդունում են այնպիսի որոշումներ, որոնք ապահովում են իրենց կողմից մշակված ծրագրերի իրականացումը:

Այսպիսով, տնտեսական գործունեությունը հանդես է գալիս որպես ծրագրերի և որոշումների ամբողջություն, որոնք արտահայտվում են տնտեսական տարբեր սուբյեկտների տնտեսական ակտիվության մեջ:

Բոլոր տնտեսական սուբյեկտները բաժանվում են պարզ և համակարգային միավորների: 18-19-րդ դարերում հիմնականում տնտեսական սուբյեկտ է համարվել անհատը: Նա դիտարկվել է որպես պետության հարստության և հզորության գործիք, որն իր հերթին հանդես է եկել որպես կենտրոնական տնտեսական սուբյեկտ /մերկանտիլիստական տեսակետ/: Մերկանտիլիզմի նպատակը պետության հզորացումն էր, որը ձևավորվում էր անհատական ակտիվությունների հանրագումարից: Անգլիական դասականների տնտեսական վերլուծությունը կենտրոնացնում էր անձնական շահով առաջնորդվող անհատական գործունեության վրա:

Ֆրանսիացի տնտեսագետ, ֆիզիոկրատական դպրոցի հիմնադիր Ֆրանսուա Բենեն /1694-1774/, այսպես կոչված՝ «բնական կարգի» մասին գրել է. «Տնտեսական գործունեության կատարելությունը ծախսերի առավելագույն կրճատումով բարիքների առավելագույն ամ ստանալն է»: Իսկ երբ յուրաքանչյուրն անի նույնը, ապա այս կարգը լավագույնս կամրապնդվի: «Կարգի էությունն այնպիսին է, որ մեկի մասնավոր շահ-

հը երբեք չի կարող առանձին լինել բոլորի ընդհանուր շահերից. ինչը լինում է ազատության տիրապետման դեպքում: Այս դեպքում աշխարհը գնում է ինքն իրեն: Շփման ցանկությունը հասարակությանը դրդում է շարժվելու, որը դառնում է անընդհատ միտում՝ դեպի հմարավոր լավագույն վիճակը»:

Մարժինալիստները մշակել են իրենց տեսությունը՝ ելնելով անհատական նախասիրությունների սանդղակից: Նույնիսկ միջազգային կտրվածքով՝ ազգը, երկիրը չի ընկալվում որպես համախումբ կամ խմբեր, որոնք տիրապետող են փոխանակման գործընթացում: Օրինակ. ավստրիացի տնտեսագետ Ֆրիդրիխ ֆոն Վիգերը /1851-1926/, որը սահմանային օգտակարության տեսության հիմնադիրներից մեկն է, պնդում էր, որ չկա առաջարկ և պահանջարկ Ամերիկայից, Անգլիայից, Գերմանիայից, այլ գոյություն ունի առաջարկ և պահանջարկ ամերիկացիներից, անգլիացիներից, գերմանացիներից:

Անհատականության հետ միաժամանակ զարգացել է լիբերալիզմը, որն ուղղված էր անհատական տնտեսական գործունեությանը պետության միջամտության նվազեցմանը: Այս գաղափարի հիմնական նշանաբանն էր «laissez faire»՝ գործունեության ազատության տրամադրում:

19-րդ դարի վերջին և 20-րդ դարում սոցիալական խմբերի զարգացմանը և տնտեսական կյանքում պետության աճող միջամտության արդյունքում ակտիվ և հզոր գործակալների դերում հանդես են գալիս մարդկանց և պետությունների խմբերը:

## 2.2. Խմբային կարգով ձևավորվող գործակալները

Ժամանակակից տնտեսությունն առավելապես ներկայանում է խմբային բնույթով: Միասնական և հզոր խմբերի ստեղծման միտումն ունի տնտեսագիտական, տեխնիկական և հոգեբանական աղբյուրներ: Խումբը հաճախ փոխակերպվում է որոշումների հակադրման միջոցի, որն առաջանում է շուկայի գործունեության արդյունքում:

Խմբերի ձևավորման ձևերից մեկը ասոցիացիան է /միավորումը/: Ասոցիացիան բարդ տեխնոլոգիաների յուրացման միջոց է, որը հիմնված է աշխատանքային մեքենաների համալիրների և օժանդակ գործընթացների օգտագործման վրա: Այն մաս մարդուն խմբի մեջ ներգրավելու միջոց է, որը նրան ընդհանուր գործի մաս կազմելու հնարավորություն է տալիս: Նշված խմբերը ձևավորվել են տնտեսական գործունեության բոլոր ոլորտներում: Այսպես.

- բանվորները միավորվել են արհմիություններում,
- գործարարները ստեղծել են կարտելներ ինչպես ազգային տնտեսություններում, այնպես էլ համաշխարհային առումով,

- միջին խավերը միավորվում են տարբեր տեսակի միություններում, ակումբներում:

Օրինակ. վերջին տարիներին Հայաստանում ձևավորվել են արդյունաբերողների, վաճառականների, սպառողների միություններ, ներդրողների աջակցման միություն, հայ աշխատավորների միություն, հաշվապահների և աուդիտորների ասոցիացիա և այլն:

Շատ դեպքերում խմբերը դառնում են «քաղաքական-տնտեսական հզորության բլոկներ», որոնք ոչ միայն ազդում են տնտեսական հարաբերությունների վրա հասարակության ինստիտուցիոնալ կառուցվածքի սահմաններում, այլև ցանկանում են փոխել այդ կառուցվածքը: Առաջանում են լոբբիստական խմբեր իշխանության գործադիր և օրենսդիր օղակներում, որոնք կյանքի են կոչում այդ տնտեսաքաղաքական բլոկների շահերը:

Այս դեպքում, երկրի ներսում ընդունվող որոշումները միլիոնավոր անհատների կողմից ընդունված որոշումներ չեն, այլ դեկավար մարմնի փոքրաթիվ խմբերի, որոնք ճնշում են գործադրում իշխանության թևերի վրա:

### 2.3. Պետությունը ազգային տնտեսության կենտրոնական գործակալն է

Խմբերի զարգացմանը զուգընթաց, պետությունը երկրի տնտեսական կյանքում աստիճանաբար մղվում է առաջնային պլան: Պետության միջամտությունը տնտեսական կյանքին արտացոլվում է հետևյալ ձևաչափերով.

1. Պետությունը սահմանում է տնտեսավարման «խաղի կանոններ»՝ համապատասխան նորմատիվ և օրենսդրական ակտերի միջոցով, որոնք կարգավորում են տարբեր բնագավառների այլ տնտեսական գործակալների վարքագիծը:
2. Պետությունն անուղղակի ներգործում է տնտեսական ակտիվության վրա՝ հարկահավաքման և պետական ծախսերի տեսքով, վարկերի և դրամական էմիսիայի վերահսկմամբ:
3. Պետությունը մեծամասամբ համակարգում և ֆինանսավորում է կապիտալ ներդրումները:
4. Պետությունը ստեղծում է արտադրության պետական հատվածը:
5. Պետությունն ուղղակի կամ անուղղակի վերահսկում է գները և արտաբժույթի փոխարժեքը:
6. Պետությունն ապահովում է ազգային եկամտի բաշխումը և վերաբաշխումը:

Այսպիսով, պետությունն ակտիվ գործող տնտեսական գործակալ է, որը գործում է անհատական և խմբային տնտեսական գործակալների հետ: Ընդ որում, նա աստիճանաբար առավել նկատելի տեղ է զբաղեցնում տնտեսական գործունեության մեջ:

Ժամանակակից աշխարհում պետության դերը բավականին մեծացել է երկրի տնտեսական կյանքում: Պետական ակտիվների դերը ԱՄՆ-ում վերջին կես դարում մոտ եռակի ավելացել է, ինչը դրսևորվել է նաև պետության կողմից օգտագործվող աշխատուժի թվաքանակի ցուցանիշում: Եթե դարասկզբին պաշտպանության ոլորտում զբաղվածների թիվը չնչին տոկոս էր կազմում, ապա հետագայում նկատելի ավելանալով՝ հասել է 14%-ի: Ինչ վերաբերում է պետական գնումներին, ապա այստեղ ևս տեղի է ունեցել էական դրական տեղաշարժ, և պետական գնումների տեսակարար կշիռը բավականին լուրջ ցուցանիշ դառնալով՝ փաստում է պետության դերի ավելացման մասին:

## 2.4. Տնտեսավարող սուբյեկտների դասակարգումը

Տնտեսավարող սուբյեկտները դասակարգվում են երկու խմբերում.

- ա/ պարզ տնտեսական միավորներ կամ միկրոսուբյեկտներ՝ տնային տնտեսություններ, ֆիրմաներ, կազմակերպություններ,
- բ/ համալիր տնտեսավարող միավորներ կամ մակրոսուբյեկտներ:

Այս երկու խմբերը ներառում են ենթախմբեր՝ արդյունաբերական ճյուղեր-կազմակերպությունների խմբեր, արհմիություններ-բանվորական խմբեր, կոնցեռններ-ֆիրմաների խմբեր, որոնց միավորումը տեղի է ունենում ընդհանուր կապիտալով:

Տնտեսավարող սուբյեկտները տարբերվում են նաև ըստ գործունեության բնույթի: Նրանք զբաղվում են նյութական և ոչ նյութական բարիքների արտադրությամբ:

## 2.5. Տնտեսավարող սուբյեկտների ծրագրերը և խնդիրները

Մարդն իր տնտեսական գործունեության ընթացքում առաջնորդվում է տարբեր դրդապատճառներով, որոնք արտացոլվում են տնտեսավարող սուբյեկտների ծրագրերում: Սպառողը կազմում է իր եկամուտների օգտագործման ծրագիր, ֆիրմայի ղեկավարությունը կազմում է ֆիրմայի գործունեության ծրագիր, պետությունն ունի երկրի ֆինանսական ծրագիր՝ բյուջե, այսինքն իր եկամուտների և ծախսերի նախատեսված ցուցանիշներ և այլն:

Տնտեսավարող սուբյեկտների ծրագրերը արտահայտում են նրանց որոշումները: Ժամանակակից տնտեսագիտական վերլուծության մեջ տարբերում ենք երկու տեսակի տնտեսական որոշումներ.

- Միկրոմիավորների որոշումներ կամ միկրոորոշումներ: Դրանք միկրոմիավորների կողմից ընդունվող որոշումներն են սպառման կամ արտադրության ծավալների, ռեսուրսների գնման և օգտագործման վերաբերյալ:

- Մակրոմիավորումների որոշումներ կամ մակրոորոշումներ, որոնց օբյեկտը ընդհանուր, համադրելի մեծություններն ու ծավալներն են, որոնք հանդիսանում են բաղադրյալ միավորների /խմբերի/ գործունեության արդյունք:

Միկրոորոշումները վերաբերում են կապիտալին և եկամուտներին, այսինքն՝ ռեսուրսների օգտագործմանը, կապիտալի ձևավորմանը, ծառայությունների ձեռքբերմանը, որոնք հնարավորություն են տալիս եկամուտ ստանալու: Կապիտալը ապրանքների պաշար է, որն առկա է տվյալ պահին: Եկամուտը ապրանքների և ծառայությունների հոսք է, որը ստեղծվում է այդ պաշարներով ժամանակի որոշակի հատվածում: Կապիտալի և եկամտի փոխկախվածության արտահայտություն է այն, որ կապիտալի միջոցով հասարակությանը մատուցվում են ծառայություններ, որոնք եկամուտ են բերում, այդ եկամուտը տնտեսավարող սուբյեկտների կողմից օգտագործվում է նաև կապիտալի պաշար ավելացնելու նպատակով:

Մակրոորոշումները ուղղված են ամբողջական բարիքների լրացմանը: Դրանց բնորոշ գծերն են.

- ա/ ամբողջական միավորում դրանք ընդունվում են այն մարմնի կողմից, որի ծրագիրը տիրապետող է և նշանակալի ազդեցություն ունի ժամանակի որոշակի հատվածում,
- բ/ ենթադրում են հարկադրանքի գործադրում,
- գ/ հիմնվում են ամբողջական միավորի մեջ մտնող բաղադրիչների գործունեության կանխատեսման վրա:

Մակրոորոշումների հիմնական տեսակներն են.

1. տնտեսական գործունեության մեջ աշխատուժի վերաբերյալ որոշումները,
2. քանակական որոշումները /օր. OPEC կարգավորում է նավթի վաճառքի քանակը/,
3. գնային որոշումները /օր. տրանսպորտային փոխադրումների սակագներ/:

Որոշումների ընդունման ժամանակ առաջանում են հետևյալ խնդիրները.

1. որոշումները կարող են լինել երկարաժամկետ, ինչը ստիպում է տնտեսական հաշվարկներում ներառել ժամանակի գործոնը,
2. որոշումները պետք է հաշվի առնեն ապագայի անորոշությունը,

3. որոշումներում անհրաժեշտ է հաշվի առնել այլ տնտեսական գործակալների որոշումները և կամքը:

Սովորաբար ցանկացած որոշում ընդունելիս հաշվի են առնում անորոշ ապագայի գործոնը: Այս դեպքում անհրաժեշտություն է առաջանում օգտվելու անորոշության գնահատման մի քանի չափանիշներից:

*Հապլասի չափանիշ:* Այս չափանիշով գնահատելու դեպքում անհրաժեշտ է յուրաքանչյուր գործողության համար որոշել հնարավոր շահավետության միջին մեծությունը և ընտրել այն գործողությունը, որին բնորոշ է շահավետության առավելագույն միջին մեծություն:

*Ուոլդի չափանիշ:* Այս դեպքում աշխատում են նվազագույն շահավետությունը դարձնել առավելագույն, այսինքն՝ ընտրել այնպիսի գործողություն, որին համապատասխանում է նվազագույն կորուստ:

### ***Թեմայի ամփոփում***

Ժամանակակից տնտեսությունն առավելապես ներկայանում է խմբային բնույթով: Միասնական և հզոր խմբերի ստեղծման միտումն ունի տնտեսագիտական, տեխնիկական և հոգեբանական աղբյուրներ: Խումբը հաճախ փոխակերպվում է որոշումների հակադրման միջոցի, որն առաջանում է շուկայի գործունեության արդյունքում:

Շատ դեպքերում խմբերը դառնում են «քաղաքական-տնտեսական հզորության բլոկներ», որոնք ոչ միայն ազդում են տնտեսական հարաբերությունների վրա հասարակության իմստիտուցիոնալ կառուցվածքի սահմաններում, այլև ցանկանում են փոխել այդ կառուցվածքը: Առաջանում են լոբբիստական խմբեր իշխանության գործադիր և օրենսդիր օղակներում, որոնք կյանքի են կոչում այդ տնտեսաքաղաքական բլոկների շահերը:

Պետությունն ակտիվ գործող տնտեսական գործակալ է, որը գործում է անհատական և խմբային տնտեսական գործակալների հետ համատեղ: Ընդ որում, նա աստիճանաբար առավել նկատելի տեղ է զբաղեցնում տնտեսական գործունեության մեջ:

Միկրոմիավորների որոշումները վերաբերում են կապիտալին և եկամուտներին, այսինքն՝ ռեսուրսների օգտագործմանը, կապիտալի ձևավորմանը, ծառայությունների ձեռքբերմանը, որոնք հնարավորություն են տալիս եկամուտ ստանալու: Մակրոորոշումները ուղղված են ամբողջական բարիքների լրացմանը:

### ***Հիմնական հասկացություններ***

Ազգային տնտեսական գործունեության գործակալ  
Պարզ և համալիր տնտեսական միավորներ

Խմբերը՝ որպես տնտեսական գործունեության գործակալներ  
Պետությունը՝ որպես տնտեսական գործունեության գործակալ  
Միկրոտրոշում  
Մակրոտրոշում  
Լապլասի և Ուոլդի չափանիշներ

### ***Հարցեր և առաջադրանքների***

1. Ձևակերպեք տնտեսական գործակալին բնորոշ գծերը:
2. Ինչպե՞ս է արտահայտվում պետության միջամտությունը տնտեսական կյանքին:
3. Թվարկեք պարզ և համալիր միավորների միջև առկա տարբերություններն ու նմանությունները:
4. Ի՞նչն է հանդիսանում միկրոտրոշումների օբյեկտ:
5. Ի՞նչն է հանդիսանում մակրոտրոշումների օբյեկտ:

## ԹԵՄԱ 3. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### 3.1. Տնտեսական գործունեության կազմակերպման ձևերը

Տնտեսական համակարգը, ըստ գերմանացի տնտեսագետ Վարներ Չոմբարտի /1863-1941/ բնորոշման, բնութագրվում է երեք խումբ տարրերով՝ ոգի, ձև, սուբստանցիա.

- ոգին տնտեսական գործունեության հիմնական հարուցիչն է,
- ձևը տնտեսական գործունեության սահմանները և տնտեսական գործակալների միջև հարաբերությունները որոշող սոցիալական, իրավական և ինստիտուցիոնալ տարրերի ամբողջությունն է,
- սուբստանցիան, այսինքն՝ տեխնիկան, մյութական միջոցների ամբողջությունն է, որոնց միջոցով ստացվում և փոխակերպվում են բարիքները:

Նշված տարրերով մա առանձնացրել է հինգ հիմնական տնտեսական համակարգեր.

1. Փակ տնտեսական համակարգում նպատակը ինքնապահովումն է /ոգի/. ձևը միասնական է և մենիշխանություն է, տեխնիկան պարզունակ է:

2. Արհեստագործական տնտեսական համակարգում նպատակը քաղաքի բնակիչների պահանջմունքների բավարարումն է, ձևը՝ արհեստագործական տեղամասերն են՝ վարպետների և ենթավարպետների աստիճանակարգով, և սուբստանցիան փոքր-ինչ առաջադիմական է:

3. Կապիտալիստական տնտեսական համակարգում նպատակը առավելագույն շահույթի ստացումն է, ձևը՝ արտադրության միջոցների մասնավոր սեփականությունը, աշխատողի կողմից իր աշխատուժի ազատ տնօրինումը, գործարարի կենտրոնական դերը, պետությունն անմիջականորեն չի մասնակցում տնտեսական գործունեությանը, սուբստանցիան՝ տեխնիկան, չափազանց առաջադիմական է:

4. Կոլեկտիվ տնտեսական համակարգում նպատակը տնտեսական կայունությունն է, որը զուգակցվում է բնակչության պահանջմունքների բավարարմամբ, ձևը՝ արտադրության միջոցների կոլեկտիվ սեփականությունն է. պետությունը կառավարում է արտադրությունը և բաշխում է ապրանքները՝ ապահովելով հավասարակշռություն առաջարկի և պահանջարկի, խնայողությունների և ներդրումների միջև, սուբստանցիան կապիտալիստական համակարգի մակարդակով զարգացած տեխնիկան է:

5. Կորպորատիվ տնտեսական համակարգում նպատակը անարխիայից խուսափելու ձգտումն է՝ պետության կողմից կազմակերպված

կորպորացիաների կառավարման հիման վրա, ձևը՝ տարբեր բնագավառների մասնագիտությունների ներկայացուցիչների խմբերն են, արտադրության միջոցների մասնավոր սեփականությունը, սուբստանցիան՝ կապիտալիստական համակարգի մակարդակի տեխնիկան:

Տնտեսական համակարգ հասկացությունը ծառայում է որպես օգտակար կապող օղակ պատմական և տնտեսական մեկնաբանությունների միջև: Մակայն համակարգ հասկացությունը լիակատար չէ, քանի որ չի առաջարկում ոչ մի տրամաբանական կատեգորիա, որը հնարավոր լիներ օգտագործել տնտեսական գործունեության վերլուծության մեջ, այդ պատճառով խեղաթյուրում է իրական տնտեսական գործընթացները:

Վալտեր Օյկենը /1891-1950թթ./ նշում է, որ այն կազմված է յուրաքանչյուր դեպքի համար իրականացված այնպիսի ձևերի ամբողջությունից, որում կազմակերպությունները և տնային տնտեսությունները կապված են միմյանց, և որոնցում իրականում ընթանում է տնտեսական գործընթացը:

Տնտեսակարգի խնդիրն այն է, որ կարողանա փոխկապակցել բոլոր աշխատողների յուրաքանչյուր աշխատանքային ժամը արտադրության նյութական միջոցների ակտիվ քանակի հետ այնպես, որ տնտեսական սահմանափակումը առավելագույն չափով հաղթահարված լինի: Որքան մեծ են աշխատանքի բաժանման չափերը, և որքան ինտենսիվ է այն ընթանում, այնքան բարձր են տնտեսակարգին ներկայացվող պահանջները: Դրանից է կախված, թե ինչպես են համակցվում միմյանց առանձին ծրագրերը և գործողությունները, ինչպիսի պահանջումներ են բավարարվում, ինչպես է ընդհանրապես իրականացվում կարգավորումը: Որոշակի տնտեսակարգի հաստատումից է կախված տնտեսական գործընթացի բավարար կարգավորման հնարավորությունը:

Յուրաքանչյուր առանձին վերցրած տնտեսակարգ միակն է իր տեսակի մեջ, ինքնատիպ: Մակայն այդ ինքնատիպությունը ծագում է մաքուր ձևերի սահմանափակ քանակի տարբեր օրինակների միաձուլման արդյունքում:

### 3.2. Տնտեսության վարման հիմնական ձևերը

Մարդկության ողջ պատմության ընթացքում կարելի է առանձնացնել տնտեսության վարման երկու հիմնական ձևեր.

1. կենտրոնացված կառավարվող տնտեսություն, որը կարգավորվում է միասնական ծրագիր կազմողի կողմից՝ համաձայն այդ ծրագրի,

2. շուկայական տնտեսություն, երբ բազմաթիվ կազմակերպություններ, անհատական և տնային տնտեսություններ ինքնուրույն մշակում

են ծրագրեր, միմյանց հետ մտնում են տնտեսական հարաբերությունների մեջ՝ որոնցում առկա է շուկաների ինքնավարություն, որը համակարգում է նրանց գործունեությունը: Կախված շուկայի ձևից՝ անհատական տնտեսությունները մշակում են միմյանցից տարբեր ծրագրեր և համակարգում դրանք ըստ իրենց հայեցողության:

Շուկայի տարբեր ձևերը ներկայացված են աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

**Վ. Օլկենի կառուցվածքային աղյուսակը**

| Առաջարկի կազմակերպություններ | Պահանջարկի կազմակերպություններ |                                                             |                                                     |                                                           |                                                   |
|------------------------------|--------------------------------|-------------------------------------------------------------|-----------------------------------------------------|-----------------------------------------------------------|---------------------------------------------------|
|                              | մրցակցություն                  | մասնակի օլիգոպոլիա                                          | օլիգոպոլիա                                          | մասնակի մոնոպոլիա                                         | մոնոպոլիա                                         |
| մրցակցություն                | լրիվ մրցակցություն             | շուկայի ձևերը                                               |                                                     |                                                           | առաջարկի մոնոպոլիա                                |
|                              |                                | պահանջարկի մասնակի օլիգոպոլիա                               | առաջարկի օլիգոպոլիա                                 | առաջարկի մասնակի օլիգոպոլիա                               |                                                   |
| մասնակի օլիգոպոլիա           | պահանջարկի մասնակի օլիգոպոլիա  | պահանջարկի երկկողմանի օլիգոպոլիա                            | մասնակի օլիգոպոլիա, առաջարկի սահմանափակ օլիգոպոլիա  | մասնակի օլիգոպոլիա, առաջարկի սահմանափակ մասնակի մոնոպոլիա | մասնակի օլիգոպոլիա, առաջարկի սահմանափակ մոնոպոլիա |
| օլիգոպոլիա                   | պահանջարկի օլիգոպոլիա          | մասնակի օլիգոպոլիա, պահանջարկի սահմանափակ օլիգոպոլիա        | երկկողմանի օլիգոպոլիա                               | օլիգոպոլիա, առաջարկի սահմանափակ մասնակի մոնոպոլիա         | օլիգոպոլիա, առաջարկի սահմանափակ մոնոպոլիա         |
| մասնակի մոնոպոլիա            | պահանջարկի մասնակի մոնոպոլիա   | մասնակի օլիգոպոլիա, պահանջարկի սահմանափակ մասնակի մոնոպոլիա | օլիգոպոլիա, պահանջարկի սահմանափակ մասնակի մոնոպոլիա | երկկողմանի մասնակի մոնոպոլիա                              | մասնակի մոնոպոլիա, առաջարկի սահմանափակ մոնոպոլիա  |
| մոնոպոլիա                    | պահանջարկի մոնոպոլիա           | մասնակի օլիգոպոլիա, պահանջարկի սահմանափակ մոնոպոլիա         | օլիգոպոլիա, պահանջարկի սահմանափակ մոնոպոլիա         | մասնակի մոնոպոլիա, պահանջարկի սահմանափակ մոնոպոլիա        | երկկողմանի մոնոպոլիա                              |

Վ. Օյկենի աղյուսակից երևում է, որ տնտեսավարման երկու ձևերի կողքին կարելի է առանձնացնել երրորդը՝ տնտեսության կարգավորում իշխանական խմբավորումների կողմից /օլիգոպոլիա, մոնոպոլիա/: Տնտեսավարման այս տեսակն ունի իրեն հատուկ տնտեսական օրինաչափությունները, որոնք որոշվում են շուկաներում իշխանության բաշխմամբ և հզորությամբ:

Մրցակցային և ոչ մրցակցային շուկաներում գործում է կարգավորման երկու տարբեր տեսակ: Առաջին դեպքում շուկայի բոլոր գործակալների ծրագրերում որպես կոշտ մեծություն հանդես են գալիս գները, թեև, առանձին վերցրած, կազմակերպությունը աննշան ազդեցություն ունի գնագոյացման վրա, այնուամենայնիվ, չի կարող իրականացնել շուկայական ռազմավարություն:

Ընդհակառակը, այն շուկայում, որտեղ իշխանությունը խտացված է, կան շուկայական հարաբերությունների մի քանի կամ շատ մասնակիցներ, որոնք մեծ կամ փոքր չափով գներին վերաբերվում են որպես փոփոխական մեծություն: Ուստի նրանք ի վիճակի են իրականացնելու գնային քաղաքականություն և դրանով իսկ՝ մասնակցելու շուկայական հարաբերությունների մյուս մասնակիցների ծրագրերին (օրինակ՝ գերշահույթի, շուկաների փակման, արտադրության արգելման միջոցով):

Այս տնտեսակարգը՝ տնտեսության կարգավորումը իշխանություն ունեցող խմբերի կողմից, արտահայտվում է զարգացած երկրներից շատերում:

Կենտրոնացված կառավարվող տնտեսություններում տնտեսական քաղաքականությունն ի գործ է տնտեսությունը ռացիոնալ կարգավորելու: Այն չի կարող փոխկապակցել առաջարկը և պահանջարկը, ինչպես նաև հաշվի առնել ռեսուրսների սահմանափակությունը: Զանի որ այս համակարգը զրկում է անհատին տնտեսական ընտրություն կատարելու և իր վրա պատասխանատվություն վերցնելու ազատությունից, ապա այն վաղ թե ուշ ծնունդ է տալու աղքատության: Այս համակարգը ազդում է նաև երկրի սահմանադրության վրա, քանի դրան բնորոշ են դիկտատուրայի տարրեր և անհամատեղելի է իրավական պետության և ժողովրդավարության սկզբունքների հետ:

Բնականաբար, քաղաքական տարբեր ուղղվածություն ունեցող երկրներում տնտեսակարգերը տարբեր են. կենտրոնացված կառավարվող տնտեսությունը հաստատվում է ավտորիտար և տոտալիտար քաղաքական ռեժիմներով երկրներում, շուկայական տնտեսությունը՝ ժողովրդավար երկրներում: Սակայն մաքուր ձևով այս տնտեսակարգերը խիստ հազվադեպ են հանդիպում: Տոտալիտար քաղաքական ռեժիմը ենթադրում է արտադրության միջոցների հաշվին ձևավորվող հասարակական սեփականություն և զարգացնում է թիմային տնտեսություն: Սակայն 1933-1945թթ. Գերմանիայում ստեղծված նման ռեժիմը հիմ-

նականում հիմնվեց մասնավոր սեփականության վրա: Ժողովրդավարական ձևը նույնպես հաճախ համակցվում է ռեսուրսների նկատմամբ մասնավոր սեփականության հետ:

Կան երկրներ, որտեղ ժողովրդավարության պայմաններում անգամ զգալի է պետական սեփականության դերը՝ Ֆրանսիա, Ավստրիա, Իսրայել: Որքան ուժեղ է միտումը դեպի քաղաքական տոտալիտարիզմ, այնքան մեծ է պետության միջամտությունը սեփականության և տնտեսության վերահսկման հարցերում:

Կարելի է պնդել, որ շատ երկրներում գործում են խառը տնտեսական համակարգեր: Պետության դերը տնտեսական գործընթացում բնութագրվում է երկու ցուցանիշների միջոցով՝ կենտրոնացված պետական ծախսումների և ՀՆԱ-ի նկատմամբ տոկոսային հարաբերակցության տեսքով ստացվող եկամուտների: Այս ցուցանիշները առանձին երկրներում տարբեր դրսևորումներ են ունենում:

Աղյուսակ 2

**Պետական ծախսերի և եկամուտների միջինացված տվյալներ**

|   | Երկրներ  | Ծախսեր, % | Եկամուտներ, % |
|---|----------|-----------|---------------|
| 1 | Բրազիլիա | 25.1      | 34.4          |
| 2 | Կանադա   | 23.4      | 20.5          |
| 3 | Ֆրանսիա  | 43.1      | 41.4          |
| 4 | Գերմանիա | 29.9      | 28.5          |
| 5 | Ճապոնիա  | 17.0      | 13.6          |
| 6 | Իտալիա   | 51.3      | 36.9          |
| 7 | ԱՄՆ      | 27.9      | 19.7          |

Աղբյուրը՝ Градов А. П., Национальная экономика, М., 1999г..

Պետական ծախսերի և եկամուտների մակարդակը դեռևս լիարժեք պատկերացում չի տալիս տնտեսական կյանքում պետության դերի մասին:

Տնտեսական գործունեության նկատմամբ խառը վերահսկողությունը ենթադրում է ինչպես պետության կողմից անմիջական միջամտություն, այնպես էլ շուկայական ուժերի կողմից վերահսկողություն: Նման հարաբերակցության վտանգավորությունն այն է, որ որոշակի պայմաններում տնտեսական իշխանությունը կարող է կենտրոնացնալ հզոր տնտեսական խմբերի ձեռքում, կարող է վերաճել «մաֆիոզ» կառույցների: Նման խմբերի ներկայացուցիչների ներթափանցումը իշխանական կառույցներ, նրանց շահերի լոբբիզմը կարող է հանգեցնել ողջ տնտեսական գործունեության տարանջատման:

Եթե քաղաքական իշխանության սահմանները ձեռք են բերվում օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների տարանջատ-

մամբ, ապա տնտեսական իշխանության սահմանները ձեռք են բերվում մրցակցային կարգի ներդրմամբ: Լիակատար մրցակցությունը ենթադրում է շուկայական հարաբերությունների բոլոր մասնակիցներին գրկել շուկայում խաղի կանոնները փոփոխելու հնարավորությունից: Դրա համար պետությանն անհրաժեշտ է առաջադրել շուկայի ձևը, այսինքն՝ խաղի այն կանոնները, որոնցով վարում են տնտեսությունը: Վ. Օյկենը 1947թ. պնդում էր, որ «Անհրաժեշտ է պայքարել ոչ թե այսպես կոչված տնտեսական իշխանության չարաշահումների, այլ տնտեսական իշխանության դեմ»:

Լիակատար մրցակցությունը կարող է իր համար ճանապարհ հարթել այն դեպքում, երբ պետությունը և հասարակությունը ընդդիմանում են մրցակցության մյուս բոլոր ձևերին: Մրցակցային կարգը տարբերվում է «ազատ շուկայականից»: Այս տնտեսական քաղաքականությունը հիմնվել է այն պնդման վրա, որ ռացիոնալ տնտեսակարգը կսկսի զարգանալ ինքնիրեն՝ հասարակության տարերային ուժերի կողմից, ներքևից վերև ուղղությամբ, եթե գոյություն ունենա ազատություն և պահպանվի իրավունքի սկզբունքը:

Տնտեսական լիբերալիզմը ցույց է տվել, որ լիարժեք իրավական պետություն կարող է կայանալ այնտեղ, որտեղ պետական-իրավական կարգին զուգընթաց կյանքի է կոչվել համարժեք տնտեսակարգ:

Տնտեսագիտության տեսանկյունից՝ ազատ շուկայի գլխավոր նպատակը հանգում է հետևյալին. սպառողները պետք է տիրապետեն ամենօրյա տնտեսական գործընթացին, որը միաժամանակ հարկ է, որ կարգավորվի անհատական տնտեսությունների գործունեության համակարգման միջոցով: Սպառողները այս դեպքում պլանավորումը ազատ իրականացնում են գնային ինքնակարգավորման միջոցով:

Սկզբնական շրջանում ազատ շուկայի տնտեսական քաղաքականությունը հիմնվում էր այն պնդման վրա, որ շուկայի գործունեության ընթացքում ծագում է մրցակցություն, որի սահմաններում աշխատուժը և ապրանքային հոսքերը ռացիոնալ բաշխվում են կազմակերպությունների և տնային տնտեսությունների միջև, իսկ պահանջումները լավագույնս բավարարվում են: Սակայն պարզվում է, որ շուկայի այլ ձևերը նույնպես գործում են, առավել ևս, որ տվյալ տնտեսակարգը նրանց նույնպես ազատություն է տալիս: Բազմաթիվ տեղական աշխատանքի շուկաներում առաջանում են գործարանային մոնոպոլիաներ, իսկ տեղական ապրանքային շուկաներում՝ օլիգոպոլիաներ և մոնոպոլիաներ, ինչպես նաև տիրապետման ահռելի դաշտ ունեցող կարտելներ:

Մրցակցության վերացման ձգտումը և մենաշնորհի իրավիճակի ստեղծումը բոլոր ժամանակներում էլ եղել է: Բանն այն է, որ յուրաքանչյուրը միջոց է փնտրում շուկայում մենաշնորհի դիրք գրավելու համար:

Գոյություն ունի մոնոպոլիա ստեղծելու հակում՝ փաստ, որի հետ պետք է հաշվի նստի յուրաքանչյուր տնտեսական քաղաքականություն:

Նման իրավիճակների հիմնական պատճառն այն է, որ ազատական (լիբերալ) քաղաքականությունն անհատներին հնարավորություն է տալիս ստեղծելու ոչ միայն խաղի կանոնները, վերջինիս կառուցվածքը և ձևերը, որոնցում վարվում է տնտեսությունը, այլև ամենօրյա պայքար ծավալելու քանակի և զնի համար: Սա հնարավորություն է տալիս պայքարելու տնտեսակարգի ձևի համար, եթե միայն դա համապատասխանում է իրավունքի որոշակի սկզբունքներին:

Ազատությունը տնտեսությունում բազմաթիվ երևույթների պատճառ կարող է դառնալ:

1. Ստեղծվում են շուկայի բազմազան տեսակներ և դրամական համակարգեր: Կարող են առաջանալ մոնոպոլիաներ և օլիգոպոլիաներ, ինչպես նաև ֆինանսական կարգեր, որոնց սահմաններում ֆինանսական ապահովությունը կախված է վարկավորումից:

2. Ինդուստրիալ տնտեսություններում պարբերաբար խախտվում է հավասարակշռությունը, որը պայմանավորված է տեխնիկական առաջընթացով, բնական տեղաշարժերով, բերքի անկայունությամբ և այլ փոփոխություններով: Նման խախտումները անհրաժեշտ է վերացնել կարգավորման համակարգի միջոցով:

3. Անհավասարության իրավիճակը առաջ է բերում կենտրոնացված կառավարման օգնությամբ տնտեսական գործընթացներին պետական միջամտության միտում: Հետևաբար նման կարգը կարող է ձևավորել տնտեսակարգի այլ տեսակներ:

4. Միայն շուկայի առանձին տեսակներ իրենց չեն արդարացրել: Ընդհանուր առմամբ, զմերի շուկայական մեխանիզմը կարող է լուծել տնտեսական գործունեության կարգավորման խնդիրը:

Հարկ է թվարկված հետևանքները նկատի ունենալ, քանի որ դրանք դառնում են անհրաժեշտ պայման՝ տնտեսակարգի այլ տեսակների ձևավորման համար:

### **3.3. Ազգային տնտեսության մրցակցային առավելությունները և դրանց բացահայտման անհրաժեշտությունը**

Չարգացող երկրների համար մրցակցային առավելություն ձեռք բերելու հարցը հրատապ է դառնում: Հարցը հատուկ սրություն է ստանում, եթե նշված երկիրն ունի փոքր տարածք, փոքր ներքին շուկա և սպառողների ցածր զնդողունակություն: Նման պայմանների առկայությունը ստիպում է մտածել արտաքին շուկա դուրս գալու մասին, ինչին

կարելի է հասնել միայն մրցունակ արտադրանքի առկայության դեպքում: Տնտեսագիտության մեջ առավել հաճախ հնչող հարցերից մեկն այն է, թե ինչու երկրների միջև մրցակցության ժամանակ որոշ երկրներ հաղթող են լինում, մյուսները՝ պարտվող: Մրցունակություն, ահա թե ինչն է առաջին հերթին անհանգստացնում երկրի կառավարող և արդյունաբերական վերնախավին: Ըստ ամերիկացի հայտնի տնտեսագետ, Բիզնեսի հարվարդյան դպրոցի պրոֆեսոր Մայքլ Պորտերի՝ այս արտահայտության մեջ խտացված ձևակերպված է երկրի մասշտաբով տնտեսական գործունեության վերլուծության հիմնական նպատակը: Նման վերլուծություն իրականացնելիս անհրաժեշտ է պատասխանել այն հարցին, թե արդյոք այս կամ այն երկրի տնտեսությունը ունա՞լ է ապահովելու կյանքի բավարար մակարդակ իր քաղաքացիների համար, այսինքն՝ ստեղծելու մի կենսամակարդակ, որը համապատասխանում է զարգացած երկրներին բնորոշ համընդհանուր չափորոշիչներին:

Մրցակցային առավելություն հասկացությունը, որպես ազգային տնտեսության զարգացման մակարդակի չափանիշ, քննարկվել է բազմաթիվ դասական տնտեսագետների կողմից և ունի իր ծագման պատմությունը:

«Հետազոտություն ժողովուրդների ազգային հարստության բնույթի և պատճառների մասին» գրքում /1776թ./ Ադամ Սմիթը քննադատեց մերկանտիլիստների այն գաղափարը, որ երկրի հարստությունը պայմանավորվում է առկա զանձերի քանակությամբ: Դրա փոխարեն նա հայտարարեց, որ երկրի իրական հարստությունը կազմված է քաղաքացիներին մատչելի ապրանքներից և ծառայություններից: Սմիթը մշակեց բացարձակ գերակայության տեսությունը, ըստ որի՝ որոշ երկրներ կարող են արտադրել առավել արդյունավետ, քան մյուսները: Այս տեսության հիմքում նա դրեց հարց. «Ինչու պետք է քաղաքացիները զենն հայրենական արտադրանք, երբ նրանք կարող են այդ արտադրանքը ավելի էժան գնով ձեռք բերել արտասահմանից»: Նա գրում է. «Ցանկացած խելացի ընտանիքի հոր կանոնն այն է, որ տանը չպետք է արտադրել այն, ինչն արտադրելն ավելի քանկ է, քան զենել»: Այն, ինչը խելամիտ է ընտանիքի համար, անմիտ չի դառնա ողջ պետության համար: Ինչ խենթություն է՝ պատրաստել զինի Շոտլանդիայում, երբ ավելի էժան կարելի է բերել Ֆրանսիայից կամ Պորտուգալիայից:

«Բոլորը համամիտ են դրա հետ,- գրում է Սմիթը,- սակայն այս հիմարությունն անում են այնտեղ, որտեղ տարիֆային դրույքներով խանգարում են մեզ օգտվել բնական առավելություններից, որոնք առկա են այլ ազգերի մոտ»: Երկիրը կարող է ունենալ բնական առավելություն արտադրանքի արտադրության համար կլիմայական պայմանների, բարենպաստ աշխարհագրական դիրքի կամ բնական ռեսուրսների

առկայության շնորհիվ: Օրինակ՝ քեյի արտադրությունը Շրի Լանկայում պայմանավորված է բարենպաստ կլիմայական պայմաններով:

Համաշխարհային առևտրաշրջանառության մեծ մասը կազմված է առավելապես պատրաստի արտադրանքից և ծառայություններից, քան գյուղատնտեսական արտադրանքից և բնական հանածոներից: Այդ ապրանքների արտադրության տեղաբաշխումը կախված է ձեռք բերված առավելություններից, որոնք պայմանավորված են արտադրական տեխնոլոգիաներով, այսինքն՝ բարդ և բազմաբնույթ արտադրանք թողարկելու կարողությամբ: Մական բացարձակ առավելության տեսությունը հաշվի չի առնում երկրների չափերի տարբերությունները: Խոշոր երկրներն ակնհայտ առավելություններ ունեն փոքրերի համեմատ, ինչը եկամտի լրացուցիչ աղբյուր է նրանց համար: Իսկ որքան խելամիտ և արդյունավետ են օգտագործվում դրանք, այնքան երկրի հարստանալու ներուժն ավելանում է: Պետք է նկատի ունենալ, որ բացի առավելություններից, կարող են լինել նաև մեծ ծախսեր: Դրանցից են.

- Խոշոր երկրները կլիմայական բազմաբնույթ պայմանների և բնական պաշարների առկայության պարագայում սովորաբար վաճառում են արտադրված արտադրանքի փոքր մասը և ձեռք են բերում օգտագործվող ապրանքների փոքր քանակություն: Օրինակ՝ 1992թ-ին ՀԱՄ-ում արտահանման ծավալը ԱՄՆ-ում կազմել է 11 տոկոս, Ֆրանսիայում՝ 23 տոկոս, Գերմանիայում՝ 24 տոկոս:

- Խոշոր երկրներն ունեն բազմատեսակ ռեսուրսներ /Չինաստանն ունի մոտ 10 մլն քառ. կմ տարածք, տնօրինում է քարածխի մոտ 450 մլրդ տ, մավթի՝ 3 մլրդ տ, երկաթի հանքաքարի՝ 10 մլրդ տ բնական պաշարներ, Ֆրանսիան ունի 55 հազ.քառ. կմ տարածք և տնօրինում է 10-20 մլրդ տ քարածխի, 12.3 մլրդ տ երկաթի հանքաքարի պաշարներ, իսկ վերջինիս ջրային էներգիայի ռեսուրսները գնահատվում են 9 մլն կվտ/:

- Խոշոր երկրները ներքին առևտրում ունեն առավել բարձր տրանսպորտային ծախսեր: Օրինակ՝ ԱՄՆ-ի արտադրական հզորությունների մեծ մասը գտնվում է կանադական կամ մեքսիկական սահմաններից ավելի քան 100 մղոն հեռավորության վրա, իսկ Նիդեռլանդներում գրեթե բոլոր արտադրական հզորությունները տեղաբաշխված են 10 մղոն հեռավորության վրա:

- Խոշոր երկրները կարող են իրականացնել խոշոր սերիական արտադրություն:

Տնտեսական առավելության տեսությունը զարգացրել է Դավիթ Ռիկարդոն: Նա մշակել է հարաբերական առավելության տեսությունը, որի էությունը հանգում է հետևյալ գաղափարին. առևտրից ամեն դեպքում կարող է շահույթ լինել, քանի որ այս կամ այն երկիրն ի վիճակի է թողարկել շատ բազմազան ապրանքներ, սակայն նա ունի հարաբերա-

կամ առավելություն միայն խիստ որոշակի արտադրատեսակների արտադրության մեջ: Սա նշանակում է, որ երկիրը պետք է մասնագիտանա այն արտադրամքի արտադրության մեջ, որը կարող է առավել արդյունավետ արտադրել, քան այլ արտադրամքներ: Այլ կերպ ասած՝ յուրաքանչյուր երկիր արտահանում է այն արտադրամքը, որի թողարկման մեջ նա առաջ է անցել, իսկ ներմուծում է այն արտադրամքը, որի թողարկման մեջ առաջ է անցել այլ երկիր:

Բացարձակ և հարաբերական առավելությունների հարցում պետության մոդիֆիկացիան արտացոլվել է շվեդ տնտեսագետներ Էլի Հեկշերի և Բերտիլ Օհլինի աշխատություններում: Նրանց տեսությունը ստացել է արտադրության գործոնների հարաբերակցության տեսություն անվանումը: Ըստ նշված տեսության, աշխատանքի և հողի կամ կապիտալի բաժնի հարաբերակցության տարբերությունն ըստ երկրների կարող է բացատրել արտադրության գործոնների արժեքների տարբերությունը: Նրանք ենթադրեցին, որ եթե աշխատանքային ռեսուրսները հողի կամ կապիտալի նկատմամբ ավելցուկային են, ապա աշխատանքի վրա կատարված ծախսումները ցածր կլինեն, իսկ կապիտալ ծախսումները և հողի արժեքը՝ բարձր: Եթե աշխատանքային ռեսուրսները սահմանափակ են, նրանց արժեքը բարձր կլինի հողի և կապիտալի արժեքների համեմատ: Նշված գործոնների արժեքը կարող է դրդել երկրներին արտադրության զարգացման և այն արտադրամքի արտահանում իրականացնելու գործընթաց, որի վրա ծախսվել են առավել էժան արտադրական գործոններ: Հեկշեր-Օհլինի թեորեմը պնդում է, որ երկիրն արտահանում է այն ապրանքները, որոնց արտադրության վրա առավել արդյունավետ են օգտագործվել ավելցուկային գործոններ և ներմուծում է պակասուրդային արտադրական գործոններով բնութագրվող ապրանքներ: Այս թեորեմի մաթեմատիկական մոդելի հեղինակը Պ. Սամուելսոնն ու Վ. Ստոլպերն են:

Տեսությունը, սակայն, քննադատվել է Վ. Լեոնտևի կողմից: Նրա հետազոտության արդյունքները, որ ստացել են «Լեոնտևի պարադոքս» անվանումը, ուղղակի հակադրվում էին Հեկշեր-Օհլինի եզրահանգումներին: Լեոնտևը, օգտագործելով «ծախսեր-եկամուտ» միջճյուղային հաշվեկշռի մոդելը, որը կազմված էր ԱՄՆ տնտեսության 1947թ. ցուցանիշների հիման վրա, ցույց տվեց, որ չնայած կապիտալի ավելցուկին, ԱՄՆ-ի արտահանման մեջ գերակշռել են աշխատատար ապրանքներ, իսկ ներմուծման մեջ՝ կապիտալատար ապրանքներ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ առաջին համաշխարհային պատերազմից հետո ԱՄՆ-ում կապիտալը հարաբերականորեն պակասուրդային գործոն էր, իսկ աշխատավարձի մակարդակը նշանակալիորեն բարձր էր, ապա, Հեկշեր-Օհլինի թեորեմի համաձայն, պետք է արտահանվեին կապիտալատար ապրանքներ, իսկ ներմուծվեին՝ աշխատատարները:

Վերջին ժամանակներս համաշխարհային առևտրի զարգացման նոր միտումները պահանջեցին որոշ ընդունված հայացքների վերանայում: 1990-ականներին Մ. Պորտերիը ստաջադրեց մրցակցային առավելության տեսությունը: Պորտերը մանրամասն վերլուծում է առանձին ֆիրմաների և տարբեր երկրների ազգային տնտեսությունների մրցունակության պատճառների բացահայտման մոտեցումները:

Նա գալիս է այն եզրահանգման, որ մրցակցային առավելությունն արտահայտում է ռեսուրսների օգտագործման արդյունքայնությունը (ապրանքայնություն): Այս սկզբունքը գործում է ինչպես կազմակերպության, այնպես էլ ողջ ազգային տնտեսության մակարդակով:

Եթե կազմակերպության համար մրցակցային առավելության քանակական գնահատականը կարող է արտահայտվել արտադրության շահութաբերությամբ, այսինքն՝ շահույթի մեծության և նույն ժամանակահատվածի բոլոր տեսակի ռեսուրսների վրա կատարված ծախսերի հանրագումարի հարաբերակցությամբ, ապա ազգային տնտեսության համար նման գնահատումը կարող է իրականացվել տարեկան ազգային եկամտի և տարվա ընթացքում օգտագործված ռեսուրսների արժեքի հարաբերակցությամբ: Համաշխարհային բանկի մեթոդաբանության համաձայն՝ երկրի հարստությունը գնահատվում է հետևյալ ցուցանիշների ամբողջությամբ.

1. համախառն ներքին արդյունք՝ 1 շնչի հաշվով,
2. բնական ռեսուրսների արժեք,
3. աշխատանքային ռեսուրսների արժեք,
4. ազգային տնտեսության բոլոր կազմակերպությունների և ճյուղերի արժեք:

Այսպիսով, երկրի տնօրինության տակ գտնվող ռեսուրսների արժեքը կարող է որոշվել այս մեթոդաբանության հիման վրա:

Մրցակցային առավելության մակարդակի անուղղակի գնահատումը կարող է կատարվել միավոր ՀՆԱ-ի վրա ծախսված ռեսուրսների մեծության միջոցով: Կարևոր է պարզաբանել երկրի մրցակցային առավելության պահպանման և ձևավորման կամ, այլ խոսքով՝ ազգային տնտեսության բարձր մակարդակի զարգացման համար անհրաժեշտ նախադրյալները:


### 3.4. Երկրի մրցակցային առավելության նախադրյալները

Մ. Պորտերի պնդմամբ՝ երկրի մրցակցային առավելության նախադրյալները յուրաքանչյուր երկրի համար կազմում են մի համակարգ, որի մեջ մտնում են.

- արտադրական գործոնների չափորոշիչները,
- ապրանքների և ծառայությունների պահանջարկի չափորոշիչները,
- տվյալ երկրի կազմակերպությունների ռազմավարությունը, դրանց կառուցվածքը և մրցակցությունը,
- հարակից և աջակցող ճյուղերի բնույթը:

Այս համակարգում ներառվում են նաև «պատահական իրադարձություններ» և «կառավարության գործողություններ», որոնք կարող են ուժեղացնել կամ թուլացնել երկրի մրցակցային առավելությունը:

Երկրի մրցակցային առավելությունները ներկայացնենք գծապատկերի միջոցով:



Գծապատկեր 2. Մրցակցային առավելության նախադրյալներն ըստ Մ. Պորտերի

Թե ինչ են իրենցից ներկայացնում այս նախադրյալները, դիտարկենք առանձին- առանձին:

*Գործոնների չափորոշիչներ:* Արտադրական գործոնները նյութական և ոչ նյութական պայմաններ են, որոնք արտադրական գործընթացում անհրաժեշտ են առանձին կազմակերպությունների, ինչպես նաև դրանք հիմնած երկրի մրցակցային առավելության ձևավորման համար:

Կախված գործոնների կոնկրետ նշանակությունից՝ կազմակերպությունը, որը գործում է ազգային տնտեսության այս կամ այն ճյուղում, մրցակցային առավելություն ձեռք բերելու և պահպանելու համար կարող է ստանալ կամ բարենպաստ, կամ անբարենպաստ արտադրական պայմաններ: Գործոնները լինում են ընդհանուր և հատուկ, այսինքն՝ կամ անմիջականորեն վերաբերում են բոլոր կազմակերպություններին, կամ որևէ առանձնահատուկ կազմակերպության:

*Կազմակերպության ռազմավարությունը, դրանց կառուցվածքը և մրցակցությունը:* Ցանկացած կազմակերպություն հետևում է իր սեփական մրցակցային ռազմավարությանը, որպեսզի լավագույն դիրք և օգուտ ձեռք բերի մրցակցային առավելությունից: Դա նշանակում է, որ մրցակից կազմակերպության գործողությունները առաջ են բերում ֆիրմաների գործողությունների նոր պայմաններ: Եթե երկրում բացակայում է մրցակցային միջավայրը, եթե կազմակերպությունների միջև չկա մրցակցություն, եթե կազմակերպության ռազմավարությունն ուղղված չէ մրցակցային պայմաններում գործելուն, ապա առնվազն իրատեսական չէ հուսալ, որ ներքին կամ արտաքին շուկաներում կձևավորվի մրցակցային առավելություն:

*Պահանջարկի չափորոշիչները:* Դրանց վերագրվում են, նախ և առաջ, սպառողների պահանջները գնվող ապրանքների և ծառայությունների որակի նկատմամբ, պահանջարկի, պահանջարկի գնային և եկամտային ճկունությունը, խաչաձև ճկունությունը, այս կամ այն սոցիալական խմբերի կողմից տարբեր պահանջմունքների հրատապության գիտակցման աստիճանը, ազգային ավանդույթներն ու սովորույթները, պահանջմունքների կենսական պարբերաշրջանի փուլերը և այլ փոփոխություններ, որոնք բնութագրում են պահանջարկը, նրա մեծությունը և դինամիկան:

*Կից և աջակցող ճյուղերը:* Նման զարգացած ճյուղերի առկայությունը ազգային տնտեսությունում, այսինքն՝ ճյուղեր, որոնք ապահովում են այս կամ այն կազմակերպությանն անհրաժեշտ նյութերով, կիսաֆաբրիկատներով, լրակազմող պատրաստվածքներով և այլ անհրաժեշտ նյութերով, միջոցներով և տեղեկատվական օբյեկտներով, երկրում գործող յուրաքանչյուր կազմակերպության համար մրցակցային առավելություն ձևավորելու և պահպանելու կարևորագույն պայման

է: Կից ճյուղերը իրենք կարող են համդես գալ որպէս մրցակիցներ: Ուստի դրանց կարելի է համարել մաւ գիտատեխնիկական առաջընթաց ապահովողներ այն կազմակերպություններում, որոնց նրանք սպասարկում են:

*Ազգային տնտեսության կազմակերպությունների մասնավորեցման մակարդակը:* Շուկայական տնտեսակարգին անցման պայմաններում կարևորագույն հանգամանք է տնտեսության ապապետականացումը, մրցակցային միջավայրի ձևավորման համար անհրաժեշտ մախադրյալների ստեղծումը: Մասնավորեցումը ապապետականացման միջոց է:

*Պատահական իրադարձություններ:* Պատահական են համարվում այն դէպքերը, որոնք քիչ ընդհանուր առնչություն ունեն երկրի տնտեսական զարգացման հետ, և որոնց վրա հաճախ չեն կարող ազդել ոչ կազմակերպությունը, ոչ կառավարությունը: Դրանք հայտնագործություններն են, խաշոր տեխնոլոգիական նորամուծությունները, ռեսուրսների համաշխարհային շուկայում գների կտրուկ փոփոխությունը, համաշխարհային կամ ներքին պահանջարկի հանկարծակի փոփոխությունը և այլն: Առավել մեծ ազդեցություն ունեն արտակարգ /ֆորս-մաժորային/ իրավիճակները՝ բնական աղետներ, պատերազմ, համաճարակ և այլն: Պատահական դէպքերը կարող են փոփոխել մրցակցային կազմակերպությունների դիրքերը:

*Կառավարության գործողությունները:* Պետությունը ազգային առավելության ձևավորման գործում կարող է ունենալ ինչպէս դրական, այնպէս էլ բացասական ազդեցություն: Գործոնների փոփոխությունների վրա ազդում են դրամավարկային, հարկային, մաքսային քաղաքականությունները: Ինքը՝ պետությունը, ապրանքներ և ծառայություններ է գնում բանակի, տրանսպորտի, կապի, կրթության, առողջապահության և պետությանը վերապահված այլ գործառույթների իրականացման համար:

Այսպիսով, կարելի է եզրահանգել, որ մախադրյալների «ազգային բուրգի» բաղադրատարրերի փոխադարձ ազդեցությունը ստեղծում է մրցակցային առավելության աճի պայմաններ ինչպէս առանձին կազմակերպությունների, այնպէս էլ ողջ տնտեսության համար: Եթե կազմակերպության մրցակցային առավելությունը կարելի է վերհանել ներքին կամ արտաքին շուկայում, ապա ողջ ազգային տնտեսության մրցակցային առավելությունը՝ միայն այլ երկրների հետ համեմատության մեջ, այսինքն՝ համաշխարհային տնտեսության սահմաններում:

### 3.5. Ազգային տնտեսության զարգացման մակարդակի գնահատման մակրոտնտեսական ցուցանիշները

Մակրոէկոնոմիկայում հայտնի են հետևյալ տնտեսական ցուցանիշները՝ համախառն ներքին արդյունք՝ ՀՆԱ, համախառն ազգային արդյունք՝ ՀԱԱ, զուտ ազգային արդյունք՝ ՉԱԱ, ազգային եկամուտ՝ ԱԵ, անձնական եկամուտ, տնօրինվող եկամուտ և այլն: Հայտնի են նաև այս ցուցանիշների փոխկախվածությունները:

ՀՆԱ = գործունային եկամուտներ /աշխատավարձ՝ W, արտադրության և ներմուծման հարկեր՝ հանած ապրանքների և արտադրության այլ սուբսիդիաներ՝ TSP, ձեռնարկությունների համախառն շահույթ՝ OS/

$$GDP = W + TSP + OS$$

Չուտ ազգային արդյունք՝ ՉՆԱ = ՀՆԱ - Ամորտիզացիոն մասհանումներ՝ D

$$NDP = GDP - D$$

Ազգային եկամուտ՝ ԱԵ = ՉՆԱ - արտադրության անուղղակի հարկեր /այսինքն՝ անուղղակի հարկեր՝ հանած սուբսիդիաներ/

Անձնական եկամուտը = ԱԵ - սոց. ապ. հատկացումներ - շահութահարկ - կորպորացիաների չբաշխված շահույթ + տրանսֆերտներ

Տնօրինվող եկամուտ = անձնական եկամուտ - անձնական եկամտի հարկեր և ոչ հարկային վճարներ:<sup>1</sup>

Ամերիկացի տնտեսագետներ Վ. Նորդհաուզը և Ջ. Թոբինը այս ցուցանիշներին ավելացրին ևս մեկ ցուցանիշ՝ զուտ տնտեսական բարեկեցություն՝ ՉՏԲ ցուցանիշը: Այն հաշվարկվում է հետևյալ կերպ.

ՉՏԲ = ՀՆԱ - բարեկեցության վրա ազդող բացասական գործոններ + ոչ շուկայական գործունեություն /դրամական արտահայտությամբ/ + ազատ ժամանակի դրամական գնահատում:

Սակայն գործնականում այս ցուցանիշի հաշվարկը բավականին բարդ է, քանի որ պարզ չէ, թե ինչպես գնահատել գործունեության այն տեսակները, որոնք շուկայական բնույթի չեն, հետևաբար և չեն կարող գնահատվել ազատ շուկայական փոխանակման գործընթացում: Չուտ տնտեսական բարեկեցության ցուցանիշը խիստ հետաքրքիր է, մախ և առաջ, որպես տնտեսության գործունակության տարբեր կողմերի հաշվառման խնդրի տեսական դրույթ, այդ թվում՝ նաև ոչ ֆորմալ մասի: Սակայն նման ցուցանիշի հաշվարկման մեթոդաբանություն դեռևս մշակված չէ, ուստի այն ներկայացվում է միայն տեսական ձևաչափով:

<sup>1</sup> Ա.Ա. Աղազարյան, Ա.Գ. Հարությունյան, Մակրոտնտեսական քաղաքականություն, ուսումնական ձեռնարկ, Երևան 2008, էջ 38:

Նշված ցուցանիշների միջոցով ազգային տնտեսության զարգացման մակարդակի գնահատման հիմնական մեթոդը որոշակի ժամանակահատվածում դրանց շարժի ուսումնասիրումն է, ինչը թույլ է տալիս բացահայտել դրանց վարքագիծը և զարգացման միտումները:

Քանի որ տնտեսական անկման տարիներին ԱՊՀ երկրները բնութագրվում են գների անմախաղեպ աճով և եկամուտների ոչ թե աճով, այլև կրճատմամբ, ապա այդ երկրների տնտեսական ցուցանիշների շարժը դիտարկենք հենց տնտեսական անկման տարիներին:

Աղյուսակ 3

**ԱՊՀ երկրների 1994թ. տնտեսական ցուցանիշների շարժը  
(համադրելի գներով) 1991թ. նկատմամբ, %**

| Երկիր        | ՀՆԱ   | Արդ. արտ. ծավալ | Գյուղատնտեսություն | Կապ. ներդրում մեք | Բն. դրամական եկ., ամգամ | Մասնատրական գների ինդեքս, ամգամ | Գների և եկամուտների հարաբերակցություն |
|--------------|-------|-----------------|--------------------|-------------------|-------------------------|---------------------------------|---------------------------------------|
| Ադրբեջան     | 46    | 53              | 56                 | 113               | 165                     | 2369                            | 14.33                                 |
| Հայաստան     | 40    | 50              | 112                | 4                 | 20                      | 8071                            | 403.55                                |
| Բելառուս     | 65    | 68              | 82                 | 47                | 1732                    | 3207                            | 1.85                                  |
| Վրաստան      | 25    | 24              | 46                 | 3                 | ...                     | ...                             | ...                                   |
| Ղազախստան    | 57    | 52              | 79                 | 29                | 99                      | 5615                            | 56.71                                 |
| Ղրղզստան     | 52    | 42              | 73                 | 23                | 134                     | 582                             | 4.34                                  |
| Մոլդովա      | 48    | 51              | 66                 | 15                | 64                      | 909                             | 14.2                                  |
| Ռուսաստան    | 61    | 56              | 79                 | 39                | 435                     | 742                             | 1.7                                   |
| Տաջիկստան    | 51    | 48              | 52                 | 33                | 33                      | 764                             | 23.15                                 |
| Թուրքմենստան | 149.4 | 66              | 108                | ...               | 171                     | 4236                            | 24.77                                 |
| Ուզբեկստան   | 83    | 98              | 94                 | 52                | 142                     | 1129                            | 7.95                                  |
| Ուկրաինա     | 60    | 62              | 77                 | 43                | ...                     | 10790                           | ...                                   |
| ԱՊՀ միջին    | 61    | 56              | 78                 | 41                | 434                     | 1604                            | 3.69                                  |

Աղյուսակի տվյալներից հետևում է, որ ուսումնասիրվող ժամանակահատվածում.

- ա/ շարունակվել է արտադրության անկումը,
- բ/ հիմնական ֆոնդերում կատարվող ներդրումները կրճատվել են,
- գ/ գյուղատնտեսական արտադրության անկումը շարունակվել է,
- դ/ գների աճի տեմպերը գերազանցել են բնակչության եկամուտների աճի տեմպը:

Հայաստանի հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները խիստ անկայուն են եղել, հիմնականում չեն գերազանցել ԱՊՀ միջին ցուցանիշները: Միայն գյուղատնտեսական արտադրանքի մասով է արձանագրվել ԱՊՀ միջին ցուցանիշի գերազանցում՝ 1.44 անգամ: Բնակչության կենսամակարդակի փոփոխությամբ առումով Ռուսաստանում

իրավիճակն առավել բարենպաստ էր, որտեղ սպառողական գների աճը բնակչության դրամական եկամուտների ինդեքսի աճը գերազանցել է 1.7 անգամ: Երկրորդ տեղում Բելառուսն է՝ 1.85, վերջին տեղում են Ուկրաինան և Հայաստանը: Հայաստանում գրանցվել են բնակչության կենսամակարդակի առավել վատ պայմաններ. գների աճի տեմպի և բնակչության եկամուտների աճի տեմպի հարաբերակցությունը կազմել է մոտ 403.5 անգամ, որը ԱՊՀ միջին ցուցանիշը գերազանցել է մոտ 110 անգամ: Նման իրավիճակը փաստում է, որ նշված ժամանակահատվածում երկրում տեղի է ունեցել խիստ բարձր արժեզրկում՝ հիպերինֆլյացիա, իսկ բնակչության եկամուտների աճը չնչին է եղել: Եթե ԱՊՀ երկրների 1995թ. հիմնական սոցիալ-տնտեսական ցուցանիշները համեմատենք 1994թ. ցուցանիշների հետ, ապա կունենանք հետևյալ արդյունքները.

1. ՀՆԱ աճի տեմպը կրճատվել է,
2. արդյունաբերական արտադրանքի աճի տեմպը կրճատվել է,
3. բնակչության կենսամակարդակը կայունացել է Ռուսաստանում, Բելառուսում և Ուկրաինայում:

Հայաստանում բնակչության իրական եկամուտների աճի տեմպը, գների հարաբերական կայունության պայմաններում, կազմել է 111.8, ինչը վկայում է կենսամակարդակի որոշ բարելավման մասին:

Համաձայն ՀՀ ԱՎԾ տվյալների՝ ՀՀ-ում 1995-1998 թթ. գրանցվել է ՀՆԱ կայուն աճ՝ տարեկան միջինը 6-8 տոկոսի չափով, իսկ 2007թ. այս ցուցանիշը կազմել է 13.7%: Ազգային տնտեսության համախառն շահույթը և համախառն եկամուտները 1995-2006թթ. դրսևորել են կայուն աճի միտում՝ 291, 0 մլրդ դրամից հասնելով մինչև 1350.8 մլրդ դրամի: Համախառն տնօրինվող եկամուտը 2006թ., մախորդ տարվա համեմատ. աճել է 18.8 տոկոսով, ինչը վկայում է տնտեսությունում առկա դրական միտումների մասին: Նույն ժամանակահատվածում տնային տնտեսությունների վերջնական սպառմանն ուղղված ծախսերն աճել են 1.134 անգամ<sup>2</sup>: Դրան զուգահեռ, 2000թ. նոր տնտեսավարման ողջ ժամանակահատվածում առաջին անգամ գրանցվել է համախառն խնայողությունների դրական ցուցանիշ՝ 0.3 մլրդ դրամ: 2007թ., մախորդ տարվա համեմատությամբ, ապրանքների և ծառայությունների զուտ արտահանման ծավալներն աճել են 137.2 տոկոսով<sup>3</sup>:

Նշված ցուցանիշների շարժը փաստում է, որ ՀՀ տնտեսությունում մեջ առկա են դրական զարգացումներ, որոնք ուղեկցվում են դեռևս բազմաթիվ բացասական դրսևորումներով:

Երկրի տնտեսական զարգացման խոսում փաստարկներից մեկն այն է, որ եթե 1993թ. ՀՀ տնտեսության տարեկան արտադրանքը կազ-

<sup>2</sup> Հայաստանի վիճակագրական տարեգիրք, ՀՀ ԱՎԾ, Ե., 2008, էջ 215:

<sup>3</sup> ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը, ՀՀ ԱՎԾ, Երևան, 2008, էջ 17:

մում էր 1989թ. մակարդակի միայն 44.3 տոկոսը, իսկ ԱՊՀ երկրներում՝ 69 տոկոսը, ապա արդեն 2001թ. պատկերն ամբողջովին այլ էր. Հայաստանում տարեկան արտադրվում էր 1989թ. ՀՆԱ-ի ավելի քան 74 տոկոսը, այն դեպքում, երբ այդ ցուցանիշը ԱՊՀ մակարդակով մնում էր 62.7 տոկոսի սահմաններում: 2003-2007թթ. ընթացքում արձանագրվող տնտեսական աճն ուղեկցվել է տնտեսության մեջ կատարվող ներքին ներդրումների տարեկան միջին հաշվով 26.8 տոկոս աճով, ընդ որում՝ 2006թ. արձանագրվել է ներդրումների 32.2 տոկոս, իսկ 2007թ.՝ 18.1 տոկոս աճ:

Ազգային տնտեսության կարևորագույն մակրոտնտեսական ցուցանիշ է համարվում սղաճի (ինֆլյացիայի) մակարդակը տվյալ երկրում: Հայաստանում 1994թ. գրանցվել է հիպերինֆլյացիայի առավելագույն մակարդակ՝ մոտ 400 տոկոս: ՀՀ կառավարության կողմից իրականացվող զսպող քաղաքականության շնորհիվ այդ ցուցանիշը աստիճանաբար նվազեց:

Կարևոր մակրոտնտեսական ցուցանիշ է զբաղվածության մակարդակը երկրում, որը խիստ հրատապ խնդիր է Հայաստանի համար անցումային ողջ շրջանում, քանի որ վերջինս անմիջականորեն կապված է արտադրական հզորությունների վերագործարկման և վերազինման հետ: ՀՀ պետական միասնական գրանցամատյանի տեղեկատվության վրա հիմնված հաշվարկները փաստում են, որ միայն 1998-2002թթ. ընթացքում ստեղծվել են շուրջ 51000 նոր աշխատատեղեր: Ընդ որում, դա արտադրության ոլորտում վարվող արդյունավետ պետական քաղաքականության արդյունք էր: Այդպիսի քաղաքականության արդյունքում վերագործարկվում են ինչպես նախկին կազմակերպությունները, այնպես էլ ստեղծվում են նոր կազմակերպություններ: Բացի այդ, գործող արտադրությունների ընդլայնման և վերակազմավորման արդյունքում ստեղծվել են ավելի քան 87000 աշխատատեղեր: Այսպիսով, ընդհանուր առմամբ, նշված ժամանակահատվածում Հայաստանում ստեղծվել է ավելի քան 138000 աշխատատեղ:

ՀՀ ԱՎԾ տվյալներով, ՀՀ-ում 2006թ. արձանագրված պաշտոնական գործազրկության 7.5 տոկոս մակարդակը հաջորդ տարի նվազել է 0.5 տոկոսով և 2007թ. կազմել է 7.0 տոկոս<sup>4</sup>:

Նշված երկու ցուցանիշները խիստ կարևոր են ազգային տնտեսության մակրոտնտեսական վերլուծության տեսանկյունից, քանի որ սղաճի տեմպի նվազումը և աշխատատեղերի կայունացումը մույնիսկ տնտեսական անկման պայմաններում ունակ են նպաստելու բնակչության կենսամակարդակի աստիճանական բարձրացման միտումների պահպանմանը: Սա Հայաստանի, թերևս, ամենախոցելի տնտեսական

<sup>4</sup> Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, ՀՀ ԱՎԾ, Երևան 2008, էջ 25:

հարցերից մեկն է, քանի որ դեռևս պահպանվում է բնակչության ցածր կենսամակարդակը, և բարձր է աղքատության մակարդակը: Բնակչության իրական տնօրինվող դրամական եկամուտները, ընդհանուր առմամբ, տարեկան աճում են մոտ 9.5 տոկոսով, չնայած վերջինս դեռ չի գտնվում ցանկալի մակարդակի վրա: Եթե մինչև 2001թ. բնակչության իրական տնօրինվող եկամուտների աճը հիմնականում պայմանավորված էր միջին ամսական աշխատավարձի աճի տեմպերով, ապա 2001թ-ից սկսած զուգակցվում էր նաև գործազրկության մակարդակի նվազմամբ, որի ապացույցն է այն, որ 2006թ. համախառն տնօրինվող եկամտի 118.8 տոկոս աճն ուղեկցվել է աշխատավարձի 119.1 տոկոս աճով և գործազրկության 7.5 տոկոս մակարդակով: ՀՀ-ում դեռևս խիստ մեծ է նաև բևեռացվածությունը բնակչության տարբեր դեցիլային խմբերի եկամուտների միջև: 2007թ. բնակչության 20 տոկոս ամենահարուստ և 20 տոկոս ամենաաղքատ դեցիլային խմբերի միջև եկամուտների հարաբերակցությունը կազմել է 8 անգամ /նախորդ տարվա 7.6 անգամի փոխարեն/: Եկամուտների խտացման ինդեքսը՝ Ջինիի գործակիցը, որը բնութագրում է բնակչության եկամուտների ընդհանուր մեծության բաշխման բնույթն առանձին խմբերի միջև, 2007թ. կազմել է 0.371: Հասարակության մեջ եկամուտների հավասարաչափ բաշխման դեպքում Ջինիի գործակիցը հավասար է զրոյի, ուստի որքան բարձր է բնակչության եկամուտների բևեռացվածությունը, այնքան գործակիցը մոտ է 1-ի:

Ազգային տնտեսությունը բնութագրվում է նաև պետական բյուջեի պակասուրդով, այսինքն՝ եկամուտների նկատմամբ ծախսերի գերազանցմամբ: Վերջինս երկրում ինֆլյացիոն գործընթացներն ուժեղացնող գործոն է: Որոշ երկրներում այդ պակասուրդը ծածկելու համար կիրառվում է դրամական էմիսիան: 1994թ. ԱՊՀ երկրներից եկամուտները գերազանցել են ծախսերը միայն Հայաստանում, Ղազախստանում և Տաջիկստանում: Մնացած երկրներում բյուջեի պակասուրդը կազմել է ՀՆԱ 5-21 տոկոսը, այդ թվում՝ Ռուսաստանում՝ 13 տոկոս: Հայաստանի պետական բյուջեի պակասուրդը 2007թ. կազմել է ՀՆԱ-ի 1.5%-ը, ընդ որում, բյուջեի ծախսերը կազմել են ՀՆԱի 23.7%-ը՝ նախորդ տարվա 21.4%-ի փոխարեն: 2002թ. բյուջեի պակասուրդը կազմել է ՀՆԱ 2.6 տոկոսը, ներառյալ պարտքերի մարումը՝ 27.9 մլրդ դրամ կամ ՀՆԱ 2.1 տոկոսը: 2007թ. բյուջեի պակասուրդը 2002թ. համեմատ նվազել է մեկ տոկոսով:

Երկրի մրցակցային առավելության ընդհանրական գնահատականը տալիս է ներմուծման և արտահանման հարաբերակցությունը: 2006թ. Հայաստանի արտահանման իրական ծավալի ինդեքսը կազմել է 92.7 տոկոս, որը նախորդ տարվա համեմատ նվազել է 23.2%-ով, իսկ ներ-

մուծմանը՝ 103.8 տոկոս, որը նախորդ տարվա համեմատ նվազել է 10.5%-ով<sup>5</sup>:

Հայաստանի ազգային տնտեսության այսպիսի համառոտ վերլուծությունը ցույց է տալիս տնտեսական գործընթացների բարդությունը: Բնական է, որ ոչ միայն հնարավոր չէ մեկ ընդհանրացնող ցուցանիշի միջոցով գնահատել տնտեսական գործունեության զարգացման մակարդակը, այլև վեր հանել այս կամ այն դրական կամ բացասական միտումների պատճառները: Անհրաժեշտ է համալիր վերածել տնտեսական գործունեության տարբեր կողմերի, դրանց կառուցվածքների և կազմակերպման ձևերի առանձնահատկությունները տվյալ երկրում:

Այսպիսով, երկրի մակրոտնտեսական իրավիճակի վերլուծությունը պետք է կատարել ազգային տնտեսական վիճակը բնութագրող հետևյալ ցուցանիշների շարժի վերլուծությամբ՝ ՀՆԱ կառուցվածքը, զբաղվածության մակարդակը, գների աճի և եկամուտների աճի տեմպերի հարաբերակցությունը, պետական բյուջեի պակասուրդը, երկրի ներմուծման և արտահանման հարաբերակցությունը, բնակչության հակվածությունը խնայողությունների նկատմամբ, երկարաժամկետ վարկային ներդրումների ծավալները, ազգային արժույթի փոխարժեքը, ապրանքների սպառման մակարդակը և այլն:

### *Թեմայի ամփոփում*

Տնտեսական համակարգ հասկացությունն ունի ինչպես դրական, այնպես էլ բացասական կողմեր: Համակարգ հասկացությունը ծառայում է որպես օգտակար կապող օղակ պատմական նկարագրությունների և տնտեսական մեկնաբանությունների միջև: Սակայն համակարգ հասկացությունը լիակատար չէ, քանի որ չի առաջարկում ոչ մի տրամաբանական կատեգորիա, որը հնարավոր լիներ օգտագործել տնտեսական գործունեության վերլուծության մեջ, այդ պատճառով խեղաթյուրում է իրական տնտեսական գործընթացները:

Մրցակցային և ոչ մրցակցային շուկաներում գործում է կարգավորման երկու տեսակ: Առաջին դեպքում շուկայի բոլոր գործակալների ծրագրերում գները հանդես են գալիս որպես կոշտ մեծություն: Առանձին վերցրած՝ կազմակերպությունը թեև անմշան ազդեցություն ունի գնագոյացման վրա, այնուամենայնիվ չի կարող իրականացնել շուկայական ռազմավարություն:

Տնտեսական գործունեության նկատմամբ խառը վերահսկողությունը ենթադրում է ինչպես պետության կողմից անմիջական միջամտություն, այնպես էլ շուկայական ուժերի կողմից վերահսկողություն: Նման հարաբերակցության վտանգավորությունը այն է, որ որոշակի պայման-

<sup>5</sup> Հայաստանի վիճակագրական տարեգիրք, ՀՀ ԱՎԾ, Երևան 2008, էջ 230:

ներում տնտեսական իշխանությունը կարող է կենտրոնացնել հզոր տնտեսական խմբերի ձեռքում, կարող է վերաճել «մաֆիոզ» կառույցների: Նման խմբերի ներկայացուցիչների ներթափանցումը իշխանական կառույցներ, նրանց շահերի լոբբիզմը կարող է հանգեցնել ույշ տնտեսական գործունեության տարանջատման:

Բոլոր ժամանակներում առկա է եղել մրցակցության վերացման ձգտումը և մենաշնորհ (մոնոպոլ) իրավիճակի ստեղծումը: Յուրաքանչյուրը միջոց է փնտրում մոնոպոլ դիրք գրավելու: Գոյություն ունի մենաշնորհի ստեղծելու հակում՝ սա մի փաստ է, որի հետ պետք է հաշվի նստի յուրաքանչյուր տնտեսական քաղաքականություն:

Արտադրական գործոնները նյութական և ոչ նյութական պայմաններ են, որոնք անհրաժեշտ են արտադրական գործընթացում առանձին կազմակերպությունների մրցակցային առավելության ձևավորման համար:

Այսպիսով, կարելի է եզրահանգել, որ նախադրյալների «ազգային բուրգի» քաղադրատարրերի փոխադարձ ազդեցությունը ստեղծում է մրցակցային առավելության աճի պայմաններ ինչպես առանձին կազմակերպությունների, այնպես էլ ողջ տնտեսության համար: Եթե կազմակերպության մրցակցային առավելությունը կարելի է վերհանել ներքին կամ արտաքին շուկայում, ապա ողջ ազգային տնտեսության մրցակցային առավելությունը՝ միայն այլ երկրների հետ համեմատության մեջ, այսինքն՝ համաշխարհային տնտեսության սահմաններում:

### ***Հիմնական հասկացություններ***

Տնտեսական գործունեության ձևաբանություն  
Տնտեսական համակարգ  
Կենտրոնացված կառավարվող տնտեսություն  
Շուկայական տնտեսություն  
Արդյունքների մրցակցություն  
“Laisser faire” քաղաքականություն  
Երկրի բացարձակ առավելություն  
Բնական առավելություն  
Ձեռք բերված առավելություն  
Հարաբերական առավելություն  
Արտադրական գործոնների հարաբերակցության տեսություն  
Կառուցվածքային վերակառուցում  
Զբաղվածության մակարդակ  
Բնակչության կենսամակարդակ  
Պետական բյուջեի պակասուրդ

### **Հարցեր և առաջադրանքներ՝**

1. Ներկայացրեք տնտեսական համակարգ հասկացությունը ըստ Վ. Չոմբարտի:
2. Թվարկեք հինգ հիմնական տնտեսական համակարգերն ըստ Վ. Չոմբարտի:
3. Ներկայացրեք տնտեսական համակարգ հասկացությունը ըստ Վ. Օյկենի:
4. Տնտեսակարգերի ինչպիսի՞ տեսակներ գիտեք, որո՞նք են դրանց սկզբունքային տարբերությունները:
5. Ներկայացրեք շուկայի տեսակների դասակարգումը ըստ Վ. Օյկենի:
6. Ներկայացրեք քաղաքական և տնտեսական կարգերի փոխկախվածությունը:
7. Ո՞րն է մրցակցային կարգի և ազատ շուկայի տարբերությունը:
8. Թվարկեք ազատական տնտեսական քաղաքականության հիմնական դրույթները:
9. Ներկայացրեք ազատական տնտեսական քաղաքականության հետևանքները:
10. Ինչպիսի՞ միջոցներ է անհրաժեշտ ձեռնարկել տնտեսական իշխանության խտացումը առանձին իշխանական կառույցների սահմաններում կանխարգելելու համար:
11. Ի՞նչն է ազգային տնտեսության զարգացման մակարդակի առավել ընդհանրացնող չափանիշ:
12. Թվարկեք ազգային տնտեսության մրցակցային առավելության հիմնախնդիրները:
13. Թվարկեք այն հիմնական ցուցանիշները, որոնց միջոցով ՀԲ-ը գնահատում է երկրի հարստությունը:
14. Բնութագրեք Հայաստանի տնտեսական զարգացման միտումները:
15. Ո՞րն է Ջինիի գործակցի տնտեսական իմաստը:
16. Ինչպիսի՞ն է Հայաստանի պետական բյուջեի պակասուրդը:
17. Ներկայացրեք Հայաստանի ներմուծման և արտահանման հարաբերակցության միտումները վերջին տասը տարիներին:
18. Ո՞ր մակրոտնտեսական ցուցանիշներն են առավել նպատակահարմար ազգային տնտեսության վիճակը գնահատելու համար:
19. Գնահատե՛ք սղաճը Հայաստանում:

## ԹԵՄԱ 4. ԵՐԿՐԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԱՆՈՎԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԲԱԺԱՆՄԱՆԸ

### 4.1. Աշխատանքի հասարակական բաժանման ձևերը

Աշխատանքի հասարակական բաժանումը հասարակության մեջ՝ որպես մի ամբողջական համակարգում, մարդկանց որոշակի խմբերի կողմից իրականացվող տարբեր գործառույթների տարբերակումն է և դրա հետ կապված՝ ազգային տնտեսության տարբեր ճյուղերի առանձնացումը /արդյունաբերություն, գյուղատնտեսություն և այլն/, որոնք իրենց հերթին բաժանվում են ավելի փոքր ստորաբաժանումների՝ ճյուղ, ենթաճյուղ, արտադրության տեսակ և այլն/:

Տարբերում են աշխատանքի հասարակական բաժանման երեք ձև.

- աշխատանքի ընդհանուր բաժանում՝ արդյունաբերություն, գյուղատնտեսություն, շինարարություն, կապ և այլն,
- աշխատանքի բաժանում ազգային տնտեսության ճյուղերի ներսում՝ մասնավոր բաժանում,
- աշխատանքի բաժանում առանձին կազմակերպությունների ներսում՝ միավոր բաժանում:

Հասարակական բաժանման երեք ձևերը խիստ փոխկապակցված են և էապես փոխազդում են միմյանց վրա: Ա. Սմիթը գրել է. «Աշխատանքի արտադրողականության և արվեստի նշանակալի բաժնի զարգացման մեծագույն առաջընթացն, ըստ էության, աշխատանքի բաժանման հետևանք է»: Ուսումնասիրելով աշխատանքի բաժանման պատճառները նա հանգել է եզրակացության, որ աշխատանքի բաժանումը որևէ մեկի, որը գիտակցել և կանխատեսել է այն ընդհանուր բարեկեցությունը, որը հետևելու է դրան, իմաստության արդյունք չէ: Աշխատանքի բաժանումը մարդու որոշակի հակումների հետևանք է, որը միտված է եղել ոչ թե դեպի նման օգտակար նպատակը, այլ հատկապես դեպի արտադրողների և սպառողների փոխգործակցությունը, առևտուրը, փոխանակությունը: Քաղաքակիրթ հասարակությունում մարդը անընդհատ զգում է այլ մարդկանց համագործակցության և աջակցության կարիքը: Մեփական աշխատանքի արդյունքների փոխադարձ փոխանակումը կամ այլ խոսքով՝ շուկան, նրա չափերը դրդում են այս կամ այն տնտեսական գործակալին իրեն նվիրել մեկ որոշակի զբաղմունքի: Եթե ամենուրեք հաստատվում է աշխատանքի բաժանումը, ապա յուրաքանչյուր մարդու պահանջումների միայն փոքր մասը կարող է բավարարվել սեփական աշխատանքի արդյունքներով: Տնտեսական գործակալը, որը կարող է լինել և՛ առանձին մարդ, և՛ պարզ կամ բարդ տնտեսական միավոր, դրանց առավել նշանակալի մասը կարող է

բավարարել փոխանակման հաշվին: Որքան բարձր է արտադրողական ուժերի մակարդակը, այնքան կատարյալ է աշխատանքի հասարակական բաժանման կառուցվածքը:

«Ազգի արտադրողական ուժերի զարգացման մակարդակն առավել տեսանելի է այնտեղ, որտեղ երևում է, թե զարգացման ինչ մակարդակի վրա է աշխատանքի հասարակական բաժանումը», - գրել է Կ. Մարքսը:

Աշխատանքի բաժանման գործընթացի կազմակերպատնտեսական բովանդակությունն այն է, որ ազգային տնտեսության տարբեր ոլորտներում ծագում ու զարգանում են տարբեր արտադրական միավորներ: Դրա հիմնական նպատակը ապրանքների և ծառայությունների ներուժային գնորդների պահանջումքների բավարարման արդյունավետության ու որակի, հետևաբար և երկրի բնակչության կենսամակարդակի բարձրացումն է:

Արտադրական միավորներ են արտադրության և փոխանակման գործընթացները սպասարկող տնտեսական գործակալները: Դրանք կարող են ունենալ տարբեր չափեր, կարող են իրենց կազմում ներառել առավել փոքր, միմյանց հետ փոխկապակցված ստորաբաժանումներ: Նման ստորաբաժանումներն ունեն տարբեր հատկություններ, որոնցից են՝ արտադրության չափերը, արտադրական օբյեկտների ֆունկցիոնալ ավարտվածությունը, դրանց դերը ապրանքների և ծառայությունների արտադրության ընդհանուր համակարգում: Այս բոլոր հատկությունները ուղղակի կախվածության մեջ են այն սկզբունքներից, որոնք դրված են այս կամ այն արտադրական միավորի արտադրության ուղղության (պրոֆիլի) ձևավորման հիմքում:

*Որևէ տնտեսական գործակալի «պրոֆիլ» հասկացությունը մեկնաբանվում է որպես աշխատանքի հասարակական բաժանման գործընթացում արտահայտվող հիմնական փոփոխականների ամբողջություն, որը բնութագրում է նրա դերը:*

Եթե նկատի ունենանք, որ այս կամ այն նշանակության աշխատանքի իրագործումն արտադրության կամ փոխանակման գործընթացում կապված է որոշակի տեսակի ռեսուրսների առկայության և օգտագործման հետ, կարելի է եզրակացնել, որ տնտեսական գործակալի պրոֆիլը արտահայտում է ռեսուրսների կազմակերպված համակցության բնույթը, որը նախատեսված է հասարակական պահանջումքները արդյունավետ, ժամանակին և որակով բավարարելու համար: Կախված աշխատանքի հասարակական բաժանման ձևից՝ այս ռեսուրսների կազմը և մեծությունը էապես տարբերվում են:

Առավել մեծ բազմազանությամբ և ռեսուրսների մեծ չափերով տարբերվում են այն տնտեսական գործակալները, որոնք առաջացել են աշխատանքի ընդհանուր բաժանման հետևանքով, այսինքն՝ ազգային տնտեսության ճյուղերը: Այս առումով միմյանցից ավելի քիչ են տար-

բերվում այն տնտեսական գործակալները, որոնք առաջացել են աշխատանքի մասնակի բաժանման հետևանքով, այսինքն՝ ազգային տնտեսության ենթադրությունը: Ի վերջո, առավել որոշակիություն և ռեսուրսների օգտագործման փոքր չափեր ունեն այն տնտեսական գործակալները, որոնք առաջացել են աշխատանքի միավոր բաժանման հետևանքով:

Ինչ վերաբերում է հատուկ տնտեսական միավորներին, ինչպիսիք են անհատական տնտեսական գործակալները կամ ֆիրմաները, ապա նրանք, որպես կանոն, առաջանում են աշխատանքի մասնակի բաժանման հետևանքով: Սակայն փոքր բիզնեսի շատ կազմակերպություններ կարող են ձևավորվել արտադրության և փոխանակման ընդհանուր գործընթացից՝ աշխատանքի միավոր բաժանման հետևանքով: Այսպես, եթե անհատական մասնավոր կազմակերպությունը, ի դեմս իր տնօրենի և միակ աշխատողի, մատուցում է ծառայություն՝ առանց այլ աշխատողներ ներգրավելու, ապա նման կազմակերպությունը կարող է համարվել առանձին աշխատատեղ:

Կարելի է եզրակացնել, որ յուրաքանչյուր երկրի ազգային տնտեսությունը տարբեր մակարդակների տնտեսական գործակալների համալիր է, որոնք փոխկապակցված են և ծագում ու զարգանում են աշխատանքի հասարակական բաժանման տարբեր ձևերի արդյունքում: Աշխատանքի հասարակական բաժանման զարգացման մակարդակը պայմանավորված է շուկայի չափերով: Քանի որ աշխատանքի հասարակական բաժանման խորացումը հանգեցնում է երկրի բնակչության պահանջմունքների բավարարման արդյունավետության աճին, ապա ամենաբաժնետեր է ձգտել շուկայի ընդլայնմանը ի հաշիվ ապրանքների և ծառայությունների արտադրության և փոխանակման՝ ինչպես ներքին, այնպես էլ արտաքին/միջազգային/ գործունեության ոլորտներում:

## **4.2. Աշխատանքի հասարակական բաժանման գործընթացը, արտադրության մասնագիտացման ձևերը**

Ինչպե՞ս է իրական կյանքում ընթանում աշխատանքի հասարակական բաժանման գործընթացը, ինչպե՞ս է դա արտահայտվում:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ տարբեր մակարդակների այս կամ այն տնտեսական գործակալների պրոֆիլը ձևավորվում է տարբեր սկզբունքների հիման վրա՝ կախված աշխատանքի հասարակական բաժանման ձևից: Աշխատանքի ընդհանուր բաժանման արդյունքում ձևավորվող բարձր մակարդակի տնտեսական գործակալները առաջանում են տնտեսական գործունեության ընդհանուր գործընթացի արդյունքում, գլխավորապես՝ ըստ իրենց տնտեսական նշանակության, հատկապես՝ հումքի, նյութերի, արտադրության միջոցների և

մեթոդների օգտագործման, կադրերի որակավորման և այլ առանձնահատկությունների տարբերակման սկզբունքի: Օրինակ, արդյունաբերությունը այլ տնտեսական գործակալների պահանջմունքները բավարարելու համար կամ արդյունահանում է բնական ռեսուրսներ, կամ վերամշակում դրանք: Գյուղատնտեսության ճյուղի տնտեսական նշանակությունը տնտեսական գործակալներին սննդի, իսկ արդյունաբերությանը՝ հումքային ապրանքներով ապահովելն է: Տրանսպորտի տնտեսական նշանակությունը համապատասխան տնտեսական գործակալներին միջանկյալ և պատրաստի ապրանքների առաքումն է, ինչպես նաև ուղևորափոխադրումներ կազմակերպելը:

Աշխատանքի մասնավոր բաժանման արդյունքում ծագող տնտեսական գործակալները ազգային տնտեսության առավել մասնատված ստորաբաժանումներ են: Արդյունաբերությունը բաժանվում է ստորաբաժանումների, որոնք տարբերվում են առավել որոշակի տնտեսական նշանակությամբ և ֆիզիկական սկզբունքով, որն ընկած է նրանց կողմից թողարկվող արտադրանքի հիմքում՝ մեքենաշինություն, ռադիոարդյունաբերություն, էլեկտրոնային արդյունաբերություն, քիմիական արդյունաբերություն և այլն: Այս ստորաբաժանումները ստացել են արդյունաբերության ճյուղեր անվանումը: Նման ձևով առանձնացվում են գյուղատնտեսության ճյուղերը՝ հողագործություն, անասնապահություն, բանջարաբուծություն:

Նոր ճյուղերի առանձնացման կամ հենքի գոյության դադարեցումը անվանում են *արտադրության ճյուղային տարբերակում*: Այս գործընթացի դիմամիկան արտահայտվում է ազգային տնտեսության պարբերաբար նորացվող ճյուղային դասակարգման մեջ: Նման դասակարգիչներ գործում են ինչպես կենտրոնացված կառավարվող համակարգ ունեցող տնտեսություններում, այնպես էլ զարգացած շուկայական տնտեսական համակարգերում: Ռուսաստանում և ԽՍՀՄ-ում մնան դասակարգումը 70 տարվա ընթացքում նորացվել է 7 անգամ: ԱՄՆ-ում 1939-1967թթ. Ցենզերի բյուրոն ճյուղերի դասակարգիչը նորացրել է 6 անգամ: Այժմ ճյուղային ստորաբաժանումների թիվը զգալիորեն ավելացել է: Եթե 1900թ. կար արդյունաբերական միայն երկու ենթաճյուղ, ապա 1971թ. այն հասավ 137-ի: ԱՄՆ-ում ճյուղային տարբերակման գործընթացը ընթանում է բարձր տեմպերով: 1939-67թթ. ընթացքում ԱՄՆ-ի միայն ռադիոէլեկտրոնային արդյունաբերության ճյուղային ստորաբաժանումների թիվը աճել է 2 անգամ: Հայաստանում ԱՎԾ-ի կողմից մշակվել է տնտեսական գործունեության տեսակների ազգային դասակարգիչ, որում կազմակերպությունների կողմից իրականացվող գործունեությունը դասակարգվում է ըստ տնտեսական գործունեության ճյուղերի:

Աշխատանքի մասնակի բաժանման արդյունքում ոչ միայն ստեղծվում են այնպիսի համալիր միավորներ, ինչպիսիք են արդյունաբերու-

թյան ճյուղերը, այլև պարզ միավորներ՝ ֆիրմաներ և տնային տնտեսություններ: Եթե բարդ միավորների առանձնացումն իրականացվում է գլխավորապես արտադրանքի տնտեսական նշանակության սկզբունքի հիման վրա, այսինքն՝ սպառողների հետաքրքրությունների շրջանակում, ապա պարզ միավորների ձևավորումը չի կարող չհետապնդել սպառողների ներուժային պահանջումների առավելագույն բավարարման գործառնությունը արդյունավետ իրականացնելու խնդիր: Այդ պատճառով, ճյուղային տարբերակմանը զուգահեռ, գոյություն ունի աշխատանքի մասնավոր բաժանման այլ դրսևորում՝ արտադրության մասնագիտացում, որի արդյունքում բարձրանում է ոչ միայն առանձին ֆիրմայի կողմից ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը, այլև ստեղծվում է ֆիրմաների մի ամբողջ խումբ, որոնք միմյանց հետ կապված են իրար փոխլրացնող ապրանքների կոոպերացված մատակարարմամբ /տե՛ս գծապատկերը/: Արտադրության մասնագիտացումն արտահայտվում է 3 ձևով.


- ըստ պատրաստի արտադրանքի,
- ըստ արտադրանքի մասերի և դետալների,
- ըստ տեխնոլոգիական գործընթացի ստանդարտների:

Դա նշանակում է, որ կարող են ստեղծվել մոր արտադրանք թողարկող կազմակերպություններ: Սակայն, միաժամանակ, գոյություն ունեն կազմակերպություններ, որոնք մատակարարում են հաստոցների առանձին դետալներ, ագրեգատներ, կիսաֆաբրիկատներ և այլն: Նման կազմակերպությունների առկայությունը նպաստում է կոոպերացվող տնտեսական գործակալների միջև սիներգետիկ էֆեկտի առաջացմանը, որը պայմանավորված է այդ գործակալների փոխգործակցությամբ: Նման կերպ համագործակցող տնտեսական գործակալների ամբողջությունը այնպիսի համակարգ է, որում արտահայտվում են բոլոր հայտնի համակարգերի օրինաչափությունները՝ ամբողջականություն, ինտեգրվածություն, աստիճանակարգում, իրացվելիություն, համարժեքություն և այլն:

Այսպիսով, ազգային տնտեսությունը միասնական ժողովրդատնտեսական համալիր է, որը ներառում է աշխատանքի հասարակական բաժանման տարբեր ձևերի արդյունքում առաջացող փոխկապակցված պարզ և բարդ տնտեսական գործակալներ: Այդ փոխկապակցվածության խորությունից կախված՝ որոշվում է ռեսուրսների օգտագործման արդյունավետության մակարդակը, այսինքն՝ ազգային տնտեսության նրցակցային առավելության մակարդակը:

Ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացման գործում կարևոր նշանակություն ունի նաև պետության դերը տնտեսական գործունեության կառավարման մեջ:

Գծապատկեր 3. Աշխատանքի հասարակական բաժանման ձևերը



### 4.3. Տնտեսական գործունեության ճյուղային տարբերակման մակարդակի վերլուծության սկզբունքները

Տարբեր տնտեսական գործակալների միջև աշխատանքի բաժանման աստիճանի որոշման համար անհրաժեշտ են այդ գործընթացի քանակական և որակական չափորոշիչները: Քանի որ աշխատանքի բաժանումը հանգեցնում է տարբեր մակարդակների տնտեսական գործակալների առաջացման /ազգային տնտեսության ճյուղեր, ենթաճյուղեր, կազմակերպություններ, տնային տնտեսություններ և այլն/, պետք է օգտագործել այնպիսի ցուցանիշներ, որոնք կիրառելի կլինեն յուրաքանչյուր մակարդակում այդ գործընթացի վերլուծության համար:

Ազգային տնտեսության մակարդակով աշխատանքի հասարակական բաժանումը ամենից առաջ բնութագրվում է երկրի սահմաններում խոշոր ճյուղերի հարմարվողականությամբ: Նման կառուցվածքների հարմարվողականության գործընթացին բնորոշ է երկարատևությունը՝ մոտավորապես տասնամյակներ: Գիտատեխնիկական առաջընթացին համահունչ՝ այս գործընթացի տեմպերն աճում են: Պատմությունը փաստում է գործընթացի երկարատևության և այս կամ այն երկրին բնորոշ տարբերությունների մասին: Այստեղից հետևում է, որ աշխատանքի բաժանման գործընթացի վերլուծությունը բավականին բարդ է և պահանջվում է լուծել մի շարք հիմնախնդիրներ: Դրանցից են.

- ազգային տնտեսության ճյուղի հայտանիշների առանձնացումը,
- դրա ծագման պահին համարժեք գնահատականի որոշումը,
- ազգային տնտեսության ճյուղի ձևավորման գործընթացի կառավարման մեթոդաբանական մոտեցումների մշակումը:

Որն է այն հայտանիշը, որով այս կամ այն ազգային տնտեսական գործունեությունը կարելի է դասել ազգային տնտեսության ճյուղին: Ընդհանուր առմամբ, ճյուղը գործունեության, գիտության, արտադրության առանձին ոլորտ է: Այս հասկացության իմաստն այնքան ակնհայտ է, որ մեկնաբանությունների կարիք չունի: Սակայն տնտեսագետ-վերլուծաբանի համար խիստ կարևոր է այն հասկացությունների քանակական և որակական որոշակիությունը, որոնց հետ նա գործ ունի:

Տնտեսագիտության մեջ «ճյուղ» եզրը նշանակում է *կազմակերպությունների կամ այլ պարզ ու բարդ միավորների ամբողջություն, որոնք զբաղվում են որոշակի գործունեությամբ*: Տնտեսության ճյուղերը կարելի է դասակարգել հետևյալ խմբերում /տե՛ս աղյուսակ 4/:

*Տնտեսության ճյուղերի խմբերը*

| Ճյուղային տարբերակման մակարդակը | Ճյուղային ստորաբաժանում       | Ճյուղային բաժանման տարբերիչ հատկանիշները                                                                                     |
|---------------------------------|-------------------------------|------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| Բարձր                           | ազգային տնտեսության ճյուղ     | աշխատանքի հասարակական բաժանման մեջ ունեցած դերը, գործունեության արդյունքների տնտեսական նշանակությունը                        |
| Միջին                           | ազգային տնտեսության ենթաճյուղ | գործունեության արդյունքների տնտեսական նշանակությունը, տնտեսական գործունեության իրականացման սկզբունքների ընդհանրությունը      |
| Ցածր                            | գործունեության տեսակի ճյուղ   | գործունեության արդյունքների գործառնական նշանակությունը, գործունեության տեսակի կոնկրետ առանձնահատկությունների ընդհանրությունը |

Սակայն դժվար է պարզել, թե ազգային տնտեսության որ ստորաբաժանումները կարող են որակվել որպես արտադրության ճյուղեր, արդյունաբերության ենթաճյուղեր և այլ դասակարգման խմբեր: Տնտեսագետների մեծ մասը ճյուղը մեկնաբանում է որպես կազմակերպությունների ամբողջություն, որոնք ունեն տնտեսական արդյունքների նշանակության, օգտագործվող հումքի հիմնական տեսակների, արտադրության կազմակերպման և տեխնոլոգիական մեթոդների, կադրերի մասնագիտացման ընդհանրություններ: Գրականության մեջ տրվող պարզաբանումները հնարավորություն չեն տալիս բացահայտելու այս կամ այն գործունեության տեսակի փոխակերպումը ազգային տնտեսության որակապես նոր ստորաբաժանման:

Ազգային տնտեսության շատ կազմակերպություններ ունեն վերը քվարկված հատկանիշների ընդհանրություններ: Սակայն դրանցից ոչ բոլորը կարող են դասվել որևէ տնտեսական ճյուղի: Եթե ճյուղային տարբերակումը դիտարկենք որպես ժամանակի ընթացքում իրականացվող անընդհատ գործընթաց, ապա կարելի է դիտարկել հասարակական արտադրության կառուցվածքի դիալեկտիկական փոխակերպումներ, որոնց դեպքում վերջինս որակական մի վիճակից փոխվում է այլ վիճակի: Ճյուղային տարբերակման գործընթացը ընթանում է թռիչքաձև:

Տնտեսական գործունեության տեսակները, որպես կանոն, միմյանցից տարբերվում են հստակ սահմանված ապրանքային տեսականիով: Նման կարգի ազգային տնտեսության ստորաբաժանումների միջև գոյություն ունեն ոչ էական, թույլ կապեր, սովորաբար՝ պատահական և անկայուն, քանի որ նման ստորաբաժանումներից յուրաքանչյուրն ունի

իր սեփական հետաքրքրությունները:

Ազգային տնտեսության ենթաճյուղը բնութագրվում է առավել էական և կայուն կոռուպցիոն կապերով: Ազգային տնտեսության ենթաճյուղի կազմակերպությունների միջև ձևավորվում են ամուր կապեր:

Ազգային տնտեսության մեջ ճյուղային դասակարգման անհրաժեշտությունը բխում է ճշգրիտ վիճակագրական դիտարկում կազմակերպելու հանգամանքից, ինչը հնարավորություն կտա հետևելու տնտեսական զարգացմանը և տվյալ ճյուղի ազդեցությանը մակրոտնտեսական կայունության վրա: Այս առումով, տնտեսության մեջ նոր ճյուղի ձևավորումը կարող է փոխել ընդհանուր տնտեսական վիճակը:

#### **4.4. Տնտեսական գործունեության տեսակների ՀՀ ազգային դասակարգիչը**

Ազգային տնտեսության ճյուղերի և ենթաճյուղերի դասակարգման հիմքը տվյալ երկրում կիրառվող ազգային դասակարգիչն է: Միջազգային համադրումների միասնական մեթոդաբանության ապահովման տեսանկյունից կարևոր նշանակություն ունի տարբեր երկրների կողմից մշակվող դասակարգումների ներդաշնակեցումը, ինչը հնարավորություն է տալիս սահմանափակելու տարբեր մեկնաբանությունները և տարակարծությունները: ՄԱԿ-ի վիճակագրական հանձնաժողովի 17-րդ նստաշրջանում և Եվրոպական վիճակագիրների կոնֆերանսի 21-րդ նիստում ընդունվել են տնտեսական գործունեության տեսակներին և արտադրանքի դասակարգումներին վերաբերող մի շարք որոշումներ, որոնք միտված են դասակարգումների ամբողջական համակարգի ստեղծմանը և այդ ուղղությամբ իրականացվող աշխատանքների ներդաշնակեցմանը: Դասակարգումները կարող են ներկայացվել երեք մակարդակներով՝ միջազգային, Եվրամիության և ազգային: Ազգային մակարդակի դասակարգումների համար հիմք են հանդիսանում միջազգային և Եվրամիության համապատասխան դասակարգումները: Դրանք են.

1. Միավորված ազգերի տնտեսական գործունեության տեսակների միջազգային ստանդարտ ճյուղային դասակարգում՝ ՄՍՃԴ
2. Եվրոպական համայնքի տնտեսական գործունեության տեսակների ընդհանուր դասակարգիչ՝ ԵՀԳԴ

Առաջին դասակարգիչը մշակվել է ՄԱԿ-ի վիճակագրական մարմինների կողմից, որի վերջին՝ վերանայված տարբերակը հրատարակվել է 1989թ., իսկ երկրորդը՝ Եվրամիության վիճակագրական մարմինների կողմից: 1993թ. հունվարից այն պարտադիր կիրառվում է Եվրամիության անդամ բոլոր երկրներում: Նախկինում Հայաստանում գործում էր Ժողովրդական տնտեսության ճյուղերի համամիութենական

դասակարգիչը: Ներկայումս, հիմք ընդունելով ԵՀԳԴ-ի մեթոդաբանությունը, կառուցման սկզբունքները և սահմանումները, մշակվել է Հայաստանի ազգային դասակարգիչ, որն արտացոլում է մեր երկրի տնտեսական համակարգին բնորոշ բոլոր առանձնահատկությունները և ՀՀ գործող օրենսդրությունը:

Հայաստանում վիճակագրական դիտարկման համար օգտագործվում է ճյուղային դասակարգումը, որն իրականացվում է տնտեսական գործունեության տեսակների դասակարգման ազգային ընդհանուր դասակարգչի համաձայն: ՀՀ ԱՎԾ-ն այն մշակել է 2001թ.: Նշված դասակարգչում ներկայացված են Հայաստանի տնտեսության ճյուղերը և ենթաճյուղերը: Յուրաքանչյուր երկրի դասակարգչում հաշվի են առնվում տվյալ երկրի տնտեսության առանձնահատկությունները: Դիտարկենք ԱՄՆ-ի և Հայաստանի օրինակով:

ԱՄՆ-ում գործում է հետևյալ ճյուղային դասակարգումը.

- Գյուղատնտեսություն, անտառային և ձկնորսական տնտեսություն,
- Արդյունահանող արդյունաբերություն,
- Շինարարություն,
- Վերամշակող արդյունաբերություն,
- Տրանսպորտ և կապ,
- Առևտուր,
- Ֆինանսական, ապահովագրական և անշարժ գույք,
- Այլ ծառայություններ:

Հայաստանի ճյուղային դասակարգումը ներառում է 18 ճյուղային ստորաբաժանում: Դրանք են.

1. Գյուղատնտեսություն, որսորդություն և անտառային տնտեսություն,
2. Ձկնորսություն, ձկնաբուծություն,
3. Հանքագործական արդյունաբերություն,
4. Վառելիքաէներգետիկ օգտակար հանածոների արդյունահանում,
5. Մշակող արդյունաբերություն,
6. Էլ. էներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում,
7. Շինարարություն,
8. Առևտուր, ավտոմեքենաների, կենցաղային արտադրատեսակների և անձնական օգտագործման իրերի նորոգում,
9. Հյուրանոցներ և ռեստորաններ,
10. Տրանսպորտ և կապ,
11. Ֆինանսական գործունեություն,
12. Անշարժ գույքի հետ կապված գործունեություն,
13. Պետական կառավարում,
14. Կրթություն,

15. Առողջապահություն և սոցիալական ծառայությունների մատուցում,
16. Կոմունալ, սոցիալական և անհատական ծառայությունների մատուցում,
17. Տնային տնտեսությունների վարման ծառայություններ,
18. Օտարերկրյա կազմակերպությունների գործունեություն:

Հայաստանի ազգային տնտեսությունում գործում են բազմաթիվ ենթաճյուղեր: Օրինակ՝ մշակող արդյունաբերության ճյուղն ունի 14 ենթաճյուղ, որոնցից են՝ սննդամթերքի արտադրություն, մանածագործական և կարի արդյունաբերություն, կաշվի, կոշիկեղենի արտադրություն, բնափայտի մշակում և փայտի արտադրատեսակների արտադրություն, թղթի և ստվարաթղթի արտադրություն և հրատարակչական գործ, կոքսի, նավթամթերքի և միջուկային նյութերի արտադրություն, քիմիական արդյունաբերություն, ռետինե և պլաստմասսայե արտադրատեսակների արտադրություն, այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն, մետաղագործական արդյունաբերություն, մեքենաների և սարքավորումների արտադրություն, էլեկտրոնային և օպտիկական սարքերի արտադրություն, տրանսպորտային միջոցների և սարքավորանքի արտադրություն, արդյունաբերության այլ ճյուղեր:

Միասեռ տնտեսական միավորները խմբավորվում են ըստ գործունեության հիմնական տեսակը բնութագրող ոլորտի (տնտեսության ճյուղի), իսկ տնտեսական ոլորտների (ճյուղերի) խմբավորման համար միջազգայնորեն ընդունված է «Միջազգային ստանդարտ ճյուղային դասակարգիչ տնտեսական գործունեության բոլոր տեսակների» (ՄՄՃԴ) (ISIC – International Standard Industrial Classification of All Economic Activities) դասակարգիչը: Այն քառանիշ տասնորդական քվային ծածկագիր է և ներառում է հետևյալ մասերը՝ բաժին, ենթաբաժին, խումբ և դաս: Դասակարգչին բնորոշ են հետևյալ առանձնահատկությունները՝

- վիճակագրական միավորները խմբավորվում են դրանց բնույթի, տեխնոլոգիայի, կազմակերպության և արտադրության ֆինանսավորման միջոցներին համապատասխան,

- արտադրական միավորները դասակարգվում են ըստ տնտեսական գործունեության գերակշռող տեսակի՝ թողարկվող արտադրանքի և մատուցվող ծառայությունների հիմնական խմբի բազայի,

- չի իրականացվում թողարկվող արտադրանքի և մատուցվող ծառայությունների ծավալի հաշվառում,

- հաշվի չեն առնվում սեփականությանը, իրավական կարգավիճակին և շահագործման ռեժիմին առնչվող հարցերը.

- պաշտոնապես գրանցված և անլեզալ կորպորատիվ կազմակերպություններ, ոչ կորպորատիվ կազմակերպությունների սեփա-

- կանատերեր, պետական կազմակերպություններ և հիմնարկներ,
- սարքավորումներ կամ ձեռքի աշխատանք օգտագործողներ, արտադրությունը տնային տնտեսության կամ գործարանում իրականացնողներ և այլն:

Կարևոր է հաշվի առնել, որ իրականացվող գործունեության տեսակի և թողարկվող արտադրանքի միջև գոյություն չունի միանշանակ համապատասխանություն /օրինակ՝ անասունների սպանդի արդյունքում մսի ու կաշվի ստացումը և այլն/, ինչպես նաև այն, որ առանձին արտադրանքի թողարկումը կարող է տեղի ունենալ գործունեության մեկ տեսակի արդյունքում, որն, իր հերթին, ներառում է գործունեության ենթատեսակներ, օրինակ՝ ավտոմեքենայի արտադրությունը:

Գոյություն ունի տնտեսական միավորների դասակարգման երկու մեթոդ: Առաջին մեթոդի դեպքում միավորները խմբավորվում են ըստ գործունեության տեսակի, թողարկվող արտադրանքի և մատուցված ծառայության, երկրորդի կիրառման դեպքում միասեռ միավորների խմբավորումը կախման մեջ է դրվում տնտեսական գործընթացում դրանց իրականացրած գործառույթից: Առաջին մեթոդով դասակարգելիս ձեռնարկությունները միավորվում են ճյուղերում որպես արտադրական միավորներ: Երկրորդ մեթոդով դասակարգելիս միասեռ միավորները, տնտեսական գործընթացում իրենց կատարած գործառույթին համապատասխան, խմբավորվում են ինստիտուցիոնալ հատվածում: Ինստիտուցիոնալ միավորների համար առկա է հաշիվների հավաքակազմ, իսկ արտադրական միավորների համար՝ հաշիվների (ծախսերի) աղյուսակներ:

### *Թեմայի ամփոփում*

Աշխատանքի հասարակական բաժանումը հասարակության մեջ՝ որպես մի ամբողջական համակարգում, մարդկանց որոշակի խմբերի կողմից իրականացվող տարբեր գործառույթների տարբերակումն է, և դրա հետ կապված՝ ազգային տնտեսության տարբեր ճյուղերի առանձնացումը /արդյունաբերություն, գյուղատնտեսություն և այլն/, որոնք իրենց հերթին բաժանվում են ավելի փոքր ստորաբաժանումների՝ ճյուղ, ենթաճյուղ, արտադրության տեսակ և այլն/:

Աշխատանքի բաժանման գործընթացի կազմակերպատնտեսական բովանդակությունն այն է, որ ազգային տնտեսության տարբեր ոլորտներում ծագում ու զարգանում են տարբեր արտադրական միավորներ: Դրա հիմնական նպատակը ապրանքների և ծառայությունների ներուժային գնորդների պահանջումքների բավարարման արդյունավետության ու որակի, հետևաբար և երկրի բնակչության կենսամակարդակի բարձրացումն է:

Այսպիսով, ազգային տնտեսությունը միասնական ժողովրդատնտեսական համալիր է, որը ներառում է աշխատանքի հասարակական բաժանման տարբեր ձևերի արդյունքում առաջացող փոխկապակցված պարզ և բարդ տնտեսական գործակալներ: Այդ փոխկապակցվածության խորությունից կախված՝ որոշվում է ռեսուրսների օգտագործման արդյունավետության մակարդակը, այսինքն՝ ազգային տնտեսության մրցակցային առավելության մակարդակը:

Կարելի է եզրակացնել, որ յուրաքանչյուր երկրի ազգային տնտեսություն իրենից ներկայացնում է տարբեր մակարդակների տնտեսական գործակալների համալիր, որոնք փոխկապակցված են և զարգանում են աշխատանքի հասարակական բաժանման տարբեր ձևերի արդյունքում: Աշխատանքի հասարակական բաժանման զարգացման մակարդակը պայմանավորված է շուկայի չափերով: Քանի որ աշխատանքի հասարակական բաժանման խորացումը հանգեցնում է երկրի բնակչության պահանջմունքների բավարարման արդյունավետության աճի, ապա անհրաժեշտ է ձգտել շուկայի ընդլայնմանը՝ ի հաշիվ ապրանքների և ծառայությունների արտադրության և փոխանակման ինչպես ներքին, այնպես էլ արտաքին /միջազգային/ գործունեության ոլորտներում:

Տնտեսագիտության մեջ «ճյուղ» եզրը նշանակում է *կազմակերպությունների կամ այլ պարզ ու բարդ միավորների ամբողջություն, որոնք զբաղվում են որոշակի գործունեությամբ:*

Հայաստանում վիճակագրական դիտարկման համար օգտագործվում է ճյուղային դասակարգումը, որն իրականացվում է տնտեսական գործունեության տեսակների դասակարգման ազգային ընդհանուր դասակարգչի համաձայն: Նշված դասակարգչում ներկայացված են Հայաստանի տնտեսության ճյուղերը և ենթաճյուղերը:

### ***Հիմնական հասկացություններ***

Աշխատանքի հասարակական բաժանման ձևեր

Տնտեսական գործակալի պրոֆիլ

Ազգային տնտեսության ճյուղ

Տնտեսական գործունեության ճյուղային տարբերակում

### ***Հարցեր և առաջադրանքներ***

1. Որո՞նք են աշխատանքի ընդհանուր, մասնավոր և անհատական բաժանումների միջև տարբերությունները:
2. Որո՞նք են արտադրության մասնագիտացման ձևերը:
3. Ներկայացրեք որևէ մակարդակի «ճյուղ» հասկացության բնորոշումը:
4. Թվարկեք Հայաստանի մշակող արդյունաբերության ենթաճյուղերը՝ ըստ ՏԳԸ-ի:

## ԹԵՄԱ 5. ԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՅՈՒՄԸ

### 5.1. Ազգային տնտեսության ճյուղերի և ենթաճյուղերի առաջացումը

Ռուսաստանում տնտեսության ճյուղային դասակարգման մեջ տարբերում են մոտ 400 ճյուղ: Երկրում առաջին ճյուղային դասակարգումը իրականացվել է 1900թ., ռուս վիճակագիր Վ. Ե. Վարգարի կողմից: Այն նախատեսում էր արդյունաբերության 12 ճյուղ, 2 ենթաճյուղ և գործունեության 171 տեսակ: 1927թ-ից ի վեր արդյունաբերության ենթաճյուղերի թիվը ավելացել է մոտ 3 անգամ: Տնտեսական գործունեության ճյուղային տարբերակման վերլուծության հաջորդ խնդիրը ճյուղի առաջացման պահի գնահատումն է, այսինքն, նրա՝ որպես վիճակագրական դիտարկման օբյեկտի ինքնուրույն գործունեության սկիզբը: Պատմությունը փաստում է, որ ազգային տնտեսության ճյուղային կազմը բավականին երկար ժամանակահատվածում է կայուն մնում, այսինքն՝ խիստ դանդաղ է փոփոխվում: Այսպես, շուրջ 70 տարի շարունակ Խորհրդային Միությունում վիճակագրությունը առանձնացնում էր ազգային տնտեսության 12-13 ճյուղ: Նոր ճյուղերի երևան գալը պայմանավորվում է գիտատեխնիկական առաջընթացի ազդեցությամբ և արտադրության ոլորտում կամ սպառման գործընթացում տնտեսական գործակալների նոր գործառույթների նկատմամբ պահանջարկի աճով: Օրինակ, վերջին տարիներին Ռուսաստանի վիճակագրությունում գործող ճյուղային դասակարգման մեջ երկու նոր ճյուղ է հայտնվել՝ Տեղեկատվական-հաշվողական սպասարկում և Վարկավորում ու պետական ապահովագրություն: Այդպիսի գործունեության տեսակների առաջացումը դասակարգման մեջ դեռևս չի նշանակում, որ նախկինում այդ գործառույթները ազգային տնտեսությունում չեն իրականացվել ընդհանրապես: Դա նշանակում է, որ գործունեության այդ տեսակների չափերը էականորեն աճել են, որի արդյունքում անհրաժեշտություն է առաջացել կառավարել /կարգավորել/ այդ գործունեությունը: Կենտրոնացված կառավարման տնտեսություններում մման կառավարումը երևակվում է համապատասխան կազմակերպական կառավարման կառույցներում՝ նախարարություն, գերատեսչություն: Շուկայական կարգավորման մրցակցային տնտեսակարգի պայմաններում այն կապված է բյուջետային, դրամավարկային, հարկային, մաքսային և տնտեսական գործունեության տեսակի վրա ազդող այլ ձևերի հետ:

Կենտրոնացված կառավարման տնտեսության պայմաններում կարգավորումն իրականացվում է ազգային տնտեսության և ճյուղերի պետական պլանավորման, մրցակցային տնտեսությունում՝ համապատասխան կարգավորող լծակների միջոցով: Այսպիսով, երբ այս կանայն ճյուղը հասունանում է կառավարման և ինքնուրույն վիճակագրական հաշվառման համար, կարելի է նրա ձևավորման գործընթացը համարել ավարտված:

## 5.2. Տնտեսության ճյուղերի ձևավորման գործընթացի փուլերը

Տնտեսության մեջ ճյուղերի ձևավորման գործընթացը խիստ բարդ է: Այն իրականացվում է մի քանի բնութագրական փուլերի միջոցով:

Առաջին փուլ՝ նոր տնտեսական գործունեության իրականացում:

Երկրորդ փուլ՝ այդ գործունեության տեսակի աստիճանական ընդլայնում և ազգային տնտեսության զարգացման մակարդակի վրա դրա ազդեցության ավելացում:

Երրորդ փուլ՝ նոր ճյուղի հասունացում և հարմարեցում նոր տնտեսական գործունեություն իրականացնող ճյուղի կարգավիճակում:

Գործունեության տեսակի ձևավորման օրինակ կարող է հանդիսանալ ռադիոէլեկտրոնային արդյունաբերության զարգացումը: 1900թ. Ռուսաստանում Կրոնշտադի արհեստանոցում՝ 80 քառ. մ տարածքի վրա և հինգ աշխատողով սկսվեց ռադիոսարքավորումների արտադրությունը: Արհեստանոցի ստեղծման պատճառ հանդիսացավ Ա.Ս. Պոպովի կողմից 1895թ. հայտնագործված ռադիոընդունիչի գյուտը: Արհեստանոցի հիման վրա 1911թ. ստեղծվեց ռուսական ռադիոսարքավորումների առաջին կազմակերպությունը՝ «Ծովային գերատեսչության ռադիոհեռագրային դեպոն», իսկ նույն տարվա վերջում՝ առաջին գիտահետազոտական արդյունաբերական լաբորատորիան: Այսպիսով, առաջացավ տնտեսական գործունեության նոր տեսակ՝ առաջին փուլ /ռադիոհեռագրային սարքավորումների արտադրություն/: 1915թ. Դեպոն վերակազմավորվեց «Ծովային գերատեսչության ռադիոհեռագրային գործարանի», որտեղ 1917թ. աշխատում էր 300 մարդ: 30-ական թվականների սկզբին Ռուսաստանում արդեն կար ռադիոհեռագրային սարքավորումներ արտադրող 12 գործարան: 40-70-ական թվականներին ռադիոէլեկտրոնային արդյունաբերության ճյուղային ստորաբաժանումները հետևողականորեն ճյուղավորվում էին: 70-ականների վերջին ԽՍՀՄ-ում գործում էին հարյուրավոր կազմակերպություններ, որոնք արտադրում էին ռադիոսարքավորումներ և էլեկտրոնային մասեր: Նրանց ղեկավարում էին երեք մախարարություններ՝ ռադիոար-

դյունաբերության, կապի արդյունաբերության և էլեկտրոնային տեխնիկայի:

Նույնաման գործընթաց էր տեղի ունենում նաև ԱՄՆ-ում: Ըստ ԱՄՆ Ցենզերի բյուրոյի վիճակագրական տվյալների՝ 1939-67թթ. տեղի են ունեցել հետևյալ փոփոխությունները. 1939թ. ԱՄՆ վիճակագրությունը հաշվառում էր ռադիոարդյունաբերության 5 ճյուղ, 460 կազմակերպություն՝ 93800 աշխատողով, տարեկան 267300 հազ. դոլար արժողությամբ արտադրանքի թողարկումով, իսկ 1954 թ. նույն ճյուղերում գործում էր 2261 կազմակերպություն՝ 447500 աշխատողով և 3214000 հազ. դոլար արժողությամբ արտադրանքով: Արդեն 1967թ. հաշվառվում էր 8 ճյուղ, 4200 կազմակերպություն, 1045.5 հազ. մարդ և 12.7562 մլն դոլար տարեկան թողարկում: Այսպիսով, 28 տարվա ընթացքում կազմակերպությունների թիվը աճել է 9.1 անգամ, աշխատողների թիվը՝ 11.1 անգամ, թողարկումը՝ 47.7 անգամ, ճյուղերի թիվը՝ 1.6 անգամ: Նշվածը փաստում է ԱՄՆ ռադիոէլեկտրոնային արդյունաբերության բուռն ճյուղային տարբերակման գործընթացի մասին: 1967թ. այս ճյուղը ԱՄՆ ազգային տնտեսության ամենաձանրակշիռ ճյուղերից մեկն էր, որը թողարկում էր ՀԱԱ 2 տոկոսը, իսկ ճյուղում զբաղված էր աշխատուժի 1.5 տոկոսը:

Վերլուծությունից կարելի է եզրակացնել, որ որևէ տնտեսական գործունեության տեսակի տնտեսական հարմարվողականությունը հասունանում է այն ժամանակ, երբ այդ գործունեությունը էական ազդեցություն է ունենում ՀԱԱ-ի վրա, և օգտագործվում է ազգային ռեսուրսների զգալի մասը:

Ճյուղի հասունացման պահը կարելի է դիտարկել անընդհատ վիճակագրական դիտարկման հիման վրա, որը հիմնվում է ազգային տնտեսության ճյուղերի պարբերաբար նորացվող դասակարգման վրա: Այդ նպատակով իրականացվում է կազմակերպությունների գործունեության բոլոր կազմակերպատնտեսական ցուցանիշների տարեկան հաշվառում:

Վերոնշյալի հիման վրա կարելի է որոշել այն ցուցանիշների ամբողջությունը, որը հնարավորություն կտա քանակապես և որակապես գնահատելու տնտեսական գործունեության ճյուղային տարբերակման գործընթացի ինտենսիվությունը և խորությունը:

Ճյուղային տարբերակման ինտենսիվությունը կարելի է գնահատել տարբեր մակարդակի ճյուղային ստորաբաժանումների թվի հավելաճի միջին տարեկան տեմպով, որը հաշվարկվում է պաշտոնական վիճակագրությունը: Ճյուղային տարբերակման խորությունը կարելի է բնութագրել հետևյալ ցուցանիշներով.

1. յուրաքանչյուր մակարդակի ճյուղային ստորաբաժանումների քանակով, որոնք ներառված են ազգային տնտեսության ճյուղա-

- յին դասակարգման մեջ,  
2. երկրի ՀՆԱ-ում որևէ ճյուղային ստորաբաժանման տեսակարար կշռով,  
3. ճյուղային ստորաբաժանման առավել բարձր մակարդակում ներառված ցածր մակարդակի ճյուղային ստորաբաժանումների քանակով:

### **5.3. Տնտեսական գործունեության մասնագիտացման վերլուծության սկզբունքները**

Տնտեսական գործունեության մասնագիտացման արդյունքում առաջանում են տնտեսական գործակալներ, որոնք իրականացնում են այդ գործունեության կոնկրետ ուղղություններ: Միևնույն տնտեսական գործակալի կողմից իրականացվող ուղղությունները կարող են ունենալ նմանություններ: Այդ պատճառով տնտեսական գործակալի մասնագիտացման աստիճանն արտահայտվում է տնտեսական գործունեության տեսակի ընդհանրության աստիճանով: Միաժամանակ, իրականացվող գործունեության տեսակների ընդհանրությունը բնութագրվում է տնտեսական գործակալի կողմից օգտագործվող տարբեր ռեսուրսների բնութագրերով: Որքան օգտագործվող ռեսուրսների փոփոխությունները մոտ են, այնքան բարձր է տնտեսական գործունեության մասնագիտացման մակարդակը:

Քանի որ տնտեսական գործունեության արդյունավետությունը մեծապես կախված է արտադրության չափերից, ուստի արտադրության փաստացի ծախսը պետք է մոտենա օպտիմալին:

Տնտեսական գործունեության մասնագիտացման մակարդակի վերլուծության սկզբունքներն են.

- տնտեսական գործունեության ընդհանրության մակարդակի քանակական և որակական գնահատման սկզբունքներ,
- տնտեսական գործունեության ծավալների տնտեսապես արդյունավետ բնորոշման սկզբունքներ,
- տնտեսական գործունեության տնտեսապես արդյունավետ չափերի և ընդհանրության աստիճանի համեմատության սկզբունքներ:

Տնտեսական գործունեության ընդհանրության աստիճանի գնահատումը հիմնվում է նախնական դասակարգման վրա, որի ընթացքում դուրս են բերվում գործունեության տեսակների ամբողջականությունները ըստ օգտագործվող ռեսուրսների չափանիշների նմանության աստիճանի:

Տարբերում ենք գործունեության տեսակների դասակարգման հետևյալ խմբերը. սեռը, դասը, տեսակը, տարատեսակը և տիպը:

Մեղը տնտեսական գործունեության տեսակների այն ամբողջությունն է, որոնք ունեն նշանակության, գերակշռող ռեսուրսների տեսակների բնութագրի և գործընթացի կազմակերպման սկզբունքների մասնություն:

Դասը տնտեսական գործունեության տեսակների այն ամբողջությունն է, որոնք պատկանում են տվյալ սեռին, ունեն թողարկվող արտադրատեսակների գործառնական նշանակության մասնություն, օգտագործվող ռեսուրսների գերակշիռ մասի չափորոշիչների, արդյունքներին հասնելու գործընթացի կազմակերպման սխեմայի մասնություն:

Տեսակը տնտեսական բազմաբնույթ գործունեության այն ամբողջությունն է, որ կազմում է տվյալ դասը, ունի ապրանքների սպառողական արժեքների, տվյալ գործունեության ընթացքում օգտագործվող կոնկրետ ռեսուրսների չափորոշիչների և գործունեության այդ տեսակների արդյունքներին հասնելու գործընթացի կոնկրետ տարրերի մասնություն:

Տարատեսակը տնտեսական գործունեության տեսակների այն ամբողջությունն է, որոնք վերագրվում են տվյալ տարատեսակին, ունեն ապրանքների օգտակարության կոնկրետ ցուցանիշների, օգտագործվող ռեսուրսների կազմի և քանակական հարաբերակցության և գործունեության արդյունքների հասնելու համար օգտագործվող հիմնական գործելաձևի/եղանակների/ ու հմտությունների մասնություն:

Տիպը կոնկրետ տնտեսական գործունեություն է, որը հանգեցնում է բոլոր չափորոշիչներով միատեսակ արդյունքների:

Որքան տնտեսական գործունեության շատ սեռեր, դասեր, տեսակներ են համապատասխանում տնտեսական գործակալի առաքելությանը, այնքան գործունեության ընդհանրության աստիճանը փոքր է, հետևաբար սահմանափակ են վերջինիս արդյունավետության բարձրացման մասնադրյալները: Որքան բարձր է գերակշռող ամբողջության տեսակարար կշիռը, որքան այդ ամբողջությունը շատ մասնություն ունի ռեսուրսների չափորոշիչների և արդյունքներին հասնելու գործընթացների հետ, այնքան բարձր է այս կամ այն տնտեսական գործակալի տնտեսական գործունեության չափորոշիչների ընդհանրության աստիճանը:

Եթե կազմակերպությունն արտադրում է այնպիսի ապրանք, որը կարող է վերագրվել տարբեր դասերի, և այդ դասերի թիվը բավականին մեծ է, ապա տվյալ կազմակերպության արտադրական գործընթացների ընդհանրության աստիճանը չի կարող գնահատվել բարձր: Եվ ընդհակառակը, կազմակերպության արտադրական գործընթացների ընդհանրության աստիճանը բարձր կլինի, եթե արտադրում է մի քանի ար-

տադրատեսակներ, որոնցից մեկը առավելագույն տեսակարար կշիռ ունի արտադրության ընդհանուր ծավալում: Համանման ձևով կարող է գնահատվել ծառայությունների մատուցման ընդհանրության աստիճանը:

#### 5.4. Տնտեսական գործունեության արդյունավետության չափանիշները և ճկունությունը

Տնտեսապես արդյունավետ արտադրության չափերի բնորոշումը, ամենից առաջ, կապված է տնտեսական գործունեության արդյունավետության չափանիշների ընտրության հետ: Նախորդ բաժինների շարադրանքից հետևում է, որ ցանկացած կազմակերպության գլխավոր նպատակը երկարաժամկետ հատվածում մրցակցային առավելության հասնելն ու պահպանելն է, այսինքն՝ կազմակերպության տնօրինության տակ գտնվող ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործումը: Հետևաբար, արդյունավետ կարող է համարվել այն կազմակերպության գործունեությունը, որը մրցակից կազմակերպության համեմատ հասնում է ռեսուրսների օգտագործման առավել մեծ արդյունավետության:

Վերլուծելով տնտեսական գործունեության մասնագիտացման մակարդակը որպես տվյալ գործունեության այս կամ այն մակարդակի արդյունավետության հասնելու նախադրյալ՝ հանգում ենք այն եզրակացության, որ արդյունքների հասնելու գործընթացի ընդհանրության բարձր աստիճանի համադրումը տնտեսական գործունեության օպտիմալ ծավալների հետ առաջացնում է բարենպաստ նախադրյալներ կազմակերպության ռեսուրսների օգտագործման բարձր արդյունավետության համար: Այս փոխկախվածության քանակական արտահայտությունը կարող է բնութագրվել տնտեսական գործակալի մասնագիտացման մակարդակի ցուցանիշով.

$$Y_i = \alpha_i * Q / Q_{opt\ i}, \text{ որտեղ՝}$$

$\alpha_i$  –  $i$ -րդ մակարդակի ընդհանրության տնտեսական գործունեության տեսակների գերակշռող ամբողջության տեսակարար կշիռն է տնտեսական գործակալի գործունեության մեջ,

$Q$ -ն տարվա ընթացքում տնտեսական գործունեության ընդհանուր ծավալն է,

$Q_{opt\ i}$ -ն  $i$ -րդ տեսակի տնտեսական գործունեության օպտիմալ ծավալն է:

Բանաձևից հետևում է, որ որքան տվյալ մակարդակի ընդհանրության տնտեսական գործունեության ծավալը մոտ է օպտիմալին, և որքան բարձր է այդ գործունեության ընդհանրության աստիճանը, այն-

քան տվյալ տնտեսական գործակալի մասնագիտացման մակարդակը բարձր է: Առավելագույն բարձր է համարվում մասնագիտացման այն մակարդակը, որի դեպքում տնտեսական գործակալը զբաղվում է գործունեության մեկ տեսակով, որի ծավալը օպտիմալ է: Այնուհանդերձ, տնտեսական գործունեության մասնագիտացման նման մակարդակը շուկայի դիմամիկ կառուցվածքի պայմաններում, պայմանավորված լինելով արտաքին միջավայրի անկայունությամբ, որտեղ գործում է տնտեսական գործակալը, չի կարող ապահովել համապատասխան ճկունություն, հետևաբար և՛ շուկայում կայուն դիրք տվյալ գործակալի համար: Սրա հետ կապված՝ խնդիր է առաջանում տնտեսական գործակալի ճկունության որոշման առումով:

Առավել տարածված է այն տեսակետը, որ ճկունությունը որևէ համակարգի տնտեսական գործունեության օբյեկտները արագ փոփոխելու ունակությունն է: Եթե խոսքը վերաբերում է արտադրությանը, ապա ճկուն պետք է համարվի այն արտադրությունը, որն ունակ է արագ փոփոխելու արտադրանքի տեսականին: Առևտուր-բաշխում համակարգի դեպքում ճկուն պետք է համարել այնպիսի համակարգը, որը կարող է արագ հարմարվել այդ համակարգի կողմից վերամշակվող անվանացանկի փոփոխությանը: Սակայն «ճկունություն» հասկացության նման մեկնաբանությունը, ըստ Ա. Պ. Գրադովի, լիարժեք չէ, քանի, որ այն հաշվի չի առնում մի կարևոր հանգամանք՝ համակարգի նպատակների փոփոխությանը տրվող արձագանքը որքանով է արդյունավետ այդ արձագանքի վրա կատարվող ծախսերի մեծացման և արձագանքման արագության հարաբերակցության տեսանկյունից: Հեղինակը պնդում է, որ տնտեսական գործակալի ճկունությունը պետք է դիտարկել, նախ և առաջ, որպես տնտեսական կատեգորիա: Ձուտ տեխնիկական առումով ճկունությունը ենթադրում է համակարգի այս կամ այն վիճակի փոփոխություն՝ առանց հատուկ ջանքերի: Այդ պատճառով, տնտեսական գործունեության օբյեկտների արագ փոխարինման հնարավորությունը, որին հասնում են «ցանկացած գնով», այսինքն՝ ծախսումների ցանկացած մակարդակով, չի կարող համարվել ճկունություն: Եկում է համարվում այն համակարգը, որն արդյունավետ է իրականացնում այդ հնարավորությունը: Եկում է, որպես տնտեսագիտական կատեգորիա, պետք է արտացոլի համակարգի՝ արդյունավետ հարմարվելու ունակությունը: Դա նշանակում է, որ ճկունության աստիճանի գնահատումը պետք է ուղղված լինի տնտեսագիտական չափանիշներին:

Ցանկացած համակարգի գործունեության պայմանները կախված են առավել բարձր մակարդակի համակարգի առանձնահատկություններից, որի մի մասն են հանդիսանում իրենք, այսինքն՝ արտաքին միջավայրից: Այդ յուրահատկությունները որոշում են տնտեսական գործակալի օպտիմալ ճկունությունը: Եթե շուկայի պահանջումները

կայուն են ժամանակի և համակարգի մեջ, ապա անհրաժեշտություն չկա փոփոխելու ռազմավարական ներուժը: Այս դեպքում մախընտրելի է համակարգի ոչ բարձր ճկունության ապահովումը: Դա նշանակում է, որ տնտեսական գործակալը կարող է կիրառել գործունեության իրականացման մեղ մասնագիտացված «կոշտ» մեթոդներ և եղանակներ: Սակայն, արտաքին միջավայրի պայմանների փոփոխմանը զուգընթաց, համակարգի կոշտությունը կարող է հակասության մեջ մտնել շուկայի արագ փոփոխվող պահանջների հետ: Այս դեպքում կազմակերպությունը պետք է հարստացվի առավել հարմարվողական միջոցներով, որոնք հնարավորություն կտան արդյունավետ բավարարելու այդ փոփոխվող պահանջները:

Տնտեսական գործունեության մասնագիտացումը՝ որպես արդյունավետության բարձրացման միջոց, տնտեսական գործակալին օպտիմալ ճկունության հաղորդումն է, այսինքն՝ տվյալ գործակալին զինում է հարմարվողականության և արդյունավետության օպտիմալ համադրություն ապահովող միջոցներով: Այս դեպքում տնտեսական գործակալի նպատակների փոփոխությունը հնարավոր է իրականացնել առանց ծախսերի էական ավելացման, այսինքն՝ նրա *ներքին ճկունությամբ*: Ուստի տնտեսական գործակալի առաքելությունն ընտրելիս անհրաժեշտ է պահպանել մասնագիտացման օպտիմալ մակարդակի ընտրության կանոնը, ինչը կարող է ձևակերպվել հետևյալ կերպ. «Որևէ տնտեսական գործակալի գործունեության մասնագիտացման մակարդակն անհրաժեշտ է ընտրել այն հաշվարկով, որ հաշվեկշռվի գործակալի ներքին և արտաքին ճկունությունը»: Այսինքն, տնտեսական գործակալի տնտեսական գործունեության ընդհանրության աստիճանը և ծավալը պետք է ստեղծեն բարենպաստ մախադրյալներ, որպեսզի տվյալ գործակալի կողմից իրականացվող գործունեության նպատակների փոփոխման տեմպերը, որոնք առաջանում են գործակալին սպասարկող շուկայի կառուցվածքային փոփոխությունների ազդեցությամբ, գերազանցեն նրա օգտագործած ռեսուրսների ծավալների և տեսակների ծախսերի տեմպերը:

Բերված սահմանումը ցույց է տալիս, որ եթե տնտեսական գործունեության նպատակների փոփոխության համար չի պահանջվում տնտեսական գործակալի կողմից օգտագործվող ռեսուրսների էական փոփոխություն՝ կադրային, տեխնիկական, տեխնոլոգիական, տարածքային, տեղեկատվական և այլն, ապա տնտեսական գործակալի ներքին ճկունությունը համարժեք է նրա արտաքին ճկունությանը: Այսինքն, այդ գործակալի կողմից օգտագործվող ռեսուրսները բավականաչափ հարմարված են անհրաժեշտության դեպքում նպատակների փոփոխությանը: Եվ ընդհակառակը, եթե նպատակների փոփոխությունը հանգեցնում է օգտագործվող ռեսուրսների չափորոշիչների էական

փոփոխության, ապա ներքին ճկունությունը չի համապատասխանում արտաքին ճկունության պահանջներին, որն ի վիճակի է ապահովել գործակալի կայուն դիրքը շուկայում:

### *Թեմայի ամփոփում*

Տնտեսական գործունեության տեսակի տնտեսական հարմարվողականությունը հաստատում է այն ժամանակ, երբ այդ գործունեությունը էական ազդեցություն է ունենում ՀԱԱ-ի վրա, և օգտագործվում է ազգային ռեսուրսների զգալի մասը:

Ճյուղի հաստատացման պահը կարելի է դիտարկել անընդհատ վիճակագրական դիտարկման հիման վրա, որը հիմնվում է ազգային տնտեսության ճյուղերի պարբերաբար նորացվող դասակարգման վրա: Այդ նպատակով իրականացվում է կազմակերպությունների գործունեության բոլոր կազմակերպատնտեսական ցուցանիշների տարեկան հաշվառում:

Որքան տնտեսական գործունեության շատ սեռեր, դասեր, տեսակներ են համապատասխանում տնտեսական գործակալի առաքելությանը, այնքան գործունեության ընդհանրության աստիճանը փոքր է, հետևաբար սահմանափակ են վերջինիս արդյունավետության բարձրացման նախադրյալները: Որքան բարձր է գերակշռող ամբողջության տեսակարար կշիռը, որքան այդ ամբողջությունը շատ մնանություն ունի ռեսուրսների չափորոշիչների և արդյունքների հասնելու գործընթացների հետ, այնքան բարձր է այս կամ այն տնտեսական գործակալի տնտեսական գործունեության չափորոշիչների ընդհանրության աստիճանը:

Տնտեսական գործակալի տնտեսական գործունեության ընդհանրության աստիճանը և ծավալը պետք է ստեղծեն բարենպաստ նախադրյալներ, որպեսզի տվյալ գործակալի կողմից իրականացվող գործունեության նպատակների փոփոխման տեմպերը, որոնք առաջանում են գործակալին սպասարկող շուկայի կառուցվածքային փոփոխությունների ազդեցությամբ, գերազանցեն գործակալի կողմից օգտագործվող ռեսուրսների ծավալների և տեսակների ծախսերի տեմպերը:

Առավել տարածված է այն տեսակետը, որ ճկունությունը որևէ համակարգի տնտեսական գործունեության օբյեկտները արագ փոփոխելու ունակություն է: Եթե դա արտադրություն է, ապա ճկուն պետք է համարվի այն արտադրությունը, որն ունակ է արագ փոխելու արտադրանքի տեսականին: Առևտուր-բաշխում համակարգի դեպքում ճկուն պետք է համարել այնպիսի համակարգը, որը կարող է արագ հարմարվել այդ համակարգի կողմից վերամշակվող անվանացանկի փոփոխությանը:

Տնտեսական գործունեության մասնագիտացումը՝ որպես արդյունավետության բարձրացման միջոց, տնտեսական գործակալին օպտիմալ ճկունություն հաղորդումն է, այսինքն՝ տվյալ գործակալին զինում է հարմարվողականության և արդյունավետության օպտիմալ համադրություն ապահովող միջոցներով: Այս դեպքում տնտեսական գործակալի նպատակների փոփոխությունը հնարավոր է իրականացնել առանց ծախսերի էական ավելացման, այսինքն՝ նրա *ներքին ճկունությամբ*:

### ***Հիմնական հասկացություններ***

Տնտեսական գործունեության մասնագիտացում  
Ազգային տնտեսության ճյուղերի տարբերակման մակարդակ  
Տնտեսական գործունեության տեսակների դասակարգման աստիճան  
Տնտեսական գործունեության մասնագիտացման մակարդակ  
Տնտեսական գործակալի ճկունություն  
Արտաքին և ներքին ճկունություն

### ***Հարցեր և առաջադրանքներ***

1. Բնութագրեք ենթաճյուղերի առաջացման գործընթացի փուլերը:
2. Որո՞նք են տնտեսական գործունեության մասնագիտացման մակարդակի սկզբունքները:
3. Սահմանեք տնտեսական գործունեության մասնագիտացման օպտիմալ մակարդակի ընտրության կանոնը:
4. Սահմանեք տնտեսական գործակալի ճկունություն հասկացությունը:

### 6.1. «Տնտեսական միավորների կառուցվածք» հասկացությունը

Ընդհանուր առմամբ, կառուցվածք նշանակում է կազմավորված միավորների կանոնակարգման միջոց, որոնք բաղկացած են բազմաթիվ և իրենց բնույթով տարբեր տարրական մասերից:

Տնտեսական միավորների կառուցվածքն իրենից ներկայացնում է համամասնությունների և հարաբերությունների ամբողջություն, որոնք բնութագրում են այդ միավորը տվյալ պահին և տվյալ պայմաններում: Համամասնությունը բնութագրում է դիտարկվող տնտեսական միավորները կազմող տարրերի հարաբերական մեծությունը և նշանակությունը: Հարաբերությունները ստեղծվում են մի կողմից՝ տնտեսական միավորների առանձին տարրերի միջև, մյուս կողմից՝ այդ միավորի և այլ տնտեսական միավորների միջև:

Ֆրանսիացի տնտեսագետ Ժան Լոմմը տալիս է կառուցվածքի հետևյալ սահմանումը. «Տվյալ տնտեսասոցիալական համակցության կառուցվածքը հարաբերությունների այնպիսի վիճակ է /ներքին և արտաքին, քանակական և որակական/, որոնք դիտարկվող համակցությունը բնորոշում են կրկնակի հղման միջոցով.

1. ժամանակի մեջ՝ ժամանակահատվածի նկատմամբ, որոնք որոշվում են փոփոխությունների անհրաժեշտությամբ և ընդհատվածությամբ,
2. տարածության մեջ՝ տարածություն – տեղերի նկատմամբ, որոնք որոշվում են համապատասխանության առկայությամբ»<sup>6</sup>:

Տարբերում ենք տնտեսական վերլուծության ենթարկվող կառուցվածքների երկու տիպ: Դրանք են.

1. Տնտեսական կառուցվածքներ, որոնք բնութագրում են պարզ և համալիր տնտեսական միավորների գործունեությունը,
2. «Շրջանակման» կառուցվածքներ, որոնք ձևավորում են տնտեսական գործունեության շրջակա միջավայրը:

Առաջին տիպի շրջանակում ուսումնասիրվում են հետևյալ կառուցվածքները.

- տնային տնտեսություն. արտադրողական ուժերի տեղաբաշխում, ընտանիքի եկամուտների կառուցվածք և այլն,
- կազմակերպություններ. տեխնիկական կամ արտադրողական կապիտալի /հիմնական և շրջանառու/ կազմը, աշխատուժի կազմը, դրամական կապիտալի /բաժնետոմսեր, փոխառություններ/

<sup>6</sup> Jean Lhomme, Revue economique, nov. 1954.

կազմը, կազմակերպությանը պատկանող կառուցվածքային ստորաբաժանումներ, արտադրության կողմնորոշումը դեպի տեղական, ազգային և միջազգային իրացման շուկաներ,

- համալիր միավորներ՝ խումբ, հատված, գործունեության ճյուղ, երկիր, վերազգային միավորումներ:

Երկրի տնտեսական կառուցվածքը կարելի է ուսումնասիրել հետևյալ չափանիշներով.

1. արտադրական գործունեության բնույթը. արդյունաբերություն, գյուղատնտեսություն, ֆինանսներ, առևտուր և այլն,
2. տնտեսական միավորների չափերը՝ փոքր, միջին, խոշոր,
3. տնտեսական համակարգ՝ կապիտալիստական հատվածներ, համայնական, պետական, նախակապիտալիստական և այլն,
4. տնտեսական կազմավորման տեսակները /տնտեսակարգերը/ կենտրոնացված կառավարվող, մրցակցային, խառը, իշխանական տնտեսական խմբեր,
5. ակտիվ բնակչության բաշխում՝ զբաղվածության մակարդակ, գործազրկության կառուցվածքը ըստ ձևերի,
6. ազգային եկամտի բաշխումը այնպիսի խմբերի միջև, որոնք որոշված են՝ կախված նրանց տնտեսական գործունեությունից /արդյունաբերություն, գյուղատնտեսություն, տրանսպորտ և այլն/ կամ ազգային եկամտի բաշխումը սոցիալական խմբերի միջև՝ աշխատողներ, քողարկողներ, ուսանողներ և այլն,
7. տնտեսական գործունեության կողմնորոշում դեպի ներքին կամ արտաքին շուկա:

Կախված վերլուծության նպատակներից՝ կարող են կիրառվել նաև այլ չափանիշներ: Կառուցվածքների երկրորդ տեսակի շրջանակում ուսումնասիրվում են.

1. ժողովրդագրական կառուցվածքներ՝ տարիքային խմբերը, ակտիվ և ոչ ակտիվ բնակչության հարաբերակցությունը,
2. սոցիալական կառուցվածքներ՝ հասարակության տեսակները,
3. ինստիտուցիոնալ կառուցվածքներ՝ քաղաքական իրավասությունների բաշխումը, իշխանությունների միջև հարաբերությունները,
4. մենտալ կառուցվածքներ՝ քննարկումները, հայեցակարգերը, հավատքները, որոնց հարում են միևնույն հանրության անհատները:

Առաջին և երկրորդ տեսակի կառուցվածքների միջև սահմանվում են որոշակի հարաբերություններ, որոնք փոխադարձ համատեղության կամ անհամատեղության խնդիր են ստեղծում և վճռորոշ նշանակություն ունեն տնտեսական աճի և առաջընթացի համար:

Բացի տնտեսության կառուցվածքային վերլուծության թվարկված չափանիշներից, անհրաժեշտ է վերլուծել տնտեսական գործունեու-

թյան ժամանակային առումները: Որոշ տնտեսական երևույթներ փոփոխվում են ավելի դանդաղ, քան մյուսները: Տարբերում ենք փոփոխությունների երկու տեսակ.

- առավել դանդաղ և հետևողական փոփոխություններ, օրինակ՝ ֆերմերության դանդաղ ներթափանցում գյուղատնտեսության մեջ,
- կտրուկ փոփոխություններ, որոնք ճգնաժամների հետևանք են:

Փոփոխությունների տարբեր տեսակների օբյեկտիվ բնույթից ելնելով՝ Ռ. Բարրն առաջարկում է կառուցվածքի երկու հասկացություն՝ տնտեսական ամբողջի կառուցվածք և գործունեության մոդելի կառուցվածք: Առաջինը կախված է տնտեսական վերլուծության համար ընտրված չափանիշներից, երկրորդը՝ այն ժամանակահատվածի տևողությունից, որի վրա տարածվում է դիտարկումը և որի հիման վրա կառուցվում է գործունեության մոդելը:

Տնտեսական գործունեության կառուցվածքային վերլուծությունը հնարավորություն է տալիս հասկանալու համակարգի ընդհանուր գործառույթը, ի հայտ բերելու ազգային տնտեսության ոչ միասնեության գոտիները: Կառուցվածքային վերլուծության հիման վրա մշակվում է տնտեսական քաղաքականությունը: Արդյունավետ տնտեսական քաղաքականության մշակման հիմնական սկզբունքը գոյություն ունեցող կառուցվածքներին հարմարվելու անհրաժեշտությունն է: Անհրաժեշտ է հասնել այն բանին, որ կառուցվածքային բարեփոխումներից ակնկալվող փոփոխությունները դառնան այդ գործընթացի «սեփական փորձը»:

## 6.2. Տնտեսական միավորների տեսակները

Տնտեսական միավորների դասակարգումը սովորաբար սկսում են տնտեսության գործակալներից: Դասակարգման համար գոյություն ունեն հետևյալ սահմանումները, չափորոշիչներն ու մեթոդները.

- փոքր միավորներ են, որոնք նույնականացվում են ինստիտուցիոնալ միավորների ներսում և զբաղված են գերազանցապես արտադրական գործունեությամբ,

- տեղակայված են տարածքային առումով մեկ վայրում և վարում են հաշիվների բավարար ամբողջական կազմ,

- միասնեո են կամ որոշակի արտադրական գործընթաց իրականացնելու, կամ որոշակի ապրանքներ ու ծառայություններ արտադրելու առումով,

- սովորաբար կոչվում են ձեռնարկություններ (establishments)՝ արտադրական կազմակերպության մի մասն է, տեղակայված է մեկ վայրում և իրականացնում է տնտեսական գործունեության մեկ տեսակ, օրինակ՝

- ֆերմա, հանքահոր, ֆաբրիկա, գործարան
- արտադրամաս, խանութ, շինհրապարակ
- տրանսպորտային դեպո, օդանավակայան, ավտոպարկ
- բանկ, գրասենյակ, հիվանդանոց:

Ազգային հաշիվների համակարգում տարբերում ենք տնտեսական միավորների երկու հիմնական տեսակ՝ ինստիտուցիոնալ միավոր և հիմնարկ: Մակրոտնտեսական ցուցանիշների հաշվարկման համար որպես տնտեսական միավորների դասակարգման հիմք է ընդունվում ինստիտուցիոնալ միավորը: Դա այն միավորն է, որը կարող է իր անունից տնօրինել ակտիվներ և ունենալ պարտավորություններ, իրականացնել տնտեսական գործունեություն և ուրիշ գործարքներ այլ տնտեսական միավորների հետ:

Այրանքների և ծառայությունների արտադրության վերլուծության համար որպես ելակետ է ընդունվում տնտեսական միավորների այնպիսի դասակարգումը, որի հիմքում ընկած է «հիմնարկ» հասկացությունը, այսինքն՝ դա կազմակերպությունն է կամ նրա մի մասը, որը տեղակայված է որոշակի տարածքում և զբաղվում է գործունեության մեկ տեսակով, կամ որի գործունեության հիմնական տեսակին բաժին է ընկնում ավելացված արժեքի մեծ մասը:

Տարածքային բաժանման ենթատեքստում ինստիտուցիոնալ միավորները կարելի է բաժանել ևս երկու խմբի՝ միատարածքային և բազմատարածքային միավորներ:

**Միատարածքային** տնտեսական միավորը ինստիտուցիոնալ միավոր է, որի տնտեսական շահերի կենտրոնը գտնվում է մի վարչատարածքում, որտեղ և իրականացվում է նրա գործունեությունը: Միատարածքային միավորներ են տնային տնտեսությունները, այն կորպորացիաները, որոնց բոլոր արտադրությունները տեղադրված են և գործում են մեկ տարածքում, պետական կառավարման տարածքային մարմինները, տնային տնտեսություններին սպասարկող ոչ առևտրային կազմակերպությունները: Նման միավորների գործունեությունն իրականացվում է մեկ վարչատարածքում: Տնային տնտեսությունների և դրանց անդամների համար տնտեսական շահերի կենտրոն է հանդիսանում այն տարածքը /մարզը/, որտեղ տեղակայված են, այսինքն՝ որտեղ ապրում են, այլ ոչ թե աշխատում են:

**Բազմատարածքային** տնտեսական միավորը ինստիտուցիոնալ միավոր է, որի տնտեսական շահերի կենտրոնը գտնվում է մի քանի տարածքներում /մարզերում/: Բազմատարածքային միավորները կարելի է բաժանել երկու խմբի՝ միջշրջանային և ազգային:

**Միջշրջանային** միավորներ են կորպորացիաները, կառավարման միջտարածաշրջանային մարմինները և տնային տնտեսություններին սպասարկող որոշ ոչ առևտրային կազմակերպություններ, որոնք մաս-

նաճյուղեր ունեն և իրենց գործունեությունն իրականացնում են մի քանի շրջաններում կամ մարզերում:

**Ազգային միավորներ** են համարվում այն կորպորացիաները և կառավարման մարմինները, որոնց գործունեությունը տարածվում է ողջ երկրով մեկ, օրինակ՝ ազգային կորպորացիաները, որոնք ղեկավարում են երկաթուղագծերը կամ էլեկտրաէներգիայի արտադրությունը, մախարարությունները և գերատեսչությունները: Դրանք, որպես կանոն, ունեն տարբեր ներկայացուցչություններ և տարածքային միավորներ տարբեր շրջաններում: Ընդունված է բազմատարածքային միավորների բոլոր ստորաբաժանումները՝ ինչպես կենտրոնական, այնպես էլ ներկայացուցչությունները, համարել այն շրջանների գործակալներ, որտեղ դրանք տեղաբաշխված են:

Արտադրական գործունեությունը ռեսուրսների և գործողությունների, ինչպես օրինակ՝ սարքավորումներ, աշխատանք, արտադրական տեխնոլոգիա, այնպիսի համակազմ է, որը հանգեցնում է արտադրանքի թողարկմանը: Այդ ողջ գործընթացն ավելի հաճախ ձևակերպվում է «ծախսեր-թողարկում» արտահայտությամբ, որում ներառված բոլոր գործառույթների արտացոլմանն ու նկարագրմանն է ծառայում Ազգային հաշիվների համակարգը:

Յուրաքանչյուր տնտեսական միավորի արտադրական գործունեությունը տարանջատվում է երեք տեսակի՝

**Հիմնական գործունեություն** – ստեղծվում է ավելացված արժեքի գերակշիռ մասը: Կարող է լինել միայն մեկ տեսակի:

**Երկրորդական գործունեություն** – թողարկվում է երկրորդական արտադրանք՝ ավելի փոքր ավելացված արժեքով, քան գործունեության հիմնական տեսակն է: Հնարավոր է թողարկել մեկից ավելի արտադրատեսակներ:

**Օժանդակ գործունեություն** – կատարվում են օժանդակող ծառայություններ, որոնք չունեն ինքնուրույն ավելացված արժեք (իրացման խթանում, անձնակազմի վերապատրաստում, շենքի սպասարկում և այլն): Սովորաբար լինում են մի քանի տեսակի օժանդակ ծառայություններ:

Որպես կանոն, մակրոտնտեսական հաշիվների ենթատեքստով, կապված տնտեսական միավորների հետ, առկա է երկու հիմնական խնդիր՝ միևնույն տնտեսական միավորը միաժամանակ կարող է զբաղվել տնտեսական գործունեության տարբեր տեսակներով կամ թողարկել տարատեսակ ապրանքներ և ծառայություններ: Վերոնշյալ խնդիրները հաղթահարելու և տնտեսական միավորների միասնեությունն ապահովելու համար դրանք դասակարգվում են հետևյալ միավորների.

**Տնտեսական գործունեության մեկ տեսակի միավորներ** - կազմակերպությունը կամ դրա մի մասը զբաղված է արտադրական գործու-

նեության միայն մեկ, օժանդակ գործունեությանը չվերաբերող, տեսակով:

*Տարածքային առանձնացված միավոր* - կազմակերպությունը կամ դրա մի մասը արտադրական գործունեություն է իրականացնում մեկ վայրում կամ մեկ վայրից:

Դասակարգումների արդյունքում ստանում ենք տնտեսական միավորների հետևյալ խմբերը՝

- **Կազմակերպություն, որն ինքնուրույն է արտադրական և ֆինանսական գործառույթներ իրականացնելիս, իսկ գործունեության տեսակի և իրականացման վայրի առումով միասնությունը պարտադիր չէ:**

- **Տնտեսական գործունեության մեկ տեսակի միավոր, որը միասեն է ըստ գործունեության տեսակի, բայց ոչ ըստ իրականացման վայրի:**

- **Տարածքային առանձնացված միավոր, որը միասեն է ըստ գործունեության իրականացման վայրի, բայց ոչ ըստ գործունեության տեսակի:**

- **Տնտեսական միավոր** – միասեն է թե՛ ըստ գործունեության տեսակի և թե՛ ըստ իրականացման վայրի:

Հարկ է նշել, որ մակրոտնտեսական հաշիվների առումով օգտագործվում է «Տնտեսական միավոր» (Establishment) հասկացությունը:

Երկրի տնտեսական տարածքը բաժանվում է տարածաշրջանային և արտատարածաշրջանային տարածքների: Տարածաշրջանային տարածքը ներառում է երկրի հետևյալ մասերը.

1. շրջանները՝ որպես երկրի աշխարհագրական տարածքի մասեր,
2. ազատ գոտիներ, որոնք վերաբերում են տվյալ շրջանին, ներառյալ այն տարածքները, որոնք մաքսային վերահսկողության տակ են:

Արտատարածաշրջանային տարածքը ներառում է տնտեսական տարածքի այն մասերը, որոնք չեն կարող ուղղակիորեն վերագրվել որևէ կոնկրետ շրջանի: Դրանք են.

1. ազգային օդային տարածությունը, տարածքային ջրերը, որոնց նկատմամբ երկիրն ունի բացառիկ իրավունքներ,
2. այլ երկրներում գտնվող տարածքային անկլավները, որոնք օգտագործվում են տվյալ երկրի պետական հիմնարկների կողմից՝ դեսպանատներ, զինվորական հենակետեր և այլն,
3. նավթի, գազի և այլ հանքահորեր, որոնք գտնվում են միջազգային ջրերում և մշակվում են տվյալ երկրի ազգային միավորների կողմից:

### 6.3. Պարզ տնտեսական միավորների կառուցվածքային վերլուծության սկզբունքները

Տնտեսության կառուցվածքը բնորոշում է պարզ և բարդ տնտեսական միավորների գործունեությունը: Պարզ տնտեսական միավորների, մասնավորապես՝ կազմակերպությունների կառուցվածքային վերլուծությունն անհրաժեշտ է իրականացնել երկու փոխկապակցված ուղղություններով՝ կազմակերպության ռազմավարական ներուժի՝ ԿՌՆ, կառուցվածքի և կազմակերպության ծախսերի ուսումնասիրություն:

Կազմակերպության ռազմավարական ներուժի կառուցվածքային վերլուծության գործընթացում պետք է հստակեցվեն կազմակերպության՝ մրցակցային առավելության հասնելու նախապայմանները, որի համար ուսումնասիրվում է կազմակերպության կողմից օգտագործվող ռեսուրսների կառուցվածքը: Ընդ որում, վերլուծությունը իրականացվում է ինչպես ըստ ռեսուրսների տեսակների, այնպես էլ ըստ ռազմավարական ներուժի բաղադրիչների՝ ռազմավարական ռեսուրսների մատրիցի կիրառմամբ:

Վերլուծության ժամանակ հաշվարկում ենք հետևյալ ցուցանիշները.

1. Յուրաքանչյուր տեսակի ռեսուրսների տեսակարար կշիռը բոլոր ռեսուրսների արժեքի մեջ: Այս դեպքում որպես մատրիցի յուրաքանչյուր տողի բոլոր ռեսուրսների գումարային արժեք ընդունվում է 100 տոկոսը:

2. Յուրաքանչյուր տեսակի ռեսուրսի տեսակարար կշիռը տվյալ կազմակերպության բոլոր ռեսուրսների արժեքում: Այս դեպքում 100 տոկոս ընդունվում է մատրիցի բոլոր սյուների արդյունքների գումարը:

3. Որևէ ռեսուրսի տեսակարար կշիռը, որն օգտագործվում է ԿՌՆ-ի տվյալ բաղադրիչի իրացման նպատակով կազմակերպության այդ տեսակի ռեսուրսի գումարային արժեքում: Օրինակ, այն տեխնիկական ռեսուրսների տեսակարար կշիռը տեխնիկական ռեսուրսների ընդհանուր արժեքում, որն օգտագործվում է երկրում և դրա սահմաններից դուրս կազմակերպության մակրոտնտեսական իրավիճակի վերլուծության ունակությունը իրացնելու համար: Որպես 100 տոկոս ընդունվում է տվյալ ռեսուրսի մատրիցի սյունակի արդյունքը:

4. Բոլոր ռեսուրսների գումարային բաժինը, որն օգտագործվում է ԿՌՆ-ի որևէ բաղադրիչի իրացման համար /մատրիցի համապատասխան տողի արդյունքը/ կազմակերպության բոլոր ռեսուրսների ընդհանուր արդյունքի մեջ /մատրիցի բոլոր սյուների արդյունքների գումարը/:

ԿՌՆ-ի կառուցվածքային վերլուծության նշված մոտեցման մեջ առավել բարդ է այս կամ այն ռեսուրսի արժեքի գնահատումը: Այս խնդիրն ավելի հեշտ է լուծվում այնպիսի ռեսուրսների համար, ինչպիսիք են տեխնիկական, տարածական, կադրային ռեսուրսները: Բարդ է

զմահատել այնպիսի ռեսուրսը, ինչպիսին է, օրինակ, կառավարման համակարգի կազմակերպական կառուցվածքի ռեսուրսը: Նման խնդրի լուծումը պահանջում է հատուկ հետազոտություններ, որոնց արդյունքում անհրաժեշտ է վերհանել կազմակերպության գործունեության արդյունավետության կախվածությունը այն ծախսերից, որոնք կապված են նրա կառավարման համակարգի գործունեության հետ, այսինքն՝ անհրաժեշտ է որոշել «կազմակերպության կառավարման գինը»:

#### **6.4. Բարդ տնտեսական միավորների կառուցվածքային վերլուծության սկզբունքները**

Պարզ տնտեսական միավորների կառուցվածքային վերլուծության համեմատ՝ բարդ տնտեսական միավորների կառուցվածքային վերլուծությունը պահանջում է առավել էական վիճակագրական տեղեկատվություն, ինչպես նաև առավել ազդեցացված ցուցանիշների կիրառում: Նման վերլուծության նպատակներն առավել ընդարձակ են: Կառուցվածքային վերլուծության արդյունքում այնպիսի բարդ միավորի համար, ինչպիսին է երկրի ազգային տնտեսությունը, նրա առանձին ճյուղը և ենթաճյուղը, անհրաժեշտ է որոշել, թե որքանով են բարենպաստ բազմաթիվ կազմակերպությունների մրցակցային առավելության ստեղծման և պահպանման նախադրյալները: Ընդ որում, խոսքը վերաբերում է ոչ միայն կազմակերպություններին, այլև առանձին տնային տնտեսություններին և կոոպերատիվներին:

Որևէ ճյուղի կառուցվածքային վերլուծություն իրականացնելիս անհրաժեշտ է բացահայտել այդ ճյուղի ենթաճյուղերը, պարզել դրանցից յուրաքանչյուրի տեսակարար կշիռը ընդհանուր ճյուղում, ինչպես նաև վերլուծել յուրաքանչյուր ենթաճյուղում զբաղվածների տեսակարար կշիռը ընդհանուր ճյուղի աշխատողների թվաքանակում: Այդ ցուցանիշների շարժը, աճի տեմպերը հիմք կտան եզրակացնելու, թե տվյալ ճյուղը որ ենթաճյուղի հաշվին է զարգանում, որ ենթաճյուղը ինչ տեմպերով է զարգանում և ինչ ազդեցություն է ունենում ընդհանուր ճյուղի վրա, ինչպիսի միտումներ են դրսևորվում դինամիկ շարժերում, ինչպիսին է աշխատանքի արտադրողականությունը, զբաղվածությունը և այլն: Ասվածը դիտարկենք Հայաստանի մշակող արդյունաբերության ճյուղի օրինակով:

ՀՀ մշակող արդյունաբերության ենթաճյուղերի դինամիկան 2000-2006թթ.

|   | Անվանում                                  | Արդյունաբերական արտադրանքի տեսակարար կշիռը |      |      |      | Զննդվածների բաժնի տեսակարար կշիռը |             |             |             |
|---|-------------------------------------------|--------------------------------------------|------|------|------|-----------------------------------|-------------|-------------|-------------|
|   |                                           | 2000                                       | 2001 | 2002 | 2003 | 2000                              | 2001        | 2002        | 2003        |
|   | Մշակող արդյունաբերություն, որից           | 100                                        | 100  | 100  | 100  | 100                               | 100         | 100 /118.7/ | 100 /114.5/ |
| 1 | քիմիական արդյունաբերություն               | 5.1                                        | 4.4  | 3.2  | 2.8  | 8.7                               | 7.1         | 7.8         | 6.4         |
| 2 | մետաղագործական արդյունաբերություն         | 8.6                                        | 11.3 | 13.5 | 16.2 | 4.4                               | 5.5         | 5.5         | 5.7         |
| 3 | սննդամթերքի արտադրություն                 | 57.0                                       | 54.7 | 53.5 | 50.8 | 21.0                              | 24.1        | 24.7        | 26.1        |
| 4 | ոսկերչական արտադրատեսակների արտադրություն | 8.7                                        | 8.7  | 9.1  | 7.8  | 6.6                               | 5.8         | 7.4         | 8.1         |
| 5 | բնափայտի մշակում                          | 0.5                                        | 8.0  | 0.8  | 0.7  | ....                              | ...         | 1.1         | 1.1         |
|   | Անվանում                                  | Արդյունաբերական արտադրանքի տեսակարար կշիռը |      |      |      | Զննդվածների բաժնի տեսակարար կշիռը |             |             |             |
|   |                                           | 2004                                       | 2005 | 2006 |      | 2004                              | 2005        | 2006        |             |
|   | Մշակող արդյունաբերություն, որից           | 100                                        | 100  | 100  |      | 100 /111.5/                       | 100 /114.3/ | 100 /110.5/ |             |
| 1 | քիմիական արդյունաբերություն               | 3.1                                        | 3.7  | 3.6  |      | 3.2                               | 3.3         | 3.5         |             |
| 2 | մետաղագործական արդյունաբերություն         | 20.0                                       | 29.7 | 26.1 |      | 2.2                               | 2.6         | 3.4         |             |
| 3 | սննդամթերքի արտադրություն                 | 49.6                                       | 43.7 | 45.3 |      | 12.3                              | 15.0        | 15.5        |             |
| 4 | ոսկերչական արտադրատեսակների արտադրություն | ...                                        | ...  | ...  |      | ...                               | ...         | ...         |             |
| 5 | բնափայտի մշակում                          | 0.5                                        | 0.3  | 0.3  |      | 1.0                               | 0.9         | 1.0         |             |

Աղբյուրը՝ Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Երևան 2007:

Աղյուսակի տվյալների վերլուծությունը ցույց է տալիս հետևյալը.

1. Հայաստանի մշակող արդյունաբերության մեջ մեծ տեսակարար կշռով առանձնանում է սննդամթերքի արտադրությունը՝ ինչպես թողարկված արտադրանքի ծավալով, այնպես էլ զբաղվածների թվաքանակով:

2. 2000-2003թթ. ընթացքում տեղի են ունեցել հետևյալ կառուցվածքային փոփոխությունները. քիմիական արդյունաբերության, սննդամթերքի արտադրության, ոսկերչական արտադրատեսակների արտադրության ենթաճյուղերում թողարկվող արտադրանքի տեսակարար կշիռը կրճատվել է, իսկ զբաղվածների թվաքանակը, բացի քիմիական արտադրությունից՝ ավելացել է: 2003-2006թթ. ընթացքում քիմիական և մետաղագործական արտադրության ճյուղերում արտադրանքի տեսակարար կշիռը ընդհանուր ճյուղում նկատելիորեն ավելացել է, ինչը հատկապես ցայտուն է դրսևորվել մետաղագործական արդյունաբերության ճյուղում՝ մոտ 1.6 անգամ: Սննդամթերքի արտադրության և բնափայտի մշակման ճյուղերում ընդհակառակը, արտադրանքի թողարկման ծավալը կրճատվել է, ընդ որում՝ սննդամթերքի արտադրության ճյուղում այն կրճատվել է մոտ 1.1 անգամ, ինչը ուղեկցվել է զբաղվածների թվաքանակի նվազմամբ, սակայն ավելի մեծ չափերով՝ մոտ 1.7 անգամ:

3. Եթե արտադրության թողարկման ծավալների նվազումն ուղեկցվել է զբաղվածների թվաքանակի աճով, ապա կարելի է եզրակացնել, որ աշխատանքի արտադրողականության մակարդակը նվազել է: 2003-2006թթ. ընթացքում այդ միտումը փոխվել է:

Ազգային տնտեսության մակարդակով տնտեսական գործունեության կառուցվածքային վերլուծությունը հնարավորություն է տալիս հասկանալու ոչ միայն տնտեսության ընթացիկ վիճակի առանձնահատկությունները, այլև կանխատեսելու զարգացման հնարավոր ուղիքները: Տնտեսական գործունեության կառուցվածքային վերլուծությունը հատկապես կարևոր է խոշոր կառուցվածքային բարեփոխումների իրականացմանը նախորդող ժամանակահատվածում: Այդ մասշտաբի բարեփոխում է նոր տնտեսակարգին անցումը, որն ուղեկցվում է սեփականության ձևերի, ազգային տնտեսության և զբաղվածության կառուցվածքի, աշխատանքի միջազգային բաժանման մեջ ազգային տնտեսության դերի, մակրոտնտեսական կարգավորման մեթոդների և տնտեսական գործակալների կարգավիճակի փոխակերպումներով:

Ելնելով վերոնշյալ շարադրանքից՝ ձևակերպենք կառուցվածքային վերլուծության հիմնական սկզբունքները: Դրանք են.

1. Համալիրությունը, որը ենթադրում է տնտեսական գործունեության համակողմանի միաժամանակյա փոխկապակցված ուսումնասի-

լաթյուն ինչպես պարզ, այնպես էլ բարդ կառուցվածքային ստորաբաժանումների և ողջ ազգային տնտեսության առումով:

2. Համադրելիությունը, որը ենթադրում է կառուցվածքային այնպիսի ցուցանիշների ուսումնասիրություն, որոնք նախատեսված են ազգային տնտեսության կառուցվածքային ստորաբաժանումների մասշտաբով միատեսակ և նրանց գործունեության միանման ժամանակային խզումներով:

3. Դինամիզմը, որը պահանջում է բոլոր կառուցվածքային ցուցանիշներն ուսումնասիրել որոշակի ժամանակահատվածում, որպեսզի վերհանվեն ինչպես առանձին ստորաբաժանումների, այնպես էլ ողջ ազգային տնտեսության տնտեսական գործունեության զարգացման միտումներ:

### ***Թեմայի ամփոփում***

Տնտեսական միավորների կառուցվածքն իրենից ներկայացնում է համամասնությունների և հարաբերությունների ամբողջություն, որոնք բնութագրում են այդ միավորը տվյալ պահին և տվյալ պայմաններում: Համամասնությունը բնութագրում է դիտարկվող տնտեսական միավորները կազմող տարրերի հարաբերական մեծությունը և նշանակությունը: Հարաբերությունները ստեղծվում են մի կողմից՝ տնտեսական միավորների առանձին տարրերի միջև, մյուս կողմից՝ այդ միավորի և այլ տնտեսական միավորների միջև:

Տնտեսական գործունեության կառուցվածքային վերլուծությունը հնարավորություն է տալիս հասկանալու համակարգի ընդհանուր գործառույթը, դուրս բերելու ազգային տնտեսության միասեռ հատվածները: Կառուցվածքային վերլուծության հիման վրա մշակվում է տնտեսական քաղաքականությունը: Արդյունավետ տնտեսական քաղաքականության մշակման հիմնական սկզբունքը գոյություն ունեցող կառուցվածքներին հարմարվելու անհրաժեշտությունն է: Անհրաժեշտ է հասնել այն բանին, որ կառուցվածքային բարեփոխումներից ակնկալվող փոփոխությունները դառնան այդ գործընթացի «սեփական փորձը»:

Ազգային տնտեսության մակարդակով տնտեսական գործունեության կառուցվածքային վերլուծությունը հիմք է տալիս հասկանալու ոչ միայն տնտեսության ընթացիկ վիճակի առանձնահատկությունները, այլև կանխատեսելու զարգացման հնարավոր ուղղությունները: Տնտեսական գործունեության կառուցվածքային վերլուծությունը հատկապես կարևոր է խոշոր կառուցվածքային բարեփոխումների իրականացմանը նախորդող ժամանակահատվածում: Այդ մասշտաբի բարեփոխում է նոր տնտեսակարգին անցումը, որն ուղեկցվում է սեփականության ձևերի, ազգային տնտեսության և զբաղվածության կառուցվածքի,

աշխատանքի միջազգային բաժանման մեջ ազգային տնտեսության դերի, մակրոտնտեսական կարգավորման մեթոդների և տնտեսական գործակալների կարգավիճակի փոխակերպումներով:

Կազմակերպության ռազմավարական ներուժի կառուցվածքային վերլուծության գործընթացում պետք է հստակեցվեն կազմակերպության՝ մրցակցային առավելության հասնելու մախապայմանները, որի համար ուսումնասիրվում է կազմակերպության կողմից օգտագործվող ռեսուրսների կառուցվածքը: Ընդ որում, վերլուծությունը իրականացվում է ինչպես ըստ ռեսուրսների տեսակների, այնպես էլ ըստ ռազմավարական ներուժի բաղադրիչների՝ ռազմավարական ռեսուրսների մատրիցի կիրառմամբ:

### ***Հիմնական հասկացություններ***

Տնտեսական միավորների կառուցվածք

Տնտեսական կառուցվածքներ

Տնտեսական ամբողջի կառուցվածք

Կառուցվածքային վերլուծության համալիրություն

Կառուցվածքային վերլուծության դինամիզմ

Ինստիտուցիոնալ միավոր

Միատարածքային միավորներ

Բազմատարածքային միավորներ

Միջշրջանային և ազգային միավորներ

### ***Հարցեր և առաջադրանքներ***

1. Ո՞րն է տնտեսական կառուցվածքի վերլուծության էությունը:
2. Որո՞նք են կառուցվածքային վերլուծության սկզբունքները:
3. Ինչպիսի՞ն են Հայաստանի մշակող արդյունաբերության ենթաճյուղերի դինամիկ փոփոխությունները:
4. Ներկայացրեք արդյունաբերության ճյուղի զարգացման միտումները:

## ԹԵՄԱ 7. ԵՐԿՐԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

### 7.1. Տնտեսական գործունեության կենտրոնացման էությունը և ձևերը

Աշխատանքի հասարակական բաժանումը հանգեցնում է տնտեսական գործակալների առաջացման, որոնք իրականացնում են տարբեր ծավալների տնտեսական գործունեություն: Աշխատանքի հասարակական բաժանման, մասնավորապես՝ տնտեսական գործունեության մասնագիտացման մակարդակը կարելի է գնահատել՝ համեմատելով այդ գործունեության փաստացի և օպտիմալ ծավալները: Այստեղից հետևում է, որ անհրաժեշտ է պատասխանել հետևյալ հարցերին.

- ինչպե՞ս չափել տնտեսական գործակալի գործունեության ծավալը,
- տնտեսական գործունեության ո՞ր ծավալն է համարվում օպտիմալ:

Նշված հարցերը մեկնաբանելու համար նախ բնորոշենք «տնտեսական գործունեության համակենտրոնացում» տնտեսագիտական կատեգորիայի էությունը: Տնտեսական գործունեությունը կապված է առաջին կարգի բարիքների՝ սպառողական ապրանքների և բարձր կարգի բարիքների՝ ռեսուրսների, արտադրության միջոցների հետ: Բարիքների նշված տեսակները փոխկապակցված են: Բարձր կարգի բարիքների որոշակի քանակության և բազմազանության անհրաժեշտությունը առաջանում է առաջին կարգի բարիքների նկատմամբ պահանջարկի առկայության դեպքում: Եվ հակառակը, բարձր կարգի բարիքների պահանջվող քանակի և տեսականու բացակայությունը կարող է երկար ժամանակ ուշացնել առաջին կարգի բարիքների նկատմամբ պահանջարկի բավարարումը: Տնտեսական գործակալը, ստեղծելով կազմակերպություն, պետք է տնօրինի այնպիսի քանակության և տեսակի բարձր բարիքների, որոնք հնարավորություն կտան նրան արտադրելու, վաճառելու իրեն անհրաժեշտ կամ այլ տնտեսական գործակալի կողմից պահանջվող առաջին կարգի բարիքների քանակություն և բազմազանություն:

Այսպիսով, տնտեսական գործունեության որոշակի ծավալների համակենտրոնացումը կազմակերպության սահմաններում ենթադրում է տնտեսական գործակալի որոշակի ռեսուրսների և ապրանքների համակենտրոնացում: Հետևաբար, անհրաժեշտ է տարբերել «կապիտալի համակենտրոնացում» և «արտադրության համակենտրոնացում» հասկացությունները կամ կազմակերպության չափերը և կազմակերպու-

թյան արտադրության չափերը: Դրամական արտահայտությամբ՝ կազմակերպության չափը նրա տրամադրության տակ եղած ռեսուրսների արժեքն է, իսկ կազմակերպության արտադրության չափը՝ տնտեսական գործունեության ապրանքների արժեքն է: Կազմակերպության չափը որոշում են ժամանակի որոշակի պահի դրությամբ, իսկ կազմակերպության արտադրության չափը՝ ժամանակի որոշակի հատվածի համար:

Կապիտալի համակենտրոնացում կարող է տեղի ունենալ ոչ միայն մեկ կազմակերպության սահմաններում, այլև մի քանի կազմակերպությունների միաձուլման միջոցով, որոնք կենտրոնացված են մեկ կամ մի քանի տնտեսական գործակալների ձեռքում՝ բաժնետոմսերի վերահսկիչ ծրարի կամ այլ ձևով՝ կոնցենոն, կոնսորցիում, տրեստ, սինդիկատ և այլն:

Կապիտալի համակենտրոնացումը նպատակ ունի մոնոպոլացնել կամ օլիգոպոլացնել շուկան, ստեղծել «մուտքի պատնեշ»՝ ներուժային մրցակիցներին տվյալ ճյուղ ներթափանցելուց զերծ պահելու նպատակով: Որպես կանոն, այդ ճյուղում գտնվողները ունեն հաստատուն դիրք և գերշահույթ են ստանում: Կապիտալի նման համակենտրոնացումը կանոնակարգվում է հակամրցակցային պաշտպանության օրենսդրությամբ: Հայաստանում գոյություն ունի հատուկ կառույց, որի կոլեգիալ մարմինը նշանակվում է հանրապետության Նախագահի կողմից, իսկ դաշտը կարգավորում է Հակամրցակցային օրենքը: Սակայն դա չի նշանակում, որ գոյություն չունեն այնպիսի նպատակներ, որոնք թույլատրվում են այդ օրենքով: Օրինակ. մի քանի կազմակերպությունների կոոպերացումը՝ խոշոր գիտահետազոտական մախագծերի իրականացման նպատակով:

Արտադրության համակենտրոնացումն իրականացվում է արտադրական գործընթացների մեքենայացման և ավտոմատացման նպատակով: Արտադրության համակենտրոնացման ձևերից են ագրեգատայինը և արտադրատեխնոլոգիականը: Ագրեգատային ձևը դրսևորվում է բանվորական մեքենաների և ագրեգատների միավոր հզորության մեծացման միջոցով: Այս ձևը հնարավորություն է տալիս ավելի արդյունավետ օգտագործելու արտադրական տարածքները և սպասարկող անձնակազմը:

Արտադրատեխնոլոգիական ձևը դրսևորվում է բանվորական մեքենաների և ագրեգատների և՛ հզորության, և՛ քանակի միաժամանակյա մեծացմամբ, կազմակերպության սահմանափակ թվով ստորաբաժանումներում արտադրանքի համախմբման հիման վրա:

Արտադրության համակենտրոնացումն ունի սահմաններ, որոնց խախտումը կարող է հանգեցնել արտադրության արդյունավետության նվազման:

## 7.2. Արտադրական միավորի առանձնահատկությունները և տեսակները

Կազմակերպությունը համարվում է շուկայական տնտեսությանը բնորոշ արտադրական միավոր: Արտադրության համակենտրոնացումը կատարվում է արտադրական միավորներում: Ընդհանուր առմամբ, կազմակերպությունն արտադրական միավոր է, որը ունի հետևյալ առանձնահատկությունները:

1. Միասնական ունեցվածքի առկայությունը կազմակերպությունների դեկավարներին հնարավորություն է տալիս դիմելու ռիսկի և ապահովում է կազմակերպության միասնությունը:
2. Կազմակերպությունը գույակցում է արտադրական գործոնները:
3. Կազմակերպության նպատակը շուկայում վաճառքն է, նա աշխատում է իր արտադրած ապրանքները և ծառայությունները շուկայում իրացնելու համար, որով բավարարում է սպառողների գնողունակ պահանջումները:
4. Կազմակերպությունը ձգտում է առավելագույնի հասցնել շահույթը, որը վաճառքի գնի և ինքնարժեքի տարբերությունն է:
5. Կազմակերպությունն ունի ընդհանուր տարածք և աշխատողներ, որոնք միավորված են ընդհանուր նպատակով:

Տարբեր երկրներում գործում են տարբեր կազմակերպություններ: Այդ երկրների օրենսդրությունը նախատեսում է կոնկրետ կազմակերպչորակական ձևեր: Սակայն բոլոր կազմակերպչորակական ձևերը ընդհանուր գծերով կարելի է խմբավորել հետևյալ կերպ.

1. Անհատական մասնավոր կազմակերպություն՝ ՄՊԸ, որտեղ և՛ կապիտալի տնօրինումը, և՛ եկամտի բաշխումը կենտրոնացած է մեկ ձեռնարկատիրոջ ձեռքում, որը կրում է ձեռնարկատիրական գործունեության ռիսկը և պատասխանատվությունը:
2. Փայատիրական կազմակերպություն՝ կոոպերատիվ, որտեղ կապիտալի սեփականատեր է հանդիսանում ձեռնարկատերերի խումբը:
3. Բաժնետիրական ընկերություններ, որոնք կապիտալը ձևավորում են բաժնետերերի ներգրավման միջոցով: Բաժնետերերը այս կամ այն չափով մասնակցում են կապիտալի տնօրինմանը և եկամտի բաշխմանը, ինչպես նաև որոշումների ընդունմանը:
4. Պետական կազմակերպություններ, որոնց սեփականատերը պետությունն է, որն էլ իրականացնում է գործառնությունների բաշխումը և սահմանում է եկամտի բաշխման կանոնները:
5. Խառը կազմակերպություններ, որոնց կապիտալը ձևավորվում է պետության, հայրենական կամ օտարերկրյա ներդրողների բաժնային մասնակցության հաշվին: Այս դեպքում գործառնություններ

իրականացվում են համապատասխան համաձայնության՝ կանոնադրության կամ օրենսդրության հիման վրա:

6. Անդրազգային կազմակերպություններ, որոնց կապիտալի ձևավորումը, գործառնությունների բաշխումը իրականացվում է պետությունների քաղաքական կամ տնտեսական միությունների կողմից /Վերոպական միություն/ ընդունված օրենսդրության և նորմատիվ ակտերի հիման վրա:

### ***7.2.1. ՀՀ արտադրական միավորների կազմակերպա-իրավական տեսակները***

Կազմակերպությունների կողմից իրականացվող տնտեսական նպատակամետ գործունեությունը պետք է ունենա որոշակի, տնտեսական իրավունքի նորմերով և օրենքով սահմանված կազմակերպական ձևեր և կառավարման կառուցվածքներ, այսինքն՝ որոշակի կազմակերպաիրավական ձև, որը ձևավորվում է մի շարք գործոնների ազդեցությամբ: Դրանցից են՝ գործունեության ուղղվածությունը, կառավարման բնույթը, պատասխանատվության աստիճանը, հիմնադիր կապիտալի ձևավորման եղանակը, իսկ որոշիչ գործոնը կազմակերպության գույքի նկատմամբ սեփականության ձևն է: Այս առումով տնտեսական միավորները տարանջատվում են երկու մեծ խմբի՝

1. Իրավաբանական անձինք և հասարակական կազմակերպություններ, ինչպես օրինակ՝ կորպորացիաները և ոչ առևտրային կազմակերպությունները, որոնք պաշտոնապես գրանցված են ձեռնարկությունների պետական ռեգիստրում:

2. Ֆիզիկական անձինք և տնային տնտեսություններ՝ ներառյալ ոչ կորպորատիվ կազմակերպությունները:

Որպես արտադրական միավորներ՝ դրանք լինում են շուկայական և ոչ շուկայական:

Շուկայական է այն արտադրողը, որի ողջ արտադրանքը կամ դրա գերակշիռ մասն իրացվում է շուկայում:

Ոչ շուկայական արտադրողի գործունեությունն այդպիսին է ըստ իր բնույթի և բովանդակության՝ առաջին դեպքում արտադրանքը արտադրվում է սեփական վերջնական սպառման համար, երկրորդ դեպքում՝ որոշ կազմակերպությունների կողմից արտադրանքը կամ ծառայությունները մատուցվում են անվճար կամ շատ ցածր և հաշվառման համար հետաքրքրություն չներկայացնող զնեքով: Այդպիսիք կարող են լինել պետական կառավարման մարմինները և տնային տնտեսություններին սպասարկող ոչ առևտրային կազմակերպությունները՝ եկեղեցի, հիվանդանոցներ, հիմնադրամներ, հասարակական կազմակերպություններ և այլն: Առևտրային են համարվում այն կազմակերպությունները, որոնք շահույթ ստանալու նպատակ են հետապնդում: Դրանցից են.

Տնտեսական ընկերակցությունները, որոնց կանոնադրական կապիտալը բաժանված է հիմնադիրների բաժնեմասերի: Տնտեսական ընկերակցությունները կարող են ստեղծվել լիակատար ընկերակցության ձևով: Տնտեսական ընկերակցությունները կարող են ստեղծվել սահմանափակ կամ լրացուցիչ պատասխանատվությամբ կամ բաժնետիրական ընկերության տեսքով:

Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը մեկ կամ մի քանի անձանց համատեղ միավորումն է՝ համատեղ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու նպատակով: Լրացուցիչ պատասխանատվությամբ ընկերությունը մեկ կամ մի քանի անձանց հիմնադրած ընկերությունն է, որի կանոնադրական կապիտալը բաժանված է կանոնադրությամբ սահմանված մասերի:

Բաժնետիրական ընկերությունը կազմակերպությունների առավել տարածված և բարդ կազմակերպատիրական ձևն է:

Կախյալ տնտեսական ընկերությանը պատկանում է սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կանոնադրական կապիտալի կամ բաժնետիրական ընկերության քվեարկող բաժնետոմսերի ավելի քան 20 տոկոսը:

Կոոպերատիվ է համարվում այն կամավոր միավորումը, որը հիմնված է մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց անդամության վրա և ստեղծվել է անդամների գույքային փայավճարների միավորման միջոցով՝ մասնակիցների նյութական և այլ արհիքները բավարարելու նպատակով:

-Ոչ առևտրային կազմակերպություններ են.

Հասարակական միավորումները, որոնք կազմավորվում են քաղաքացիների շահերի ընդհանրության հիման վրա և հոգևոր կամ ոչ նյութական այլ պահանջումները բավարարելու նպատակ ունեն:

-Հիմնադրամները, որոնք քաղաքացիների և/կամ իրավաբանական անձանց կամավոր վճարների հիման վրա ստեղծված և անդամություն չունեցող կազմակերպություններ են և հետապնդում են սոցիալական, բարեգործական, մշակութային, կրթական կամ այլ հանրօգուտ նպատակներ:

-Իրավաբանական անձանց միություններ, որոնք ստեղծվում են առևտրային կազմակերպությունների՝ ձեռնարկատիրական գործունեությունը համակարգելու, ընդհանուր գույքային շահերը ներկայացնելու և պաշտպանելու նպատակով: Մասնագիտական գրականության մեջ առանձնացվում է կազմակերպությունների միավորման երկու հիմնական տեսակ՝ հորիզոնական և ուղղահայաց:

Համաշխարհային պրակտիկայում լայն տարածում են ստացել կազմակերպությունների այնպիսի միավորումները, ինչպիսիք են՝ կարտելները, սինդիկատները, կոնցեռնները, արդյունաբերական հոլդինգները, ֆինանսարդյունաբերական խմբերը:

### **7.2.2. Բաժնետիրական ընկերությունները, դրանց գործունեության մեխանիզմը ՀՀ-ում**

Բաժնետիրական ընկերությունը իրավաբանական անձ է, որը կարող է իրականացնել զանազան գործունեություն՝ առանց երրորդ անձանց կամ պետական մարմինների միջամտության, եթե գործում է ՀՀ օրենսդրության, ընկերության բաժնետերերի, տնօրենների խորհրդի, գլխավոր տնօրենի և վարչության կողմից սահմանված քաղաքականությանը համապատասխան: Բաժնետիրական է համարվում այն ընկերությունը, որի կանոնադրական կապիտալը բաժանված է որոշակի թվով բաժնեմասերի: Բաժնետոմս թողարկելու իրավունք ունի միայն ԲԲ-ն:

Գոյություն ունեն բաժնետիրական ընկերությունների երկու տեսակ՝ բաց և փակ:

Բաժնետիրական ընկերությունը համարվում է բաց (ԲԲԸ), երբ նրա բաժնետերերը, առանց այլ բաժնետերերի համաձայնության, կարող են օտարել իրենց պատկանող բաժնետոմսերը: ԲԲԸ-ն իրավունք ունի անցկացնել բաժնետոմսերի բաց բաժանորդագրություն: Այն կարող է վերագրանցվել որպես Փակ բաժնետիրական ընկերություն (ՓԲԸ)՝ համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելով կանոնադրության մեջ և նվազեցնելով բաժնետերերի քանակը:

Փակ բաժնետիրական ընկերության /ՓԲԸ/ բաժնետերերը կարող են օտարել իրենց պատկանող բաժնետոմսերը դրանք նախօրոք ընկերության այլ բաժնետերերին առաջարկելուց հետո: ՓԲԸ-ն իրավունք չունի անցկացնել բաժնետոմսերի բաց բաժանորդագրություն: ՓԲԸ-ի բաժնետոմսերը բաշխվում են նրա հիմնադիրների կամ նախապես որոշված անձանց միջև: Բաժնետոմսերը չեն կարող տեղաբաշխվել անսահմանափակ թվով անձանց միջև: ՓԲԸ-ի բաժնետերերի թիվը չպետք է գերազանցի 25-ը, այլապես նա պարտավոր է նվազեցնել բաժնետերերի քանակը կամ 1 տարվա ընթացքում վերագրանցվել որպես ԲԲԸ:

ԲԲԸ-ի համեմատ ՓԲԸ-ն պահանջում է ավելի փոքր կանոնադրական կապիտալ և թույլ է տալիս չիրապարակել տեղեկություններ իր ֆինանսական դրության վերաբերյալ:

ԲԸ-ի կառավարման բարձրագույն մարմինը բաժնետերերի ընդհանուր ժողովն է, որի միջոցով են բաժնետերերը որոշում ընդունում ընկերության գործունեության վերաբերյալ, գնահատում տնօրենների խորհրդի, գլխավոր տնօրենի և վարչության գործունեությունը: Որոշ հարցերի վերաբերյալ որոշումների ընդունումը բաժնետերերի ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությունն է:

50-ից ավելի բաժնետեր ունեցող ԲԸ-ում ստեղծվում է տնօրենների խորհուրդ, որի անդամներին ընտրում են բաժնետերերը: Տնօրենների խորհուրդը հաշվետու է բաժնետերերի ընդհանուր ժողովին և ներկայացնում է բաժնետերերի շահերը: Այն նաև պատասխանատվություն է կրում ընկերության ռազմավարական ուղղության համար և վերահսկում է գլխավոր տնօրենի և վարչության գործունեությունը:

Յուրաքանչյուր ԲԸ պետք է ունենա գործադիր մարմին՝ գլխավոր տնօրեն և վարչություն, որոնք պատասխանատու են ընկերության ամենօրյա ղեկավարման համար և կարևոր դեր են կատարում բաժնետերերի և տնօրենների խորհուրդների կողմից առաջադրված նպատակների իրականացման գործում:

ԲԸ-ի հիմնադիր կարող են լինել քաղաքացիները և իրավաբանական անձինք: ԲԸ-ն հիմնադրվում է բաժնետերերի հիմնադիր ժողովում՝ հիմնադիրների ընդունած որոշմամբ, որն արտացոլվում է ընկերություն ստեղծելու վերաբերյալ գրավոր պայմանագրում: Մեկ հիմնադիր ունենալու դեպքում ընկերությունը հիմնվում է այդ հիմնադրի որոշմամբ: Ընկերության հիմնադրման ժամանակ միայն հիմնադիրները կարող են դառնալ բաժնետերեր, իսկ բոլոր բաժնետոմսերը պետք է տեղաբաշխվեն հիմնադիրների միջև: Ընկերություն հիմնադրելու մասին որոշումը պետք է ընդունվի բաժնետերերի հիմնադիր ժողովում, որը ընկերության բաժնետերերի առաջին տարեկան ընդհանուր ժողովն է: Այն իրավագոր է, եթե ժողովին մասնակցելու համար գրանցվել են ԲԲԸ-ի հիմնադիր ձայների, ինչպես նաև հիմնադիրների ընդհանուր քվի առնվազն 2/3-ը, իսկ ՓԲԸ-ի հիմնադիրների ձայների՝ առնվազն 2/3-ը:

Կանոնադրական կապիտալը բաժնետերերի ձեռք բերած բոլոր բաժնետոմսերի գումարային անվանական արժեքն է, որը սահմանում է պարտատերերի շահերը երաշխավորող ընկերության գույքի նվազագույն չափը: ԲԲԸ-ի նվազագույն կանոնադրական կապիտալի չափը կազմում է նվազագույն ամսական աշխատավարձի հազարապատիկը, իսկ ՓԲԸ-ի համար՝ հարյուրապատիկը: Թողարկված բաժնետոմսերը ընկերության կողմից վաճառքի հանված բաժնետոմսերն են, որը չի կարող գերազանցել կանոնադրությամբ սահմանված և հայտարարված բաժնետոմսերի քանակը: Ընկերությունը հիմնադրելու ժամանակ ընկերության բաժնետոմսերը պետք է տեղաբաշխվեն և վճարվեն կանոնադրությամբ սահմանված անվանական արժեքով: Հիմնադիրները կարող են սկսել ընկերության գրանցման գործընթացը բաժնետերերի հիմնադիր ժողովից և ընկերության բոլոր բաժնետոմսերի անվանական արժեքն ամբողջությամբ վճարելուց հետո:

### 7.3. Տնտեսական գործունեության կենտրոնացման մակարդակի ցուցանիշները

Կապիտալի կենտրոնացման մակարդակը կարող է որոշվել մի շարք ցուցանիշների միջոցով, որոնցից են՝ կենտրոնացման գործակիցը և Հերֆինդալ-Հիրշմանի շուկայական համակենտրոնացման գործակիցը՝ ՀՀԻ, ինչպես նաև Լերմերի ինդեքսը:

Կենտրոնացման գործակիցը ցույց է տալիս ճյուղային վաճառքի ընդհանուր ծավալում 4 /երբեմն 8/ խոշոր կազմակերպությունների վաճառքի բաժինը՝ տոկոսներով: Այսպես, ԱՄՆ ավտոմոբիլային արդյունաբերության մեջ 4 խոշոր կազմակերպություններին բաժին է ընկնում ավտոմեքենաների վաճառքի 90 տոկոսը, իսկ սիգարետների արտադրությունում՝ համապատասխանաբար 85 տոկոսը, թերթերի հրատարակման ոլորտում՝ 15 տոկոսը:

1982թ. Վ. Շեֆերդը բոլոր ամերիկյան շուկաները բաժանեց 4 խմբի.

1. Մաքուր մոնոպոլիա՝ կենտրոնացման գործակիցը՝ 100 տոկոս:
2. Գերակայող կազմակերպություններ՝ կենտրոնացման գործակիցը՝ մինչև 90 տոկոս:
3. Սահմանափակ օլիգոպոլիա՝ կենտրոնացման գործակիցը՝ ավելի քան 60 տոկոս:
4. Արդյունավետ մրցակցություն՝ կենտրոնացման գործակիցը՝ 40 տոկոսից քիչ:

Հերֆինդալ-Հիրշմանի ինդեքսը /ՀՀԻ/ հաշվարկվում է շուկայում յուրաքանչյուր կազմակերպության տեսակարար կշիռների քառակուսիների գումարով:

$$\text{ՀՀԻ} = P_1^2 + P_2^2 + \dots + P_n^2,$$

որտեղ  $P_n$ -ը  $n$ -րդ կազմակերպության բաժինն է շուկայում:

Կապիտալի կենտրոնացման աճին զուգահեռ, ՀՀԻ-ն ավելանում է, և ընդհակառակը: ՀՀԻ-ի առավելագույն մեծությունը մոնոպոլիայի համար հավասար է 10000:

Աղյուսակ 6

**Հերֆինդալ-Հիրշմանի շուկայական համակենտրոնացման գործակիցը**

| 1000-ից փոքր                   | 1000-1800                                                                            | 1800-ից ավել                                                                                      |
|--------------------------------|--------------------------------------------------------------------------------------|---------------------------------------------------------------------------------------------------|
| Թույլ համակենտրոնացված շուկա   | Միջին համակենտրոնացված շուկա                                                         | Բարձր կենտրոնացված շուկա                                                                          |
| Ոչ մի միաձուլում չի վիճարկվում | Վիճարկվում են այն միաձուլումները, որոնց արդյունքում ՀՀԻ հավելաճը ամենաքիչը 100 կետ է | Վիճարկվում են միայն այն միաձուլումները, որոնց արդյունքում ՀՀԻ հավելաճը կազմում է ամենաքիչը 50 կետ |

ԱՄՆ արդարադատության նախարարության կողմից ՀՀԻ օգտագործվում է այն կազմակերպությունների միաձուլումը կանխարգելելու նպատակով, որի արդյունքում շուկան մոնոպոլացվում է: Օրենսդրությանը նախատեսված են ՀՀԻ-ի նորմատիվներ կազմակերպությունների միաձուլումից հետո:

Ա. Լերների ինդեքսն օգտագործվում է մենաշնորհի իշխանության չափը որոշելու նպատակով: Այն հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$L = (P - MC) / P,$$

որտեղ  $P$  – ն միավոր արտադրանքի գինն է, իսկ  $MC$ -ն՝ արտադրանքի լրացուցիչ միավորի թողարկման համար կատարվող սահմանային ծախսերը:

Որքան  $P$  և  $MC$ -ի միջև տարբերությունը մեծ է, այնքան մոնոպոլ իշխանության չափը մեծ է:  $L$ -ի մեծությունը  $0-1$  միջակայքում է: Կատարյալ մրցակցության դեպքում, երբ  $P=MC$ , Լերների ինդեքսը հավասարվում է զրոյի:

Արտադրության կենտրոնացման մակարդակի ցուցանիշները կարող են հանդես գալ արտադրության նվազագույն արդյունավետության /կենտրոնացման ներքին սահման/ և օպտիմալ /կենտրոնացման վերին սահման/ չափերում:

Նվազագույն արդյունավետության չափ՝ ՆԱՁ է համարվում արտադրության թողարկման այն ծավալը, որի դեպքում ապահովվում է երկարաժամկետ միջին ծախսումների որոշ կայունություն, որը ձեռք է բերվում ի հաշիվ արտադրության կազմակերպման և առաջադիմական տեխնոլոգիայի արդյունավետ օգտագործման: Ընդ որում, արտադրության ծավալների հետագա աճը չի բարձրացնում այս մակարդակը, քանի դեռ արտադրության մասշտաբից նվազող հատույցը չի դրսևորվել:

Տարբեր ճյուղերում ՆԱՁ-ը տարբեր է: Օպտիմալ պետք է համարել արտադրության այնպիսի չափը, որի դեպքում սահմանային եկամուտը հավասարվում է սահմանային ծախսերին՝  $MP=MC$ : Ինչպես հայտնի է, այս դեպքում կազմակերպության շահույթն առավելագույնի է հասնում: Արտադրության օպտիմալ չափը կախված է բազմաթիվ գործոններից: Դրանցից են՝ շահույթի մոդելը, արտադրանքի պահանջարկի ճկունությունը, փոփոխում ծախսերի փոփոխության տեմպերը, արտադրության չափերը և այլն: Ուստի ցանկացած կոնկրետ կազմակերպության համար, որը գործում է որոշակի պայմաններում, յուրաքանչյուր արտադրատեսակի գծով այդ ծավալը տարբեր կլինի: Պայմաններից որևէ մեկի փոփոխության դեպքում արտադրության օպտիմալ ծավալը կփոխվի:

Գիտատեխնիկական առաջընթացը, որն ուղեկցվում է նոր, բարձր արտադրողական սարքավորումների ներդրմամբ և առաջադեմ տեխնո-

լոգիական գործընթացներով, հանգեցնում է արտադրության ինչպես նվազագույն արդյունավետության, այնպես էլ օպտիմալ չափերի մեծացման:

### ***Թեմայի ամփոփում***

Աշխատանքի հասարակական բաժանումը հանգեցնում է տնտեսական գործակալների առաջացման, որոնք տարբեր ծավալների տնտեսական գործունեություն են իրականացնում: Աշխատանքի հասարակական բաժանման, մասնավորապես տնտեսական գործունեության մասնագիտացման մակարդակը կարելի է գնահատել՝ համեմատելով այդ գործունեության փաստացի և օպտիմալ ծավալները:

Այսպիսով, տնտեսական գործունեության որոշակի ծավալների համակենտրոնացումը կազմակերպության սահմաններում ենթադրում է տնտեսական գործակալի որոշակի ռեսուրսների և ապրանքների համակենտրոնացում: Հետևաբար, անհրաժեշտ է տարբերել «կապիտալի համակենտրոնացում» և «արտադրության համակենտրոնացում» հասկացություններ, կամ կազմակերպության չափերը և կազմակերպության արտադրության չափերը:

Կազմակերպությունների կողմից իրականացվող տնտեսական նպատակամետ գործունեությունը պետք է ունենա որոշակի, տնտեսական իրավունքի նորմերով և օրենքով սահմանված կազմակերպական ձևեր և կառավարման կառուցվածքներ, այսինքն՝ որոշակի կազմակերպահրավական ձև, որը ձևավորվում է մի շարք գործոնների ազդեցությամբ: Դրանցից են՝ գործունեության ուղղվածությունը, կառավարման բնույթը, պատասխանատվության աստիճանը, հիմնադիր կապիտալի ձևավորման եղանակը, իսկ որոշիչ գործոնը կազմակերպության գույքի նկատմամբ սեփականության ձևն է:

Բաժնետիրական ընկերությունը իրավաբանական անձ է, որը կարող է իրականացնել զանազան գործունեություն՝ առանց երրորդ անձանց կամ պետական մարմինների միջամտության, եթե գործում է ՀՀ օրենսդրության, ընկերության բաժնետերերի, տնօրենների խորհրդի, գլխավոր տնօրենի և վարչության կողմից սահմանված քաղաքականությանը համապատասխան: Բաժնետիրական է համարվում այն ընկերությունը, որի կանոնադրական կապիտալը բաժանված է որոշակի թվով բաժնեմասերի: Բաժնետոմս թողարկելու իրավունք ունի միայն բաժնետիրական ընկերությունը:

Կենտրոնացման գործակիցը ցույց է տալիս ճյուղային վաճառքի ընդհանուր ծավալում 4 /երբեմն 8/ խոշոր կազմակերպությունների վաճառքի բաժինը՝ տոկոսներով:

Նվազագույն արդյունավետության չափ՝ ՆԱԶ է համարվում արտադրության թողարկման այն ծավալը, որի դեպքում ապահովվում է

ելակարածակետ միջին ծախսումների որոշ կայունություն, որը ձեռք է բերվում ի հաշիվ արտադրության կազմակերպման և առաջադեմ տեխնոլոգիայի արդյունավետ օգտագործման: Ընդ որում, արտադրության ծավալների հետագա ավելացումը չի հանգեցնում այս մակարդակի բարձրացման նախքան արտադրության մասշտաբից նվազող հատույցի դրսևորումը:

### ***Հիմնական հասկացություններ***

Արտադրության համակենտրոնացում  
Կապիտալի համակենտրոնացում  
Կազմակերպության արտադրական չափ  
Ագրեգատային համակենտրոնացում  
Արտադրատեխնիկական համակենտրոնացում  
Հերֆինդալ-Հիրշմանի շուկայական համակենտրոնացման գործակից՝ ՀՀԻ  
Լերների ինդեքս  
Արտադրության նվազագույն արդյունավետության չափ  
Արտադրության օպտիմալ չափ

### ***Հարցեր և առաջադրանքներ***

1. Ի՞նչ է արտադրության համակենտրոնացումը, ինչո՞վ է տարբերվում կապիտալի համակենտրոնացումից:
2. Որո՞նք են կազմակերպության չափ և կազմակերպության արտադրության չափ հասկացությունների տարբերությունները:
3. Ո՞րն է արտադրության համակենտրոնացման գործընթացի նպատակը, և արտադրության համակենտրոնացման որ ձևն է առավել նախընտրելի:
4. Որո՞նք են կազմակերպությանը բնորոշ հիմնական գծերը:
5. Որո՞նք են պետական կազմակերպության հիմնական ձևերը: Թվարկեք ՀՀ-ում գործող կազմակերպաիրավական ձևերը:
6. Ի՞նչ է համակենտրոնացումը:
7. Թվարկեք Վ. Շեֆերդի սահմանած շուկայի խմբերը:
8. Ինչպե՞ս է իրականացվում ՀՀԻ-ի հաշվարկը և դրա կիրառումը:
9. Ինչպե՞ս հաշվել և օգտագործել Լերների ինդեքսը:
10. Ի՞նչ է «արտադրության նվազագույն արդյունավետության չափը»:
11. Ինչո՞վ է տարբերվում արտադրության օպտիմալ չափը նվազագույնից:

## **ԹԵՄԱ 8. ԵՐԿՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ**

### **8.1. Մրցակցային տնտեսակարգի ձևավորման և գործունեության սկզբունքները**

Տնտեսակարգերի որոշ առանձնահատկություններ դիտարկենք երկրի կողմից դրանց ընդունման հնարավոր հետևանքների տեսանկյունից:

Տնտեսության կենտրոնացված կառավարում ունեցող երկրի տնտեսական քաղաքականությանը բնորոշ են էական թերություններ, որն արտահայտվում է տնտեսական իշխանության իրականացման, քաղաքական իշխանության հետ նրա միահյուսման, սպառողական ապրանքների անհուսալիության և անբավարարության, սոցիալական կախվածության աճի, իրավական պետության և ազատության գոյության վտանգի տեսանկյունից:

Տնտեսության խմբային կարգավորման տնտեսական քաղաքականությունը ունի անհավասարակշռության միտում, որը ի վերջո հանգեցնում է անկայուն հավասարակշռության: Իշխանություն ունեցող խմբավորումների գոյությունը և միմյանց դիմակայումը չեն կարող ապահովել տնտեսակարգի հիմնախնդիրների երկարաժամկետ լուծում: Երկկողմանի մենաշնորհների, մասնակի մենաշնորհների և խմբաշնորհների /օլիգոպոլիսների/ անհավասարակշիռ շուկայական ձևերն առաջացնում են պետական միջամտության իրացման միտում տնտեսության մեջ:

Լրիվ մրցակցության տնտեսական քաղաքականության արդյունքում առաջանում են այնպիսի սահմաններ, որոնցում մեկ անհատի ազատ գործունեությունը սահմանափակվում է մեկ ուրիշի ազատության սահմանով, դրա հետևանքով մարդկանց ազատության ոլորտները բերվում են հավասարակշռության վիճակի: Լրիվ մրցակցության պայմաններում վաճառողները և գնորդները մրցակցության մեջ են և, դրանով դեկավարվելով, կազմում են իրենց տնտեսական ծրագրերը:

Ինչպե՞ս է ձևավորվում մրցակցային կարգը ազգային տնտեսության մեջ: Տարբերում ենք մրցակցային կարգի երկու սկզբունք՝ կարգավորման և կազմավորման: Կազմավորման սկզբունքի դեպքում խոսքը մրցակցային կարգի սահմանման մասին է, իսկ կարգավորման սկզբունքի դեպքում՝ այն մասին, թե վերջինս ինչպես կկարողանա տնտեսությունը պահել գործուն վիճակում: Այս սկզբունքները միմյանց խիստ մոտ են:

## 8.2. Մրցակցային կարգի կազմավորման սկզբունքները

Մրցակցային կարգի ձևավորման համար Վ. Օյկենը առաջարկում է կիրառել մի շարք սկզբունքներ: Հանգամանորեն ներկայացնենք դրանց էությունը:

### 1. Հիմնական սկզբունք

Այս սկզբունքի էությունը լրիվ մրցակցային գների մեխանիզմի ստեղծումն է, որն ի գործ է գործելու: Նման մեխանիզմը ցանկացած քաղաքատնտեսական միջոցի կարևոր չափորոշիչն է: Չի կարելի իրականացնել այնպիսի կառուցվածքային քաղաքականություն, որը ժամանակավոր դժվարությունների ճնշման տակ սահմանափակում կան լրիվ կաթվածահար է անում գների մեխանիզմի գործունեությունը արժույթային հսկողության, վարկային էքսպանսիայի և այլ միջոցներով: Նմանապես, հարկային քաղաքականությունը չպետք է խրախուսի կենտրոնացման և մոնոպոլիաների ստեղծման ու զարգացման գործընթացը:

### 2. Արժույթային քաղաքականության առաջնահերթություն

Այս սկզբունքը նշանակում է, որ մրցակցային պայքարի իրականացմանն ուղղված բոլոր ջանքերը գուր են այնքան ժամանակ, քանի դեռ չի ապահովվում արժույթի որոշակի կայունություն: Այդ պատճառով մրցակցային կարգի ձևավորման համար արժույթային քաղաքականությունն ունի առաջնահերթ նշանակություն: Լրիվ մրցակցության տնտեսակարգում պետք է ստեղծվի արժույթաքաղաքական կայունարար: Գոյություն ունի նման կայունարարի մի քանի տեսակ: Դա և՛ վարկային քաղաքականության կենտրոնացված կարգավորումն է, և՛ բանկերի վերականգնավորումը, և «ապրանք - արժույթ» համակարգը: Վերջինիս էությունը դրանով որոշակի ապրանքների առք ու վաճառքի ապահովումն է, այլ ոչ թե բանկերի կողմից վարկերի տրամադրումը:

### 3. Բաց շուկաներ

Մրցակցային կարգում առաջարկը կամ պահանջարկը չպետք է «փակվեն»: Արտահանման արգելումը, արգելող տուրքերը կամ արտաքին առևտրի մենաշնորհը տվյալ երկրի վաճառողներին առանձնացնում են արտասահմանյան մրցակիցներից, այսինքն՝ կյանքի են կոչում փակ՝ տեղային առաջարկ: Կապիտալ ներդրումների իրականացման կամ նոր ընկերությունների ստեղծման արգելքը ունենում է նույն ազդեցությունը: Բնակչության միգրացիայի սահմանափակումը, ինչպես նաև մասնագիտության ընտրության ազատությունը, առևտրում և արդյունաբերության մեջ լիցենզիաների համակարգի ներմուծումը, պահանջարկի նկատմամբ վերահսկողությունը և քանակական սահմանափա-

կումների ներդրումը նույնպես դասվում են շուկաների փակման և մրցակցության ճնշման մեթոդների շարքը: Ընդ որում, դրանք լինում են ոչ միայն պետական մակարդակով, այլև իշխանությամբ օժտված տարբեր խմբավորումների և մենաշնորհային կազմակերպությունների մասշտաբով: Առաջարկի և պահանջարկի «փակումը» նպաստում է շուկայի բոլոր տեսակի մենաշնորհային ձևերի վերացմանը: Առաջարկի և պահանջարկի «փակումը» խախտում է շուկաների միջև կապերը և լրիվ մրցակցության ողջ համակարգը ի վիճակի չէ լիարժեք գործելու:

#### *4. Մասնավոր սեփականություն*

Արտադրության միջոցների նկատմամբ մասնավոր սեփականությունը համարվում է մրցակցային կարգի ձևավորման նախադրյալ: Մրցակցային կարգի առկայությունը կանխում է արտադրության միջոցների մասնավոր սեփականության պայմաններում տնտեսական և սոցիալական անկանոնությունների առաջացումը: Արտադրության միջոցների մասնավոր սեփականությունը մրցակիցների կողմից վերահսկման կարիք ունի: Այստեղ խիստ կարևոր է բոլոր քաղաքատնտեսական միջոցների ներհարմարեցումը: Եթե մրցակցային կարգի իրականացման մյուս սկզբունքները իրոք ապահովվեն, ապա արտադրության միջոցների մասնավոր սեփականությունը և նրանց ազատ տիրապետումը կունենան կարևոր սոցիալական գործառույթ: Հակառակ դեպքում, եթե մնացած սկզբունքները չապահպանվեն, ծագեն մենաշնորհներ և, հետևաբար, բացակայի վերահսկողությունը մրցակցության կողմից, ապա մասնավոր սեփականության տնօրինման իրավունքները պետք է սահմանափակվեն:

#### *5. Համաձայնությունների վավերացման ազատություն*

Այս սկզբունքը նույնքան հակասական է, որքան մասնավոր սեփականության սկզբունքը: Համաձայնությունների վավերացման ազատությունն, իհարկե, անհրաժեշտ է: Առանց ազատ անհատական համաձայնությունների, որոնք բխում են տնային տնտեսությունների և կազմակերպությունների տնտեսավարման ծրագրերից, անհնար է դառնում ամենօրյա տնտեսական գործընթացի կարգավորումը լրիվ մրցակցային միջավայրում: Մակայն գոյություն ունեն սահմաններ, որոնք անհրաժեշտ են համաձայնությունների վավերացման ազատությունը մրցակցային կարգի կազմավորման նպատակներին ծառայեցնելու համար: Նման սահմանները նշանակում են, որ չպետք է վավերացվեն այնպիսի համաձայնություններ, որոնք սահմանափակում են կամ վերացնում են համաձայնությունների կնքման ազատությունը: Այդ ազատությունը չպետք է օգտագործվի մենաշնորհների կամ խմբաշնորհների ձևավորման համար: Նման ազատություն պետք է տրամադրվի

միայն այն դեպքերում, երբ գործում է լրիվ մրցակցություն: Այս սկզբունքը չպետք է իշխանական տնտեսական կառույցների ձևավորման ճանապարհով ձեռք բերի մրցակցային կարգի խաթիվման գործառույթ կամ պաշտպանի տնտեսական իշխանության իրագործումն ու չարաշահումը:

#### *6. Պատասխանատվություն*

Մրցակցային կարգի համար պետք է գործի մի սկզբունք, որի համաձայն նա, ով պատասխանատու է տնային տնտեսությունների և կազմակերպությունների գործողությունների և ծրագրերի համար, կրում է իրավաբանական պատասխանատվություն: Մրցակցային կարգը ենթադրում է, որ շահութաբերության ճանապարհը անցնում է միայն տնտեսավարման գործունեության համարժեք արդյունքների միջով, ընդ որում, միաժամանակ պետք է հոգ տանել այն մասին, որ չբավարարված արդյունքներն առաջ բերեն կորուստներ և, ի վերջո՝ սնանկացում:

Պատասխանատվությունը ոչ միայն մրցակցային պայմաններում գործող տնտեսակարգի, այլև, ընդհանրապես, այն հասարակական կարգի նախադրյալ է, որտեղ իշխում է ազատությունը և պատասխանատվության զգացումը: Պատասխանատվության ցանկացած սահմանափակում առաջացնում է համապատասխան զարգացման միտում և ուղղորդում է դեպի կենտրոնացված կառավարվող տնտեսություն:

#### *7. Տնտեսական քաղաքականության անփոփոխություն*

Տնտեսական քաղաքականության անկայունությունը դրդում է ձեռնարկատերերին իրականացնելու այնպիսի ներդրումներ, որոնց խիստ բարձր շահութաբերությունը հնարավորություն է տալիս արագ հետ գնելու ներդրված կապիտալը: Դա հանգեցնում է նախատեսված և իրականացվող կապիտալ ներդրումների կտրուկ կրճատման: Մրցակցային կարգն ի գործ է երկար ժամանակահատվածի համար ճիշտ փոխկապակցելու կապիտալ ներդրումները: Եթե տնտեսական քաղաքականությունը չունի բավարար կայունություն, ապա մրցակցային կարգը չի կարող գործել լիարժեք: Երկարաժամկետ հատվածի համար հարկերի, առևտրային պայմանագրերի, դրամական միավորների և այլնի սահմանումը ունի էական նշանակություն այնքան ժամանակ, քանի դեռ նման քաղաքականությունը չի համարվել ներդրման նկատմամբ բավարար հակվածության առկայություն տնտեսության մեջ: Կայունությունը մրցակցային կարգի տնտեսական քաղաքականության գլխավոր պահանջն է: Որքան մեծանում է տնտեսական քաղաքականության դերը, այնքան քիչ են մրցակցության խթանիչները:

### **8. Կազմավորման սկզբունքների միասնություն**

Կազմավորման բոլոր սկզբունքները ծառայում են մեկ ընդհանուր քաղաքատնտեսական որոշման և գործնականում ընդհանուր որոշման իրագործման միջոց են: Սկզբունքների միասնությունն այնքան կարևոր է, որ դրանցից մի քանիսի մեկուսի կիրառումը բացարձակապես նպատակին չի ծառայում: Այսպես, քիչ հավանական է, որ կատարվի արտադրության միջոցների մասնավոր սեփականություն սահմանելու պահանջը, եթե պետությունը, օգտագործելով իր պայմանագրային իրավունքը, հետին պլան է մղում մրցակցությունը, պատասխանատվության սահմանափակումը, իր առևտրային քաղաքականությունը, կապիտալ ներդրումների վրա արգելքները, ապրանքանիշերի արտոնագրային իրավունքների պաշտպանությունը: Սակայն մյուս սկզբունքների համատեղման պարագայում մասնավոր սեփականությունն ունի էական դրական իմաստ:

### **8.3. Մրցակցային կարգի կարգավորման սկզբունքները**

Կառուցվածքային սկզբունքների խիստ պահպանումը չի կարող դիմակայել կոնկրետ մրցակցային կարգում գոյություն ունեցող այն ձևերին, որոնք օտար են համակարգին: Նույնիսկ այն դեպքում, երբ առկա է լրիվ մրցակցություն, նրանում կարող են լինել թույլ կողմեր և թերություններ, որոնք կարգավորման կարիք ունեն: Այդ պատճառով անհրաժեշտություն է առաջանում կիրառելու որոշ «կարգավորող» սկզբունքներ՝ արդեն ստեղծված մրցակցային կարգը պահպանելու համար:

#### **1. Մենաշնորհների խնդիրը մրցակցային կարգում**

Տնտեսական իշխանությունը մրցակցային կարգում պետք է գործի այնքան, որքան անհրաժեշտ է կարգի պահպանման համար: Որպեսզի շահագրգիռ անձանց վտանգավոր ազդեցությունը մշտապես չեզոքացվի, պետք է գործի մի այնպիսի անկախ մարմին, որն իր գործունեությամբ կառաջնորդվի բացառապես օրենքի դրույթներով: Այդ մարմնի իրավունքների մեջ պետք է ընդգրկել միայն մենաշնորհ գործունեության վերահսկման հարցերը: Մասնակի և երկկողմանի մենաշնորհները պետք է ենթակա լինեն վերջինիս վերահսկմանն այնպես, ինչպես առաջարկի և պահանջարկի մենաշնորհները:

Մենաշնորհների և նրանց գործունեության վերահսկման օրենսդրության նպատակը տնտեսական իշխանություն կրողին այնպիսի գործելակերպի ուղղորդելն է, ինչպիսին, ենթադրենք, կգործեր լրիվ մրցակցության պայմաններում: Մրցակցային կարգի պայմաններում մոնոպոլիաների գործունեության վերահսկումը պետք է լինի խիստ, որպեսզի ունենա դրական ներգործություն:

## *2. Եկամուտների ոլորտի քաղաքականություն*

Մրցակցային կարգին բնորոշ բաշխման մեխանիզմը ճշգրտումների կարիք ունի: Էական տարբերություններ են առաջանում գնողունակության բաշխման մեջ, որը որոշում է արտադրության կողմնորոշվածությունը դեպի հարաբերականորեն ոչ էական պահանջումներ և բավարարումը, երբ միևնույն ժամանակ այլ եկամուտներ ստացողների աճող պահանջումները մնում են չբավարարված: Եկամուտների բաշխման մեջ մասնակի ճշգրտումներ մտցնելու համար կարելի է կիրառել հարկային քաղաքականությունը: Հատկապես դա է առաջադիմական հարկերի համակարգի իմաստը: Մրցակցային կարգի պայմաններում եկամտահարկի առաջադիմականությունը չպետք է փոքրացնի ներդրումների նկատմամբ հակվածությունը: Պրոգրեսիայի վերին սահմար չպետք է վտանգ ստեղծի կապիտալ ներդրումների համար, իսկ ստորին սահմանը պետք է ելնի սոցիալական արտադրության սկզբունքից:

## *3. Տնտեսական հաշվարկ*

Առանձին վերցրած, բազմաթիվ կազմակերպությունների և տնային տնտեսությունների տնտեսական հաշվարկները, որոնք միմյանց հետ համաձայնեցված են մրցակցային գների համակարգի միջոցով, պետք է ապահովեն բանական տնտեսական հաշվարկ ողջ տնտեսության մասշտաբով: Սա մրցակցային կարգի հիմնական գաղափարն է: Համակարգն աշխատում է հստակ, սակայն հաշվի չի առնում այն հակադարձ ներգործությունը, որ անհատական տնտեսությունների ծրագրերը և դրանց իրականացումը ունենում են ընդհանուր տնտեսական ցուցանիշների վրա այն դեպքում, երբ հակադարձ ազդեցությունը չի զգացվում առանձին վերցրած կազմակերպության վարչակազմի սեփական պլանավորման ոլորտում:

Մրցակցային կարգի պայմաններում անհրաժեշտ է սահմանափակել կազմակերպությունների պլանավորման ազատությունը հատուկ սահմանված դեպքերում: Տնային տնտեսությունների և կազմակերպությունների տնտեսական հաշվարկների մեջ պետք է ներառվեն արտաքին էֆեկտների հետ կապված ծախսերը:

## *4. Առաջարկի շեղումներ*

Առաջարկի շեղումները դրսևորվում են առավելապես աշխատուժի շուկայում, երբ գների անկման կամ աշխատավարձի իջեցման դեպքում աշխատուժի առաջարկն աճում է: Մրցակցային կարգի պայմաններում այս տնտեսական և քաղաքական, սոցիալ-քաղաքական խնդիրը կազմավորման և կարգավորման վերոհիշյալ սկզբունքների արդյունքում էապես պարզեցվում է: Աշխատողները կարող են տեղաշարժվել զբաղվածության ոլորտի այլ շուկաներ: Առաջարկի շեղումներն այս դեպքում կարող են կարգավորվել աշխատավարձի նվազագույն չափի սահմանման միջոցով:

## 8.4. Մրցակցային կարգի իրականացման քաղաքականությունը

Ինչպես կազմավորման, այնպես էլ կարգավորման սկզբունքները կազմում են մի ընդհանուր ամբողջություն: Նշված սկզբունքներին համապատասխան տնտեսական քաղաքականության հետևողական իրականացման դեպքում ստեղծվում և գործունակ է դառնում մրցակցային կարգը: Յուրաքանչյուր առանձին վերցրած սկզբունք իմաստ է ստանում միայն մրցակցային կարգի կազմավորման ընդհանուր ծրագրի սահմաններում: Առանձին վերցրած սկզբունքները լրացնում են միմյանց, այսինքն՝ հանդիսանում են փոխլրացնող:

Մրցակցային կարգի սկզբունքների իրականացումը հնարավոր է միայն օրենսդրության, դատական պրակտիկայի և վարչական մարմինների փոխգործողությունների դեպքում: Եթե նման փոխհամագործակցությունը բացակայում է, որևէ տնտեսակարգ չի կարող գործել: Օրինակ, ամերիկյան հակատրեստային օրենսդրությունն անհաջողության մատնվեց ոչ թե օրենսդրության թերության, այլ այն պատճառով, որ լրիվ բացակայում էր լրացնող տնտեսական քաղաքականությունը, իսկ առևտրային և արտոնագրային քաղաքականությունը, որպես ընկերություններին և կազմավորումներին վերաբերող իրավական նորմերի ամբողջություն, պայմաններ ստեղծեց մենաշնորհի բուռն զարգացման համար: Նմանատիպ գործընթաց է տեղի ունենում ներկայումս Ռուսաստանի տնտեսությունում: Կառավարությունը հռչակում է անցում շուկայական հարաբերություններին, իսկ օրենսդիր իշխանությունը չի ընդունում անհրաժեշտ ակտեր հողի նկատմամբ մասնավոր սեփականության մասին: Խմբաշնորհային միավորումների նկատմամբ կառավարության հովանավորչական քաղաքականությունը խզում է մրցակցությունը օտարերկրյա արտադրողների հետ, որի արդյունքում արտասահմանյան, ինչպես նաև հայրենական սննդամթերքի գներն աճում են: Այսպիսով, խեղվում է մրցակցային կարգի ստեղծման և գործունեության հիմնական սկզբունքը՝ գների մեխանիզմը դադարում է գործել, գները չեն արտացոլում այս կամ այն ռեսուրսի սակավությունը և սահմանափակ լինելը:

### *Իրավիճակային քաղաքականություն*

Տնտեսական քաղաքականությունը չի կարող կայուն լինել տևական ժամանակահատվածում, եթե չի հաղթահարում երկարատև գործազրկությունը, չի ապահովում աշխատողների անվտանգությունը: Այն գաղափարը, որի համաձայն պետությունը պետք է երաշխավորի տնտեսական անվտանգությունը, դարձել է հիմնական խնդիր: Սակայն ինչպես ցույց է տալիս պատմական փորձը, ԱՄՆ-ում, Գերմանիայում,

Անգլիայում 20-րդ դարի 20-30-ական թթ. իրականացված պետական միջամտությունը ավարտվեց աղետալի ճգնաժամներով:

Տնտեսական ճգնաժամերը սովորաբար կապված են ներդրումային գործունեության անկման հետ: Միաժամանակ, անհամասնություններ են առաջանում ընդհանուր տնտեսական գործընթացի շրջանակում: Ներդրումային գործունեության նկատմամբ անբավարար հակումը կապված է տնտեսական քաղաքականության անկայունության, ինչպես նաև արտադրության միջոցների գների և սպառողական ապրանքների գների հարաբերակցության խախտման հետ: Մրցակցային կարգը գերծ է մնան թերություններից՝ տնտեսական քաղաքականությունը երկար ժամանակ մնում է անփոփոխ, գների մեխանիզմը թույլ չի տալիս տարբեր ապրանքների գների շեղումներ, տնտեսակարգ է ներդրվում դրամական քաղաքականության ավտոմատ աշխատող կայունացուցիչ և այլն: Այս կարգի շրջանակներում իրավիճակի վերացման համար որևէ լրացուցիչ միջոցների անհրաժեշտություն չկա:

### *Սոցիալական քաղաքականություն*

Տարբեր կարգերի քաղաքականությունների բոլոր միջոցառումները հանգում են արտադրական ապարատի աշխատունակության վրա ներգործելուն: Հետևաբար, պետք է մախապատվությունը տրվի այն տնտեսակարգին, որն ունի տնտեսական արդյունավետության ամենաբարձր ցուցանիշը: Եթե ստեղծված այս կամ այն կարգի շրջանակներում բոլոր մարդիկ «միատեսակ սոված են», ապա դա արդարացի բաշխման, անվտանգության, սոցիալական հարցի այս կամ այն ձևի դրսևորման հետևանք չէ: Սոցիալական արդարության հասնելը հնարավոր է այն դեպքում, երբ եկամուտների ձևավորման գործընթացը ենթարկվում է մրցակցային կարգի խիստ կանոններին, ոչ ոքի և պատասխանատվությանը, այսինքն՝ մրցակցային կարգի սկզբունքների իրականացման դեպքում:

### *Կարգ սահմանող ուժեր*

Տնտեսակարգերը ինքնաբերաբար չեն առաջանում: Ուստի անհրաժեշտ է որոշել այն ուժերը, որոնք ունակ են սահմանելու և պահպանելու տնտեսակարգի գործունակությունը: Այդպիսի ուժեր կարող են լինել ինչպես իշխանական տնտեսական կառույցները /խմբավորումներ/, այնպես էլ պետությունը: Իշխանական տնտեսական կառույցները կամ քաղաքական տնտեսական հզոր խմբավորումները կարող են օբյեկտիվորեն շահագրգռված լինել միայն իրենց սեփական նպատակներին հասնելու խնդրում: Ուստի չի կարելի հուսալ, որ նրանք կարող են սահմանել մրցակցային կարգ: Սակայն այս խմբավորումները կարող են էականորեն ազդել պետության քաղաքականության վրա: Այստեղից

կարևորագույն հարց է առաջանում. տնտեսական քաղաքականության մեջ ինչպիսի սկզբունքների հետևել, որ ձևավորվի ինքնուրույն ուժ հանդիսացող և խաղի կանոններ սահմանող անկախ պետություն: Այդպիսի սկզբունքներ են.

1. Պետության քաղաքականությունը պետք է ուղղված լինի իշխանական խմբավորումների կազմավորմանը կամ նրանց գործառույթների սահմանափակմանը: Իշխանական տնտեսական խմբավորումների ցանկացած ամրապնդում նպաստում է պետության վարկանիշի անկմանը: Քեյնսը, համամիտ լինելով այդ տեսակետին, 1926թ. գրել է. «Ես այն կարծիքին եմ, որ կազմակերպական և վերահսկող միավորի կատարյալ մեծությունը գտնվում է անհատի և ժամանակակից պետության միջև: Այդ պատճառով առաջընթաց հնարավոր է պետության շրջանակներում կիսաանկախ միավորումների զարգացման և ճանաչման ուղղությամբ...»: Պետությունը չպետք է ներգրավվի իշխանական խմբավորումներից կախվածության արատավոր շրջանակի մեջ: Վ. Օյկենը գրում է. «Նա, ով տրամադրում է առաջին արտոնությունը, պետք է իմանա, որ ինքն ուժեղացնում է իշխանությունը և հիմք է ստեղծում երկրորդ արտոնության համար, ինչը, իր հերթին, հիմք է հանդիսանալու երրորդի համար:»

2. Պետության քաղաքական-տնտեսական գործունեությունը պետք է ուղղված լինի տնտեսական կարգի ձևերի ստեղծմանը, այլ ոչ թե տնտեսական գործընթացի կարգավորմանը: Պետական գործունեության սահմանները որոշվում են կապիտալի շրջանառման, բորսաների և բորսայական գործարքների, հիփոթեկների և այլնի վերաբերյալ օրենքների ընդունմամբ: Սակայն կապիտալի հոսքերի անմիջական կարգավորումը չպետք է իրականացվի պետության կողմից: Պետական քաղաքականության այս երկու սկզբունքները ամբողջությամբ համապատասխանում են այն սկզբունքներին, որոնք ունեն բավարար տնտեսական կարգ կառուցելու ուժ:

Իշխանական տնտեսական միավորումների թուլացումը հնարավոր է դարձնում մրցակցային զենքի միջոցով տնտեսակարգի բավարար կարգավորման ապահովումը: Տնտեսական գործունեության՝ տնտեսավարման ձևերի ազդեցության շրջանակներով սահմանափակումը ըխտւմ է ոչ միայն պետության հնարավորություններից, այլև անհրաժեշտ նախադրյալ է համապատասխան տնտեսակարգի առաջացման համար: Պետական և տնտեսական կարգերի սկզբունքները միմյանց նպաստող սկզբունքներ են: Այստեղից հետևում է, որ չնայած ժամանակակից պետությունը չի հանդիսանում կարգ սահմանող բավարար ուժ, սակայն կարող է այդպիսին դառնալ: Դրա անհրաժեշտ նախապայմաններից մեկը հստակ չափանշված տնտեսական քաղաքականության առկայությունն է:

Պետական և տնտեսական կարգերի ներհարմարվողականությունը ստիպում է այս երկու կարգերը կառուցել միաժամանակ: Դրանք կառուցվող կարգի սոսկ առանձին մասեր են: Առանց մրցակցային կարգի, չի կարող գործունակ պետություն առաջանալ, իսկ առանց դրա էլ հնարավոր չէ նաև մրցակցային կարգի գոյությունը: Դրանք փոխադարձ պայմանավորում են մեկը մյուսին, մեկի առկայությունը մյուսի գոյության հիմքն է:

Այս երկու կարգերը միաժամանակ կառուցելու միակ ուժը տնտեսական գիտությունն է, որի խնդիրը տնտեսական կոնկրետ իրավիճակների հետազոտումն է, հիմնավորված մոտեցումների մշակումը, որոնք ուղղված են այդ կարգերի արդյունավետ ձևավորմանը: Նոր զաղափարների աստիճանաբար տարածումը, դրանց ներթափանցումը մարդկանց գիտակցության մեջ հանգեցնում է այն բանին, որ հասարակության մեջ ձևավորվում է որոշակի աշխարհայացք, որը մուտք է գործում իշխանություն ունեցող պետական կառույցներ և դրանց զինում է տնտեսակարգի կարգավորման և կազմավորման սկզբունքների պահպանման անհրաժեշտության գիտակցությամբ: Սա վերաբերում է տնտեսակարգի ցանկացած ձևին և դրան համապատասխանող պետական կարգին:

Տնտեսակարգերին բնորոշ հիմնախնդիրների հետազոտումից կարելի է եզրահանգել, որ տնտեսական քաղաքականության բոլոր գործողությունները կյանքի են կոչվում ընդհանուր տնտեսակարգը հաշվի առնելով: Յուրաքանչյուր գործողություն կարող է իրականացվել որոշակի ընդհանուր կարգի ստեղծմանն ու պահպանմանը կողմնորոշված քաղաքականության շրջանակում:

Մրցակցային կարգի ձևավորման և կարգավորման վերաբերյալ Վ. Օյկենի դատողությունները վերաբերում են 20-րդ դարի 40-ական թվականներին: Դրանից հետո անցած տարիները ցույց տվեցին, որ լրիվ մրցակցությունն այդպես էլ լիարժեք չի իրացվել համաշխարհային տնտեսության մեջ: Տարբեր երկրներում պետության դերը խիստ մեծացել է հատկապես տնտեսական գործունեության բուն գործընթացի կարգավորման ոլորտում: Դա առավելապես պայմանավորված է ազգային տնտեսական գործունեության վրա միջազգային տնտեսական հարաբերությունների ազդեցությամբ և դրա հետ կապված՝ այն համակարգելու անհրաժեշտությամբ՝ համաձայն աշխատանքի միջազգային բաժանման պահանջների: Անդրազգային կազմակերպությունների լայն տարածումը հանգեցրեց նրանց գործունեության առավել որոշակի կարգավորմանը՝ երկրների տնտեսական անվտանգության ապահովման նպատակով:

## *Թեմայի ամփոփում*

Տնտեսության խմբային կարգավորման տնտեսական քաղաքականությունը ունի անհավասարակշռության միտում, որը ի վերջո հանգեցնում է անկայուն հավասարակշռության: Իշխանություն ունեցող խմբավորումների գոյությունը և միմյանց դիմակայումը չեն կարող ապահովել տնտեսակարգի հիմնախնդիրների երկարաժամկետ լուծում: Երկկողմանի մենաշնորհների, մասնակի մենաշնորհների և խմբաշնորհների /օլիգոպոլիսների/ անհավասարակշիռ շուկայական ձևերն առաջացնում են պետական միջամտության իրացման միտում տնտեսության մեջ:

Տնտեսական քաղաքականության անկայունությունը դրդում է ձեռնարկատերերին իրականացնելու այնպիսի ներդրումներ, որոնց խիստ բարձր շահութաբերությունը հնարավորություն է տալիս արագ ձեռստանալու ներդրված կապիտալը: Դա հանգեցնում է նախատեսված և իրականացվող կապիտալ ներդրումների կտրուկ կրճատման: Մրցակցային կարգն ի գործ է երկար ժամանակահատվածի համար ճիշտ փոխկապակցելու կապիտալ ներդրումները:

Տնտեսական իշխանությունը մրցակցային կարգում պետք է գործի այնքան, որքան անհրաժեշտ է կարգի պահպանման համար: Որպեսզի շահագրգիռ անձանց վտանգավոր ազդեցությունը մշտապես չեզոքացվի, պետք է գործի մի այնպիսի անկախ մարմին, որն իր գործունեությամբ կառաջնորդվի բացառապես օրենքի դրույթներով: Այդ մարմնի իրավունքների մեջ պետք է ընդգրկել միայն մենաշնորհ գործունեության վերահսկման հարցերը: Մասնակի և երկկողմանի մենաշնորհները պետք է ենթակա լինեն վերջինիս վերահսկմանն այնպես, ինչպես առաջարկի և պահանջարկի մենաշնորհները:

Իշխանական տնտեսական միավորումների թուլացումը հնարավոր է դարձնում մրցակցային զմերի միջոցով տնտեսակարգի բավարար կարգավորման ապահովումը: Տնտեսական գործունեության տնտեսավարման ձևերի ազդեցության շրջանակներով սահմանափակումը բխում է ոչ միայն պետության հնարավորություններից, այլև անհրաժեշտ նախադրյալ է համապատասխան տնտեսակարգի առաջացման համար: Պետական և տնտեսական կարգերի սկզբունքները միմյանց նպաստող սկզբունքներ են: Այստեղից հետևում է, որ չնայած ժամանակակից պետությունը չի հանդիսանում կարգ սահմանող բավարար ուժ, սակայն կարող է այդպիսին դառնալ: Դրա անհրաժեշտ նախապայմաններից մեկը հստակ չափանշված տնտեսական քաղաքականության առկայությունն է:

Տնտեսակարգերին բնորոշ հիմնախնդիրների հետազոտումից կարելի է եզրահանգել, որ տնտեսական քաղաքականության բոլոր գործողությունները կյանքի են կոչվում ընդհանուր տնտեսակարգը հաշվի առ-

մեկով: Յուրաքանչյուր գործողություն կարող է իրականացվել որոշակի ընդհանուր կարգի ստեղծմանն ու պահպանմանը կողմնորոշված քաղաքականության շրջանակում:

### ***Հիմնական հասկացություններ***

Մրցակցային կարգի կազմավորման սկզբունքներ  
Մրցակցային կարգի քաղաքականության ներհարմարվողականություն  
Սոցիալական քաղաքականություն  
Կարգ սահմանող ուժեր  
Կառուցվածքային քաղաքականություն  
Տնտեսական հաշվարկ  
Առաջարկի շեղումներ

### ***Հարցեր և առաջադրանքների***

1. Բնութագրեք մրցակցային կարգի կազմավորման սկզբունքները:
2. Ո՞րն է արժույթային քաղաքականության կայունացուցչի արժութաքաղաքական էությունը մրցակցային կարգում:
3. Որո՞նք են շուկայի «փակման», առաջարկի և պահանջարկի «փակման» մեթոդները:
4. Արտադրության միջոցների մասնավոր սեփականությունը ո՞ր դեպքում կարող է ունենալ կարևոր սոցիալական գործառույթ:
5. Ո՞րն է համաձայնությունների վավերացման ազատության սկզբունքի բովանդակությունը:
6. Ինչպե՞ս է արտահայտվում տնտեսական գործունեության արդյունքների պատասխանատվությունը:
7. Ի՞նչ է տնտեսական քաղաքականության կայունությունը:
8. Ո՞ր դեպքում են կազմավորման սկզբունքները ունակ սահմանելու մրցակցային կարգ:
9. Ո՞րն է մենաշնորհների խնդիրը մրցակցային կարգում:
10. Ո՞ր ուղղությամբ պետք է զարգանա եկամուտների քաղաքականությունը:

## **ԹԵՄԱ 9. ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ, ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

### **9.1. «Անցումային գործընթաց» հասկացությունը տնտեսակարգերի փոփոխման դեպքում**

Մի տնտեսակարգից մյուսին ցանկացած անցում ուղեկցվում է տնտեսական գործունեության կառուցվածքի էական ձևափոխումներով: Փոխվում են ոչ միայն սեփականության ձևերի հարաբերակցությունը, ինստիտուցիոնալ կառուցվածքը, տնտեսական գործունեության վրա պետության ներգործության մեթոդները, այլև արտադրության և զբաղվածության կառուցվածքը և, որն ամենակարևորն է, մարդկանց հոգեբանությունը: Ընդ որում, այդ փոփոխությունները տեղի են ունենում ինչպես կենտրոնական կառավարման տնտեսակարգից շուկայական մեխանիզմին, այնպես էլ ընդհակառակը՝ շուկայական մեխանիզմից կենտրոնացված պլանավորման և կառավարման սկզբունքների վրա հիմնված մեխանիզմին անցնելիս:

Տնտեսության անցումային փուլը այն ժամանակաշրջանն է, որի ընթացքում տեղի են ունենում էական փոփոխություններ: Այդ ընթացքում ավարտվում է վարչական-խմբային համակարգի ապամոնտաժումը, և ձևավորվում է հիմնական շուկայական ինստիտուտների համակարգը: Այս անցումային փուլը տարբեր երկրների համար տարբեր է, և տատանվում է մի քանի տարուց մինչև մի քանի տասնամյակ: Որոշ տնտեսագետ-գիտնականներ այն կարծիքին են, որ դրա համար պահանջվում է 10-15 տարի: Ամեն ինչ կախված է տնտեսության սկզբնական վիճակից, երկրի հասարակական և պետական կառուցվածքից, գործող կարգի և դրան փոխարինող կարգի միջև տարբերությունների էական լինելու աստիճանից:

Անցումային գործընթացը սովորաբար ներառում է 3 հիմնական փուլեր՝ կայունացման կամ կրիտիկական, նոր տնտեսակարգի ձևավորման և կառուցվածքային վերակառուցման: Կայունացման կամ կրիտիկական փուլի նպատակն է վերանայել նախորդող տնտեսակարգի գործունեության հետևանքները, որը, բնականաբար, կապված է ազգային տնտեսության ճգնաժամային իրավիճակի առաջացման հետ: Նոր տնտեսակարգի ձևավորման փուլում ստեղծվում են նոր տնտեսակարգի նախասկզբնական կազմավորման պայմանները: Այս փուլում փոխվում է նախկին տնտեսակարգի տնտեսական գործունեությունը սպասարկող ներքին ենթակառուցվածքը: Կառուցվածքային վերակառուցման փուլի նպատակն է ազգային տնտեսության վրա պետական

ազդեցությունների կարգավորումը, որոնք տնտեսության ճյուղային, տարածքային և սոցիալական կառուցվածքները բերում են այնպիսի վիճակի, որոնք բավարարում են նոր սոցիալ-քաղաքական և տնտեսական նպատակները:

Այլ խոսքով, անցումային գործընթացը տնտեսական գործունեության վերափոխումն է, որի ժամանակ արմատապես փոխվում են ինչպես պետության սոցիալ-տնտեսական քաղաքականության ռազմավարական նպատակները, այնպես էլ երկրի տնտեսական, պետական և հասարակական կարգերը:

Շուկայական բարեփոխումների գործընթացն իրականացվում է երկու սկզբունքով: Առաջինը կոչվում է **գրադուալիզմ**՝ աստիճանական, երկրորդը՝ **շոկային**, որի դեպքում տնտեսությունում տեղի են ունենում շուկայական կտրուկ ձևափոխումներ: Գրադուալիզմը տնտեսական հայեցակարգ է, որը ենթադրում է դանդաղ, հետևողական բարեփոխումներ և շուկայի ձևավորման գործընթացում պետությանը գլխավոր դեր է վերագրում: Այս հայեցակարգի կողմնակիցները գտնում են, որ շուկայի ստեղծման համար պետությունը պետք է նախկին հասարակարգի տարրերը աստիճանաբար փոխարինի շուկայական հարաբերություններով: Դա հնարավորություն կտա թեթևացնելու վերափոխումների գործընթացը և խուսափելու արտադրության մակարդակի և բնակչության կենսամակարդակի կտրուկ անկումներից: Հայաստանում ստեղծված վիճակը փաստում է, որ հնարավոր չեղավ խուսափել վերը նշված անցանկալի հետևանքներից, ուստի պարզ է դառնում, որ տնտեսակարգի փոփոխումը իրականացվել է ոչ թե գրադուալիզմի, այլ շոկային անցման սկզբունքով, ինչն էլ սոցիալ-տնտեսական ծանր վիճակի պատճառ հանդիսացավ:

## 9.2. Հայաստանի անցումային շրջանի հիմնական տնտեսական բնութագրիչների վերլուծությունը

Անցյալ դարի 90-ական թվականներից Հայաստանը որդեգրել է տնտեսակարգի փոփոխության քաղաքականություն՝ ուղղված ազատական տնտեսական հարաբերությունների ձևավորմանը, որը հնարավորություն կընձեռի ապահովելու երկրի անընդհատ ու զգալի զարգացում, բնակչության բարձր կենսամակարդակ և բարեկեցություն:

1990-ականների սկզբներին Հայաստանը նախկին ԽՍՀՄ հանրապետություններից առավել մեծ տնտեսական անկում ապրած երկիրն էր, ինչը պայմանավորված էր դարաբաղյան հակամարտության, 1988թ. աղետալի երկրաշարժի, Հայաստանի տնտեսական շրջափաման և տնտեսական կապերի խզման հետևանքներով: Քիչ դեր չիսա-

դաց մաս անցումային շրջանում կիրառվող ռազմավարությունը՝ «շուկային թերապիան»։ Վերջինս ներառում էր գների համընդհանուր ազատականացում, պետական սեփականության սեփականաշնորհում, պետական ծախսերի կրճատում, որոշ հարկային բարեփոխումներ և պետության դերի ընդհանուր կրճատում, գնաճը վերահսկելու նպատակով որդեգրած կոշտ դրամավարկային քաղաքականության կիրառում, ազատ առևտրի քաղաքականության որդեգրում՝ ներառյալ ցածր սակագները, կապիտալի շարժի վրա վերահսկողության վերացում, արտարժույթի ազատ փոխանակում և արժույթի լողացող կուրս։ Վերոնշյալ բարեփոխումների նպատակն էր հասնել մակրոտնտեսական կայունության, արագացնել տնտեսական աճի տեմպը և արտադրության կառուցվածքային փոփոխությունների միջոցով բարձրացնել ռեսուրսների բաշխման արդյունավետությունը։ Արդյունքում, թերևս, հնարավոր եղավ ապահովել միայն մակրոտնտեսական կայունություն և տնտեսական աճ։ Այսպես, 1990-1993թթ. ընթացքում ՀՆԱ-ն նվազեց ավելի քան երկու անգամ՝ 1993թ. կազմելով 1990թ. մակարդակի միայն 46.9%-ը, որն այդ տարիներին տնտեսական անկման ամենաբարձր ցուցանիշներից էր ԱՊՀ երկրներում, իսկ 1990-ականների երկրորդ կեսը նշանավորվեց երկրի սոցիալ-տնտեսական վիճակի հետագա վատթարացման կասեցմամբ և զարգացման նախադրյալների ձևավորմամբ։ Այդ տարիներին արդեն, արժանեծությունների փոքրածավալ շուկայով բնութագրվող երկրում տեղի ունեցավ ՀՆԱ հավելած՝ տարեկան 3-6%-ի սահմաններում, սակայն անցումային փուլում գտնվող երկրում տնտեսական աճը միայն 2001-2008թթ. ձեռք բերեց սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավման համար իրական նախադրյալների ձևավորման նոր որակ, որի շնորհիվ 2002-2007թթ. տարեկան միջին տնտեսական աճը կազմեց 13%։ Աճի հիմնական գործոն հանդիսացավ տնտեսության և կենսագործունեության մեկնարկային պայմանների կայունացման և տնտեսության ու առևտրի կարգավորման ազատական մոդելի պայմաններում երկու աղբյուրներից լայնամասշտաբ ֆինանսավորման սկիզբը։ Դրանք էին՝ պաշտոնական արտասահմանյան և միջազգային օգնությունը, որը, միջին հաշվով, կազմել է երկրի ՀՆԱ-ի մոտ 7%-ը և տրվել է հիմնականում դրամաշնորհների և արտոնյալ վարկերի ձևով, ինչպես նաև ոչ պաշտոնական դրամական փոխանցումների մասշտաբային հոսքը, որն, ըստ որոշ գնահատումների, կազմել է ՀՆԱ 8-9%-ը։ Ոչ պաշտոնական դրամական փոխանցումները կատարվել են այն անձանց կողմից, ովքեր արտագաղթել են կամ ժամանակավորապես աշխատում են արտասահմանում։

1990-1997 թվականները Հայաստանի տնտեսության համար գնահատվեցին որպես կենտրոնացված տնտեսությունից շուկայական տնտեսության անցման կամ բարեփոխումների իրականացման առա-

ջին փուլի ավարտի շեմ: Շուկայական հարաբերություններին անցնելը, ենթադրում է հավասարակշռված տնտեսության ձևավորում և գործուն շուկայական մեխանիզմի առկայություն, որոնցից յուրաքանչյուրն իր հերթին պայմանավորում է համակարգային բովանդակություն ունեցող որոշակի խնդիրների լուծման անհրաժեշտությունը:

Ըստ տնտեսագիտական (վիճակագրական) գնահատումների՝ Հայաստանում տնտեսակարգի փոփոխությունները հանգեցրել են սոցիալ-տնտեսական հետևյալ բնութագրիչների ձևավորմանը կամ, այլ խոսքով՝ Հայաստանի տնտեսությունն ունի հետևյալ ընդհանրական պատկերը. փոքր արժեքային մեծություններով բնութագրվող շուկա, եռամսյակային «առիթմիա» և ընդգծված սեզոնայնություն, ներմուծման բարձր հակվածություն, արտադրված նոր արժեքի նկատմամբ սպառման գերազանցում, ըստ եկամուտների և ծախսերի՝ բնակչության խիստ բևեռացվածություն, տարածաշրջանային շուկաների բևեռացվածություն, բանկային շուկայի ագրեգատների կառավարելիության բարձր աստիճան և ֆինանսական շուկայում իրացվելիության մակարդակի և կառուցվածքի փոփոխականություն, չկազմավորված միասնական վճարահաշվարկային համակարգ, հարկային բաղադրիչի՝ ՀՆԱ-ում փոփոխում վարքագիծ, չհաշվառվող տնտեսության առկայություն, բնակչության արտագաղթ և զբաղվածության բնագավառում աշխատատեղերի անկայունություն:

Շուկայի ծավալի ամենամեծ կրճատումը տեղի է ունեցել 1991-1994թթ. ընթացքում: Այսպես, 1990թ. համեմատությամբ 1994թ. արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալը կրճատվել է 55 %-ով, իսկ համախառն ցուցանիշը՝ 50.6 %-ով: ՀՆԱ ծավալի ամենամեծ նվազումը գրանցվել է 1992թ. (42 տոկոսային կետով), որը ԱՊՀ համամասն ցուցանիշը գերազանցել է ավելի քան 6 անգամ: Հիմնականում այս հանգամանքն էր խոչընդոտում, այսպես կոչված, կապիտալի նախակերպական կուտակման գործընթացին: Որքան էլ այս բնագավառում աճի տեմպերը միջազգային չափանիշներով դրական դրսևորումներ ձեռք բերեն, դրանց ներուժը, արժեմեծությունների փոքրածավալ բազայով պայմանավորված, չի կարող ժամանակի փոքր հատվածում «քանակը որակի» վերածել:

Ըստ ԱՊՀ միջպետական վիճկոմիտեի հաշվարկների՝ Հայաստանի տնտեսությունը 1999թ. դեռևս գտնվում էր 70-ական թվականների մակարդակում: Նույն աղբյուրի համաձայն՝ 1999թ. վերոհիշյալ ցուցանիշները, նախորդ տարիների ընթացքում դրանց առավելագույն մակարդակի համեմատությամբ, ձեռք են բերել հետևյալ տոկոսային չափերը.

**Որոշ մակրոտնտեսական ցուցանիշների առավելագույն մակարդակի  
համեմատական բնութագիրը**

|    |                                                      |                     |
|----|------------------------------------------------------|---------------------|
| 1. | ՀՆԱ                                                  | 60 (1989թ. համեմատ) |
| 2. | Արդյունաբերական արտադրանք                            | 41 (1987թ. համեմատ) |
| 3. | Գյուղատնտեսության համախառն արտադրանք                 | 78 (1986թ. համեմատ) |
| 4. | Բեռնափոխադրումներ (առանց խողովակաշարային տրանսպորտի) | 3 (1987թ. համեմատ)  |
| 5. | Շահագործման համընկած բնակմակերես                     | 10 (1991թ. համեմատ) |
| 6. | Մանրածախ ապրանքաշրջանառություն                       | 40 (1990թ. համեմատ) |

Աղբյուրը՝ ԱՊՀ վիճակետկոմ:

Վերոնշյալ բնութագրիչի էական առանձնահատկությունն այն է, որ տնտեսությունում կամ վերջինիս կառուցվածքային (ինստիտուցիոնալ) հատվածներից որևէ մեկում քիչ թե շատ նշանակալից փոփոխությունն անմիջապես արտահայտվում է տնտեսության աճը բնութագրող ՀՆԱ ցուցանիշում: Այն բնութագրում է Հայաստանի տնտեսության խիստ զգայունությունը թե՛ ներքին, թե՛ արտաքին ցանկացած փոփոխության նկատմամբ: Թերևս այս ենթատեքստում պետք է դիտարկել նաև 2001-2007թթ. զգալի տնտեսական աճը, որի պայմաններում ՀՆԱ հավելածը կազմեց միջինը 13%՝ իրական մախառնայունների նոր որակ ապահովելով սոցիալ-տնտեսական իրավիճակի հետագա բարելավման առումով: Հարկ է նշել, որ հատկապես 2002/03թթ. հավակնում են դառնալ երկրի իրական զարգացման համար արմատապես նոր «շեմի» ձևավորման տարիներ: Այսպես, 2003թ. 13.9% (2002թ.՝ 12.9%) տնտեսական աճի պայմաններում, արդյունաբերական արտադրանքի ծավալը կազմել է նախորդ տարվա 114.2%-ը (2002թ.՝ 124.2%), առանց էներգետիկայի՝ արդյունաբերական արտադրանքի ծավալը՝ 118.2% (2002թ.՝ 114.2%), սպառողական ապրանքների արտադրության ծավալը՝ 117.6% (2002թ.՝ 110.1%), գյուղատնտեսության համախառն արտադրանքը՝ 104.3% (2002թ.՝ 104.4%), կապիտալ շինարարության ծավալը՝ 140.0% (2002թ.՝ 143.3%):

Տնտեսության հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների եռամսյակային շարժընթացի ուսումնասիրությունը երևան է համում տնտեսության հաջորդ բնութագրիչը՝ եռամսյակային «առիթմիան» և ընդգծված սեզոնայնությունը: Վերոնշյալն առավել տեսանելի է դառնում մի շարք մակրոտնտեսական ցուցանիշների վերջին տարիների շարժընթացը դիտարկելիս: Եռամսյակային «առիթմիան», չնայած վերջին տարիներին արձանագրված մեղմման միտումներին, դեռևս զգալի է:

Պետական բյուջեի մուտքերի, հետևաբար և ծախսերի եռամսյակային անհամասնադասությունները ևս բնութագրում են տնտեսությունում առկա «առիթմիան», այդ թվում նաև՝ սեզոնայնությունը: Այսպես, ըստ վերջին տարիներին արձանագրված տվյալների՝ I եռամսյակում պետական բյուջեի ծախսերը կազմել են միջին հաշվով տարեկանի 18.4%-ը, IV եռամսյակում՝ 27.1%-ը, իսկ եկամուտները՝ տարեկան եկամուտների և պաշտոնական լրահատկացումների համապատասխանաբար 22.7% և 29%-ը:

Զբաղվածության ոլորտում իրականացվող հետազոտությունների տվյալները վկայում են, որ ըստ սեզոնայնության, սովորաբար, զբաղվածության մակարդակի աճ է արձանագրվում մայիս-հոկտեմբեր ամիսներին և այն էլ ոչ միայն գյուղատնտեսությունում, այլև շինարարությունում, առևտրում, հյուրանոցային և հանրային սննդի բիզնեսի ոլորտում և մշակող արդյունաբերության այլ ճյուղերում:

Հայաստանի տնտեսության էական բնութագրիչներից է ներմուծման բարձր հակվածությունը: 2003թ. հանրապետության տնտեսության բացվածության ցուցանիշը կազմել է 70.8 %: Նշված ցուցանիշի՝ վերջին տարիների շարժը ցույց է տալիս, որ այն բարձր մակարդակում է, ինչը վկայում է արտաքին աշխարհից հանրապետության տնտեսության կախվածության բնի արժր աստիճանասին: Հատկանշական է, որ 2002թ. արտահանման աճը մախտրդ տարվա նկատմամբ կազմեց 148.4% և առաջին անգամ հատեց կես միլիարդ ԱՄՆ դոլարի սահմանագիծը՝ 507.2 մլն ԱՄՆ դոլար: 2007թ. այդ ցուցանիշը կազմել է 117.5%: Ներմուծման աճը մույն ժամանակաշրջանում կազմեց 112.5% (987.2 մլն ԱՄՆ դոլար), որը 2007թ. 158.4% էր: Հարկ է նշել, որ ներմուծման նկատմամբ արտահանման մնացած առաջանցիկ աճն էապես բարելավեց երկրի ընթացիկ հաշվի պակասուրդը: Տնտեսության բացվածության վերջին տարիների ցուցանիշը չի բնութագրում համաշխարհային շուկային հանրապետության տնտեսության սերտաճման բարձր մակարդակը, ավելին՝ արտահանման ցածր և ներմուծման բարձր միջին հակվածությունները կարող են Հայաստանի տնտեսության վարքագիծը զգալի կախվածության մեջ պահել արտաքին շուկաների վարքագծից:

Ներմուծման հակվածության ցուցանիշը, չնայած որոշակի անկման միտումներին, այնուամենայնիվ բարձր մակարդակի վրա է և, ըստ վերջին տարիների շարժման, կազմում է ՀՆԱ գրեթե կեսը: Ընթացիկ հաշվի մեծ պակասուրդով պայմանավորված՝ հանրապետության տնտեսությունն արտաքին աշխարհի նկատմամբ ձեռք է բերել զուտ վարկավորվողի դրակում: 2007թ. արտաքին աշխարհից տնտեսության զուտ վարկավորումը կազմել է շուրջ 2089.7 մլն ԱՄՆ դոլար, որը 2006թ. համեմատությամբ նվազել է 35.1 %-ով կամ 543.3 մլն դոլարով: Դրանով

հանդերձ, վերջին տարիներին շարունակել են ավելանալ հանրապետության պարտավորություններն արտաքին աշխարհի նկատմամբ: 2007թ. տարեվերջին պարտավորությունները 2002թ. ցուցանիշը կրկնակի գերազանցել են, իսկ 2007թ. պարտավորությունների աճի տեմպը կազմել է 139.2%: Նշենք նաև, որ 2007թ. ակտիվները կազմել են ՀՀ պարտավորությունների 57.5%-ը:

Աղյուսակ 8

**ՀՀ միջազգային ներդրումային դիրքը 2002-2007թթ., մլն դոլար<sup>7</sup>**

| Ցուցանիշներ                    | 2002    | 2004    | 2005    | 2006    | 2007    |
|--------------------------------|---------|---------|---------|---------|---------|
| <i>Զուտ ներդրումային դիրքը</i> | -1516   | -1561.8 | -1471.8 | -1546.4 | -2089.7 |
| <i>Ակտիվներ</i>                | 684.1   | 1141.5  | 1428.0  | 1982.6  | 2822.7  |
| <i>Ռիդդակի ներդրումներ</i>     | 0.36    | 2.67    | 10.27   | 15.54   | 14.34   |
| <i>Պորտֆելային ներդրումներ</i> | 4.50    | 4.61    | 5.94    | 5.26    | 4.88    |
| <i>Այլ ներդրումներ</i>         | 274.96  | 584.2   | 737.95  | 889.73  | 1144.32 |
| <i>Պահուստային ակտիվներ</i>    | 431.26  | 550.1   | 673.84  | 1072.04 | 1659.16 |
| <i>Պարտավորություններ</i>      | 2200.1  | 2703.5  | 2899.8  | 3529.0  | 4912.4  |
| <i>Ռիդդակի ներդրումներ</i>     | 684.48  | 1037.9  | 1298.3  | 1774.4  | 2485.8  |
| <i>Պորտֆելային ներդրումներ</i> | 5.83    | 4.87    | 5.47    | 15.96   | 9.36    |
| <i>Այլ ներդրումներ</i>         | 1509.78 | 1660.5  | 1596.0  | 1738.7  | 2417.2  |

Կարևորագույն բնութագրիչներից էր արտադրված նոր արժեքի նկատմամբ սպառման գերազանցումը: Հանրապետությունում ՀՆԱ-ն օգտագործվում է ապրանքների և ծառայությունների, հիմնական ֆոնդերի համախառն կուտակման և նյութական շրջանառու միջոցների փոփոխման վրա: Սկսած 1988թ.<sup>7</sup> հանրապետությունը պաշարները սպառում է ավելի շատ, քան արտադրում է: Եթե 1970-ական թվականներին Հայաստանը եղել է արտահանող հանրապետություն, և արտադրված ազգային եկամուտը լիովին բավարարում էր պաշարների կարիքները, և դրա տեսակարար կշիռն ազգային եկամտի մեջ կազմում էր 1.2 %, ապա 1987թ. արդեն այդ ցուցանիշը կազմում էր 7.6%: 1988թ. երկրաշարժի հետևանքով հանրապետությունը կորցրեց ավելի քան 1.5 մլրդ ռուբլու ազգային եկամուտ, ինչը պայմանավորեց արտադրված ազգային եկամտի նկատմամբ հանրապետությունում պաշարների սպառման գերազանցումը ավելի քան 14%-ով: Պաշարների սպառման գերազանցումն արտադրության նկատմամբ 1990-1998թթ. կազմել է 11.3-ից 38.6%: Պաշարների սպառման ավելացումը հանրապետությունում հիմնականում պայմանավորված էր վերջնական սպառման վրա ծախսերի մեծացումով, որի մակարդակը 1990թ. կազմում էր ար-

<sup>7</sup> ՀՀ միջազգային ներդրումային և արտաքին պարտքի դիրքերը, ՀՀ ԱՎԾ, Երևան, 2008:

տադրված ՀՆԱ 67 %-ը: 1991-1994թթ. տնտեսության կտրուկ անկման հետևանքով 90-ական թվականների ՀՀ տնտեսությունը բնութագրվեց որպես «մաշվող» տնտեսություն: Այսպես, ՀՀ տնտեսության սպառումը գերազանցել է արտադրվող ապրանքների և ծառայությունների ծավալը 1995թ.՝ 17.5, 1996թ.՝ 11.7, 1997թ.՝ 14.7, 1998թ.՝ 11.1, 1999թ.՝ 8.3, 2000թ.՝ 8.9 և 2001թ.՝ 4.9 տոկոսներով:

Սպառման գերազանցումն առավել էական է դրսևորվել տնային տնտեսությունների մակարդակում: Եթե 1990թ. նկատմամբ 1998թ., ըստ իրական եկամուտների, բնակչության զնոդունակության աստիճանի անկումը կազմել է 10 անգամից ավելի, ապա տնային տնտեսությունների կողմից սպառման վրա կատարված ծախսերը նույն ժամանակահատվածում կրճատվել են ընդամենը 18.2%-ով, ինչը վկայում է տնային տնտեսությունների խնայողությունների «գերմաշման», դրանց բնատնտեսացման, ինչպես նաև պաշտոնական և մասնավոր լրահատկացումներից կախվածության մակարդակի բարձրացման մասին: Վերջնական սպառման կազմում զգալի մաս են կազմում տնային տնտեսությունների կողմից ապրանքների և ծառայությունների սպառման վրա կատարված ծախսերը: Դրանց տեսակարար կշիռը ՀՆԱ օգտագործման կառուցվածքում 1990-1997թթ. կազմել է 48.6-103.3 %, իսկ 1998-2001թթ. դրսևորելով նվազման միտումներ՝ 99.9-93.3%, ընդ որում՝ միայն 2002 թվականին է արձանագրվել իրավիճակի փոփոխություն: Տնային տնտեսությունների կողմից ապրանքների և ծառայությունների սպառման աճի բարձր մակարդակը բավարարվում է հանրապետությունում արտադրանքի ներմուծման ավելացումով: Ներմուծվող արտադրանքի տեսակարար կշռի նվազում ՀՆԱ-ում սկսեց նկատվել 1995թ.-ից՝ պայմանավորված տնտեսության դրական տեղաշարժերով, ինչը դարձյալ փոխարինվեց ներմուծման ծավալների ավելացմամբ 2002-2003թթ.: Մյուս կողմից, հարկ է նշել, որ հանրապետության գյուղատնտեսական արտադրանքի ապրանքայնության աստիճանը 1998թ. կազմել է ընդամենը 45%, ինչը վկայում է բնատնտեսության մեծ ծավալների մասին, և որը գյուղատնտեսությունում, թերևս, պայմանավորված է ոչ միայն գյուղատնտեսական մթերքի իրացման շուկայական ենթակառուցվածքների թերձակվորմամբ, այլև գյուղացիական տնտեսությունների չափազանց փոքր չափերով:

Էական բնութագրիչ է նաև Հայաստանում տարածաշրջանային շուկաների բևեռացվածությունը: 1998-2003թթ. համար կարելի է արձանագրել այն իրողությունը, որ Երևանում մանրածախ շուկայի ծավալը մոտ 2.4 անգամ գերազանցել է հանրապետական միջին ցուցանիշը այն դեպքում, երբ այդ շուկայում մնացած մարզերի տնտեսական ակտիվությունը հանրապետական միջինի նկատմամբ հիմնականում տատանվել է մոտ 20-35%-ի միջակայքում, բացառությամբ Կոտայքի և Տա-

վուշի մարզերի (մոտ 50%): Այդ նույն տարիներին հանրապետության սպառողական ապրանքների շուկաներում (տոնավաճառներում) իրականացվող առևտրում Երևանի շուկաների տեսակարար կշիռը կազմել է մոտ 90%: Երևանի և հանրապետության մյուս մարզերի միջև բևեռացվածության միտումը նկատելի է նաև բնակչությանը մատուցված ծառայությունների շուկայում: Այսպես, նույն ժամանակաշրջանում Երևանի ծառայությունների շուկայի ծավալը մոտ 2.2 անգամ գերազանցել է հանրապետական միջին ցուցանիշը այն դեպքում, երբ այդ շուկայում մնացած մարզերի տնտեսական ակտիվությունը հանրապետական միջինի նկատմամբ հիմնականում տատանվել է մոտ 28-35%-ի միջակայքում, բացառությամբ Գեղարքունիքի, Կոտայքի, Շիրակի և Սյունիքի մարզերի (մոտ 40-65%): Հետագա տարիներին, ծավալների ընդհանուր աճի պայմաններում, պահպանվել են սպառողական շուկայի արժանագրված համամասնությունները:

Սպառողական գների աճի ցուցանիշի շարժընթացը վկայում է Երևանի շուկայի գերակայության մասին, որտեղ վերոհիշյալ ցուցանիշն ավելի «զուսպ» տատանումներ է ունենում, քան մնացած տարածաշրջանային շուկաներում:

Անկախացումից հետո, Հայաստանի սոցիալտնտեսական կյանքում էական դերակատարում ունեցող գործոն է միասնական չկազմավորված վճարահաշվարկային համակարգը: Վճարահաշվարկային ճգնաժամի բարձրակետին Հայաստանը հայտնվեց 1992-93թթ.: Նոր վճարահաշվարկային համակարգի ձևավորման համար էական նախադրյալ հանդիսացավ 1993թ. ազգային արժույթի ներդրումը, ինչը, սակայն, անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայման էր գույքային հարաբերությունների մասնակիցների միջև մատչելի, հստակեցված և կանոնակարգված շահավետ ու գործուն հաշվառելի համակարգի ձևավորման համար: Անվերահսկելիության պայմաններում հաշվառելիությունն ու վերահսկողությունը լուրջ խնդիրներ էին առաջացրել ոչ միայն միկրոէկոնոմիկայի հարթությունում, այլև պետական կառավարման մակարդակում: Մի շարք ճյուղերի և ոլորտների համար վճարահաշվարկային համալիր համակարգերի կիրառումը վերածվեց կենսական նշանակության նպատակի: Վերջին տարիներին հաշվառման և վերահսկողության համալիր համակարգերը հնարավորություն ընձեռեցին համեմատաբար էական տեղաշարժեր արձանագրելու բանկային, էներգետիկայի և ջրամատակարարման համակարգերում: Ֆիսկալ գործառնությունները, պետական ծախսերը և այլն, ակնհայտ է, որ առանց կանոնակարգված, համալիր վճարահաշվարկային համակարգերի, առանց քվադի-հատվածների և քվադի-ֆիսկալ գործառնությունների կանոնակարգման, կխոչընդոտեն թե՛ իրենց, թե՛ տնտեսության և հասարակական գործունեության մնացած ոլորտների զարգացումը: Օրա-

կարգային հիմնախնդիր է շարունակում մնալ փոխադարձ չվճարումների իրողությունը: Այսպես, 2007թ. դրությամբ միայն խոշոր և միջին կազմակերպությունների կրեդիտորական պարտքերը տարեսկզբի դրությամբ կազմել են 289289.1 մլն դրամ (2001թ.՝ 543827, 2000թ.՝ 592953, 1999թ.՝ 531799 մլն դրամ), իսկ դեբիտորական պարտքերը՝ 366344 մլն դրամ (2001թ.՝ 398668, 2000թ.՝ 430513, 1999թ.՝ 519989 մլն դրամ): Նշված կազմակերպությունների կրեդիտորական պարտքերի գերազանցումը դեբիտորականին վերջին տարիներին կազմել է ՀՀ դրամական զանգվածին մոտ մեծություն (1997-2001 թթ. ընթացքում միակ բացառությունը եղել է 1999 թվականը, երբ նշյալ ցուցանիշը կազմել է դրամական զանգվածի 10.9%-ը, 2001թ.՝ 84.9%-ը, իսկ 1997, 1998, 2000 թթ. արդեն գերազանցել է դրամական զանգվածի ծավալը, համապատասխանաբար՝ 40.2, 17.7 և 7.9 տոկոսով), ինչը խանգարում է տնտեսությունում ներքին կոռպորացիայի կայացմանը և խորացնում անջրպետը տնտեսավարման խոշոր և փոքր սուբյեկտների միջև:

Հաջորդ բնութագրիչը ՀՆԱ-ում հարկային բաղադրիչի փոփոխում վարքագծի դրսևորումն է: Ազատական տնտեսակարգի պայմաններում ամբողջովին փոխվեց նոր ստեղծված արժեքի առաջնային (սկզբնական) բաշխման ուղղությունը, առաջին պլան մղվեց ֆիսկալ գործառույթը: Անկախացումից հետո ընկած կարճ ժամանակահատվածը, բնականաբար, բավարար չէ հասարակության մեջ ինչպես «ֆիսկալ», այնպես էլ «քվադի-ֆիսկալ մշակույթի» ձևավորման համար: Անցումային շրջանին բնորոշ են տարբեր ֆիսկալ գործիքների ոչ ներդաշնակ կիրառությունները, հարկային բեռի համահարթեցված չլինելը, ֆորմալ և ոչ ֆորմալ գործառույթները, տնտեսության և շուկաների տարբեր հատվածներում մենաշնորհի առկայությունը և այլն:

Անուղղակի հարկերի անընդհատ աճը վկայում է սպառման՝ որպես ավելի կայուն մակարդակ ունեցող և հաշվառելիություն պարունակող գործոնի նկատմամբ հարկային վարչարարության կիրառման բևեռացման մասին: Հարկերի տեսակարար կշիռը առանց սուբսիդիաների, ՀՆԱ կառուցվածքում 1990թ. կազմել է 8.0 տոկոսային կետ, 1994թ.՝ 3.1 տոկոսային կետ, իսկ 1999թ.՝ 8.6 տոկոսային կետ և 1998թ. համեմատ նվազել է 0.7 տոկոսային կետով: 2007թ. վերոնշյալ ցուցանիշը կազմել է 15.7%:

Տնտեսական աճի և բարեկեցության հարաբերակցության հիմնախնդիրը դիտարկելու տեսանկյունից կարևորագույն բնութագրիչ է մաս չհաշվառվող տնտեսության առկայությունը: Չհաշվառվող տնտեսության ծավալները միանգամայն տարբեր ազդեցություն կարող են ունենալ տնտեսական աճի և բարեկեցության մակարդակի ցուցանիշները դիտարկելիս: Երկու դեպքում էլ ստեղծված նոր արժեքի և ստացված եկամուտների հաշվառումից դուրս մնալը հանգեցնում է իրականության

աղճատման, ինչը, թերևս, ավելի էական կարող է լինել բարեկեցության ճշգրիտ պատկերը տեսանելի դարձնելու տեսանկյունից:

Ազատական տնտեսական հարաբերությունների արմատավորման վերջին տարիներին հանրապետությունում ձևավորվել են պայմաններ, որոնք հանգեցրել են մասնավոր հատվածում տնտեսավարող սուբյեկտների քանակի զգալի աճի և, որպես դրա հետևանք՝ վերջիններիս տնտեսական գործունեության արդյունքների դիտարկման էական բարդությունների և խոչընդոտների: Հաշվառման դասական եղանակների կիրառման բացակայության պայմաններում որոշ, ոչ բավարար տեղեկատվական բազա ունեցող ցուցանիշների լրահաշվարկման անհրաժեշտություն է առաջանում: Հանրապետությունում տնտեսության չհաշվառվող մասի գծով լրագնահատումները (լրահաշվարկները) սկսել են իրականացվել 1994թ-ից: Չհաշվառվող մասի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում, ըստ տարիների, կազմել է 30-40%:

Ներկայացվածը Հայաստանի տնտեսական բնութագրիչների ամբողջական շրջանակը չէ, այնուհանդերձ, կարելի է փաստել, որ ինչպես անցումային ողջ շրջանում, այնպես էլ տեսանելի ապագայում որպես երկրի սոցիալ-տնտեսական վիճակի վրա էական ազդեցություն ունեցող և տնտեսական աճի տեմպերը պայմանավորող գործոն է հանդես գալու փոքր արժեքային մեծություններ ունեցող շուկան, որը բնութագրում է Հայաստանի տնտեսության խիստ զգայուն բնույթը թե՛ ներքին, թե՛ արտաքին ցանկացած փոփոխության նկատմամբ:

### ***Թեմայի ամփոփում***

Մի տնտեսակարգից մյուսին ցանկացած անցում ուղեկցվում է տնտեսական գործունեության կառուցվածքի էական ձևափոխումներով: Փոխվում են ոչ միայն սեփականության ձևերի հարաբերակցությունը, ինստիտուցիոնալ կառուցվածքը, տնտեսական գործունեության վրա պետության ներգործության մեթոդները, այլև արտադրության և զբաղվածության կառուցվածքը և մարդկանց հոգեբանությունը: Ընդ որում, այդ փոփոխությունները տեղի են ունենում ինչպես կենտրոնական կառավարման տնտեսակարգից շուկայական մեխանիզմին, այնպես էլ ընդհակառակը՝ շուկայական մեխանիզմից կենտրոնացված կառավարման սկզբունքներով մեխանիզմին անցնելիս:

Շուկայական բարեփոխումների գործընթացն իրականացվում է երկու սկզբունքով: Առաջինը կոչվում է **գրադուալիզմ**՝ աստիճանական, երկրորդը՝ **շոկային**, որի դեպքում տնտեսությունում տեղի են ունենում կտրուկ շուկայական ձևափոխումներ:

Անցումային գործընթացը սովորաբար ներառում է 3 հիմնական փուլեր՝ կայունացման կամ կրիտիկական, նոր տնտեսակարգի ձևավորման և կառուցվածքային վերակառուցման: Կայունացման կամ կրի-

տիկական փուլի նպատակն է վերանայել նախորդող տնտեսակարգի գործունեության հետևանքները, որը, բնականաբար, կապված է ազգային տնտեսության ճգնաժամային իրավիճակի առաջացման հետ: Նոր տնտեսակարգի ձևավորման փուլում ստեղծվում են նոր տնտեսակարգի նախասկզբնական կազմավորման պայմանները: Այս փուլում փոխվում է նախկին տնտեսակարգի տնտեսական գործունեությունը սպասարկող ներքին ենթակառուցվածքը: Կառուցվածքային վերակառուցման փուլի նպատակն է ազգային տնտեսության վրա պետության կարգավորող դերի հիմնավորումը:

Ազատական տնտեսական հարաբերությունների արմատավորման վերջին տարիներին ձևավորվել են պայմաններ, որոնք հանգեցրել են մասնավոր հատվածում տնտեսավարող սուբյեկտների քանակի զգալի աճի և, որպես դրա հետևանք՝ վերջիններիս տնտեսական գործունեության արդյունքների դիտարկման էական բարդությունների և խաչընդոտների: Հաշվառման դասական եղանակների կիրառման բացակայության պայմաններում որոշ, ոչ բավարար տեղեկատվական բազա ունեցող ցուցանիշների լրահաշվարկման անհրաժեշտություն է առաջանում:

### ***Հիմնական հասկացություններ***

Անցումային գործընթաց

Գրադուալիզմ

Շուկային անցման սկզբունք

### ***Հարցեր և առաջադրանքներ***

1. Ի՞նչ է անցումային գործընթացը:
2. Ի՞նչ սկզբունքներով են իրականացվում շուկայական բարեփոխումները:
3. Ներկայացրեք Հայաստանի անցումային շրջանի հիմնական տնտեսական բնութագրիչները:
4. Ինչպիսի՞ տնտեսական միտումներ են բնորոշ ՀՀ անցումային գործընթացին: Հիմնավորեք համապատասխան մակրոտնտեսական ցուցանիշներով:

# ԹԵՄԱ 10. ԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԻՆՏԵԳՐՈՒՄԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆԸ

## 10.1. Տնտեսական ինտեգրման ելությունը և ձևերը

«Տնտեսական ինտեգրում» հասկացությունը գրականության մեջ մեկնաբանվում է որպես տնտեսությունների միջև հարաբերությունների ոլորտում արգելքների վերացում, տնտեսությունների մերձեցում՝ աշխատանքի միջազգային բաժանման հիման վրա, ապրանքափոխանակության գործընթաց երկու երկրների միջև, համատեղ գիտատեխնիկական մշակումներ, որպես կապիտալի փոխադարձ ներդրումներ և այլն:

Այս բոլոր գործընթացները ենթադրում են տնտեսությունների մերձեցում, սերտաճում: Ուստի ինտեգրումը այլ երկրների հետ ցանկացած փոխհարաբերությունների խորացումն է: Պարզ է, որ ինտեգրման գործընթացները տարբերվում են իրենց պատճառներով, ընդգրկման աստիճանով, ժամանակի պահանջներով, համաշխարհային տնտեսական զարգացման մակարդակով:

Շատ հաճախ տնտեսական ինտեգրման հարցերը քննարկվում են աշխատանքի միջազգային բաժանման ընդհանուր տեսադաշտում, վերջինս համարելով ինտեգրման պատճառ: Սակայն այդ երկու գործընթացները կատարվում են միաժամանակ, այսինքն՝ եթե երկու երկրներից յուրաքանչյուրը մասնագիտանում է արտադրանքի որևէ տեսակի թողարկման մեջ, ապա կամա թե ակամա նրանք պետք է փոխանակեն իրենց արտադրանքը, վերացնեն արտաքին առևտրի սահմանափակումները, մաքսատուրքերը և այլ խոչընդոտները: Սակայն ինտեգրման իմաստը հանգեցնել միայն արտաքին հարաբերությունների խոչընդոտների վերացմանը՝ խիստ միակողմանի է, ուստի ինտեգրումը պետք է բնութագրել բազմակողմանի հարաբերությունների խորացման իմաստով: Եթե փորձենք այդ հարաբերությունների ամբողջությունը պատկերացնել տարբեր հարթություններում, ապա կարելի է առաջին հերթին դիտարկել.

➤ Ինտեգրումը՝ որպես շուկայի չափերի ընդլայնում: Մեկ երկրի շուկան դուրս է գալիս իր սահմաններից և ընդգրկում է մի քանի երկրների կամ տարածաշրջանի շուկաները, որոնցում ապրանքների պահանջարկը և առաջարկը ձևավորվում են միասնականորեն:

➤ Ինտեգրումը՝ որպես տնտեսական սերտ համագործակցություն ռեսուրսների միասնական վերաբաշխության և օգտագործման գործում: Դա վերաբերում է բնական ռեսուրսների, կապիտալի, աշխատանքի վերաբաշխությանը և օգտագործմանը:

➤ Ինտեգրումը՝ որպես այդ երկրների տնտեսական հիմնախնդիրների համատեղ լուծման միջոց: Դրանք կարող են լինել տնտեսական,

արտադրական, բնապահպանական, տրանսպորտային և գիտատեխնիկական: Հետևաբար, ինտեգրումը երկրների միջև տնտեսական սերտաճման գործընթաց է, որը սկսվում է որոշակի պարզ ձևերից և հետագայում խորանում, բարդանում և համընդհանուր բնույթ է ստանում՝ նպաստելով այդ երկրների տնտեսական զարգացման արագացմանը և բնակչության կենսամակարդակի բարձրացմանը:

Երկրների միջև տնտեսական ինտեգրումը ձևավորվում է համընդգրկուն և տարածաշրջանային տեսակներով: Համընդգրկուն ինտեգրման դեպքում երկու երկրների տնտեսական հարաբերություններն իրականացվում են անկախ դրանց գտնվելու վայրից, զարգացման մակարդակից: Այդպիսի հարաբերություններ ձևավորվում են ապրանքների արտահանման ու ներմուծման, կապիտալի տեղաբաշխման և զանազան համատեղ ծրագրերի իրագործման նպատակներով: Տարածաշրջանային ինտեգրումը սկսվում է հիմնականում ռեսուրսների համատեղ օգտագործման նպատակով և կարող է ընդգրկել համընդգրկուն ինտեգրման բոլոր հնարավոր եղանակները, սակայն տարածաշրջանային ինտեգրման դեպքում հնարավոր է օգտագործել չփոխադրվող ռեսուրսները: Դրանք են՝ գետերը, հանքավայրերը, համատեղ ճանապարհների կառուցումը, որոնք կնպաստեն այդ տարածաշրջանի երկրների տնտեսական արագ զարգացմանը: 1952թ. այդպես սկսվեց Եվրոպական երկու երկրների՝ Ֆրանսիայի և Գերմանիայի միջև քարածխի և երկաթահանքի համատեղ օգտագործման փորձը, որը Եվրոպական տնտեսական համագործակցության ձևավորման հիմք հանդիսացավ, քանի որ հետագայում այդ միությանը միացան Իտալիան, Բելգիան, Հոլանդիան, Լյուքսեմբուրգը, որի բազայի վրա 1957թ. ձևավորվեց Եվրոպական տնտեսական համագործակցությունը (ԵՏՀ):

Այդպիսի համագործակցություն դեռևս 1949թ. ձևավորվել էր մաև ԽՍՀՄ-ի և Եվրոպայի սոցիալիստական ճամբարի երկրների միջև՝ Տնտեսական փոխօգնության խորհուրդ անվանմամբ (ՏՓԽ):

Ներկայումս աշխարհում ձևավորվել են տարածաշրջանային 50-ից ավելի միություններ, որոնցում տարածաշրջանային ինտեգրումը իրականացվում է հինգ հիմնական ձևերով: Ինտեգրման առաջին ձևը արտոնյալ առևտրական գոտիների ստեղծումն է, երբ հարևան երկրները, ազատ առևտուր կատարելու համար, միմյանց ապահովում են մաքսային ապրանքների, առանց բաժնեչափերի արտահանման և տնտեսական այլ արտոնությունների: Տարածաշրջանային ինտեգրման երկրորդ ձևը ազատ առևտրային գոտիների (ՏԱԳ) ստեղծումն է հարևան երկրների սահմանամերձ տարածքներում, որը նրանց տալիս է ապրանքափոխանակություն իրականացնելու հնարավորություն: Դրա համար այդ երկրներից պահանջվում է ազատականացնել գները, ապահովել ազգային արժույթների ներքին փոխարկելիություն, հաստատագրել

ապրանքների ծագումը ըստ երկրների: Տարածաշրջանային ինտեգրման երրորդ ձևը մաքսային միությունների ստեղծումն է: Մաքսային միություններում ընդգրկվող երկրների համար սեփական առևտրային քաղաքականությունը դրվում է որոշակի շրջանակների մեջ և ենթարկվում է մաքսային միության կանոնակարգին: Այդ միության բոլոր երկրները օգտվում են մաքսային նույն իրավունքներից և ապահովում միմյանց միջև ազատ առևտրային հարաբերություններ: Ինտեգրման հաջորդ չորրորդ ձևը ընդհանուր շուկայի ձևավորումն է, երբ տարածաշրջանի երկրները ընդգրկվում են մեկ ընդհանուր շուկայի մեջ, որոնց միջև, ապրանքների ազատ փոխանակմանը զուգընթաց, տեղի են ունենում կապիտալի և աշխատուժի ազատ փոխադրումներ: Այս դեպքում երկրները հնարավորություն են ստանում իրենց կապիտալները ազատորեն տեղաբաշխելու ընդհանուր շուկայի ցանկացած երկրում, իսկ աշխատուժը ստանում է այդ երկրներում ազատ շարժվելու և աշխատելու իրավունք:

Վերջապես, ինտեգրման բարձրագույն ձևը տնտեսական միության ստեղծումն է, որը ձևավորում է տարբեր երկրների տնտեսության կարգավորման միասնական մարմին: Այդ մարմինը իրեն իրավունք է վերապահում կարգավորել ռեսուրսների բաշխումը միության երկրների միջև, իրականացնել միասնական տնտեսական քաղաքականություն, ինչպես նաև ստեղծել միասնական արժույթ և սահմանել աշխարհի մյուս երկրների հետ տնտեսական հարաբերությունների որոշակի կանոններ: Այսպիսով, տնտեսական ինտեգրումը, սկզբնական շրջանում ունենալով երկրների միջև առևտրային հարաբերությունների խոչընդոտների վերացման բնույթ, հետագայում ընդլայնվեց՝ ընդգրկելով տնտեսական կյանքի բոլոր բնագավառները: Ներկայումս այն ներառում է գիտատեխնիկական առաջադիմության համատեղ օգտագործում և համագործակցություն, արտադրության միջազգային մասնագիտացում և կոոպերացում, ներդրումային համատեղ ծրագրերի իրականացում, վերազգային կորպորացիաների ձևավորում, կապիտալի և աշխատուժի միջազգային հոսքերի ազատականացում:

Տնտեսական ինտեգրման էությունը քննարկելիս ինտեգրման դրական և բացասական հետևանքները զարգացած և զարգացող երկրների համար, որպես կանոն, գնահատվում են առանձին-առանձին:

Առող մրցակցության պայմաններում համաշխարհային տնտեսությանը ինտեգրումը զարգացող երկրներին ընձեռում է ամենաժամանակակից և շահութաբեր տեխնոլոգիաների կիրառման նոր հնարավորություններ: Ներդրումներ կատարելով մյուս երկրներում՝ զարգացած երկրների կորպորացիաները հնարավորություն են ստանում օգտագործելու այդ երկրների էժան աշխատուժը և շահագործելու բնական հարուստ ռեսուրսները: Այդ երկրների շուկաներում հաստատվելուց հետո

զարգացած երկրները արտադրանքի փոխադրման և իրացման ծախսեր այլևս չեն կատարում: Ջարգացող և անցումային երկրների համար ինտեգրումը պետք է դիտարկել դրանց կարճաժամկետ և երկարաժամկետ խնդիրների իրագործման տեսանկյունից: Թույլ զարգացած երկրներում ձեռնարկությունների մի մասը կարճ ժամկետում չի կարողանում դիմանալ այլ երկրների ձեռնարկությունների մրցակցությանը և դադարեցնում է գործունեությունը: Թույլ զարգացած երկրների տնտեսությունները կարճ ժամկետում կախման մեջ են ընկնում զարգացած երկրների տնտեսական քաղաքականությունից և չեն կարողանում իրագործել իրենց ազգային տնտեսության զարգացման առանձնահատուկ խնդիրները: Թույլ զարգացած երկրներում կարճ ժամկետում ձևավորվում է գործազրկություն և սղաճ, որոնց հետևանքով բնակչության մի մասը հայտնվում է սոցիալական ծանր վիճակում՝ մեծացնելով աղքատ բնակչության տեսակարար կշիռը: Սակայն ինտեգրման այս բացասական հետևանքները երկար ժամկետում հաղթահարվում են, քանի որ կապիտալի և առաջադիմական տեխնոլոգիական միջոցների ներհոսքը համզեցնում է տնտեսության ճյուղային կառուցվածքի վերակառուցմանը, ձևավորվում են արտադրության նոր ճյուղեր, ձեռնարկություններ, որոնք դիմանում են միջազգային մրցակցությանը և նպաստում տնտեսության ընդհանուր վերելքին: Արտադրության տեխնիկական վերազինման ապագան, վերջին հաշվով, մոտեցնում է ինտեգրվող երկրների տնտեսական զարգացման մակարդակները՝ ապահովելով թույլ զարգացած երկրների բնակչության կենսամակարդակի աճը: Իհարկե, ինտեգրման սկզբնական փուլում ավելի մեծ չափով շահում են զարգացած երկրները, սակայն երկարաժամկետ ինտեգրման ընթացքում տնտեսության օպտիմալ կառուցվածքի ձևավորման, ռեսուրսների արդյունավետ տեղաբաշխման և ապրանքների արտահանման ընդլայնման հետևանքով թույլ զարգացած երկրները նույնպես հասնում են դրական արդյունքների: Այդ գործընթացի գնահատման լավագույն օրինակ կարող է ծառայել 20-րդ դարի 90-ական թվականներին Կանադայի և Մեքսիկայի տնտեսական զարգացման արդյունքների համեմատական վերլուծությունը: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո տարածաշրջանային ինտեգրումը ԱՄՆ-ի և Կանադայի տնտեսությունների միջև հնարավորություն տվեց ապահովելու Կանադայի տնտեսության բուռն վերելքը, որի արդյունքում բնակչության մեկ շնչի հաշվով արտադրվող ազգային եկամուտը հասավ ԱՄՆ-ի նույն ցուցանիշի շուրջ 70%-ին: Մեքսիկան, ընդհակառակը, ամբողջությամբ զերծ մնաց ԱՄՆ-ի հետ սերտ տնտեսական կապեր հաստատելուց, միայն 1993թ. այդ երկու երկրների միջև կնքվեց ազատ առևտրի իրականացման պայմանագիր, որի պատճառով Մեքսիկայի տնտեսական զարգացման մակարդակը խիստ հետ է մնում Կանադայի տնտեսական զարգացման մակարդակից:

## 10.2. ՀՀ տնտեսության ինտեգրման նախադրյալները և գործոնները

ՀՀ տնտեսության ինտեգրումը համաշխարհային տնտեսությանը հնարավոր էր միայն քաղաքական անկախացումից հետո: Մինչ այդ Հայաստանի տնտեսությունը Խորհրդային Միության տնտեսության օրգանական մասն էր, որի տնտեսական ինտեգրումը տեղի էր ունեցել սոցիալիստական ճամբարի երկրների հետ տնտեսական փոխօգնության խորհրդի շրջանակներում: Առանձին վերցրած, Հայաստանը համաշխարհային շուկայում հանդես գալ չէր կարող: Դրա համար պահանջվում էր հաղթահարել արտաքին հարաբերությունների պետական մենաշնորհը, ապահովել ազատ մրցակցություն այլ երկրների տնտեսավարող սուբյեկտների հետ: Մրցակցությունը արտադրության ռեսուրսների արդյունավետ օգտագործման պայմաններից մեկն է: Ազատ մրցակցության շնորհիվ տնտեսավարող սուբյեկտները կարողանում են տեղ գրավել տվյալ արտադրանքի իրացման համաշխարհային շուկայում: Պարզ է, որ նախկին տնտեսական համակարգում շուկայական գների բացակայությունը ստեղծում էր արտադրության ռեսուրսների անարդյունավետ օգտագործման միտումներ: Քանի որ ԽՍՀՄ արժույթը ազատ փոխարկելի չէր, և փոխարկումը իրականացվում էր ԽՍՀՄ պետական բանկի կողմից, Խորհրդային հանրապետությունները զրկված էին մյուս երկրների հետ տնտեսական հարաբերությունների մեջ մտնելու և ինտեգրվելու հնարավորությունից: Այդ է պատճառը, որ քաղաքական անկախացումից հետո հանրապետության տնտեսությունը հայտնվեց մի այնպիսի իրադրության մեջ, երբ բացակայում էին համարյա բոլոր տնտեսական կապերը աշխարհի մյուս երկրների հետ: Նման իրավիճակը հաղթահարելու համար Խորհրդային Միությունից անկախացած մյուս երկրները ունեին քնական հարուստ ռեսուրսներ և արտաքին աշխարհի հետ տնտեսական կապեր կարող էին հաստատել այդ ռեսուրսների արտահանման կամ համատեղ օգտագործման ճանապարհով:

Անկախացած բոլոր երկրների համար տնտեսական վերելքի և արտաքին տնտեսական ինտեգրման կարևոր նախադրյալը հաջող բարեփոխումներն էին, որին 1991-1992թթ. ձեռնամուխ եղավ նաև Հայաստանի Հանրապետությունը՝ իրագործելով գյուղատնտեսական հողատարածությունների մասնավորեցումը: Մակայն, չունենալով արտադրության միջոցների մասնավորեցման հստակ ծրագիր, Հայաստանում այդ գործընթացը սկսվեց միայն 1994թ.: Այդ պատճառով մասնավոր գյուղացիական տնտեսությունները դադարեցրին գյուղատնտեսական հումքի մատակարարումը վերամշակող պետական ձեռնարկություններին, որի հետևանքով հողի մասնավորեցումը նույնպես էական ար-

դյունքներ չտվեց: Տարածաշրջանային հակասությունների պատճառով Հանրապետությունը տրանսպորտային շրջափակման մեջ էր: Չունենալով սեփական էներգակիրներ՝ հանրապետությունում ստեղծվեց խիստ ծանր տնտեսական իրադրություն: Բավական է նշել, որ միայն 1992թ. արդյունաբերական արտադրության ծավալը կրճատվեց 52%-ով: Եթե դրան ավելացնենք մաս այն հանգամանքը, որ միջազգային ֆինանսական կազմակերպությունները տարածաշրջանային հակամարտությունների պատճառով չէին վարկավորում Հայաստանին, ապա պարզ կդառնա, որ հանրապետությունը այդ ժամանակահատվածում տնտեսական ինտեգրման փորձեր կատարել չէր կարող:

Համաշխարհային տնտեսության և հարևան երկրների հետ տնտեսական ինտեգրումը պահանջում էր ստեղծել որոշ նախադրյալներ. նախ՝ ինտեգրվող երկրի բնակչությունը պետք է հանդես բերի խնայողության բարձր մակարդակ, սակայն հանրապետության բնակչությունը միանգամից հայտնվեց ծայրահեղ աղքատության մեջ, որի պայմաններում խնայողություն ապահովել հնարավոր չէր: Տեղի ունեցավ աշխատուժի արտահոսք, որի նպատակը աշխատանքով ապահովվելն էր: Իհարկե, Հայաստանն ուներ սփյուռք, որը պետք է նպաստեր այլ երկրների հետ տնտեսական ինտեգրմանը: Սակայն Հայաստանի տնտեսական անմախաղեպ անկման պայմաններում, սփյուռքի և արտագաղթած աշխատուժի ազդեցությունը հանդես էր գալիս միայն տրանսֆերտների ձևով, որն օգտագործվում էր տեղի բնակչության գոյատևման նպատակով: Հետևաբար, մինչև 1995թ. Հայաստանը տնտեսական ինտեգրման հնարավորություններ չուներ: Ընդհանրապես, տնտեսական ինտեգրման համար անցումային տնտեսությունում ձևավորվում են գործոններ, որոնցից հիմնականը տվյալ երկրի քաղաքական իրադրությունն է: Քաղաքական իրադրության ազդեցությունը արտահայտվում է ներքին և արտաքին հակասությունների բացակայությամբ, որը օտարերկրյա ներդրումների ներգրավման համար հրապուրիչ դաշտի գոյության պայման է: Հայաստանի Հանրապետությունում գործող քաղաքական ընդդիմությունը երկրի ներքին կայունության սասանման պատճառ չի հանդիսացել, քանի որ ժողովրդական զանգվածներին միավորել էր Արցախյան հիմնախնդրի լուծման գաղափարը:

Արտաքին քաղաքական կայունացման խախտման պատճառը Ադրբեյջանի իշխանությունների՝ սահմանների ամբողջականության պահպանման ձգտումն էր, Արցախի ժողովրդի ազգային ազատագրական շարժման և քաղաքական ինքնուրույնության գաղափարի մերժումը: Ներքին իրադրությունը հաճախ գնահատվում է մաս ստվերային տնտեսության և կոռուպցիայի առկայությամբ: Վերջիններս խիստ արգելակում են կապիտալի ներհոսքը և տնտեսական ինտեգրման գործընթացը: Տնտեսական ինտեգրումը ենթադրում է մաս ներքին

տնտեսական և տարածաշրջանային գործոններ: Երկրի ներքին տնտեսական գործոններ են համարվում բնական ռեսուրսների առկայությունը, մարդկային կապիտալի կրթական մակարդակը, ֆիզիկական կապիտալի առկայությունը և տեխնիկական հագեցվածությունը, ինչպես նաև տնտեսական կառուցվածքի և ենթակառուցվածքների զարգացման աստիճանը:

Հայաստանը հարուստ չէ բնական ռեսուրսներով, էներգակիրներով, սև մետաղների արտադրությամբ, սակայն ունի բազմամետաղների ոչ մետաղային հանքավայրերի պաշարներ, որոնք կարող են տնտեսական իմտեզրման հնարավորություններ ստեղծել: Հայաստանի արդյունաբերական արտադրությունների գերակշիռ մասը ԽՍՀՄ ռազմաարդյունաբերական համալիրի այն բաղկացուցիչներից էր, որը կոռպորացված կապերով արտադրանք էր մատակարարում այդ համալիրի գլխամասային ձեռնարկություններին: Պարզ է, որ այդ ձեռնարկությունները վերջնական արտադրանք չէին թողարկում: Իսկ վերջնական արտադրանք թողարկող մեքենաշինական ձեռնարկությունների հումքի և նյութերի հիմնական մասը մատակարարում էին Միության այլ հանրապետությունները: Պարզ է, որ Խորհրդային Միության փլուզման հետևանքով այդ մատակարարումները դադարեցին: Տարածաշրջանային գործոնները հիմնականում խոչընդոտում են Հայաստանի՝ համաշխարհային տնտեսությանը տնտեսական իմտեզրմանը: Հայաստանը հարևան չէ զարգացած երկրներին: Միակ երկիրը Իրանն էր, որի հետ փոխադարձ տնտեսական հարաբերություններ շարունակվեցին անկախացումից հետո: Սակայն Իրանի հետ Հայաստանը կապված է միայն մեկ ավտոճանապարհով, որը իմտեզրման մեծ հնարավորություններ չի ընձեռում: Մյուս երկրների հետ հարաբերությունները անկախացման շրջանում խզվեցին, և միայն վերջին տարիներին Վրաստանը թույլատրեց Հայաստանին Փոթիի նավահանգստից երկաթուղային կապով բեռնափոխադրումներ կատարել: Հայաստանը չունի նաև միջազգային նշանակության մայրուղիներ, քանի որ Թուրքիայի և Ադրբեջանի կողմից տրանսպորտային շրջափակումը և Աբխազիայի ու Վրաստանի միջև քաղաքական հակամարտությունը ամբողջությամբ զրկեցին Հայաստանի Հանրապետությանը որևէ երկաթուղային մայրուղուց օգտվելու հնարավորությունից:

Վերջապես, տնտեսական իմտեզրման հարցում մեծ դեր են խաղում ազգային, մշակութային գործոնները: Որքան էլ հայերը սփռված են ամբողջ աշխարհում և բոլոր երկրների հետ տնտեսական կապերի մեջ մտնելու ուղիներ գոյություն ունեն, այնուամենայնիվ, հայը՝ որպես գործարար անհատ, մշտապես խուսափում է իր կապիտալը որևէ այլ երկրի գործարարի հետ միավորելուց, թեկուզ դա կարող է նպաստել կապիտալի խիստ արագ աճին: Այդ է պատճառը, որ Հայաստանում, ըստ

էութեան, բացակայում են բաց բաժնետիրական ընկերությունները, որոնց բաժնետոմսերը կարող են ազատ գնվել ու վաճառվել արժեթղթերի երկրորդային շուկայում:

### 10.3. Հայաստանի տնտեսությունը տարածաշրջանային և համաշխարհային տնտեսական համակարգերում

Հայաստանի տնտեսությունը տարածաշրջանային և համաշխարհային տնտեսական համակարգերում դիտարկվում է դրանց հետ հնարավոր ինտեգրման տեսանկյունից, այսինքն՝ Հայաստանը դրանց հետ ինտեգրվելու պարագայում ի՞նչ դժվարություններ կունենա կամ ինչպիսի՞ առավելություններ կարող է հանդես բերել: Աշխարհի բոլոր տարածքներում տարածաշրջանային ինտեգրում իրականացվում է երեք հիմնական նպատակով:

Առաջին, յուրաքանչյուր երկրի շուկան ավելի փոքր է, քան տվյալ տարածաշրջանի երկրների միասնական ընդհանուր շուկան: Այդ երկրներից յուրաքանչյուրի արտադրության առանձին ճյուղերը կարող են ընդլայնել իրենց արտադրությունը համապատասխան ռեսուրսների առկայության դեպքում: Հայաստանը փոքր երկիր է, ունի փոքր շուկա, և արտադրանքի մի շարք տեսակների արտադրության ծավալները կարող են տեղական սպառման պահանջները գերազանցել մի քանի տասնյակ անգամ: Ուստի, ինտեգրումը հարևան երկրների հետ հնարավորություն կտա զգալիորեն ավելացնելու արտադրանքի այդ տեսակների արտադրության ծավալները:

Երկրորդ, տարածաշրջանային ինտեգրման առավելություններից մեկը արտադրության ենթակառուցվածքների համատեղ ստեղծումն ու օգտագործումն է: Դա վերաբերում է ավտոմայրուղիների, երկաթուղիների համատեղ օգտագործմանը, այդ երկրների արտադրական ռեսուրսների միասնական օգտագործման կազմակերպմանը: Օրինակ, Իրան-Հայաստան գազամուղի կառուցումը և շահագործումը Հայաստանին հնարավորություն կտա ստանալու գազի այնպիսի ծավալ, որի մի մասը կսպառվի կենցաղում, իսկ մյուս մասը ջերմաէլեկտրակայաններում կդառնա էլեկտրաէներգիա և կմատակարարվի Իրանին: Փաստորեն, տարածաշրջանային ինտեգրումը բացում է առանձին երկրների բնական և արտադրական ռեսուրսների օգտագործման արդյունավետ ուղի, հատկապես եթե այդ երկրներն ունեն բնակլիմայական տարբեր պայմաններ և առանձնահատուկ ռեսուրսներ:

Երրորդ, տարածաշրջանային ինտեգրումը այդ երկրների քաղաքական կայունության երաշխիքն է: Միմյանց հետ տնտեսական կապերի մեջ մտնելով՝ տարածաշրջանի երկրները նպաստում են տնտեսական

զարգացման մակարդակների համահարթմանը, որը հիմք է հանդիսանում երկրի տնտեսական կայունացման համար, իսկ վերջինս, անկախացման հետ միասին, երկրների քաղաքական կայունացման գլխավոր պայմանն է: Տարածաշրջանային ինտեգրումը իրագործվում են երկու ուղիով:

*Առաջին* տարածաշրջանի երկրները մշակում են համատեղ ծրագրեր, որոնք արտահայտում են իրենց ընդհանուր շահերը: Այդպիսի ծրագրերը կարող են վերաբերել ջրանցքների, ավտոմայրուղիների, երկաթուղիների, գետերի վրա հիդրոկասկադների կառուցմանը, համատեղ ձեռնարկությունների ստեղծմանը, կադրերի վերապատրաստմանը, ինչպես նաև բնապահպանական խնդիրների համատեղ լուծմանը: Նման ծրագրերը մշակվում և իրագործվում են միջկառավարական համաձայնագրերի կնքման միջոցով: Ծրագրերի իրագործմանը կարող են մասնակցել տարածաշրջանի երկրների կառավարությունները, դրանց զանազան գերատեսչությունները և կազմակերպությունները:

*Երկրորդ* ուղին տնտեսական ինտեգրմանը խորապես նպաստող միջոցառումների մշակումն ու իրագործումն է ազատ առևտրի, մաքսային միության կամ ընդհանուր շուկայի ձևավորման միջոցով: Ազատ առևտուր իրականացվում է այն երկրների կազմակերպությունների միջև, որոնք սահմանային խաչընդոտներ կամ արտադրանքի տարբեր տեսակների արտահանման կամ ներմուծման բաժնեչափեր (քվոտաներ) չեն սահմանում: Մաքսային միություններ ստեղծվում են տարածաշրջանի երկրների մասնակցությամբ, որոնց նպատակն է կարգավորել արտադրանքի արտահանման և ներմուծման մաքսային դրույքա-չափերը, ապահովել տարածաշրջանի երկրների արտադրության ճյուղերի արտադրանքի մրցունակությունը և պաշտպանել դրանք այլ երկրների համապատասխան արտադրանքի տեսակների մրցակցությունից: Հայաստանի Հանրապետությունը ներկայումս տարածաշրջանային ինտեգրման երկու միությունների անդամ է: Առաջինը անկախ պետությունների համագործակցությունն է (ԱՊՀ):

ԱՊՀ-ի նպատակը նախկին Խորհրդային Միության հանրապետությունների միջև տնտեսական կապերի վերականգնումն էր: Ստեղծման օրվանից ԱՊՀ անդամ երկրների միջև կնքվել են ազատ առևտրի, առանց մաքսային վճարումների ասպրանքամատակարարումների, տնտեսական օգնության, ընդհանուր շուկայի ձևավորման վերաբերյալ բազմաթիվ համաձայնագրեր: Սակայն այդ բոլոր համաձայնագրերից ներկայումս գործում է միայն ճշված երկրների արտադրանքի մատակարարումների կազմակերպումը՝ առանց մաքսային վճարների: Հայաստանը անդամակցում է նաև Սևծովյան տնտեսական համագործակցությանը: Այդ համագործակցության համաձայնագրերը զուտ ձևական բնույթ ունեն, քանի որ համագործակցության անդամ Թուր-

քիան տրամապորտային շրջափակման է ենթարկել Հայաստանին: Աշխարհի երկրների հետ ինտեգրվելու գործում զգալի դեր կկատարի այն փաստը, որ 2003թ. Հայաստանի Հանրապետությունը դարձել է Առևտրի համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) անդամ: Զանի որ ԱՀԿ-ի գործունեության հիմքում ընկած են երկու կարևորագույն սկզբունքներ՝ առևտուր առանց խտրականության և շուկաների կատարյալ թափանցիկություն, ապա դա կնպաստի այդ կազմակերպության անդամ երկրների միջև արտաքին առևտրում խտրականության վերացմանը: Այսպես օրինակ, Հայաստանում աշխատուժի էժան լինելու պատճառով, երբ տնտեսապես զարգացած երկրները Հայաստանից ցածր գներով ապրանքներ են գնում, չեն կարող կիրառել հակադեմպինգային և պաշտպանական միջոցառումներ: Երկրների ներքին արտադրությունը ԱՀԿ-ը պաշտպանում է արտաքին անբարեխիղճ մրցակցությունից: Դրանով մա երկրներին թույլատրում է օգտագործել հովանավորչական և պաշտպանական միջոցներ՝ ներքին արտադրողների համար, ԱՀԿ անդամ երկրներին արգելվում է օգտագործել ներմուծման քանակական սահմանափակումներ, ինչպես նաև ներմուծման սակագները պահել ոչ բարձր մակարդակի վրա: Հայաստանը ԱՀԿ-ին անդամակցելու պահին ուներ ներմուծման զրոյից մինչև 10% մաքսատուրքեր, որը պահպանվեց նաև ԱՀԿ-ի անդամ դառնալուց հետո: Այսպիսով, անդամակցումը ԱՀԿ-ին մոր հնարավորություններ բացեց աշխարհի երկրների հետ Հայաստանի ինտեգրման գործում:

#### 10.4. Օտարերկրյա ներդրումների աճի նախադրյալները և դերը տնտեսության ինտեգրման գործընթացում

Տնտեսության մեջ ներդրումներ կատարվում են պետության և մասնավոր հատվածի կողմից: Որպես կանոն, պետական ներդրումները իրականացվում են արտադրական ենթակառուցվածքներում, այսինքն՝ կառուցվում են երկաթուղիներ, ավտոճանապարհներ, ջրանցքներ, և դրանք նպաստում են ազգային տնտեսության զարգացմանը: Մասնավոր հատվածի ներդրումները մոր ձեռնարկությունների կառուցման, նախկին ձեռնարկությունների վերակառուցման, վերազինման, մոր հողատարածությունների մշակման, անասնաբուծական համալիրների ստեղծման նպատակ ունեն: Այդ ներդրումներին մասնակցում են օտարերկրյա գործարարները՝ դրանով իսկ նպաստելով ՀՀ տնտեսության ինտեգրմանը համաշխարհային տնտեսությամբ: Դա հատկապես ամփրաժեշտ է զարգացման ներկա փուլում, ներդրումային ռեսուրսները ՀՀ-ում դեռևս սակավ են: Հայաստանում դա ունի իր օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառները: Օբյեկտիվ պատճառներ են.

1. Չնայած վերջին տարիների տնտեսական աճի բարձր տեմպերին, Հայաստանում փոքր է դեռևս մեկ բնակչի հաշվով ստեղծվող ազգային եկամուտը: Այսպես, 2000թ. մեկ բնակչի հաշվով ստեղծված համախառն ներքին արդյունքը կազմել է 320.2 հազար դրամ, 2004թ.՝ 590.1 հազար դրամ: Այդ եկամուտները բնակչության կողմից օգտագործվում են սպառողական պահանջները բավարարելու համար:

2. Բնակչության եկամուտների ոչ բարձր մակարդակը չի ապահովում գնողունակ պահանջարկը և չի խթանում նոր արտադրությունների ստեղծումը, որն իր հերթին խոչընդոտում է ներդրումների ծավալների աճը:

3. Խորհրդային իշխանության տարիներին Հայաստանի Հանրապետությունը ուներ որակավորված աշխատուժ, որի գերակշիռ մասը արտագաղթեց Հայաստանից, իսկ արդյունաբերության տարբեր ճյուղերում գոյություն ունեցող արտադրական հզորությունները զգալի չափով կազմալուծվեցին, որի պատճառով թողարկվող արտադրանքի որակը ցածր է և չի համապատասխանում միջազգային շուկայի պահանջներին: Այն համեմատաբար ավելի արագ կարող է սպառվել ԱՊՀ երկրներում, որոնց հետ Հայաստանի տնտեսական կապերը խզվեցին հենց Հանրապետության անկախացման սկզբնական շրջանում:

4. Հայաստանը Խորհրդային Միության օրգանական մասնիկն էր: Դա նշանակում է, որ արտադրական կապերը ղեկավարվում էին մեկ միասնական կենտրոնից, որի պատճառով արտաքին շուկայում հանդես էր գալիս միայն Միության արտաքին առևտրի նախարարությունը: Այդ է պատճառը, որ հանրապետության գործարարները արտաքին շուկայում աշխատելու փորձ չուներին: Նրանք չեն կարող հրապուրել այլ երկրների գործարարներին, շահադրդել, որ իրենց արտադրության մեջ ներդրումներ կատարեն՝ համատեղ արտադրանք թողարկեն: Այդ կապերը ստեղծվում են աստիճանաբար, որի արդյունքում օտարերկրյա կապիտալի մասնակցությամբ ձեռնարկությունների թիվը Հայաստանի Հանրապետությունում աճում է: Այսպես, 1991թ. դրանց թիվը 38 էր, 1994թ.՝ 68, 1995թ.՝ 220, 2000թ.՝ 310:

Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա ներդրումներին՝ ընդհանրապես, տնտեսության իրական հատվածում կատարվող ներդրումներին՝ մասնավորապես, խոչընդոտում են մաև սուբյեկտիվ գործոններ: Դրանք կապված են մախ և առաջ այն հանգամանքի հետ, որ Հայաստանը դարձել է սպառող երկիր, որի ստեղծվող արդյունքի միայն 4-5% է կուտակվում, և փաստորեն համախառն ներդրումները կազմում են ՀՆԱ շուրջ 19%-ը: Միայն 2001 թվականից հետո այդ ցուցանիշը գերազանցեց 20 %-ի սահմանագիծը: 2003 թվականին այն կազմեց ՀՆԱ 24.3, իսկ 2004թ.-ին՝ 24.9 տոկոսը: Դա բավարար չէ հետագայում տնտեսական աճի բարձր տեմպեր ապահովելու համար: Աշխարհի մի շարք

երկրների փորձը ցույց է տալիս (Չինաստան, Վիետնամ, Հարավային Կորեա, Թաիլանդ), որ տնտեսական աճի բարձր տեմպերի ապահովման համար անհրաժեշտ է ներդրումներ-ՀՆԱ հարաբերության ցուցանիշը հասցնել 35%-ի:

*Երկրորդ*, Հայաստանում կապիտալի ազատ միջոցները հիմնականում օգտագործվել են առանձնատների կառուցման, ինչպես նաև առևտրի և հանրային սննդի օբյեկտների ստեղծման համար՝ նկատի ունենալով, որ այդ բնագավառներում ներդրվող կապիտալը ավելի արագ է հետ ստացվում:

*Երրորդ*, Հայաստանում բանկային համակարգի զարգացումն ունի այն առանձնահատկությունը, որ մինչև այժմ կապիտալի իրական տուկոսադրույթը բարձր է: Բավական է ասել, որ առևտրային բանկերի ամենացածր տուկոսադրույթը 2005թ. դեռևս 18% էր: Եթե հաշվի առնենք տարեկան սղաճը, որը կազմում է 3%, ապա կապիտալի իրական տուկոսադրույթը դեռևս նույնպես խիստ բարձր է՝ շուրջ 15%: Դա չի նպաստում տնտեսության իրական հատվածում ներդրումներ կատարելուն:

*Չորրորդ*, Հայաստանում գործարարների՝ ներդրումներ կատարելու միտումը կապիտալի այլ տերերի հետ չմիավորվելն է: Պատահական չէ, որ հանրապետությունում ստեղծված բաժնետիրական ընկերությունները հիմնականում փակ են, պատկանում են որոշակի թվով մարդկանց, և դրանց բաժնետոմսերը չեն շրջանառվում ֆոնդային բորսայում: Փաստն այն է, որ Հայաստանում արժեթղթերի երկրորդային շուկա գոյություն չունի, բացի պետական կարճաժամկետ պարտատոմսերի իրացումից: Դա նշանակում է, որ կապիտալի ազատ միջոցների միաձուլում տեղի չի ունենում ինչպես ներքին, այնպես էլ արտաքին ներդրողների միջև:

Վերջապես, ներդրումների աճը կաշկանդող հիմնական գործոններից են հանրապետությունում դեռևս գոյություն ունեցող ստվերային տնտեսության և կոռուպցիայի մեծ չափերը, որոնք, ներդրողների շրջանում կատարված հարցումների համաձայն՝ համարվում են ներդրումների կատարման գլխավոր խոչընդոտներ:

Այս ամենը վկայում է, որ Հայաստանի Հանրապետության տնտեսության հետագա աճի և համաշխարհային տնտեսության հետ ինտեգրման գործում էական դեր ունի օտարերկրյա ներդրումների խթանումը: Օտարերկրյա ներդրումներ սովորաբար կատարվում են նոր ձեռնարկությունների հիմնադրման կամ նախկին գործող ձեռնարկությունների վերակառուցման, վերազինման ճանապարհով: Այս դեպքում օտարերկրյա կապիտալը, մուտք գործելով Հայաստան, ավելացնում է տնտեսության ճյուղերի արտադրական պաշարները կապիտալի տեսքով, որոնք տնտեսական աճի կարևորագույն գործոնն են: Այս ճանապարհով կատարված ներդրումները ապահովում են նորագույն տեխնի-

կայի և տեխնոլոգիայի առկայությունը արտադրության ճյուղերում՝ նպաստելով գիտատեխնիկական առաջադիմությանը: Օտարերկրյա ներդրումներ կատարվում են նաև գործող ձեռնարկությունների և արտադրությունների՝ բաց մրցույթով մասնավորեցման գործընթացներում: Այս դեպքում, իհարկե, կապիտալի պաշարները տնտեսության ճյուղերում չեն ավելանում: Սակայն կապիտալի օտարերկրյա տերերը, ունենալով տնտեսական կապերի, արտադրանքի իրացման, արտաքին շուկայում գործելու զգալի փորձ, որոշակիորեն նպաստում են մեր երկրում ստեղծվող ազգային արդյունքի, ավելացմանը, եթե կապիտալի տերերին հաջողվում է գործարկել նախկին ձեռնարկությունների արտադրական հզորությունները: Այդ դեպքում, տեղական աշխատուժի օգտագործման միջոցով, հնարավոր է ապահովել ՀՆԱ զգալի աճ: Այսպիսով, ինչպիսի ուղիով էլ օտարերկրյա կապիտալը ներդրվի ազգային տնտեսությունում, կբարձրացնի տնտեսության կենսունակությունը և կնպաստի այլ երկրների հետ տնտեսական ինտեգրմանը՝ ապահովելով բնակչության զբաղվածության և կենսամակարդակի աճ: Այսպես օրինակ, Սանկտ Պետերբուրգը կառուցվել է բնական և էներգետիկ ռեսուրսներ չունեցող վայրում և աշխատուժի կուտակումը տեղի է ունեցել հզոր մեքենաշինության շնորհիվ: Այժմ, երբ այդ մեքենաշինական համալիրը որոշակի ճգնաժամ է ապրում, աշխատուժն օգտագործվում է «Ֆորդ», «Մերսեդես» և «Տոյոտա» ֆիրմաների կողմից այդ քաղաքում ստեղծված հավաքման արտադրամասերում: Այդ ֆիրմաները շահագրգռված են օգտագործելու Սանկտ Պետերբուրգի էժան և ռալկյալ աշխատուժը: Նրանց միջև մրցակցության խորացումը կհանգեցնի աշխատուժի զգալիորեն թանկացմանը՝ բարձրացնելով բնակչության կենսամակարդակը: Ահա թե ինչու, օտարերկրյա ներդրումները նպաստում են երկրի տնտեսական բարգավաճմանը: Սակայն տարբեր երկրներում հաճախ ունենում են նաև բացասական ազդեցություններ: Առաջին հերթին դա կապված է այն հանգամանքի հետ, որ օտարերկրյա կապիտալի տերերը ցանկանում են հիմնել հանքահումքային ռեսուրսներ մշակող ձեռնարկություններ, որոնք ավելորդ մնացորդներ են ստեղծում՝ աղտոտելով շրջակա միջավայրը: Նրանց չի հետաքրքրում շրջակա միջավայրի պաշտպանությունը և այդ նպատակի համար ներդրումներ չեն կատարում: Երկրորդ, օտարերկրյա կապիտալի տերերը շահագրգռված են ներդրումներ կատարել այն երկրներում, որոնցում շրջակա միջավայրի պաշտպանության պետական վերահսկողությունը դեռևս ուժեղ չէ: Նրանք այդ երկրներում տեղադրում են առողջության համար վտանգավոր ազդեցություն ունեցող արտադրական ձեռնարկություններ, հատկապես այն դեպքերում, երբ կապիտալը արտահանող երկրի օրենսդրությունը արգելում է նման տեխնոլոգիաներով արտադրանքի արտադրությունը: Վերջապես, օտարերկրյա ներդրումների բացասական

ազդեցությունը հաճախ հանդես է գալիս այն պատճառով, որ այդպիսի ներդրողները չեն կատարում իրենց խոստումները: Ձեռնարկությունները գնելիս ներդրողները խոստանում են ապագայում զգալի ներդրումներ կատարել, սակայն հաճախ դրանք շահագործում են առանց ներդրումներ կատարելու և վերակառուցելու: Այդպիսին էր «Արմեն-թել» օրինակը, որի գնման ժամանակ հունական ֆիրման խոստացավ կատարել շուրջ 500 մլն դոլարի ներդրումներ, բայց չարեց: Այսպիսով, օտարերկրյա ուղղակի ներդրումների (ՕՈՒՆ) դրական և բացասական ազդեցությունների քննարկումը հիմք է տալիս ընդգծելու, որ դրանք անհրաժեշտ են շուկայական տնտեսություն ստեղծող երկրների տնտեսական զարգացումը և համաշխարհային տնտեսության հետ դրանց ինտեգրումը ապահովելու համար: Նման ներդրումների արագ աճով պետք է բացատրել Մերձբալթյան երկրների, Լեհաստանի, Չեխիայի տնտեսական անկման արագ վերականգնումը դեռևս 1990-ական թվականներին: Դա նշանակում է, որ այդ երկրները հաջողությամբ օգտագործեցին ՕՈՒՆ-ի ներգրավման շահադրժման գործոնները և կարողացան չեզոքացնել դրանք սահմանափակող խոչընդոտների ազդեցությունը: Սովորաբար, տնտեսագիտական գրականության մեջ ՕՈՒՆ-ի ներգրավման շահադրժման գործոններ են համարվում շուկայի չափերը, տնտեսական աճի հեռանկարները, բնական հարուստ ռեսուրսները, էժան և որակյալ աշխատուժը, արտադրական ենթակառուցվածքների վիճակը: ՕՈՒՆ-ի ներգրավումը սահմանափակող հանգամանքներ են քաղաքական, տնտեսական և ինստիտուցիոնալ ռիսկերը:

Ինչպիսին են Հայաստանի Հանրապետությունում շահադրժման գործոնները և սահմանափակող հանգամանքները:

Հայաստանը Խորհրդային Միության բաղկացուցիչ մասն էր և տնտեսությունը օրգանապես կապված էր Միության տնտեսության ճյուղերի հետ: Բավական է ասել, որ Հայաստանի արդյունաբերական արտադրանքի շուրջ 45%-ից ավելին սպառվում էր Միության մախկին հանրապետություններում և արդյունաբերության հումքային ռեսուրսների մույնքան տոկոսը ստացվում էր այդ հանրապետություններից: Հայաստանում խիստ աճել էր հատկապես ԽՍՀՄ ռազմաարդյունաբերական համալիրը սպասարկող ձեռնարկությունների ցանցը: ԽՍՀՄ-ի կազմալուծվելուց հետո ձեռնարկությունների գործունեությունը դադարեց պատվերներ չստանալու պատճառով: Մյուս կողմից, հանրապետության արդյունաբերության այն ճյուղերը, որոնք զարգացել էին ներկրվող հումքի բազայի վրա, տնտեսական կապերի խզման պատճառով դադարեցին գործել, հատկապես խիստ կրճատվեց կոշիկի արտադրությունը, իսկ տեքստիլ արդյունաբերությունը համարյա դադարեցրեց իր գոյությունը: Բավական է նշել, որ տեքստիլ արդյունաբերության արտադրանքը 1995թ. կազմեց 1990թ. արտադրության ծավալի

միայն 0.5%-ը: Այդ ամենի պատճառով հանրապետության շուկայի չափերը խիստ նեղացան, և տնտեսական անկման հիմնական պատճառը ոչ թե առաջարկի, այլ ամբողջական պահանջարկի կրճատումն էր:

Հանրապետության տնտեսական աճի հեռանկարները կապված են բաց տնտեսության ստեղծման, արտաքին տնտեսական կապերի զարգացման, այլ երկրների տնտեսությունների հետ ինտեգրման, ինչպես նաև տնտեսական բարեփոխումների շարունակական իրականացման հետ:

Հայաստանը հարուստ չէ բնական մետաղի և էներգառեսուրսներով, սակայն ունի հազվագյուտ մետաղների, ոչ մետաղային հանքային ռեսուրսներ, որոնք կարող են տնտեսության զարգացման իրական հնարավորություններ ընձեռել ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շուկայի ընդլայնման համար:

Զնայած Հայաստանի Հանրապետության բնակչության արտագաղթը զգալիորեն կրճատեց որակյալ աշխատուժը, տեղի ունեցավ բարձրագույն կրթությամբ կադրերի արտահոսք, այնուամենայնիվ, հանրապետությունը դեռևս ունի էժան աշխատուժ, որը կարող է հրապուրել օտարերկրյա ներդրողներին՝ ներդրումներ կատարելու ճշգրիտ մեքենաշինության ճյուղերում: Ուստի, համաշխարհային տնտեսությանը ինտեգրվելու քաղաքականության հիմնական ուղղություններից մեկը պետք է լինի միջազգային կորպորացիաների կողմից Հայաստանում նման ձեռնարկությունների կառուցումը: Անհրաժեշտ է իրականացնել նաև գումավոր մետաղների, հատկապես պղնձի վերջնական արտադրանքի թողարկում, որը համաշխարհային շուկա մտնելու կարևոր նախադրյալ է:

Հանրապետության արտադրական ենթակառուցվածքները զգալի կորուստներ կրեցին, որոնք ներկայումս վերականգնվում են միջազգային կազմակերպություններից ստացվող օգնությունների և վարկերի միջոցով: Կարելի է ասել, որ արտադրական ենթակառուցվածքները այլևս խոչընդոտ չեն հանդիսանա հանրապետության տնտեսական զարգացումն արագացնելու գործում:

ՕՌԻՆ-ի ներգրավումը սահմանափակող հանգամանքներից էական դեր ունեն նաև քաղաքական ռիսկերը: Դրանք կապված են ընդունող երկրի կառավարության կողմից իրականացվող սահմանափակումների և երկրում տեղի ունեցող քաղաքական փոփոխությունների հետ: Այդ գործոնները Հայաստանի Հանրապետությունում նպաստում են ՕՌԻՆ-ի ներգրավմանը, սակայն տարածաշրջանային որոշակի հակամարտությունները, հատկապես Ադրբեյջանի և Թուրքիայի հետ, խիստ կաշկանդում են համաշխարհային ֆինանսական շուկայից կապիտալի ներհոսքը Հայաստան, չնայած մեր հանրապետությունում կապիտալի

փոխառնելու տոկոսադրույքը շուրջ 4-5 անգամ բարձր է, քան կապիտալի համաշխարհային շուկայում:

ՕՌԻՆ-ի ներգրավման տնտեսական ռիսկերը կապված են հանրապետության տնտեսական շրջափակման, տրանսպորտային մայրուղիների ոչ լայն ցանցի, ծովային սահմանների բացակայության հետ: Առաջիկա տնտեսական զարգացումը պահանջում է լուծել հանրապետության առջև ծառացած վերոնշյալ խնդիրները: Հայաստանի Հանրապետությունում դեռևս գոյություն ունեն ՕՌԻՆ-ի ներգրավման ռիսկեր՝ կապված ինստիտուցիոնալ բարեփոխումների հետ: Հայաստանի հարկային և մաքսային քաղաքականությունները ստեղծում են բարենպաստ պայմաններ և առավելություններ՝ օտարերկրյա ներդրումների կատարման համար, սակայն հանրապետության ներքին իրավական դաշտի բարելավման հարցում դեռևս առկա են որոշ չլուծված խնդիրներ: Դրանց հիմնական պատճառներից են ստվերային տնտեսության մեծ չափերը, պետական և վարչական կոռուպցիան, տնտեսավարման սուբյեկտների ստեղծման գործում գոյություն ունեցող քաշքշուկները և ավելորդ վարչարարությունը: Այսպիսով, ՕՌԻՆ-ի ներգրավմանը խոչընդոտող հանգամանքների հաղթահարման դեպքում հանրապետությունը կարող է ներգրավել ավելի մեծ չափերի օտարերկրյա ներդրումներ և ավելի արագ ընդգրկվել համաշխարհային տնտեսությանը ինտեգրվելու գործընթացում:

### *Թեմայի ամփոփում*

Ինտեգրման բարձրագույն ձևը տնտեսական միության ստեղծումն է, որը ձևավորում է տարբեր երկրների տնտեսության կարգավորման միասնական մարմին: Այդ մարմինը իրեն իրավունք է վերապահում կարգավորել ռեսուրսների բաշխումը միության երկրների միջև, իրականացնել միասնական տնտեսական քաղաքականություն, ինչպես նաև ստեղծել միասնական արժույթ և սահմանել աշխարհի մյուս երկրների հետ տնտեսական հարաբերությունների որոշակի կամոմներ: Այսպիսով, տնտեսական ինտեգրումը սկզբնական շրջանում ունենալով երկրների միջև առևտրային հարաբերությունների խոչընդոտների վերացման բնույթ, հետագայում ընդլայնվեց՝ ընդգրկելով տնտեսական կյանքի բոլոր բնագավառները:

Աճող մրցակցության պայմաններում համաշխարհային տնտեսությանը ինտեգրումը զարգացող երկրներին ընձեռում է ամենաժամանակակից և շահութաբեր տեխնոլոգիաների կիրառման նոր հնարավորություններ: Ներդրումներ կատարելով մյուս երկրներում՝ զարգացած երկրների կորպորացիաները հնարավորություն են ստանում օգտագործելու այդ երկրների էժան աշխատուժը և շահագործելու բնական հարուստ ռեսուրսները: Այդ երկրների շուկաներում հաստատվելուց

հետո զարգացած երկրները արտադրանքի փոխադրման և իրացման ծախսեր այլևս չեն կատարում: Չարգացող և անցումային երկրների համար ինտեգրումը պետք է դիտարկել դրանց կարճաժամկետ և երկարաժամկետ խնդիրների իրագործման տեսանկյունից: Թույլ զարգացած երկրներում ձեռնարկությունների մի մասը կարճ ժամկետում չի կարողանում դիմանալ այլ երկրների ձեռնարկությունների մրցակցությանը և դադարեցնում է գործունեությունը:

Համաշխարհային տնտեսության և հարևան երկրների հետ հանրապետության տնտեսական ինտեգրումը պահանջում էր ստեղծել որոշ նախադրյալներ. նախ՝ ինտեգրվող երկրի բնակչությունը պետք է հանդես բերի խնայողության բարձր մակարդակ, սակայն հանրապետության բնակչությունը միանգամից հայտնվեց ծայրահեղ աղքատության մեջ, որի պայմաններում խնայողություն ապահովել հնարավոր չէր: Տեղի ունեցավ աշխատուժի արտահոսք, որի նպատակը աշխատանքով ապահովվելն էր:

Տարածաշրջանային ինտեգրումը այդ երկրների քաղաքական կայունության երաշխիքն է: Միմյանց հետ տնտեսական կապերի մեջ մտնելով՝ տարածաշրջանի երկրները նպաստում են տնտեսական զարգացման մակարդակների համահարթմանը, որը հիմք է հանդիսանում երկրի տնտեսական կայունացման համար, իսկ վերջինս, անկախացման հետ միասին, երկրների քաղաքական կայունացման գլխավոր պայմանն է:

Հանրապետության տնտեսական աճի հեռանկարները կապված են բաց տնտեսության ստեղծման, արտաքին տնտեսական կապերի զարգացման, այլ երկրների տնտեսությունների հետ ինտեգրման, ինչպես նաև տնտեսական բարեփոխումների շարունակական իրականացման հետ:

### ***Հիմնական հասկացություններ***

Տնտեսական ինտեգրում  
Համընդգրկուն ինտեգրում  
Տարածաշրջանային ինտեգրում  
Ազատ առևտրային գոտիներ  
Մաքսային միություն  
Տնտեսական միություն  
Տնտեսական դիսկ

**Հարցեր և առաջադրանքներ**

1. Ինտեգրման ի՞նչ ձևեր են օգտագործվում արդի փուլում:
2. Որո՞նք են համաշխարհային տնտեսությանը ինտեգրման ՀՀ նախադրյալները:
3. Ինչպիսի՞ գործոններ են նպաստում համաշխարհային տնտեսությանը ՀՀ ինտեգրմանը:
4. Ի՞նչ գործոններ են խանգարում տարածաշրջանային ինտեգրմանը:
5. Ինչպիսի՞ դեր են կատարում ՕՈՒՆ-ները ինտեգրման գործում:

# ԹԵՄԱ 11. ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ

## 11.1. «Տնտեսական անվտանգություն» հասկացությունը

Երկրի բնականոն զարգացումը ապահովելու համար պետք է խուսափել քաղաքական, պաշտպանական, բնապահպանական, տնտեսական, գիտատեխնիկական, սոցիալական վտանգավոր իրավիճակներից: Սրանցից յուրաքանչյուրի ծայրահեղ դրսևորման դեպքում երկիրը կարող է կորցնել իր անկախությունը կամ հայտնվել այնպիսի իրավիճակում, որից դուրս գալու համար կպահանջվի մի քանի տասնամյակ:

Այդպիսի վտանգավոր իրավիճակներից խուսափելու հիմնական պայմանը տնտեսական անվտանգության ապահովումն է, քանի որ այն հիմք է հանդիսանում մնացած վտանգավոր իրավիճակներից զերծ մնալու համար:

Անվտանգությունը սովորաբար դիտարկվում է որպես սխալներից, սպառնալիքներից և մարտահրավերներից պաշտպանվածություն: Այդ իմաստով, տնտեսական անվտանգությունը (ՏԱ) որոշակի պայմանների ամբողջության առկայություն է, որն ապահովում է հասարակության և նրա անդամների բնականոն գործունեությունը, ֆիզիկական պաշտպանվածությունը և այդ ամենի անընդմեջ վերարտադրությունը:

Հաճախ ՏԱ հասկացությունը կապում են ազգային տնտեսության անկախության, կայունության և մշտապես նորացման ու կատարելագործման<sup>8</sup>, երբեմն նաև՝ հասարակության պահանջմունքների արդյունավետ բարելավման<sup>9</sup>, անհատի, հասարակության և պետության նվազագույն տնտեսական շահերի բարելավման հետ<sup>10</sup>:

ՏԱ-ն խիստ լայն հասկացություն է, և դրա բոլոր կողմերը մեկ նախադասությամբ արտահայտել հնարավոր չէ: Պրոֆեսոր Ա. Մարկոսյանը ՏԱ-ն ներկայացնում է, որպես՝

- ուժերի և միտումների համախմբություն՝ ազգային տնտեսական շահերի սպառնալիքներին հակազդելու համար,
- գործընթաց, որն ուղղվում է պետության տնտեսական մեխանիզմի գործունեությունը երկրի զարգացման հիմնական նպատակներին համապատասխանեցնելուն,
- ներքին և արտաքին բացասական ազդեցություններին դիմակայելու տնտեսական ընդունակություն,

<sup>8</sup> Абалкин А., Экономическая безопасность России: Угрозы и их отношение, Вопросы экономики, 1994 г., 12 с.8.

<sup>9</sup> Бухвальг Е. и др., Макроэкономическая безопасность. Вопросы экономики, 1999 г., 12 с.27.

<sup>10</sup> Մարկոսյան Ա., Տնտեսական անվտանգության հիմնախնդիրները, Երևան 2005թ., էջ 84:

- գործողությունների իրականացման հնարավորություն՝ տվյալ փուլի զարգացման նպատակներին հասնելու համար,
- աշխատանքային, նյութական, բնական և ֆինանսական հնարավորությունների օգտագործում՝ ներքին և արտաքին սպառնալիքներից պաշտպանվելու նպատակով<sup>11</sup>:

Այսպիսով, ՏԱ-ը երկրի տնտեսական անկախությունը բնորոշող հասկացություն է, արտահայտում է երկրի կայուն տեմպերով զարգացումը և ապահովում է հասարակության անդամների նյութական և հոգևոր պահանջումները:

Ազգային անվտանգությունը ավելի լայն հասկացություն է: Այն ներառում է երկրի պաշտպանունակության, քաղաքական ինքնուրույնության, պետականության պահպանման, քաղաքացիական հասարակության ստեղծման և անհատի ապահովվածության պայմանների ամբողջությունը: Սակայն այդ բոլորի ապահովման գործում կարևոր դերը պատկանում է տնտեսական անվտանգությանը: Ա. Մարկոսյանը ՏԱ ապահովումը համարում է երկրի անկախության, ինքնիշխանության զլխավոր երաշխիքը, հասարակության և ամժի կայուն ու արդյունավետ գործունեության պայմանը<sup>12</sup>:

Հարցն այն է, որ տնտեսական զարգացման մակարդակը ոչ միայն ապահովում է բնակչության բարձր կենսամակարդակ, այլև համախմբում է երկրի ուժերը բնակչության ազգային խնդիրների լուծման, հայրենիքի պաշտպանության հարցերում: Դրա հետ մեկտեղ, երկրի դեմքը համաշխարհային ասպարեզում, նրա ինքնուրույնությունը վճռվում է տնտեսական զարգացման մակարդակի հիման վրա: Այդ իմաստով, կարելի է եզրակացնել, որ երկրի առջև ծառացած քաղաքական, տնտեսական, սոցիալական, բնապահպանական, հոգեբանական և վերարտադրական բոլոր հիմնախնդիրների լուծման բանալին տնտեսական հիմնախնդիրների հաջող իրականացումն է:

## 11.2. Տնտեսական անվտանգության բաղադրիչները

Տնտեսական անվտանգությունը պահանջում է լուծել մի շարք խնդիրներ, որոնք տնտեսագետները համարում են անվտանգության բաղադրիչներ: Դրանք են՝ երկրի արտադրանքի, բնակչության և աշխատանքային ռեսուրսների, արտադրական և բնական ռեսուրսների վերարտադրությունը, սոցիալական խնդիրների և արտադրական հարաբերությունների կառարելագործման բնագավառները: Տնտեսական անվտանգության բաղադրիչները բնութագրում են երկրի անվտանգության

<sup>11</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 7:

<sup>12</sup> Մարկոսյան Ա., Տնտեսական անվտանգության հիմնախնդիրները, Երևան 2005թ., էջ 83:

փոփոխության միտումները, և դրանց միջոցով գնահատվում են այն վտանգները, որոնք առկա են, կան, կարող են առաջանալ ապագայում:

Այսպիսի վտանգներ կարող են ձևավորվել՝ կապված երկրի անկախության, ինքնորոշման և տարածքային ամբողջականության պահպանման, քաղաքացիների ազատության և իրավունքների պաշտպանության, արտաքին տնտեսական կապերի խաթարման և արտաքին շուկաների կորստի, կրթական ու գիտական մակարդակի անկման հետ:

Տնտեսական անվտանգության բոլոր բաղադրիչները միմյանց հետ կապված են, վերարտադրվում են միասնական կարգով, և դրանցից յուրաքանչյուրի վերարտադրության գործում թույլ տված սխալները անդրադառնում են մյուսների վրա:

Նպատակահարմար է տնտեսական անվտանգության բաղադրիչների գնահատումը իրականացնել ՀՀ տնտեսության ազգային արդյունքի դինամիկայի վերլուծությամբ, քանի որ անցումային տնտեսություն ունեցող բոլոր երկրների համեմատ Հայաստանի տնտեսական անկումը ավելի խորն էր: 1993 թվականին ՀՀ ՀՆԱ ծավալը կազմել է 1990 թվականի ցուցանիշի շուրջ 37 տոկոսը: Սկսած 1994 թվականից՝ Հայաստանում նկատվում է տնտեսական աճ: Մինչև 2000 թվականը այդ աճի միջին տարեկան տեմպերը կազմում էին 5,5 տոկոս: 2001 թվականից սկսած՝ ՀՀ տնտեսական աճի տեմպերը զգալիորեն բարձրացան: 2001 թվականին այն կազմեց 9,6, 2002թ.՝ 13.2, 2003թ.՝ 13.9, 2004թ.՝ 10.5, 2005թ.՝ 14.0%: Սակայն տնտեսության մի շարք ճյուղերում (արդյունաբերություն, տրանսպորտ) դեռևս չի վերականգնվել արտադրանքի թողարկման 1990 թվականի մակարդակը: Այդ մակարդակին մոտենում են միայն գյուղատնտեսությունը, առևտրային ծառայությունների բնագավառները:

Տնտեսական անկումը հանգեցրել է մակրոտնտեսական այնպիսի երևույթների ձևավորման, որոնք, ըստ գնահատման միջազգային չափանիշների, պարունակում են երկրի ֆինանսական վիճակի վատթարացման վտանգ: Դեռևս մեծ է արտահանման և ներմուծման տարբերության և ՀՆԱ ծավալի հարաբերակցությունը, չնայած ունի նվազման միտում: 1995 թ. այն կազմել է 37.5%, 2000 թ.՝ 38%, 2005 թ.՝ 12%:

Տնտեսական աճի բարձր տեմպերը էական ազդեցություն չեն գործում բնակչության կենսամակարդակի բարձրացման և աղքատության կտրուկ հաղթահարման վրա, քանի որ խիստ մեծանում է հարուստ և աղքատ բնակչության միջև եկամուտների բաշխման տարբերությունը: Այսպես, եթե 1991 թ. բարձր եկամուտներ ունեցող բնակչության 20%-ի եկամուտները 6,4 անգամ էին գերազանցում ցածր եկամուտներ ունեցող 20% բնակչության եկամուտները, ապա 1999թ. այդ տարբերությունը հասավ 27 անգամի, 2000թ.՝ 33 անգամի: Հետագայում նվազագույն աշխատավարձի բարձրացման շնորհիվ այդ տարբերությունը բավա-

կամին նվազեց: 2003թ. նվազագույն եկամուտներ ունեցող 20% բնակչության ընդհանուր եկամուտները բարձր եկամուտներ ունեցող 20% բնակչության եկամուտներից պակաս էին 9.4 անգամ, 2004թ.՝ 6.2, իսկ 2005թ.՝ 5.8 անգամ:

ՀՀ տնտեսական անվտանգության երկրորդ կարևոր բաղադրիչը բնակչության և աշխատանքային ռեսուրսների կանոնավոր վերաբրտադրությանը սպառնացող վտանգն է: Նախ, տնտեսական ու հոգեբանական գործոնների ազդեցությամբ խիստ կրճատվեցին բնակչության բնական աճի տեմպերը: Այսպես, մինչև անկախացումը Հայաստանում բնակչության աճի միջին տարեկան տեմպերը տատանվում էին 1.7%-ի շուրջ: 1990-ական թվականներին բնակչության միջին տարեկան աճը արդեն կազմում էր 0.5: 1998 թ. կրկին նվազեց և դարձավ 0.4, իսկ 1999 թվականից հետո՝ 0.3 %:

Դրա հետ մեկտեղ, տեղի ունեցավ բնակչության անմախադեպ արտագաղթ: Եթե մինչև անկախացումը հանրապետությունից արտագաղթում էր Խորհրդային Միության տարբեր հանրապետություններում աշխատանք փնտրող աշխատուժը (1980-1988 թթ. շուրջ 112 հազար մարդ), ապա 1991 թվականից արտագաղթի հիմնական նպատակը բնակչության գոյատևման ապահովումն էր: 1992-1999 թվականներին միայն օդային տրանսպորտով արտագաղթը կազմեց 618.4 հազար մարդ: Հետագայում արտագաղթ տեղի էր ունենում նաև տրանսպորտային այլ միջոցներով, որի ճիշտ հաշվառում չի իրականացվել:

Տնտեսական անվտանգության երրորդ բաղադրիչը արտադրական և բնական ռեսուրսների ընդլայնված վերաբրտադրության ապահովումն է: Տնտեսական անկման և ճգնաժամի ընթացքում արտադրական ռեսուրսների աճի տեմպերը սովորաբար նույնպես դանդաղում են: Դա բացատրվում է այն հանգամանքով, որ տնտեսական անկման ժամանակ բնակչությունը կրճատում է իր խնայողությունները՝ սպառման որոշակի կայուն մակարդակ ապահովելու համար: Այսպես, երբ մեծ ճգնաժամի տարիներին (1929-1933թթ.) ԱՄՆ-ի ՀՆԱ-ն կրճատվեց 30%-ով, իսկ ներդրումները՝ 8.6 անգամ, ապա սպառումը՝ ընդամենը 19%-ով:

Հայաստանում կրճատվեց ինչպես ներքին, այնպես էլ արտաքին ներդրողների ներդրումների ծավալը: Թվում է, թե Հայաստանում խիստ էժան աշխատուժի առկայությունը պետք է զրավի արտասահմանյան ներդրողներին: Սակայն օտարերկրյա ներդրումների ոչ բավարար մակարդակը բացատրվում է ՀՀ ներդրումային օրենսդրական դաշտի անկատարությամբ:

Արտադրական ռեսուրսների վերաբրտադրության գործընթացի կասեցումը տեղի է ունեցել նաև տնտեսության համար վտանգավոր երևույթի՝ չօգտագործվող հաստոցային պարկը (հաճախ նաև՝ գործող)՝ որպես մետաղաջարդոն արտահանելու հետևանքով: Բավական է նաև նշել, որ սև մետաղածուլություն չունեցող Հայաստանում սև մետաղ-

ների քափռմների արտահանման տեսակարար կշիռը արտահանման ընդհանուր ծավալում երրորդ տեղում է: Այն առանձին տարիների կազմել է արտահանվող արտադրանքի 6-12%-ը: Դա ՀՀ տնտեսությանը հասցված ամենակորստաբեր հարվածներից մեկն էր, քանի որ մետաղի այդ քանակությունը ձուլելու դեպքում Հայաստանը մի քանի տասնամյակ կարող էր սև մետաղների չներմուծել:

Արտադրության միջոցների մասնավորեցման գործընթացում թույլ տված սխալների հետևանքով արտադրական ռեսուրսների զգալի մասը անգործության է մատնվել: Մի կողմից՝ մասնավորեցվող արտադրական ֆոնդերի գների հիմքում ձեռնարկությունների շահութաբերության ցուցանիշի օգտագործումը դեռևս գործող ձեռնարկությունների ղեկավարներին շահագրգռեց դադարեցնելու ձեռնարկության գործունեությունը, որպեսզի դրանց գինը իջնի, մյուս կողմից՝ մասնավորեցման արդյունքում ձեռնարկություններ ձեռք բերող անձինք և կոլեկտիվները, չունենալով արտադրական ֆոնդերի արդիականացման համար անհրաժեշտ կապիտալ և գործարարության համար բավարար տվյալներ, դադարեցրին իրենց գործունեությունը, որի հետևանքով չգործող հիմնական ֆոնդերը ենթարկվեցին ֆիզիկական ու բարոյական մաշվածքի:

Ընդհանրապես, մասնավորեցման գործընթացը ՀՀ-ում տեղի ունեցավ տնտեսական ու գործնական սխալներով, իրավախախտումներով, իսկ Կառավարության գործողություններում նկատվում էր «Մասնավորեցումը ինքնամալատակ է» սկզբունքը, որի հետևանքով ազգային տնտեսության գործունակությունը անկում էր ապրում: Արդյունաբերության մասնավորեցումը սկսվեց 1995թ-ին, երբ մասնավորեցվեց 240 ձեռնարկություն: 1996թ. արդյունաբերության և առևտրի բնագավառում մասնավորեցված ձեռնարկությունների թիվը հասավ 853-ի, 1997թ.՝ 945-ի և 1999թ.՝ 1515-ի: «Փոքր» օբյեկտների մասնավորեցումը կատարվեց հիմնականում 1995-1997 թվականներին: Ներկայումս մասնավորեցված 6806 «փոքր» օբյեկտներից այդ երեք տարիներին բաժին է ընկնում 5750-ը, այսինքն՝ չուրջ 85%-ը: Այդ ընթացքում մասնավորեցումից պետական բյուջե է մուտք գործել 126 մլրդ դրամ (կանխիկ դրամով՝ 63,7 մլրդ), սակայն այդ գումարից նոր ձեռնարկությունների կառուցմանը և հների վերակառուցմանը չի հատկացվել: Արտադրական ֆոնդերի վերակառուցման համար չեն օգտագործվել նաև արտադրանք թողարկող ձեռնարկությունների հիմնական ֆոնդերի ամորտիզացիայի գումարները:

Վերջապես, տնտեսական քաղաքականության մեջ թույլ տրվեցին սխալներ բնական ռեսուրսների օգտագործման հարցում, որի հետևանքով ՀՀ անտառային ֆոնդին լուրջ վնաս հասցվեց (քառորդ մասը դուրս եկավ շարքից), իսկ օգտակար հանածոների հետախուզական աշխատանքների կատարման ինստիտուտները լուծարվեցին՝ այդ բնագա-

վառը անուշադրության մատնելու և որոշակի միջոցներ չտրամադրելու պատճառով: Այսօր արդեն բնական ռեսուրսների օգտագործման հեռանկարային ծրագրեր իրականացնել հնարավոր չէ:

Տնտեսական անվտանգության ապահովման գործում կարևորվում է սոցիալական խնդիրների լուծումն ու արտադրական հարաբերությունների կատարելագործումը:

Շուկայական տնտեսություն ունեցող երկրներում պետական իշխանության կողմից լուծվում են այն հիմնախնդիրները, որոնք շուկայական ինքնակարգավորման ընթացքում լուծվել չեն կարող: Դրանք են՝ բնակչության սոցիալական ապահովումը, գիտական, գիտատեխնիկական առաջադիմություն խթանումը և բնապահպանական խնդիրները: Այդ խնդիրները պահանջում են լուծման առանձնահատուկ մեխանիզմներ: Անցումային շրջանում արտադրական հարաբերությունները վերածակավորվում են, և դա պետք է կատարել սոցիալական աղետներից խուսափելու ճանապարհով: Սակայն ՀՀ-ում, չունենալով շուկայական տնտեսության գործունակության պայմաններ, չստեղծելով նման տնտեսության հիմք, տեղի ունեցավ գների ազատականացում, որը սովորաբար կործանարար ազդեցություն է թողնում տնտեսության, հատկապես գիտության, կրթության, առողջապահության և սոցիալական ոլորտի մյուս ճյուղերի վրա: Դրան խիստ նպաստեց նյութական արտադրության աշխատողների աշխատավարձի ազատականացումը և ոչ նյութական արտադրության ճյուղերի աշխատողների համար միասնական դրույքների սահմանումը, որի հետևանքով շատ կարճ ժամկետում (երկու տարի) նյութական արտադրության աշխատողների միջին աշխատավարձը ավելի քան 3 անգամ գերազանցեց ոչ նյութական արտադրության աշխատողների աշխատավարձը: Հետագայում, ոչ նյութական արտադրության աշխատողների միջին աշխատավարձի բարձրացման քաղաքականության շնորհիվ, այդ տարբերությունը մի փոքր կրճատվեց, չնայած 1999 թ. տվյալներով դեռևս զգալի տարբերություններ կային: Այսպես, ՀՀ-ում մեկ աշխատողի միջին աշխատավարձը 100% ընդունելու դեպքում, արդյունաբերության աշխատողների աշխատավարձը այն գերազանցում է 29%-ով, տրանսպորտինը՝ 76%-ով, կապի և շինարարության աշխատողներինը՝ ավելի քան երկու անգամ, իսկ առողջապահության աշխատողներինը կազմում է 61,6, կրթությանը՝ 54,5, մշակույթինը՝ 50, գիտության և գիտական սպասարկման աշխատողներինը՝ 87,7 տոկոս: Այնուհետև, կրկին մեծացել են նյութական և ոչ նյութական բնագավառների աշխատողների միջին աշխատավարձերի տարբերությունները: Տնտեսության միջին աշխատավարձը 100% ընդունելու դեպքում, արդյունաբերության աշխատողների միջին աշխատավարձը 2005թ. կազմել է 130.6, շինարարությանը՝ 132.1, տրանսպորտինը՝ 117.2,

առողջապահության աշխատողներին՝ ընդամենը 53.5, կրթությանը՝ 74.2, մշակույթին՝ 53.2%:

Երկրի տնտեսական անվտանգության, արտադրական և գիտական ներուժի բնականոն վերարտադրության ապահովման բնութագիրը հաճախ ներկայացվում է գիտության, կրթության վրա կատարվող ծախսերի տեսակարար կշռով: Ըստ 1999թ. պետական բյուջեի փաստացի կատարման տվյալների՝ կրթության և գիտության վրա ծախսվել է պետական բյուջեի ծախսերի 9,3%-ը, որը կազմում է ՀՆԱ 2.3%-ը: Մինչդեռ, առաջավոր երկրների փորձը ցույց է տալիս, որ միայն այդ բնագավառում պահանջվում է օգտագործել ազգային արդյունքի շուրջ 5%-ը: Հարցը չի վերաբերում միայն տնտեսության մյուս ճյուղերի աշխատողների աշխատավարձի համեմատությամբ կրթության և գիտության աշխատողների աշխատավարձի ցածր լինելուն: Այդ բնագավառների նկատմամբ անուշադրությունը հանգեցրեց գիտական մտքի արտահոսքի, իսկ կրթության բնագավառը զգալիորեն կազմալուծվեց, և եթե կրթության համակարգի մախիկն մակարդակը հնարավոր է վերականգնել 10-15, ապա գիտական ներուժին՝ 20-25 տարում:

Այսպիսով, տնտեսական անվտանգության հիմնական բաղադրիչների վերարտադրությանը հասցվեց այնպիսի հարված, որի արդյունքում երրորդ հազարամյակի շեմին ՀՀ տնտեսությունում ի հայտ եկան ծայրահեղ արատներ.

- տնտեսության կառուցվածքային ձևախեղման խորացում,
- ներդրումային և նորամուծական ակտիվության անկում,
- երկրի պահանջարկի բարելավման համար ներմուծման գերակայություն,
- արտաքին պարտքի ավելացում և այլ միջոցների օգտագործում ոչ իրական հատվածում,
- «ստվերային տնտեսության» մասշտաբների անմախաղեպ աճ:

Ձևավորված այդ արատների հաղթահարման հնարավորությունները ավելի իրական կլինեին, եթե տնտեսական անկման հետ միասին տեղի չունենար բնակչության բարոյա հոգեբանական անկում, որն արտահայտվեց բնակչության արտագաղթի նոր ալիքով: Իսկ վերջինիս հաղթահարման համար իշխանության մարմինների, մտավորականության, լրատվամիջոցների կողմից էական քայլեր չեն կատարվում: Հեռուստակայանները հաճախ էկրանը տրամադրում են այնպիսի մարդկանց, ովքեր հանրապետությունը հասցրեցին այս վիճակին, և նրանք, փաստորեն, գովազդում են իրենց գործունեությունը:

### 11.3. Ազգային անվտանգության գնահատման ցուցանիշները

Տնտեսական անվտանգության էության ամբողջական պատկերացումը մեզ հուշում է, որ այն վերաբերում է տնտեսական կյանքի զանազան բնագավառներին և բնակչության եկամուտները ամբողջության մեջ դիտարկելուն: Դա նշանակում է, որ տնտեսական անվտանգությունը մեկ ցուցանիշով կամ մեկ միասնական գնահատմամբ արտահայտել հնարավոր չէ: Գրականության մեջ օգտագործվում է տնտեսական անվտանգության գնահատման ցուցանիշների մի ամբողջ համակարգ: Այդ համակարգը տնտեսագետները ներկայացնում են զանազան դասակարգումներով: Որպես կանոն, նկատի ունենալով տնտեսական կյանքի զանազան բնագավառների առկայությունը, անվտանգության ցուցանիշները կարելի է ներկայացնել վեց հիմնական խմբերում: Առաջինը վերաբերում է ընդհանուր տնտեսական ներուժը գնահատող մեծություններին: Դրանցից են՝ բնակչության մեկ շնչի հաշվով արտադրվող ՀՆԱ-ն, դրա օգտագործումը սպառման և կուտակման համար, երկրում կատարվող համախառն ներդրումները:

Երկրորդ խումբ ցուցանիշները վերաբերում են երկրի պաշտպանունակությանը, այսինքն՝ երկրում կատարվող ռազմական ծախսերին և պաշտպանության այլ նպատակների համար օգտագործվող ֆինանսական միջոցներին:

Երրորդ խումբ ցուցանիշները արտահայտում են ինքնուրույն զարգանալու երկրի հնարավորությունները, այսինքն՝ տնտեսության մեջ կապիտալի պաշարը, ազգային խնայողությունները, ներդրումներ կատարելու ներքին և արտաքին աղբյուրները:

Չորրորդ խումբ ցուցանիշներն արտահայտում են բնակչության կենսամակարդակը և դրա փոփոխությունները: Դրանք են՝ մեկ բնակչի հաշվով արտադրված ազգային եկամուտը, իրական և անվանական միջին աշխատավարձը, գների փոփոխությունը, սպառողական գների ինդեքսը, նվազագույն աշխատավարձի մեծությունը, կենսաթոշակների և նպաստների մակարդակը:

Հինգերորդ խումբ ցուցանիշները ֆինանսական անվտանգության ցուցանիշներն են, որոնք բնութագրում են ազգային տնտեսության մեջ ներդրումներ կատարելու հնարավորությունը, երկրի ներքին և արտաքին պարտքի մեծությունը, ինչպես նաև դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականության ցուցանիշները: Փաստորեն, ֆինանսական անվտանգությունն արտահայտում է երկրի արժույթի և արտարժույթի բացարձակ չափը, դրանց հարաբերությունը, վարկավորման հնարավորությունները տնտեսությունում:

Վեցերորդ խումբը ընդգրկում է արտաքին տնտեսական անվտանգությունը բնութագրող ցուցանիշները, որոնք արտահայտում են ապրանքների և ծառայությունների արտահանման ծավալը, կապիտալի արտահանումը և ներմուծումը, ներքին և արտաքին գների հարաբերությունը: Սրանք բնութագրում են երկրի հարաբերությունները արտաքին աշխարհի հետ:

Տնտեսական անվտանգության գնահատման բազմազան և բազմաբնույթ ցուցանիշները սովորաբար դասակարգվում են մաս ըստ բնագավառների, այսինքն՝ տնտեսական, սոցիալական և քաղաքական ցուցանիշների խմբերի: Տնտեսական ցուցանիշները բնութագրում են երկրի տնտեսության և տնտեսական վերարտադրության կազմակերպման հնարավորությունները, արտացոլում են տնտեսական կյանքի բոլոր բնագավառների իրավիճակը:

Սոցիալական ցուցանիշները բնութագրում են բնակչության կյանքի մակարդակը, առողջապահության, կրթության և բնակչության սպասարկման մյուս բնագավառների զարգացման հնարավորությունները:

Քաղաքական ցուցանիշներն արտահայտում են տվյալ երկրի քաղաքական կյանքի կայունության, հասարակության ժողովրդավարացման, օրինականության պահպանման մակարդակը:

Նկատի ունենալով, որ վերոնշյալ բազմաբնույթ ցուցանիշները տարբեր երկրներում ունեն բավականին տարբեր մեծություններ՝ տնտեսական զարգացման անվտանգ վիճակը ներկայացնելու համար տնտեսագետներն օգտագործում են «անվտանգության շեմային մեծություններ» հասկացությունը: Այս դեպքում նկատի է առնվում, որ շեմային մեծությունը գերազանցելու դեպքում տվյալ երկրի տնտեսական, քաղաքական ու սոցիալական վիճակին կարող է խիստ վնաս հասցվել: Օրինակ, տնտեսական ինքնուրույնության ապահովման համար կարևոր է, որ երկրի տնտեսական պարտքը չգերազանցի ՀՆԱ 40 տոկոսը, կամ ներքին արտադրության ծավալում որոշակի մասնաբաժին ունենա պարենային ապրանքների արտադրությունը: Այսպես, տնտեսագետների կողմից անվտանգության շեմային ցուցանիշներ են համարվում պարենային կախվածության մակարդակը (սպառված ներմուծվող պարենամթերքի բաժինը չպետք է գերազանցի 30-35%-ը), գիտության վրա կատարվող ծախսերը պետք է կազմեն ՀՆԱ առնվազն 5%-ը կամ սոցիալական անվտանգության համար նախատեսվում է, որ նվազագույն և միջին աշխատավարձերի հարաբերությունը չպետք է գերազանցի 1/3-ը: Այսպիսով, անվտանգության շեմային մեծությունները բնութագրում են երկրի տնտեսական զարգացման անհրաժեշտ պայմանների առկայությունը և հնարավորություն են տալիս բացահայտելու տնտեսական կյանքի այս կամ այն բնագավառին սպառնացող վտանգը:

**ՀՀ տնտեսական անվտանգության շեմային մեծությունները**

| Ցուցանիշներ                                                   | Ընդունված մեծություն | 2000  | 2001  | 2002  | 2003  | 2004   | 2005   | 2006   | 2007   |
|---------------------------------------------------------------|----------------------|-------|-------|-------|-------|--------|--------|--------|--------|
| 1. ՀՆԱ հավելածի տեմպը (%)                                     | 2.7                  | 5.9   | 9.6   | 13.2  | 13.9  | 12.1   | 11.3   | 13.3   | 13.7   |
| 2. Բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ արտադրությունը (ԱՄՆ դոլար) | 2250                 | 502.7 | 557.3 | 739.9 | 874.1 | 1112.8 | 1523.0 | 1982.1 | 2852.9 |
| 3. Տնային տնտեսություն. սպառում (ՀՆԱ %)                       | 60                   | 96.7  | 93.3  | 88.6  | 83.1  | 82.3   | 75.4   | 72.2   | 70.4   |
| 4. Ներմուծում (ՀՆԱ %)                                         | 35                   | 50.5  | 46.2  | 46.6  | 50.1  | 42.6   | 39.7   | 34.3   | 35.4   |
| 5. Ներմուծում/սպառում (%)                                     | 30                   | 49.1  | 43.7  | 45.6  | 48.2  | 45.2   | 45.4   | 46.1   | 46.2   |
| 6. Ներդրումներ/ՀՆԱ (%)                                        | 25                   | 18.6  | 19.8  | 21.6  | 24.3  | 24.9   | 30.5   | 35.9   | 34.8   |
| 7. Գիտության և կրթության ֆինանսավորման ծախսեր/ (%)            | 5.0                  | 2.8   | 2.7   | 2.1   | 2.2   | 2.5    | 2.7    | 2.7    | 3.0    |
| 8. Արտաքին պարտք / ՀՆԱ (%)                                    | 5.40                 | 45    | 42.7  | 43.1  | 35.1  | 31.3   | 24     | 16.5   | 14.0   |
| 9. Զինիի գործակից                                             | 0.15-0.17            | 0.593 | 0.535 | 0.451 | 0.438 | 0.413  | 0.359  | 0.369  | 0.371  |

Անվտանգության շեմային մեծությունների համակարգը ներառում է փոխադարձաբար կապված այն ցուցանիշների ամբողջությունը, որոնք արտահայտում են վերարտադրության անընդհատությունը և տնտեսության բարգավաճման հնարավորությունները: Աղյուսակում ներկայացված ցուցանիշները դեռևս ամբողջապես չեն գնահատում վերարտադրության որակական հատկանիշները:

Հայաստանի Հանրապետությունում վերարտադրության որակական գնահատումները պահանջում են առանձնացնել այն հիմնական հանգույցները, որոնց տնտեսական զարգացման կարգավորման վիճակը զգալիորեն խաչընդոտում է վերարտադրության իրականացման գործընթացին: Այդպիսի հիմնական հանգույցներ կարելի է համարել.

*Առաջին* արտադրվող և սպառվող ապրանքային ծավալների միջև գոյություն ունեցող անհաշվեկշռվածությունը: Շեմային մեծությունը նախատեսում է, որ տնային տնտեսությունների սպառումը պետք է կազմի ՀՆԱ 60%-ը: ՀՀ-ում 2000թ. այն կազմել է ՀՆԱ 96.7, 2001թ.՝ 93.5, 2005թ.՝ 75.4, 2007թ.՝ 70.4%-ը: Այդ է պատճառը, որ արտադրանքի ներմուծումը,

որի գերակշռող մասը սպառման առարկաներ են, կազմում է ՀՆԱ ծավալի 50%-ը և միայն վերջին երկու տարիներին՝ շուրջ 40%-ը:

**Երկրորդ**՝ բնակչության մեկ շնչի հաշվով արտադրանքի թողարկումը ներկայումս 26.8%-ով գերազանցում է շեմային ցուցանիշը: Սակայն 2006թ-ին, այն խիստ փոքր էր իր ծավալով, ինչը, սակայն, էականորեն բարելավվելով, 2007թ-ին գերազանցել է սահմանված նվազագույն մակարդակը:

**Երրորդ**՝ ներդրումների ծավալը վերջին տարիներին է մոտեցել սահմանված շեմային մեծությանը: Այն կազմում է ՀՆԱ 34.8%, որը 39.2%-ով գերազանցում է շեմային ցուցանիշը:

**Չորրորդ**՝ գիտության և կրթության վրա կատարվող ծախսերի փոքր տեսակարար կշիռը չի նպաստում գիտատեխնիկական առաջադիմությանը: Չունենալով էներգակիրների և սև մետաղների անհրաժեշտ պաշարներ, Հայաստանի աշխատուժը պետք է մասնագիտանա գիտատար արտադրանքի տեսակների, գիտական նոր տեխնոլոգիաների ստեղծման և իրացման գործում: Դրա համար պահանջվում է զգալիորեն մեծացնել գիտության և գիտական մշակումների վրա կատարվող ծախսերը:

**Հինգերորդ**՝ դեռևս խիստ մեծ է բաշխման անհամաչափությունը, որի հետևանքով տնտեսական աճը դեռևս էականորեն չի նպաստում աղքատության հաղթահարմանը: Աղքատության հաղթահարման խնդիրը պահանջում է, որ Զինիի գործակիցը լինի 0.15 – 0.17 միջակայքում, մինչդեռ այդ շեմային մեծությունը, փաստորեն, նորմատիվը գերազանցում է ավելի քան երկու անգամ:

**Վեցերորդ**՝ դեռևս խիստ մեծ է ներմուծում – սպառում հարաբերակցությունը: Այն դրական է արտաքին կապերի գոյության տեսանկյունից, սակայն քանի որ արտահանման ծավալը զգալիորեն փոքր է ներմուծման ծավալից, արտաքին կապերի արդյունավետությունը բարձր չէ:

**Յոթերորդ**՝ երկրի արտաքին պարտքը մոտ երեք անգամ գերազանցում է նախատեսված սահմանը, սակայն ակնհայտ է, որ վերջին տարում այն զգալի նվազել է՝ 45 տոկոսից հասնելով 14.0 տոկոսի:

Ընդհանրապես, ներկայացված դիմամիկ շարքից երևում է, որ Հայաստանի տնտեսությունը կայուն տեմպերով մոտենում և ցուցանիշներից շատերի մասով անգամ գերազանցում է տնտեսական անվտանգության շեմային մեծությունները: Սա վկայում է, որ վերջին տարիներին երկիրը կայուն տնտեսական տեմպերով է զարգանում:

Հետևաբար, տնտեսական անվտանգության շեմային մեծությունները դեռևս չեն արտահայտում ազգային տնտեսության իրական անվտանգության մակարդակը:

## 11.4 . Տնտեսական անվտանգության ապահովման գործոնները

Տնտեսական անվտանգության բազմակողմանի ուսումնասիրությունը պահանջում է քննարկել բոլոր այն գործոնները, որոնք որոշակի ձևով ազդում են անվտանգության բաղադրիչներից յուրաքանչյուրի վրա: Տնտեսական անվտանգության գործոնները, մախ, կարելի է բաժանել երկու խմբի՝

- արտաքին ազդեցության գործոններ, որոնք կապված չեն երկրում իրականացվող տնտեսական քաղաքականության հետ և դրսևորվում են ամբողջ աշխարհում տեղի ունեցող երևույթների ազդեցությամբ, օրինակ՝ էներգակիրների գների թանկացումը համաշխարհային շուկայում,

- մնացած գործոնները վերաբերում են երկրի ներքին կյանքին և, փաստորեն, արտահայտում են տվյալ երկրում իրականացվող տնտեսական գործունեության բազմաբնույթ գործունեությունը:

Տնտեսական անվտանգության գործոնները, ըստ իրենց ազդեցության բնույթի և կազմակերպական ձևերի, նպատակահարմար է դասակարգել յոթ խմբերի.

1. Տնտեսության պետական կարգավորման հետ կապված գործոններ: Այս գործոններն արտահայտում են տվյալ երկրում իրականացվող հարկաբյուջետային, դրամավարկային, առևտրային քաղաքականության ձևերից յուրաքանչյուրի դրսևորումները, որոնց միջոցով հնարավոր է երկրում իրականացնել ազգային արդյունքի բաշխումը և վերաբաշխումը, ֆինանսական շուկաների վերահսկողությունը: Այս գործոնների ազդեցությամբ կարգավորում է մաս ապրանքների ու ծառայությունների արտադրությունը տվյալ երկրում: Արտադրության պետական կարգավորման անհրաժեշտությունը զգացվում է հատկապես անցումային տնտեսությամբ երկրներում:

2. Երկրորդ խմբին կարել է դասել այն գործոնները, որոնք ապահովում են տնտեսական ակտիվություն: Դրանցից են՝ իրավական դաշտի ապահովումը, հալանձնաշնորհային օրենսդրության ստեղծումը, աշխատողների և սպառողների շահերի պաշտպանության ապահովման օրենսդրության ձևավորումը, ինչպես նաև գիտատեխնիկական առաջադիմության խթանման և վարկային գործունակ մեխանիզմների ստեղծման կատարյալ օրենսդրության ձևավորումը:

3. Երրորդ խումբ գործոնները կապված են անցումային տնտեսությամբ երկրներում մասնավորեցման գործընթացների կատարելագործման հետ: Դրանք վերաբերում են մասնավորեցման ճշգրիտ մեխանիզմների ընտրությանը, ազգային ունեցվածքի հաշվառման և գնահատման մեթոդաբանության ստեղծմանը, պետության և շուկայական հարաբերությունների մասնակիցների փոխադարձ պատասխա-

նատվության ապահովմանը, ինչպես նաև ապամասնավորեցման կատարյալ մեխանիզմների գոյությանը: Այս գործոնները իրենց միասնությամբ ապահովում են պետության, տնտեսավարող սուբյեկտների և հասարակության պայմանագրային հարաբերությունների կատարումը:

4. Չորրորդ խումբ գործոնները արտահայտում են ազգային խնայողության և պետության իրական հատվածում ներդրումներ կատարելու հնարավորությունները: Դրանք արտահայտում են նաև արտաքին պետական ֆինանսավորման հնարավորությունը, ազգային խնայողության խթանման մեխանիզմների ստեղծման, բնակչության խնայողությունների ապահովման, արտաքին ներդրումների խթանման և ապահովման, ինչպես նաև արտաքին օգնությունների արդյունավետ օգտագործման հետ կապված գործոնները:

5. Հինգերորդ խումբ գործոնները կապված են արտաքին հարաբերությունների կարգավորման հետ: Դրանք են՝ արտաքին կապերի պետական մենաշնորհի վերացումը, ազգային արժույթի փոխանակային կուրսերի կայունության ապահովումը, ինչպես նաև գործոնները, որոնք խթանում են արտահանող ճյուղերի գործունեությունը, ապահովում են համաքաղաքատեսակների և էներգակիրների ապահովագրված ներմուծումը տնտեսական զարգացման բոլոր փուլերում:

6. Վեցերորդ խումբ գործոնները վերաբերում են սոցիալական ապահովությանը: Հատկապես անցումային փուլում սոցիալական գործոնները կարևոր դեր են խաղում ազգային անվտանգության ապահովման հարցերում: Այստեղ առաջնային նշանակություն ունեն կենսաթոշակների ավելացումը, նվազագույն աշխատավարձի բարձրացումը, գործազրկության նպաստների ինդեքսավորումը, արտաքին օգնության միջոցների բաշխման նկատմամբ վերահսկողությունը, ինչպես նաև զենքի պետական կարգավորումը: Այս խմբի գործոնների ազդեցությունը պայմանավորվում է սոցիալ-հոգեբանական գործոնների կենսունակությամբ: Սոցիալ-հոգեբանական գործոնների ազդեցությամբ ձևավորվում են հատկապես ոչ բնականոն երևույթներ, տնտեսական հարաբերություններում աշխուժանում են հանցագործ տարրերը, բարձրվածում է «ստվերային տնտեսությունը», դրսևորվում են մարդու իրավունքների անպաշտպանվածության միտումներ:

7. Յոթերորդ խումբ գործոնները կապված են բնական աղետների՝ երկրաշարժի, զանազան պատճառներով անտառների ոչնչացման, ինչպես նաև բազմաթիվ այլ բնական աղետների հետևանքների հաղթահարման հետ: Միաժամանակ, անվտանգության այս խմբի գործոնները կապված են բնապահպանական ներդրումների իրականացման, համաքաղաքային ռեսուրսների վերականգնման և արդյունավետ օգտագործման հետ:

Ազգային անվտանգության ապահովման վերոնշյալ բոլոր գործոնները, վերջին հաշվով, իրականացվում են երկրում ազգային արդյունքի ավելացմանը և ֆինանսական անհրաժեշտ ռեսուրսների ձևավորմանը զուգընթաց: Այդ է պատճառը, որ տնտեսական անվտանգության գործոնները պայմանավորում են միմյանց և արտահայտում են այդ գործոնների և դրանց ապահովման ուղիների փոխադարձ կապը: Մի կողմից այդ գործոններն ապահովում են տնտեսական կայուն աճ և կարգավորում են բարիքների բաշխման գործընթացը, մյուս կողմից, խիստ ակտիվացնում են ազգային անվտանգության գործոնների կենսունակությունը:

### ***Թեմայի ամփոփում***

Անվտանգությունը սովորաբար դիտարկվում է որպես սխալներից, սպառնալիքներից և մարտահրավերներից պաշտպանվածություն: Այդ իմաստով, տնտեսական անվտանգությունը (SU) որոշակի պայմանների ամբողջության առկայություն է, որն ապահովում է հասարակության և նրա անդամների բնականոն գործունեությունը, ֆիզիկական պաշտպանվածությունը և այդ ամենի անընդմեջ վերարտադրությունը:

Ազգային անվտանգությունը ավելի լայն հասկացություն է: Այն ներառում է երկրի պաշտպանունակության, քաղաքական ինքնուրույնության, պետականության պահպանման, քաղաքացիական հասարակության ստեղծման և անհատի ապահովվածության պայմանների ամբողջությունը: Սակայն այդ բոլորի ապահովման գործում կարևոր դերը պատկանում է տնտեսական անվտանգությանը:

Տնտեսական զարգացման անվտանգ վիճակը ներկայացնելու համար տնտեսագետներն օգտագործում են «անվտանգության շեմային մեծություններ» հասկացությունը: Այս դեպքում նկատի է առնվում, որ շեմային մեծությունը գերազանցելու դեպքում տվյալ երկրի տնտեսական, քաղաքական ու սոցիալական վիճակին կարող է խիստ վնաս հասցվել:

Անվտանգության շեմային մեծությունների համակարգը ներառում է փոխադարձաբար կապված այն ցուցանիշների ամբողջությունը, որոնք արտահայտում են վերարտադրության անընդհատությունը և տնտեսության բարգավաճման հնարավորությունները:

### ***Հիմնական հասկացություններ***

Տնտեսական անվտանգություն

Տնտեսական վտանգներ

Շեմային մեծություններ

---

### **Հարցեր և առաջադրանքներ**

1. Ի՞նչ է իրենից ներկայացնում տնտեսական անվտանգությունը:
2. Որո՞նք են տնտեսական անվտանգության բաղադրիչները:
3. Որո՞նք են ազգային անվտանգության գնահատման ցուցանիշները:
4. Որո՞նք են տնտեսական անվտանգության գործոնները:
5. Գնահատել ՀՀ անցումային տնտեսության տնտեսական անվտանգության բաղադրիչները:

## *Գրականության ցանկ*

1. Менгер К., Бем-Баверк Е., Австрийская школа в политической экономии. Ф. Визер, пер. с нем. – М., Экономика, 1992
2. Алаев Э.Б., Экономико-географическая терминология. – М., Мысль, 1977
3. Аткинсон Э.Б., Стиглиц Дж.Э., Лекции по экономической теории гос. Сектора. Учебник. Пер. с англ. Под ред. Л.Л. Любимова. – М., Аспект Пресс, 1995
4. Барр Р., Политическая экономия в 2-х томах. Пер. с фр. – М., Международные отношения, 1994
5. Блауг М., Экономическая мысль в ретроспективе. Пер. с англ. – М., Прогресс, 1993
6. Бузгалин А.В., Переходная экономика. – М., Таурис, 1995
7. Донченко В.К., Экономическая интеграция. – СПб, НИЦЕБ РАН, 1988
8. Дениелс Дж.Д., Радеба Л.Х., Международный бизнес, внешняя среда и деловые отношения. Пер. с англ. – М., Дело Лтд, 1994
9. Макарова А.Н. и др., История мировой экономики. Учебное пособие – М., Закон и право, ЮНИТИ, 1995
10. Карлик Е.М., Градов А.П., Экономическая эффективность концентрации и специализации производства в машиностроении, Основы теории и методики. – Л., Машиностроение, 1983
11. Кротов М.И., Бляхман Л.С., Структурные реформы и интеграция в СНГ, Вестник межпарламентской ассамблеи " 3, 1995
12. Курс экономической теории, Учебное пособие, Общ. ред. М. Н. Чепурин, А. Е. Киселева. – Киров, МГИМО МИД РФ, 1994
13. Маршалл А., Принципы экономической науки. Пер. с англ. – М., Прогресс, 1993
14. Ойкен В., Основные принципы экономической политики. Пер. с нем. – М., Прогресс, 1995
15. Портер М., Международная конкуренция, Пер. с англ.- М., Международные отношения, 1993
16. Сакс Дж., Рыночная экономика в России. - Пер. с англ., М., Экономика, 1994
17. Системный анализ в экономике и организации производства. Учебник. Валуев С., Волкова В., Градов А. и др. – Л., Политехника, 1991
18. Фишер С., Дорнбуш Р., Шмалензи Р., Экономика. Пер. с англ. – М., Дело Лтд, 1993
19. Шумпетер И., Капитализм, социализм, демократия. Пер. с англ. – М., Экономика, 1995

20. Экономическая стратегия фирмы. Учебное пособие. Под. Ред. А. П. Градова. – СПб, Специальная литература, 1995
21. Кульман А., Экономические механизмы, Пер. с фр. – М., Прогресс, 1993
22. Долян Э. Дж., Линдсей Д. Рынок, Микроэкономическая модель. Пер. с англ. – СПб., 1992
23. Экономическая история зарубежных стран. Курс лекции. Н. И. Политаева, В. И. Голубович, Л. Ф. Пашкевич и др. Под общ. ред. В. И. Голубовича. – Мн., НКФ “Экоперспектива”, 1996
24. Данилевский Н.Я., Россия и Европа. Взгляд на культурные и политические отношения Славянского мира к Германно-Романскому. – СПб., Глаголь, 1995
25. Социально-экономическое положение России. 1996 год. Гос. Ком. РФ по статистике. – М., 12.
26. Статистический бюллетень, “Статистика СНГ”, N2, 2000г.
27. Абалкин Л., Экономическая безопасность России: Угрозы и их отнашение, Вопросы экономики, 1994 г., 12 с.8.
28. Հայաստանի վիճակագրական տարեգիրք /1999, 2000/, Երևան 2007/2008:
29. Աղագարյան Ա.Ա., Հարությունյան Ա.Գ., Մակրոտնտեսական քաղաքականություն, ուսումնական ձեռնարկ, Երևան, 2008:
30. Մարկոսյան Ա., Տնտեսական անվտանգության հիմնախնդիրները, Երևան, 2005:
31. Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 2007թ., վերլուծական զեկուցագիր, Երևան, 2008, ՀՀ ԱՎԾ:
32. Հայաստանի ֆինանսների վիճակագրություն, վիճակագրական ժողովածու, Երևան, 2008, ՀՀ ԱՎԾ
33. ՀՀ 1991-1998 թթ. արտաքին միզրացիայի գործընթացի ուսումնասիրություն, ՀՀ վիճնախարարություն, Ե., 1999
34. ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2007 թ. հունվար-դեկտեմբերին, զեկույց, ՀՀ ԱՎԾ
35. Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր, Ե., 2003
36. Հայաստանի Հանրապետության սոցիալական պատկերը և աղքատությունը, զեկույց, ՀՀ ԱՎԾ, Ե., 2008
37. ՀՀ սոցիալական պատկերը և աղքատությունը, ՀՀ վճարային հաշվեկշիռը 1997-2001թթ., ՀՀ ԱՎԾ, Ե., 2002
38. ՀՀ պետական բյուջեի վերլուծական տեղեկագիր, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն, Ե., 2000, 2001, 2002 թթ.:
39. Վիճակագրական տարեգիրք 2002, Աշխատուժը ՀՀ քաղաքային բնակավայրերում, ՀՀ ԱՎԾ, Ե., 2002

40. ՀՀ 2000թ. վճարային հաշվեկշիռը և միջազգային ներդրումային դիրքը, ՀՀ ԱՎԾ, Ե., 2008
41. Գյուղացիական տնտեսությունների սոցիալ-տնտեսական վիճակը և գյուղատնտեսական արտադրանքի գների ինդեքսը ՀՀ-ում, Վիճակագրական ժողովածու, ՀՀ վիճնախարարություն, Երևան, 1999թ
42. Սպառողական շուկան ՀՀ-ում 1995-2001, Վիճակագրական ժողովածու, ՀՀ ԱՎԾ, Ե., 2002, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2002թ. հունվար-դեկտեմբերին, զեկույց, ՀՀ ԱՎԾ, Ե., 2003թ
43. Սպառողական գների ինդեքսը 1990-2001թթ., Վիճակագրական ժողովածու, ՀՀ ԱՎԾ, 2003
44. Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի ազգային դասակարգիչ, ՀՀ ԱՎԾ, Երևան, 2003թ
45. Հայաստանի տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչ, ՀՀ ԱՎԾ, Երևան, 2001

**Ղուշյան Համազ Բուդղանի  
Տիգրանյան Իշխան Տաճատի  
Հարությունյան Ազապի Գառնիկի**

**Ազգային էկոնոմիկայի հիմունքներ  
(ուսումնական ձեռնարկ)**

**Հրատ. խմբագիր՝ Ռ. Վարդանյան**

**Սրբագրիչ՝ Ջ. Հովհաննիսյան**

**Համակարգչային ձևավորումը  
և էջադրումը՝ Ն. Խչեյանի**

**Պատվեր՝ 424: Չափս՝ 60×84<sup>1</sup>/<sub>16</sub>:  
8,4 հեղ. մամուլ, 8,5 հրատ.մամուլ,  
9,75 տպ. մամուլ, 9 տպ. պլայմ. մամուլ:  
Տպաքանակ՝ 200:**

**«Տնտեսագետ» հրատարակչություն**

---

**Տպագրված է «Տնտեսագետ» հրատարակչության  
տպագրական արտադրամասում  
Երևան 25, Նալբանդյան, 128**